

Tarec'oyc' Nsan- Papikean 1907 patkerazard : d. tari

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Babigian, Neshane. Tarec'oyc' Nsan-Papikean 1907 patkerazard : d. tari. 1906.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

62918




Faint, illegible text, possibly a header or introductory paragraph.

Section header or title, possibly containing the word "CHAPTER" or "SECTION".

Main body of faint, illegible text, appearing to be several paragraphs of a document.







ԿԱՐԳԱՑՈՒՆԵԼԻՔ ԲԱՆԵՐ

ՇԱՀԵԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՐԱՏՆԵՐ

ՊԶՏԻԿ ՆՕԹԵՐ

ՀԱՄՈՎ ԽՕՄԻՆԵՐ

ԵՒ . . . ՈՒՐԻՇ ԲԱՆԵՐ :



ՄԵՐ ԵՐԳԻԾԱԲԱՆՆԵՐԸ

ԲԱՑ Ի մեր հանրածանօթ լալկան գրական-
նութենէն, ունեցած ենք նաև և ունինք ալ
զուարթ, երգիծական գրականութիւն մը, որ մեր
միջավայրէն ծնելով ու անով զարգանալով կրցած
է շատ իսկատիպ բաւական էջեր արտադրել, ^և և
քանի մը եզական վարպետներ հասցնել :

Մեր հասարակութիւնը մեր բոլոր գրողներէն
ամէնէն աւելի իր երգիծաբանները սիրած է, և
Պարոնեանի, Այվազեանի, Սվաճեանի և նմաններու
անուաններն են որ ամէնէն աւելի ծանօթ են իրեն,
զորս ամէնէն աւելի հաճոյքով կ'արտասանէ :

Ասոնց էջերէն լաւագոյն փուռնջ մը կազմել,
է՛ն ազուր գիւտերնին քով քովի բերել ու անով
ամբողջական գաղափար մը տալ մեր երգիծաբա-
նութեան վրայ, ասկէ աւելի հաճելի սկզբնաւորու-
թիւն մը չէինք կարող ընել մեր 1907ի ՏԱՐԵՑՈՅՑԻՆ
համար, և ասոր համար էր որ կանչեցինք մեր համ-
բաւաւոր Միւնսը, ամէնէն կարողը այդ փուռնջը
լաւագոյն կերպով շինելու. ու իր հանրածանօթ

բարեացակամութեամբը մեր Միւնոսը սիրով ընդունեց մեր առաջարկը, հոս ու հոն վազեց, հարիւրաւոր թերթեր ու գիրքեր թղթատեց, յոգնեցաւ, քրտնեցաւ, ինք ալ սիրուն բան մը պատրաստեց, ու վերջապէս յաջողեցաւ այնպիսի գեղեցիկ ու ճաշակաւոր փունջ մը պատրաստել, որ վատահ ենք, մեզի չափ, մեր ընթերցողներուն ալ պիտի գեղեցիկ վայելք մը պատճառէ:

ԿԱՂԱՆԳԸ

ՄԵՐ ԵՐԳԻՄԱՅԱՆՆԵՐՈՒՆ ԱԿՆՈՑՈՎ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Մեր ամէնուս հայրիկը, հարազատ հայրիկը մեր բոլոր երգիծաբաններուն. Պարոնեանը փառաբանել, նոր բարիչոյս:

Կ'ըսեն թէ անիկա գրած է խնդալով բարոյականացնելու համար իր ընծերցողները, իսկ ես կը պնդեմ թէ անիկա գրած է լոկ, գրած ըլլալու համար, և եթէ այսօր ծակ մը ըլլար, ուրկէ կարենար նշմարել թէ որչափ երկինքները կը հանենք զինքը, գրաւ կը դնեմ թէ ամէնէն աւելի զարմացողը ինք պիտի ըլլար:

Սրճարանի սեղաններուն զլխաւոր amateur, ալքոլը մասամբ եղած է զլխաւոր ներշնչող Մուսան իր անմահ հրաշակերտներուն: Տեսնք ալքոլին գրական ծառայութիւնները. — ականջը խօսի թաւշանձեանին:

Ժամանակակիցները անոր արժէքը չկրցան գնահատել, բարեբաղդարար մենք սկսանք գնահատել՝ մեռնելէն ետքը. աս ալ բան մըն է:

Երկար էջեր չպիտի առնենք իրմէ բանի որ ամէնուն ծանօթ են անոր գործերը, զատ հատորներով ալ հրատարակուած ըլլալով:

ՊԱՐՈՆԵԱՆԻ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԿԱՂԱՆԳԻ ԱՌԹԻԻ

Կը բարեմաղթեմ՝

Մօտիսթրաններուն՝ ապուշ կնիկներ:

Բժիշկներուն՝ երեւակայական հիւանդներ :
 Քահանաներուն՝ առատ առատ հարսնիքներ :
 Սրճարանապետներուն՝ պարապ պտրտողներ :
 Վալուժածիներուն՝ հարուստ ակէվրածիներ :
 Փաստաբաններուն՝ կնճռալի գործեր :
 Հաշուագէտներուն՝ խարդախեալ տեսարակներ :

ԱՂԵԿ Կ'ԸԼԼԱՅ

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ այս տարի քահանաները
 տուտիկներով չերթան, այլ աշխարհականները տուն
 օրհնենքի երթան քահանաներուն :

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ այս տարուան օրացոյց-
 ներուն մէջէն՝ Ծնունդ, Բարեկենդան և Զատիկ
 բառերը վերցնել, մեքսիքի դուռ չբացուելու
 համար :

Աւելի աղէկ կ'ըլլայ որ աշնիներէն կերակուր
 ուտողը՝ կերակուր չկերած բսէ որ դրամ չունի,
 վերջը չելլէ պօռայ ըսելով թէ՛ հրամմէ՛ կոկորդէս
 հանէ կերած կերակուրս :

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ օրացոյցներու մէջ Մեծ-
 պահոց օրերը շատնան՝ միտին գինը վար իջնելու
 համար :

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ կարճահասակ մարդոց ո՛չ
 թաղականութեան և ո՛չ հողաբարձութեան քուէ
 տրուի :

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ քիչ մը ժամանակ կնիկ-
 ները շուկայ երթան և էրիկ մարդիկ տունը նստին
 չօրապ հիւսելու :

Աւելի աղէկ կ'ըլլայ՝ այս տարուան հագուստ-
 ները գրպան չունենան :

ԳԷՈՐԳ ԱՅՎԱԶԵԱՆ

ԱՂԲԱՐԻԿԸ՝ Աբրահամ Այվազեանին

— Գէորգ Այվազեանի մասին ինչ գիտես, կը հարցնեմ իրեն ժամանակակիցի մը:

Ու իր «ժամանակակիցը» կը պատասխանէ ինձի.

— Շէն, զուարթ, վեհանձն, զուարճախօս, անհոգ, Բագոսի խնկարկու, բարի, ազնիւ...

Հաճեան, Սագաեան և Այվազեան, ահա այդ ժամանակուան անբաժանելի գրական եռոտանիին երեք անդամները, որոնք կեանքի հաճոյքը գիտէին վայելել անպղտոր և Բարեկենդանին՝ իրենց քահաններով կը լեցնէին փողոցները:

Երբ դրամը հատնէր՝ անմիջապէս իրենց Թերթը կը հրատարակէին, իսկ երբ իրենց գրականները քիչ մը կուտ մտնէր, ալ վո՛ւշ փաթշապըն:

Կեանքի լաւատես իմաստասիրութիւնը հասկցած մարդիկ էին ամէնքն ալ, մանաւանդ Գէորգը, որ կեանքը կը հասկնար խնդալով, հաճոյքը՝ խմելով և գրականութիւնը՝ խնդացնելով:

Թերեւս բարձր գրականութիւն մը չէր անոր մշակածը. ինչ փոյթ իրենս Բաւական էր որ գրածները կը լսաիէին ու կարդալէ յետոյ կը բացագանչէին հիացած՝

— Վնյ, լակոտ Այվազեան... :

Տեսէք Աբրահամի աղբարիկը ինչ կ'ըսէ կաղանդի մասին:

Կ Ա Ղ Ա Ն Դ Ա Բ Ա Ն Ո Ւ Յ Ի Ւ Ն

Մէկ քանի օրերէ ի վեր ամէն կողմ և ամէն տուն եփելու՝ թափելու՝ վերցնելու՝ կլլելու և իրարու խառնաշփոթ ապուր հաւնեցնելու իրարանցում մը կայ:

Այս տնական իրարանցումին և գոռում գոչումին մէջ չկայ մարդ մը որ այս եօթը ըռախիի օրն է ըսելով՝ եօթանասնեկին եօթը ըռախիները կլլելու և քէօռ գինով ըլլալու փորձ մը ըրած չըլլայ:

Օղիին անխնայ գործածութեան վնասակարու-
րութիւնը ամէն մարդ գիտէ և կը քարոզէ, բայց
այսու ամենայնիւ չկայ մարդ մը՝ թէ փիլիսոփայ,
թէ գրագէտ, թէ խմբագիր, թէ բժիշկ, թէ կղեր,
եւ այլն որոնք եռտիականութիւնը չսիրեն ու
չպաշտեն:

Ինչպէս որ թէ Գաղղիոյ և թէ Անգղիոյ մէջ
ամէն տարի մենամարտներու, անձնասպաններու,
ծովուն մէջ կորսուողներու վիճակագրութիւնները
կ'ըլլան, մենք ալ օր մը եթէ հարկ ըլլայ, օղիի
տակառին տակ պայթողներուն վիճակը պիտի ստո-
րագրենք:

Այս կերուխումներուն օրը, եռտիականութեան
համար նուիրական օր մը սեպելով, Մեփիստոփել,
իր մէկ քանի խմեալ ընկերներովը չափէ դուրս
կլլած, Կաղանդին օրը մեզ ներկայացաւ, և իր
հեղինակած Կաղանդաբանութիւն անուն գիրքը
մեզ նուիրելով ըսաւ.

— Պ. Մամուլ, այս հեղինակութեանս կարե-
ւորութիւնը ձեր յառաջիկայ թերթին միջոցաւ ծա-
նուցանելնիդ կը խնդրեմ:

— Ի՞նչ հեղինակութիւն է:

— Քերականութիւն քերականութեանց է, որ
բացի քերականական կանոններէ, կը պարունակէ
նաև քօքօզաբանութեան հոլովները և աւուր պատ-
շածի դէպքերուն բացատրութիւնները:

— Կարծեմ քերականութիւններու սով չկայ և
որչափ հեղինակ, այնչափ ալ քերականութիւն ու-
նինք:

— Ատի բարի, բայց իմ հեղինակած քե-
րականութիւնս ո՛չ Գարագաշեանի կը նմանի,
ո՛չ Գարակէօզեանի, ո՛չ Չալրխեանի, ո՛չ Չար-
բրխեանի, ո՛չ Փէշտիմալճեանի, ո՛չ Սափլուճ-
եանի, ո՛չ Չամիչեանի, ո՛չ Յրնտրխճեանի, ո՛չ Չա-
մուռճեանի, ո՛չ Սալտրրումճեանի, վերջապէս և ո՛չ

ալ Ներսէսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Տէր Արիստակէսեանց, Տէր Մեսրոպեանց, Տէր Գէորգեանց, եղիցի . . . ը . . . Անտօնի, Պօղայ, Մակարայ, Ռնուիրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի . . .

— Մեփիստօփել, խմեա՞լ ես, ի՞նչ ես, ի՞նչ կ'ըսես :

— Ի՞նչ պիտի ըսեմ, ո՞րչափ դպրոց՝ այնչափ ալ քերականութիւն ունինք, իմ քերականութիւն չսորվելու պատճառս ալ միայն այս էր. ո՞ր դպրոցը գացի նէ քերականութիւնս փոխեցին :

— Իրաւունք ունիս, բայց քու հեղինակած քերականութիւնդ ի՞նչպէս է :

— Բոլորովին տարբեր, եթէ կ'ուզես քեզի մէկ քանի կանոնները ըսեմ, հոլովներէն սկսելով :

— Ըսէ նայինք :

— Ուղղական . Ահա՛ դարձեալ կաղանդ եկաւ, Սեռական . Ծակաչքներուն քէֆը բերաւ .

Տրական . Պէքճի, սախա, տնտես, վարժիչ, Գործիական . Ժամկոչ, քէհեա, ծառայ, ցրուիչ,

Պառարական . Լեզունին թիզ մը դուրս ձգած, Հայցական . Պախշիշ կ'ուզեն, քսակդ բա՛ց .

Բացառական . Պան չունիս նէ դուն տրտայ, Պատմական . Անոնք ճէպըդ նային վիրայ .

Ներգոյական . Ունիս չունիս կ'ուզեն պըլիկ, Կոչական . Քեզմէ կ'աւանտս դրինկ դրինկ :

Գանք բայերուն՝

Սահմանական ներկայ . Հինգ դրշ . Ժամկոչին կուտամ . Անկատար . Պեճնիին հոս չէ կ'ըսեմ .

Կատարեալ . Սախային սիշիմ մը հաց կուտամ .

Ապառնի . Տնտեսին վաղուան կը ձգեմ .

Հրամայական . Ծառային կորի՛ր կ'ըսեմ .

Ստորադասական . Վարժիչին աղան ֆե՛ժ չունի կ'ըսեմ .

Անորոշ դերբայ . Ցրուիչին դուռը չեմ բանար .

Անցեալ . Քեհեային անուշ մը կը հրամցնեմ .

Ապառնի. Փեֆ որ չըլլայ նէ ես ալ կ'առնեմ կը քալեմ:

— Այդ հեղինակութիւնդ ե՞րբ և ո՞ւր ըրիր:

— Մտիկ ըրէ որ ըսեմ:

Կաղանդին գիշերը իմ բարեկամիս Բարսեղ աղային տունը երթալու համար տեսայ որ ամէն կողմ ուրախութեան և ցնծութեան աղաղակներ կը լսուէին, թատրոններու և պարահանդէսներու դռները լուսավառ ձայներով զարդարուած էին և ալթօզի տղայոց խումբերը մէկ մէկ խոշոր լապտերներ ձեռքերնին բռնած Այի Վասիլ Խրիթի ըսելով՝ ամէնուն տուները վար կ'առնէին. միւս կողմէ ալ սիրահարներ մէկ մէկ փունջ ծաղիկ բռնած ձեռքերնին իրենց սիրուհիներուն տուները կը վազէին նոր տարի շնորհաւորելու համար. հէլէ այս վերջինը որ տեսակ մը խենդութիւն է, Աստուած ճիշտանիս գլխուն շտայ:

Ես ալ ասկէց առաջ լսած ըլլալով որ Մերկերիոս աղա նոր լօգանթա մը բացեր է և աժան գնով փոր կը կշտացնէ, այն կը փնտռէի աժանութեանը քարնահ ընելով, զոր բարեկամիս մէկը ցուցուց՝ սա փողոցին ծայրը Օթէլ տէ գ'էմպէսիլը հարցուր և ներս մտիր ըսելով:

Հոն երթալով տեսանք որ շարխալը և անշարխալը շատ մը մարդիկ փառաւոր սեղանի մը վրայ նստած կ'ուտէին և կը խմէին: Սպասաւորին մէկը մեզի ալ այն սեղանին վրայ նստած տեսնելով՝ շիւսս մը բերաւ որ աւելի կերակուրներու հայերէն անուանց բառարան մ'էր քան թէ շիւսս մը, որուն ցանկը ընդօրինակեցի որ հետեւեալ կերակուրներուն անունները կը պարունակէր՝

Քաղաքային ապուր՝ Շեհրիշե չօրպասը.

Մոխրակոխեաց՝ Քիւշ պասը.

Մի խնայեր՝ Քըյնս.

Կղերապօրանի՝ Փափագ եսհնիսի.

Իզմիրեան լօլօ՝ Իզմիր ֆօփթեսի.

Մի գոցեր՝ Գափարնա .

Պարթեւագլուխ՝ Լահանա .

Քառասուն շտեմարանք՝ Քերեվիզի, պարնիալը
եւայլն պասը .

Ժայռածուկ՝ Քայա պաշրոլ .

Շինծու լեցուած՝ Եաշաննը սօրնա .

Աղամանդեայ՝ Էշնասիկ .

Սահիլ՝ Գայնաֆ .

Կարկանդակ Անկուրիոյ՝ Էնկիւրիւ պօրեկի .

Խորանարդ խմոր՝ Փագաւա .

Տապկացեալ խմոր՝ Եաւը քասայիֆ .

Խաթունամատն՝ Գասըն քարնաղը .

Կտաւեղէն՝ Քեթեկն հեշիւ .

Մօրուք Մծքնայ հայրապետին՝ Թեշ գասայիֆ :

Այս կերակուրներուն մէկ քանիններուն անուններէն յափշտակուելով՝ բերել տուինք և կերանք, և վերջէն դուրս ելած ատեննիս մեզմէ մէծիտ մը ուղեցին : Մենք ալ տեսանք որ առանց մէծիտը տալու դուրս չպիտի կրնանք ելլել, և ելլենք ալ նէ հրաշափառ խայտառակութեամբ պիտի ելլենք, ուրիշ անդամ ալ հոս չգալու ուխտադրութեամբ մէծիտը տուինք, որուն վրայ գլուխս տաքցած՝ ուղղակի Բարսեղ աղային տունը գացի, ուր տղաքները սիւնիթ կ'ուղեմի, խաչ կ'ուղեմի աղաղակ մըն է բրցուցեր էին :

Յ. Գ. ՍՐՎԱՃԵԱՆ

ՍՐՎԱՃԵԱՆ, անա ձեզի 1850ի երգիծարան մը, որ իր հասկըցած կերպովը կը խնդացնէր իր ժամանակակիցները :

Հիմա, երբ Սրվաճեանը կը կարդանք, կը մտածենք թէ իր երգիծարանի համբաւին այնչափ ալ արժանի չէ ինքը, և թէ իր լաւագոյն գրուածները հիմա ոչ իսկ ժպիտ մը կը բերեն մեր շրթունք-

ներուն վրայ, բայց ով կը վստահեցնէ մեզ թէ ապագային նոյնը չպիտի ըլլայ մեր աննման Ալփիարին կամ Կորեբէն մէկուն համար ալ: Պիտի կարգան օրինակի համար Բաշի սառնուշը կամ Օփոփոնախը ու պիտի ըսեն՝

— Ի՛նչ պապած ապուր բան:

... Սըվանեանի Մեղուները թղթատած ատեննիս կարգ մը խառնաշփոթ, լուրջ, բանասիրական ու զաւեշտական գրութեանց միջև կազանդի թիւի մը մէջ հանդիպեցանք յօդուածի մը ուր 1850ի երգիծաբանը «Շնորհաւոր ծնունդ» բարեմաղթելէ ետք իր ընծերգուհիներուն այս առթիւ կը փութայ կարգ մը խրատներ տալ անոնց:

Հետաքրքրական պիտի ըլլայ անշուշտ կարգալ թէ 1850ին ի՞նչ տեսակ խրատականներ կը տրուին եղեր հայու կնիկներուն:

ՄԵՐ ԿՆԻԿՆԵՐՈՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԵՐՋԱՆԻԿ ԱՊԱԳԱՅ

ԿԸ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԻ

Ներեցէ՛ք մեզի որ, երբոր չկրցանք տարուան առաջին օրը շնորհաւորել ձեզ ու այսօր Քրիստոսի ծննդեան առթիւ փոքր ինչ ո՛ւշ կուգանք ձեզի հետ ալ քիչ մը խօսելու, և փոխանակ քաղցրութեան, որ կերպով կը խօսին մարդիկ ընդհանրապէս ձեր հետ, դառն ժպիտով մը պիտի խօսինք ու ձեր պաշտօնը, ձեր դերը և ձեր պարտաւորութիւնները պիտի ճանչցնենք:

Իգական սեռը կոչուած է աշխարհ, անոր տիրելու համար և մարդկային սեռին բաղդը անոր ձեռքը յանձնուած է: Եթէ անոնք չկրթեն իրենց զաւակը և չուղղեն անոնց սիրտը, նոր սերունդը ո՛չ իրեն կրնայ օգտակար ըլլալ և ո՛չ ուրիշին:

Հայ տիկիներ, դուք գիտցէ՛ք թէ Մեղուն ձեր բարեկամն է, ձեր բարեկամն ըլլալուն համար է որ երբեմն երբեմն ձեր պակասութիւնները ձեզի կը գիտցնէ, որպէս զի վերցնէք այն պակասութիւն-

ները և ամէն մարդ ձեզ անարատ գտնէ և գովութեանց արժանի ըլլաք :

Իսկ ձեր պակասութիւնները չի կարծէք որ այն ոչինչ և նուազ արժէք ունեցող բաներն են միայն , որ շատ անգամ երեսնիդ տուած ենք , չէ՛ , անկէ մեծ պակասութիւններ ունիք , որ ասկէ առաջ գրուցէինք նէ՞ գուցէ չպիտի հասկնայիք , այլ այսօր վստահ ենք , որ քիչ շատ պիտի հասկնաք և անոնց վերնալուսն , միանգամայն և ձեր պարտաւորութեանց անթերի կատարուելուն հոգ պիտի տանիք :

Ձեր պակասութիւնը չէ թէ միայն քրիստոյններու զօրութեամբ ձեր մէջքը բարակցնելու աշխատելնիդ է , որով դուք հիւանդոտ և ձեր զաւակները սկար կ'ըլլան : Ձեր պակասութիւնը չէ թէ միայն ձեր պչրանքին համար չափազանց շռայլութիւնն է , որուն պատճառաւ դուք օր մը պիտի աղքատնաք և այսօրէն ձեզի նմանիլ կամ հետեւիլ ուզող միամիտ աղքատ աղջիկները անօթի կը թողուք : Ձեր պակասութիւնը ոչ թէ միայն ժամանակնիդ պարապը անցնելնիդ է և միմիայն մօտայի , նորաձեւութեանց ու խաղերու վրայ շատախօսութիւն ընելնիդ է : Ձեր պակասութիւնը ոչ թէ միայն անհամաձայն գտնուելնիդ է ձեր մարմնոյն կէսին հետ , այն է ձեր ամուսնոյն հետ , որով մեծամեծ խռովութեանց տեղի կուտաք տան մէջ : Ձեր պակասութիւնը ոչ թէ միայն չափազանց քնքուշ , երկչոտ , խաղասէր և ապուշ դաստիարակելն է ձեր տղաքը , որով օր օրի մարդկութիւնը կը վատթարանայ և ապագայ սերունդին արիւնը կը պակսի ու կը տկարանայ :

Ձեր պակասութիւնները ասոնք չեն միայն . հապա այս պակասութեանց երեսէն Աստուծմէ ձեր վրայ տրուած պարտաւորութեանց անհոգ զանցառութեամբ մը յառաջ բերած պակասութիւններն ալ կան , որ մեծ են քան ասոնք և աւելի մնասակար :

Թերեւս աչք խփէինք քիչ մը ձեր քրիստոյններուն , եթէ ձեր միտքն ալ բարակցնելու հոգ տանէիք : Թերեւս միսիթարուէինք ձեր շռայլութեան վրայ , եթէ տեսնէինք որ ձեր ապրանաց համար վատնած գումարնուղ մէկ մասն ալ ձեր մտքին լուսաւորութեան համար կը վատնէք : Թերեւս մեր գլուխը այնչափ չցաւցներ ձեր անհատնում սնտոխարանութիւնները , եթէ անոնց կարգին մէջ երբեմն ալ լսէինք միտք արթնցնող , սիրտ մաքրող և հոգի արիացնող խօսքեր : Թերեւս ձեզի կողմնակցելով մտիկ ընէինք ձեր ընտանեկան վէճերը , եթէ անոնց գէթ փոքրագոյն մասին նիւթը ընտանեկան ապագայ բարեկարգութիւնը և ժառանգներուն կենաց ապահովութիւնը ըլլար : Թերեւս ներէինք ձեզի ձեր տղաքը քնքուշ մեծցնելնիդ , եթէ աշխատէիք միանգամայն զանոնք խորհող և խօսեմ ու դիւրազգած ընելու :

ՅԱԿՈՒ Մ. ՀԱՃԵԱՆ

ՍԱՆՏԸՐ-ՊՈՒՐՆՈՒԻ գինետան հերոսը — խօսքերնիս Յակոբ Հաճեանի համար է — գրականութենէ աւելի օղիաբանութեան մէջ է որ նշանաւոր հանդիսացած է : Իր նախասիրած գլխաւոր նիւթերը. — Ա. Օղի, օղիաբանութիւն և Բարոս. — Բ. Անկուտիները, անկուտիութիւն և անկուտիաբանութիւն. — Գ. Մեր ճատը կնիկները. անհատնում նիւթը, որուն շարքը հիւսած է ամենագաւեշտական գռեհիկ տեսարաններով :

Գրագէտ մը. — երբէք այդ տեսակ յաւակնութիւն չէ ունեցած մեր սիրելի Հաճեանը. անոր նպատակն էր *coûte que coûte* խնդարնել իր ընթերցողները և գրեթէ միշտ յաջողած է, անոր համար որ կեանքի մէջ ալ կուշտուկուռ խնդացող մը եղած է՝ հակառակը Պարոնեանին, որ բնածին Մոլիէռեան մելամաղձոտութիւն մը ունէր :

Բանագողութիւն կամ ոչ, Հաճեան ունի նաև քանի մը վէպեր ալ, խիստ յաջող իրենց «Թերթօնական» սեռին մէջ :

Ահաւասիկ թէ ինչ կ'ըսէ Հաճեան, Կաղանդի մասին :

Կ Ա Ղ Ա Ն Ղ Ը Ե Կ Ա Ի

Կաղանդը եկաւ, մրգավաճառներն իրենց
 սերկիները պարզեցին, գինեպաններն ալ գոյնզ-
 գոյն թուղթերով շինուած իրենց միակ զարդերը
 կախեցին, փուռերուն մէջ սիւսիթներուն խմորները
 շաղուիլ սկսան, փռապաններն ալ իրենց աշկերտ-
 ներուն խուշ-խոււճի շինելու ձեւը սովրեցնել կը
 ջանան, շաթերնաճիները թեւխաղ եղած պատրաս-
 տուիլ սկսան, փողոցի տղաքն ալ խաւնաթաներուն
 տակը ծակելով տեղի կը փակցնեն. սախան, պեխ-
 ճին, ժամկոչը, խախվեճին, ցրուիչը, տնտես,
 վարժապետ, բոլորը ձեռքերնին ետաղաւիշ ընել
 սկսան վասն գալստեան Կաղանդի պախշիշին :
 Տղաքը վզտուքը բրցուցին «հայրիկս ի՛նչ պիտի
 տայ, մայրիկս ի՛նչ պիտի տայ» ըսելով : Տանտի-
 կիներն ըսես գլուխ քերելու ատեն չունին. սա
 անուշապուր է, նուսու է պիտի հասնի, գերտէն ալ
 Ծնունդ երթեսի գերտէ փիշաւ կ'ըլլուի, քեղքէն
 պակաս ընես նէ տունէն մարդ կը պակսի, փրասս
 տղանսին բէք աղէկ կ'ուտուի, թահաւը թօփիկ
 մ'ալ դնենք նէ կերակուր եփող տէյի ինծի կ'ըսուի :
 Օրիորդներն ըսես գիշեր ցորեկ կը հալին, կը մաշին
 սիրականնուն, նշանաճնուն բերելիք ընծային կը
 մտմտան, նոր հարսերն ըսես իրենց փեսաներուն սէր
 մըն է տուին, առաջին և վերջին կաղանդչէքը հախ
 ըրին : Էրիկ մարդիկներն ըսես քանի մ'օր մօրուքնին,
 թուշերնին ինչ որ գտան ձեռք առին մտմտացին,
 նայեցան որ ծարր, պոչը չիկայ նէ օխտը ռախիին
 ճամբան բռնեցին, եօթանասունը եօթնի հանեցին,
 իրենց տանը ճամբան կորսնցուցին : Տէրտէրները
 ծնունդին տունօրհնենքները աչք առնելով խոշոր
 խոշոր կաղանդի մասրաժ մըն է բռնեցին : Գրա-
 գիրները, ծառաները, մշակները և այլ հրամանի

տակ ծառայողները չափերնուն չվայլած ծախքեր ընել սկսեցին : Խմբագիրները բաժանորդագին ժողովելու համար ջանք ու ճիգ չմնաց թափեցին : Թօհաճճիներուն խանութներն ըսես՝ ասեղ ձգես, գետինը չիյնար, հասնողը բան մը գնել ու կաղանդչէք տանիլ կը փափաքի : Բարելոնի խառնակութիւնն ալ Մահմուտ փաշայի զառիվերին վրայ փոխադրուեցաւ, ամէն լեզուով գուզաս ծախող և յաճախորդ հրաւիրող կայ :

Վերջապէս դեկտեմբերին և տարւոյն վերջին օրն իրիկուն եղաւ. ամէն մարդ առնելիքը կանուխ գանձելու հետամուտ եղաւ և տալիքին համար ալ քիչ մը ետքը ըսելով կծիկը դրաւ : Ես ալ, իշ պու ես՝, կամայ ակամայ անոնց հետեւեցայ, որովհետեւ ուրիշ ճար չգտայ : Առաջ մէյ մը տուն հանդիպեցայ, սա՛ պէտք է, նա՛ պէտք է, մս կ'ուզենք, մ'ն կ'ուզենքի յայսմաւուրքը մէյ մը մտիկ ըրի, նայեցայ չպիտի ըլլայ, առի քալեցի : Իմ սովորական զբօսարանս գացի որ ի՞նչ տեսնեմ, խառնիճաղանձ բազմութիւն մըն է լեցուեր է, շաթեռնաճի, չաշորճի, սիւնպեղեկճի, գուռնաճի, սիւմիթճի, չեօրեկճի չէ մնացեր, հոն խոնուեր է : Խանութը բանեցնողն ալ ֆօլեաֆով, իֆսիրով խօնչա մըն է շտկեր, եկողին գացողին հրամցնելով պախշիշ առնելու կը նայի և խանութին բոլոր գործերը երեսի վրայ ձգեր է : Այս իմ հաշւոյս ամենեւին չեկաւ, ուստի պարտաւորուեցայ դուրս ելլել, բայց կանուխկեկ տուն ալ երթալ չէր ըլլար, որով ուրիշ զբօսարան մը գացի, նայեցայ հոն ալ միեւնոյն խառնակութիւնը և միեւնոյն կծկելու գործողութիւնը ինձի համար : Ելայ սրճարան մը գացի, տեսայ որ հոն ալ խօնչան շտկուեր է, ֆօլեաֆի իֆրան կայ : Մնաք բարով ըսածիս պէս, շիտակ շունչս տուն առի, ուզածներնէն քանի մը բան գնելով աուն երթալն ամէնէն կարճ ճամբան գտնելով :

Հիմայ, կը կարծէք թէ տունը մեծ հանգիստ մը ունեցայ և քիչ մը շո՛ւնչ առի, բոլորովին կը սխալիք, ինչպէս որ ես ալ սխալեցայ: Հազիւ թէ նստեր էի, չա՛թ դուռը զարնուեցաւ, լրագրին ցրուիչը եկաւ, հանեցինք քառորդ մէճիտ մը տուինք, հեղաղ ըլլայ ըսինք, մարդը լրագիր բերելու համար քիչ կը յոգնի, մէկ մըն ալ ստակի համար մեր գնա՛, եկուրի՞ն խաբենք:

Սանկ տեղս տեղաւորուեր էի կամ ոչ, դուռները վար բերել սկսան. գացի տեսնել թէ ո՛վ է: Դուռը բացի չի բացի, երկու հոռոմ սինլքորներ, մէկը տակը ծակ խանաթս մը և միւսն ալ շուրջը կարմիր թուղթ փակցուած լապտեր մը բռնած աղմուկ մը, արպեճս մըն է բրցուցին. ի՞նչ է եղեր, «այիօզ վասիլիս էրքէթէ» . ասոնց ալ չախ մը տալով վռնտեցի և գացի տեղս նստայ:

Վերջապէս՝ աղքատը գնաց, շաթեռնանին եկաւ, խանաթայով տղաքը գացին, խոռչ կամ խոռնրոնճիները եկան, ո՛չ հանգիստ քանի մը հատ կոնծելու թող տուին և ոչ ալ պատառ մը բան ուտելու հրաման:

Փողոցին ժխորն ըսես, գլուխս խազան դարձուց, ես ալ բարկանալով, հայհոյելով, և այլովքն պարագայովք, անկողինս մտայ և բարկութիւնս լիովին քունէն առնել ջանացի:

Առաւօտուն կանուխկեկ մը ելայ, տարի գլուխ այնպէս ըլլալու համար, և մտածելով որ այդ օրն ալ անհանգստութեան օր մըն է, ձգեցի դուրս ելայ և ուղղակի բարեկամիս Բարսեղ աղային տունը գացի, մտածելով որ թերևս անոր նստած թաղը քիչ շատ ֆիպարի ետքախ ըլլալով, այնչափ մեծ անհանգստութիւն մը չեմ ունենար:

Երբ Բարսեղ աղային տունը գացի, տղաքը արդէն սիւնիք կ'ուզեմի, խոռչ կ'ուզեմի լաց մըն է բրցուցեր էին:

Տեսայ որ խեղճ բարեկամս ալ սենեակին մէկ անկիւնը քաշուած և տետրակները առջին տարեկան հաշիւները նայելու զբաղած էր :

Հազիւ հազ բարեկամիս քովը դացած և խօսքի սկսած էինք մէյ մըն ալ յանկարծ դուռը զարնուեցաւ :

— Հայրի՛կ, սախաքն է :

— Տիշիւ մը հաց տուէք :

Դուռը գոցուելուն պէս նորէն զարնուեցաւ :

— Հայրի՛կ, ժամկոչն է, փորթուզալ մըն է բերեր :

— Ետ տո՛ւր, ի՞նչ պիտի ընեմ, հոս փորթուզալ չկա՞յ :

— Հայրի՛կ, ախպարս կէսը կերաւ :

— Աստուած պէշանիդ տայ, սա հինգնոցը տարէք :

Բարեկամս դարձեալ գրիչը ձեռք առած թէ ոչ, դարձեալ չա՛թ :

— Հայրի՛կ, ֆեխեան է :

— Անուշ մը տուէք :

— Հայրի՛կ, պախաշին մանչն ալ եկաւ, սա՛ նուռը տուաւ :

— Ծօ՛, նե խաշք ետր, գաթոււնու ըրահաթ պրա՛ֆեսայանագլար մը, հիմա բերողին ալ կը պաշշայեւ, տուողին ալ, բան մը տուէք ճե ճամբեցէք, Տահա մնա՞ց :

Մարդը դեռ այս սովորութեան վրայ տրտնջալու վրայ էր մէյ մըն ալ նայիս պե՛ճին իր հաստը սօխան ձեռքը առած՝ դուռը ձեռք առաւ :

— Բարսեղ աղա, պե՛ճին ալ եկեր է, պան մը տա՞ս պիտի :

— Հիմա եանկըն վար ճեյի կը պոռամ, հոս չէ՛ ըսէք պէ՛ :

— Քա ասանկ օրով անանկ պան կ'ըլլա՞յ :

Խեղճ բարեկամիս ճարը հատնելով՝ պատուհանը բացաւ և ըսաւ .

— Այ պաշը կեղ, շիւնսի եվ սահապը պուրսս սեյիդ:

— Պուշո՛ւր:

— Պուրսս եօզ, պուրսս եօզ:

— Պեկ սյըրիս իսեւիյըրըւն, պախշի՛ւշ, պախշի՛ւշ:

— Քա սըւոր քառասուն փարա ափը տուէք սե՛ սե՛ժ ըրէք երթայ, աւօթ է:

Այս ձայները հազիւ դադրած, մէյ մըն ալ տղաքները սկսան:

— Հայրիկ, պախշիշ տուր որ երթանք վարժապետէն պարկենք առնենք, քովի Յակոբը առեր եկեր է:

— Տահա՛ կանուխ է:

— Քա՛ նանըւն Բարսեղ աղա, սա չօնուխներուն ի՛նչ պիտի տաս նե տուր, սօղրա կը մոռնաս կ'ելլաս կ'երթաս:

— Տա՛մ հե՞, տա՛մ, ո՞ւրկէ առնելու է որո՞ւ տալու է:

Այս ըսելով՝ տետրակները դարձեալ ձեռք առաւ և սկսաւ հայհոյելով, օժերով, բիւժերով, հաշիւը շարունակելու: Այդ միջոցին աչքիս պոչովը տետրակին վրայ նայելով, ի՛նչ տեսնամ աղէկ, տեսայ որ մարդը 80,000 ղրշ. դրամագլուխ ունի եղեր, 90,000 ղրշ. շահեր է, այս աղէկ պիտի ըսէք, բայց սօնը նայեցէք, ծախքն ալ 136,000 ղրուշ:

Ես ալ մեծ հետաքրքրութիւն մը ունեցայ ծախսած դումարին ի՛նչ բանէ գոյութիւն առնելը հասկնալու համար և բարեկամիս քիչ մը դուրս ելած ատեն կամացուկ մը տետրակը բանալով կարդացի որ ի՛նչ կը նայիս, օհօ՛, ֆիւթան, ֆիւթան, ֆիւթան, շաքիս, շաքիս, շաքիս, շաքիս, foruk, foruk, բայց foruk, գոց foruk, ֆաշ foruk, պօթ, պօթ, պօթ, սարը պօթ, ճերմակ պօթ, սեւ սկառքիկ, ճերմակ սկառքիկ, շաւսիկ, շաւսիկ, շաւսիկ,

բաշ փոռախեռ, սօթ շեւշիշե, իփիփշի շեւշիշե, ղեհաշիօն, շապիկ, սեֆօշթե շապիկ, անեվաթօշը շապիկ, կան, կան, կան, ձերմակ կան, սեֆօշթե կան, առապաի ծախք:

Թող զպախշիշս և զնօսխարաին ընծայս:

Ասոր նման շատ ծախքեր ալ կային, զորս պիտի կարդայի, բայց յանկարծ մարդուն ոտքին ձայնը առի, և տետրակը ձգելով ոտքի ելայ, և մնաս բարովը կոխելով դուրս ինկայ:

ԱՆՏՈՆ Յ. ՍԱԳԱՅԵԱՆ

Հին օրերէ մնացած հնամեայ երգիծաբան մը, որ չի յօժարիր գրիչը ձեռք առնելու վարնոցուծիւնը գործել, և որուն քովը, եթէ շարունակ ձայնագիր մը գտնուած ըլլար, սպասեցաբար հազարաւոր զաւեշտակաւն հատորներ հրատարակած պիտի ըլլար այսօր:

Գրականութեան երգիծաբանէ մը աւելի, «մահալէ խախվէսի» զաւեշտաբան մըն է, ուր «մէտտահ» ի համբաւը կը վայելէ և ուր ներկաները շատ անգամ իրենց տապալի բարդին կ'ընդմիջեն անոր սրախօսութիւններուն ունկնդրելու համար:

Je m'en fichisme ի կատարելագործեալ մարմնացումը ինքնին՝ ամէնէն կենսական խնդրի մը առջև ուսերը թօթուելու ձև մը ունի որ ամբողջ փիլիսոփայական հատորներ կ'արժէ:

«Վիշտ» ըստած բանը չէ ծնած այս մարդուն համար, որ ծնած օրէն ի վեր կը խնդայ ամէնուն քիմն ի վեր:

Ինքն է որ ատենին Միւնոս զաւեշտաթերթը հանած է:

Եթէ իր իսկ գրչով մեծ բան չէ գրած, միշտ գրիչը ձեռք չառնելու տեսակ մը original սկզբունքովը գուցէ, սակայն ուրիշներուն գրչովը շատ բաներ ունի գրած, բաներ որոնք փառքի գագաթին հասած են . . . ատենին:

Սագայեան, այսօր կը պարծի իբր խմբագիր ունեցած ըլլալուն Պարոնեանը, Սըվանեանը, Այվազեանը, Հաճեանը, որոնց շատ գործեր տուն տուած է:

Ճամբան քալած միջոցին ունի մտազբաղ վիճակ մը, իբր թէ իր միլիոններուն վրայ խորհեր, կը քալէ առանց չորս դին նայելու,

և երբ ծանօթի մը հանդիպելու ըլլայ զլիու պզտիկ ու անտարբեր ճօճում մը կ'ունենայ, կարծես ըսելու պէս.

— Դուն հիմ կ'ըլլաս կոր:

Բայց երբ անկրթութիւնը առաջ տանելով համարձակիք զայն խօսքի բռնել, անտարբեր շեշտով մը կ'ըսէ ձեզի.

— Սըկէց թիւթիւնդ կուտնաս:

Ու կը շարունակէ ճամբան՝ միմոտութիւն մը մտմտալով:

Գ Ը Յ Ը Ռ Ի Ի Զ Մ

— **ՏՈՒՏՈՒՔ**, վաղը շիտակ տէր պապային գնա տէ դրուցէ քի նշանա ետ ընէ:

— Խենդեցա՞ր, օրդտի, սէպէպը ի՞նչ է:

— Պէն զաթը իչկի գուլլանըր էր. քէքտէն խօշլանմամ, սարխօշ գարը՞ մը ալաճաղըմ:

— Ծօ՛ տղայ, տիւշմանի խօսք չըլլայ:

— Նասը՛լ տիւշման, ասօր ես աշկովս քէօրբիւյին վրայ տեսայ, քէօր գինով շարխան կունակն է գացեր, խապար չունի:

— Աշկդ խաղա, տղայ, հիմակուան մօտան անանկ է, մատամ Անկօ կ'ըսեն անոր:

— Անանկ շարխան կունակէն վար պիտի իյնայի պէս դնելը մօտա՞ է:

— Հապա՛, քալելու համար պիլէ մօտա կայ, հիմա կ'իյնաս կորի պէս քալելու է:

— Աղջիկը աս մօտաները սորվեր է նէ, դուն կէնէ իմ ըսածիս պէս, կնա նշանը ետ ըրէ:

×

Հարց—պատասխանի.

— Մարդս աշխարհիս վրայ ի՞նչ արժէք ունի:

— Մեզառնիներուն հարցնելու է:

— Հարուստը աղքատէն ի՞նչ տարբերութիւն ունի :

== Աշնիներուն հարցնելու է :

×

— Գաղղիներէն շառիվարի թերթերէն ո՞վ բան կը գողնայ :

== Թասրոնի խմբագրին հարցնելու է :

— 0 —

— Աղէկ գիրքն ի՞նչ է :

== Լաւագոյն ու անշահասէր բարեկամ մը :

— Կինը ի՞նչ է :

== Անհասկնալի էակ մը :

— Դեմոսթենէս ո՞վ էր :

== Մեր տեղի ճօրճիին դասաստուն :

— Մամուշ լրագիրը ի՞նչ է :

== Տարւոյն վեց ամիսը հանգչող թերթ մը :

— Դուն ի՞նչ ես :

== Չգիտեմ :

— Հայրդ ո՞վ է :

== Մայրիկիս էրիկը :

— Գօնասլիտ խաղալոյնները ի՞նչ են :

== Տանկաշարիիշտի հմուտ անձինք :

— Դերասանուհին ի՞նչ է :

== Դերերը սորված ի գործ դնող կին մը :

— Բառագիրքն ի՞նչ է :

== Թութակի քերականութիւն :

— Զաւակն ի՞նչ է :

== Զհրաւիրուած կեղծ կոչնական մը :



ԵՐՈՒԱՆԴ ՅՕԼԱՅԵԱՆ

«ԻՆՔՁԻՆՔԻԴ վրայ քանի մը տող բան գրէ», — խնդրեցին Միւնուսին Օրագիրքին յարգելի հեղինակէն՝ (հրամանաւ) :

Ու Միւնուսին Օրագիրքին յարգելի հեղինակը (մի՛ շո հրամանաւ) փուծաց տալ իր պատասխանը, ուր տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ.

«Իմ մասիս քանի մը տող. — ի՞նչ ասկէ աւելի դիւրին» :

«Աւելի գոհ պիտի մնայի, եթէ իմ մասիս քանի մը հաստոր խնդրած ըլլայիք ինէ» :

«Ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ հիմա ինքզինքիս նկատմամբ» :

«Թէ շատ սիրուն տղայ եմ, աղուոր աչքեր ունիմ, որոնք գիտեն պաշտըն նայելու արուեստը, քօհաճ բաներ կը գրեմ, աղջիկները գիտ շնատ կը սիրեն. — ասոնք ամէնուն գիտցած բաներն են» :

«Գալով անձնական կեանքիս մտերմական մանրամասնութեանց, առտուան դէմ կը պառկիմ և իրիկուան մօտ կ'արթննամ, յօդուածներս գարեջրատուններու սեղաններուն վրայ կը մրտեմ, շատ կ'սիրտիմ աղուոր երգչուհիներէն և բնաւ՝ անոնց մայրիկներէն» :

«Կեանքս չորս հաւասար մասերու բաժնած եմ. առաջին մասը կ'անցընեմ պտըտելով, երկրորդ մասը՝ օդ առնելով, երրորդը՝ խօսելով, և չորրորդը՝ քնանալով, ասկէ դուրս երբ ժամանակ գտնեմ՝ կ'աշխատիմ» :

«Իտէպո. — չափազանց հարուստ աղջիկ մը, որ խենդերու պէս սիրահարուի ինծի» :

ԱՐԳԻԼՈՒԱԾ ՊՏՈՒՂԸ

ԳԻՏԵՔ Թէ ի՞նչ սարսափելի բան է կանխիկ դրամ առնել յօդուածի մը փոխարէն զոր պարտաւոր էք վաղը առտու հասցնել և որուն նիւթը չէք կրնար գտնել . . . :

Բայց ապահովարար չէք գիտեր թէ ի՞նչ սարսափելի բան է աս, քանի որ երբէք խմբագիր չէք եղած :

Ահա այս գէշ կացութեան մէջ էի կաղանդին իրիկունը, «կացութիւն» մը որ հակառակ «քաղաքական» չըլլալուն, նորէն critique էր:

Ի՞նչ գրել, Աստուած իմ...:

Ու ինչ գրելիքս որոշելու համար մտայ Եանին, յուսալով որ թերեւս հոն կարենամ հանդիպիլ օրիորդ Մուսաներուս, որոնք ա՛լ Պառթօլի չեն յաճախեր Գոնգորտիայի փլցուելէն ի վեր:

Զգրուած յօդուածիս դրամովը սկսայ ճաշ մը ընել, սեւազգեստ կառսօններու աչքերուն տակ, որոնք մարդուս ախորժակը կը կտրեն, մտածելով թէ ի՞նչ անտանելի է յօդուածագրութեամբ դրամ շահիլ, երբ ուրիշներ ա՛յնչափ դիւրութեամբ կը շահին պանքէռութեամբ...:

Մէկ կողմէն կը ճաշէի, միւս կողմէն գրպանիս հարստութեան և ըրած ծախքիս համեմատական հաշիւը կ'ընէի, յետոյ կերածներու additionը կարենալ վճարելու համար առանց խայտառակութեան:

Կառսօնները կ'երթային կուգային Շէքսպիրին «Բազում ազմուկ վասն ոչնչի»ն ներկայացնելով:

Գեղուհիները անօրինակ ախորժակով մը կ'ուտէին, քանի որ վճարողը փողոցէն գտնուած «անակնկալ բարեկամ»ն էր:

Ճաշս լմնցուցած ըլլալով՝

— Կառսօ՛ն, պտո՛ւղ, ձայնեցի:

Բայց գրպանիս խորունկէն խուլ ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր.

— Արգիլուած է:

Ու...

«Էվրէքա» պոռացի մէկէն ի մէկ:

Յանկարծ միտքս ինկեր էր յօդուած մը գրել... արգիլուած պտուղին վրայ:

×

Սակայն, երբ կը խորհիմ թէ վաղն առտու հրատարակիչս յօդուածիս կը սպասէ, կռնակէս պազ

պաղ ջուրեր կը վազեն, ու կը մտմտամ թէ, Աստուած իմ, ի՞նչ գրելու է այդ համբաւաւոր պտուղին վրայ որ վեց հազար տարու մը կայ և որ կամաց կամաց աշխարհիս երեսէն վերնալու վրայ է, քանի որ բոլոր արգիլուած պտուղները... արտօնուած պտուղ կը դառնան կոր ալ :

Եթէ գրելիքս հակալքողական յօդուած մը ըլլար, ձեզի չէի հարցներ, 1000-1200 տողնոց բան մը կը գրէի ու մրցանակը... չէի շահեր, սակայն «արգիլուած պտուղը»... ասոր վրայ Ադամ միայն պիտի կրնար բան մը գրել, քանի որ առաջին անգամ համը ան նայեցաւ :

Ի՞նչ դժբախտութիւն որ սակայն անոր օրով, Սահակ Մեսրոպ չէին ծնած տակաւին, որով Ադամի կերած արգիլուած պտուղին տպաւորութիւնները անտիպ մնացին :

Արդէն արգիլուած պտուղը ինքնին կորանցուցեր է իր առջի շահեկանութիւնը, որովհետեւ օրինակի համար, ատենօք, իր ֆուզիսին հետ կարգուիլը արգիլուած պտուղ մըն էր, սակայն հիմա... մարդ առաջին անգամ ի՞ր ֆուզիսին կը սիրահարուի, սափրիչութիւնը անոր գլխուն վրայ սորվելու համար :

Ու դեռ ֆուզիսը մէկդի՛, այսօրուան հայրիկները իրենց դաւակներուն զոքանչներուն հետ կը կարգուին, թէև չեմ գիտեր աղէկ թէ զոքանչները մինչև ո՞ր աստիճան... արգիլուած պտուղ կը համարուին :

×

Երբ «արգիլուած պտուղ» ըսուի, մարդիկ անմիջապէս գէշ միտքի կ'երթան : Ու ապահովաբար կը սպասեն որ փիս բաներ գրեմ, որպէս զի կարգալէ ետքը ըսեն ետեւէս. — Ձգէ սրւիկա, անբարոյականին մէկն է :

Ձէ, պարոններ, ես անբարոյական մարդ չեմ, և ատիկա ապացուցանելու համար կ'ուզեմ ձեզի

գրել բարոյալից յօղուած մը . . . անբարոյալից նիւթի մը վրայ, որովհետեւ նիւթերը փետուրներուն կը նմանին, ո՛ր կողմը փշեա, հոն կ'երթան :

Արգիլուած պտուղին պատմութիւնը ընել աւելորդ է . բացէ՛ք Աստուածաշունչին առաջին էջը, կը տեսնէք :

Տէրը ըսաւ Ադամին .

— Ադամ, ամէն պտուղէ կե՛ր, բայց այս պտուղէն չպիտի ուտես) : Ու ցուցամատովը ցուցուց արգիլուած պտուղը, որ ոչ աս էր, ո՛չ ան, այլ պարզապէս . . . խոշոր ու գիրուկ խնձոր մը :

Ադամ մինակ մնալուն՝ արգիլուած պտուղին առջև կայնեցաւ ու ըսաւ .

— Ուտե՛լ թէ չուտել, այս ի՛սկ է խնդիրը . եթէ չուտեմ, Տիրոջ հրամանին հնազանդած պիտի ըլլամ, ինչ որ գեղեցիկ բան մըն է . իսկ եթէ ուտեմ, հնազանդած չպիտի ըլլամ . . . ուրեմն կ'ուտե՛մ : »

Ու կերաւ որպէս զի վեց հազար տարի ետքը ես ճակտիս քրտինքովը ապրիմ և նշանածս . . . ցաւով ծնանի :

Միտքէս չանցնիր սակայն զինքը քննադատել . — քանի որ Գր. Մալխասս մըն ալ չեմ— . ես ալ եթէ իր տեղը ըլլայի, ճիշդ իրեն պէս պիտի ընէի, առանց միտքէս անցընելու թէ վեց հազար տարի ետքը եկողը ի՛նչ պիտի ընէր :

Արդէն շատ անգամ կ'ըսեմ .

— Աղէկ որ Ադամ արգիլուած պտուղէն կերաւ :

Որովհետեւ եթէ կերած չըլլար, այսօր ամէնքս ալ վեր վար պիտի պտըտէինք դրախտին մէջ ձեռքերնիս գրպաննիս (ա՛, pardon! ան ատեն գըրպան ալ չպիտի ունենայինք) : Ու այն ժամանակ ի՛նչ պիտի ըլլար, ա՛հ, հայ գրականութեան վիճակը . . . : Մ. Շամուանձեան այն ատեն չպիտի արտադրէր . . . իր հանելուկաձև յօդուածները, Տիրայր

Վրդ. ոտանաւոր չպիտի գրէր, Բարգէն Վրդ. չպիտի արտադրէր իր հրաշակերտները, Գր. Մալխաս չպիտի քննադատէր, Հ. Ղազիկեան բանաստեղծ չպիտի ըլլար, Չարմայր խմբագրապետ չպիտի անուանուէր . . . :

Ա, աղէկ, աղէկ, որ Աղամ արգիլուած պտուղէն կերաւ :

×

Բայց, ո՞վ ըսաւ թէ արգիլուած պտուղը միայն Եւային խնձորն է. երբ հայրիկ մը պատուիրէ իր աղջկան .

— Հոռոփ (կամ Սրբուհի, կամ Չապէլ, կամ . . . վերջապէս անուն մը), սա պարոնին հետ չպիտի խօսիս :

Ահա արգիլուած պտուղ մը որ ո՛չ խնձոր է, ո՛չ ալ . . . տանձ (թէև վերջին պարագան կրնայ վիճելի ըլլալ) :

Եւ որովհետև հայրիկը արգիլեց խօսիլ այդ պարոնին հետ, օրիորդը խօսելէ աւելի բան մը կ'ընէ, — ու կը կարգուի անոր հետ :

Ըսէ՛ք օրիորդի մը. — Կ'արգիլեմ քեզի նպարավաճառին աշկերտին երեսին խնդալ :

Ու պիտի տեսնէք թէ քանի մը ամիսէն թոքախտ պիտի ըլլայ անոր սիրոյն, որովհետև նպարավաճառին աշկերտը արգիլուած պտուղ մը եղաւ :

Արդ, այն մայրիկները որոնք չեն ուզեր իրենց աղջկան սա կամ նա երիտասարդին COUR ընելը, պէտք է միշտ գովեն այդ երիտասարդին միտքը, սիրտը, մօրուքը, պեխերը և այլն :

Կարելի չէ որ աղջիկ մը երբէք հաւնի երիտասարդի մը, որուն հաւնած են իր հայրիկն ու մայրիկը :

Ահա թէ ինչո՞ւ կ'ըսեն .

«Աղջկանդ մնայ նե գուռնանիին կը զարնուի» :

(Թէև, խօսքը մէջերնիս — գորունանիներն ալ այնչափ դէշ մարդ չեն) :

×

Անճնական օրինակ մը . s'il vous plaît?

Դպրոց գացած տարիներս, ջերմեռանդ բողոքականէ մը աւելի մոլի յաճախորդ մըն էի Ժողովարանին, ուր կ'այցելէի աստուծուն կիրակին Տիրոջ խօսքը լսելու : Դասատուներս ու մանաւանդ կրօնքի ուսուցիչս իմանալով աս՝ ահագին դայթակղութեան մը մատնուած էին, վախնալով թէ . . . չելլեն կորանցնեն հոգի մը (այսինքն իմ հոգիս) :

Բնածին համեատութիւնս կ'արգիլէ ինծի խոստովանիլ թէ քանի անգամ վռնտեցին զիս դպրոցէն :

Ու հայրական խրատներ, հայրական պատուէրներ կը տեղային գլխուս՝ անցեալ տարուան կարկուտի հատիկներուն չափ առատ :

Այլ ի դճւր, ընդհակառակը, տակաւ տարտամ փափաքներ կը զգայի քարոզիչ, պատուելի ըլլալու և միսիոնարութեան երթալու դէպ ի Չինաստան :

Ու օր մըն ալ դպրոցէն ելայ՝ բնականաբար ապագաս շինելու — (յաւիտենական խնդիր) :

Առաջին քաղրոնս՝ accordeur de pianos մը՝ երբէք չհարցուց ինծի թէ սինակո՞կ կ'երթայի թէ եկեղեցի :

Ու հիմայ ա՛լ չեմ յիշեր թէ Ժողովարանը ո՞ր փողոցը կը գտնուի և բնաւ չեմ հետաքրքրուիր, երբ ըսէք թէ Չի-Չանկ-Չու-Չափ մէջ, քանի մը հազար հոգի բողոքական են դարձեր : Ու մտածել որ եթէ մեր Տէրն ալ աշխարհը ստեղծած օրը ըսած ըլլար Ադամին . — Այս խնձո՞րն ալ կեր . . .

Ճարոնցիները Ռուսերուն հետ չի պիտի պատերազմէին այսօր :

Է՛հ, fatalité, ինտոր կ'ըսէր ողորմած հոգի բանաստեղծ մը, որ սակայն այսօր մեռած չպիտի ըլ-

լար եթէ . . . Ադամ ու Եւա արգիլուած պտուղէն
չուտէին :



Ու քանի որ անգամ մը քակեցինք intime յի-
շատակներու կծիկը, առանց անոնց յայտնութիւնը
postérité ին վերապահելու, ներեցէ՛ք որ պատմեմ
ուրիշ մանրադէպ մըն ալ, այնչափ վաւերական
որչափ . . . Ա. Այվազեանի թուականները : Տասներ-
կու տարեկանիս — ո՛ր տարիք անմեղութեան — մու-
լեռանդ պաշտող մըն էի երգեցիկ սրճարաններու
և երգչուհիներու, մանա՛ւանդ այս վերջիններուն
որոնց գունազեղ dessousները կ'ուսումնասիրէի
օղային կազերու լոյսէն կուրցնելով խեղճ աչ-
քերս :

Ամէն գիշեր café chantant! հացին պատառը
բերանս՝ կը փութայի հոն՝ սիրուհիիս տունը երթա-
լու պէս. բարեպաշտի մը երկիւղածութեամբ կը
մտնէի դռնէն ներս և աթոռիս վրայ բազմած կը
սպասէի մինչև որ կառսօնը վեց գիրը դնէր՝

— Պարոն, ալ դռները պիտի գոցենք, ըսելով :

Ս. Պատմութեան դասէս շատ աւելի աղէկ
գիտէի թէ այսինչ իրիկունը ո՞ր chanteuse ին debutն
կայ, թէ երէկ իրիկուն Օր. Լիլին հարբուխ ունէ՞ր
և թէ առջի իրիկուն Օր. Ժիւլիէդ տը Սէն-Լանտի
(Ֆրանսական բարդ ազնուականութենէն) ի՞նչ ահ-
ռելի soulographie ով զբաղած էր :

Ու երբ հարցնէին թէ ի՞նչ պիտի ըլլայ այս-
չա՛փ սէր երգեցիկ սրճարաններու, կը պատաս-
խանէի ամբողջ պաղարիւնովս .

— Etude de mœurs կ'ընեմ կոր :

Սակայն, հարկաւ կ'երեւակայէք թէ ծնողքս՝
բարքերու ուսումնասիրողի այս արտակարգ կոչումս
շատ չէին ծափահարեր, և յաճախ փոխանակ ծափ
զարնելու, գաւազանով կը զարնէին հակափորիս,
արգիլելով ինձի մէջ մըն ալ ոտք կոխել երգեցիկ-

սրճարանի մը դռնէն ներս , ուր կ'երթայի նոյն իրիկունն իսկ՝ կերած ծեծէս սփոփուելու համար :

Ես չճանճրացայ երբէք տփել բային կրաւորականէն , բայց ծնողքս ճանճրացան նոյն բային ներգործականէն :

Ու եղաւ վերջապէս օր մը , ուր , գլխարկը գլուխս դրած ատենս , կը հարցնէին .

— Ո՞ւր :

— Գափե-Շանթաւն :

— Կանուխ եկուր :

Ու շատ կանուխ (այսինքն . . . առտուն կանուխ) — կը վերադառնայի տուն : A la bonne heure, ոչ հարցնող կար , ոչ փնտռող :

Եթէ երկու գիշեր ալ տուն չերթայի , երրորդ օրը կ'ըսէին ամենապարզ շեշտով մը .

— Գափե-Շանթաւնն էիր , չէ՞ :

Բայց ասիկա կամաց կամաց կը բարկացնէր զիս . ինչո՞ւ ալ առարկութիւն չէին ըներ , ինչո՞ւ չէին արգիլեր , ինչո՞ւ չէին պօռար , ինչո՞ւ վերջապէս չէին ծեծեր զիս :

Ու օր մըն ալ վերջնականապէս վազ անցայ երգեցիկ-սրճարան երթալէ , որովհետեւ անիկա դադրած էր ինծի համար . . . արգիլուած պտուղ մը ըլլալէ :

Վերջացնելու համար յիշատակ մըն ալ (յիշատակները միակ անպատեհութիւն մը ունին որ , երբ մարդ անգամ մը սկսի , ա՛լ չկրնար վերջացնել) :

Չեմ գիտեր քանի՛ տարիէ ի վեր պը-ղա-տո-նա-կա-նօ-րէն կը սիրէի կին մը որ , ինծի համար . . . արգիլուած պտուղ մըն էր , քանի որ . . . չէի կըրնար մատին անգամ դպչիլ :

Օր մը սակայն , երբ նորէն կ'ըսէի իրեն իմ սովորական յանկերգս , ան , մէկէն ի մէկ ըսաւ ինծի .

— Կ'ուզե՞ս ինծի հետ կարգուիլ :

— Անչո՞ւշտ :

— Ուրեմն կարգուի՛նք :

Չէք գիտեր, այս խօսքին վրայ, այս կնիկը որչափ պաղեցաւ աչքիս :

×

Ինչո՞ւ գրեցի բոլոր այս բաները :

Բարոյականի դա՞ս տալու համար ձեզի . —
skrsu ա՛ն ըլլար :

Եւ կամ գուցէ խրատելու համար որ ձեր զաւ-
կըներուն հանդէպ այնչա՛փ խիստ չըլլաք՝ ձեր
մտքերուն մէջ տպաւորելով միանգամ ընդ միշտ թէ
արգիլուած պտուղները միշտ ամէնէն աւելի սիր-
ուած պտուղներն են և երբ անոնք դադրին մէջ
մը արգիլուած պտուղ ըլլալէ, կը կորսնցնեն նաև
իրենց ամբողջ հմայքը :

Այս տողերը սկսած ատենս, ասանկ միտք մը
չունէի, բայց եթէ կ'ուզէք որ հիմա ունենամ,
անանկ ենթադրեցէք :

Ամէն պարագայի մէջ, այս տողերը գրեցի . . .
յօդուած մը գրած ըլլալու համար և քանի որ գրեցի
. . . մնաք բարով :

Ե. ՅՕԼԱՅԵԱՆ

Թէ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ

ԿԱՐԴԱԼՈՒ ԱՍԷՆԷՆ ԱԻԵԼԻ ԱՐԺԱՆԻ

ՀԱՐԻԻՐ ԳՈՐԾԵՐԸ

ՔԱՂՈՒԱԾ՝ ՍԸՐ Ն. ԼԸՊՊՕՔԻ «ԱՊՐԵԼՈՒ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ» ԳՐԳԷՆ

ԵՐՔԵՄՆ՝ գիրքերը քիչ էին ու շատ սուղ :
Ընդհակառակն, հիմա, ամէն ժամանակէ աւելի
ճշմարտութեամբ կրնանք ըսել .

«Բառերը իրեր են, և կամիլ մը մեկանը

«Յօղի հատիկի մը նման իյնալով մտածումին վրայ, կը բաւէ

«Կերակրելու մտածումը՝ հազարաւորներու և միլիոնաւորներու»:

ՊԱՅՐԸՆ

Մեր նախնիքը դժուարաւ կը ճարէին իրենց գիրքերը: Իսկ հիմա դժուարութիւնը ամէնէն աւելի զանոնք ընտրելուն մէջն է: Պէտք է խնամքով ընտրենք մեր կարդալիքները, ու Ողիսեւսի նաւորդներուն նման, հովով լեցուն տիկերը արծաթով լեցած պարկեր պէտք չէ կարծենք. ջանալու ենք դեռ այսօ՛ր ալ չի գործել հին Յոյներու սխալը, որոնք կ'ենթադրէին թէ լեզուն՝ մտածումին չափ կրնայ հետազօտութեան գործիք ըլլալ, առանց անդրադառնալու թէ այդպէս ընելով խիստ շատ անգամ մեր ժամանակը փուճ բաներու զոհած կ'ըլլանք: Որչա՛փ գիրքեր կան, որոնց շատ իրաւունքով կրնանք հետեւեալ պատասխանը տալ որ անգամ մը խեղճ հեղինակի մը տրուած է. «Ժամանակս կորսնցնել չեմ ուզեր ձեր գիրքը կարդալով»:

Գիրք կայ, գիրք ալ կայ. և հատորներ կան, կ'ըսէ Լէմպ, որոնց գիրք չենք կրնար ըսել բնաւ:

Շատ մարդիկ գիտեմ որոնք հաստափոր գիրքեր չեն բանար, վախնալով որ չպիտի հասկնան, և սակայն շատ քիչերը պիտի գանգատէին իրենց նեղ հասկացողութենէն, եթէ միայն քիչ մը աւելի ջանք դնէին իրենց ընթերցումներու ատեն:

Ասով հանդերձ շատ կարեւոր բան է այնպիսի նիւթեր ընտրել որոնք կը շահագրգռեն մեզ: Կը յիշեմ որ ասկէ տարիներ առաջ անգամ մը երբ այս մասին խորհուրդ կը հարցնէի Տարվինի, ըսաւ. «ինչ բան որ կը շահագրգռէ քեզ, պէտք է հոն կանգ առնես»։ Այս խօսքը կը պատշաճի նաև առ հասարակ բոլոր մեր կեանքի գործերուն: Ես շատ տրամադիր եմ հաւտալու թէ ապագային է՛ն շատ

կարդացողները ոչ փաստաբանները պիտի ըլլան, ոչ բժիշկները, ոչ խանութպանները, և ոչ ալ վաճառականները, այլ հողագործներն ու բանւորները: Եւ իրաւ ալ շատ բնական բան մը չէ՞ աս: Առաջին դասակարգին վերաբերող մարդիկը ամէնէն աւելի իրենց գլխովը կ'աշխատին՝ և երբ օրուան աշխատութիւններն աւարտեն, այնչափ յոգնած կ'ըլլայ իրենց ուղեղը որ իրենց հանգիստին մեծ մասը բաց օդին մարդանքներով պէտք է անցնեն, մինչդեռ գիւղացին ու բանւորը, նոյն իսկ առանց նկատի առնելու որ ասոնք միւսներէն նուազ ժամեր կ'աշխատին, իրենց գործին ատեն բաւականաչափ մարզանք կը կատարեն արդէն, և հետեւաբար իրենց հանգիստի ժամերը կրնան ընթերցումի տալ: Իրա՛ւ, մինչեւ այսօր այդպէս չեն ըրած, բայց ասոր պատճառը դիւրին է հասկնալ: Հիմա, ասոնք նախնական վարժարաններու մէջ պատուական դաստիարակութիւն մը կը ստանան, և ընտրելագոյն գիրքերը իրենց ձեռքին տակ լեցուն են (*):

Ռըսքին այնչափ չի դարմանար մարդոց տառապանքներուն վրայ, որչափ այն ինչքերուն վրայ զորս կը ձգենք որ խուսափին մեր ձեռքերէն: Անշուշտ շատ անգամ ուրիշներու մեզ հասցուցած չարիքն է որ կը տառապեցնէ մեզ, բայց ասկէ շատ աւելի կը տառապինք մեր տգիտութեամբը յառաջ եկած չարիքներէ: «Ընթերցումը հաճոյք մըն է, կ'ըսէ Սըր Ժ. Հէրշել, և ինզինքին հաճելի դրօսանքներ հայթայթելու պատուական գործիք մը ու միջոց մը: Տուէք մարդու մը ընթերցումի ճաշակը և այդ ճաշակը գոհացնելու միջոցներ և ան-

(*) Անշուշտ ընթերցողը կրնայ հասկնալ Թէ Սըր Ժ. Լըպպօր Անգլիացի գիւղացին ու բանւորին վրայ է որ կը խօսի, և Թէ Հայ բանւորը շատ հեռու է տակաւին վերը յիշուած «պատուական դաստիարակութիւն»ը ստանալէ:

պատճառ երջանկացուցած կ'ըլլաք զայն, եթէ երբէք սակայն գիրքերու շատ գէշ հաւաքածոյ մը դրած չըլլաք անոր ձեռքերուն մէջ» :

Բան մըն է մատենադարան մը ունենալը, բայց շատ աւելի կարեւոր բան է զայն իմաստուն կերպով գործածելը : Շատ անգամ ապշած եմ տեսնելով թէ որչա՛փ ափ յափոյ կ'ընտրէնք մեր ընթերցումները : Գրեթէ անթիւ են գիրքերը և աւանդ, այնչափ կարճ զանոնք կարդալու համար մեր ժամերը, և նորէն, շատ մարդիկ ըստ բաղդի կ'ընտրեն իրենց գիրքերը : Բարեկամէ մը փոխ կ'առնեն ու է գիրք, կամ գրատունէ մը ըստ բաղդի վէպ մը կը գնեն, որուն անունը քիչ շատ հրապուրիչ է, կամ նոյն իսկ երբեմն, որուն կազմը քիչ շատ սիրուն կ'երեւի աչքերնուն, իրաւ, ընտրելը դիւրին բան մը չէ և շատ անգամ ես փափաքած եմ որ գանուէր մէկը որ հարիւր հատ լաւ գիրքերու ցանկ մը տար մեզի : Եթէ այս կերպ քանի մը ցանկեր ունենայինք, լաւ առաջնորդներու ձեռքով պատրաստուած, շատ օգտակար բան մը պիտի ըլլար :

Միշտ կ'ըսեն թէ մարդ գիրքերը իր ձեռքովը ընտրելու է, բայց քիչ մը «ծով մի մտներ, մինչև որ լողալ չի սորվիս»ին չի՞ նմանիր աս :

Այս տեսակ ցանկ մը շինուած չըլլալով, ես շինեցի նմանօրինակ ցանկ մը, ամէնէն աւելի առաջնորդուելով անո՛նց : Խորհուրդներէն որոնք ուղղակի կամ անուղղակի կարդալու հաճոյքին վրայ խօսած են, իմ կողմէս աւելցնելով նաև քանի մը նուազ ծանօթ գիրքեր, որոնք սակայն ամէնէն աւելի սիրած հեղինակներս եղած են : Բոլոր անոնք որ պիտի կարդան այս ցանկս, պիտի փափաքին անշուշտ քանի մը գիրք ալ իրենք աւելցընել անոր վրայ, ճիշդ ինչպէս ես ալ պիտի ընէի իրենց տեղ, բայց այն ատեն, կ'երեւակայէ՞ք թէ մինչև ո՛ւր պիտի երկարէր ցանկերնիս :

Ետ կեցայ, անշուշտ կը հասկնաք թէ ի՞նչ պատճառներով, հիմա դեռ կենդանի հեղինակներ յիշատակելէ, որոնցմէ շատեր թէև ինծի ամէնէն մեծ հաճոյքները տուած են. նոյնպէս մէկ կողմ թողած եմ, հազիւ մէկ քանի բացառութիւններով, գիտական գործերը, որոնց նիւթը կը փոփոխուի շարունակ:

Իրա՛ւ, գիտեմ թէ յանդգնութենէ աւելի բան մըն է այս փորձը և ասոր համար է որ ներողութիւն կը խնդրեմ և կը սպասեմ քննադատութիւններու: Թողէք որ իմ գաղտնի փափաքներէս մէկն ալ ասով գրգիռ մը ըլլալ է որպէս զի ինչ աւելի հմուտներ ալ նմանօրինակ փորձեր կատարեն:

Ու յետոյ այս գիրքերը նշանակած եմ ընթերցատուներու մէջ ամէնէն աւելի փնտռուած գիրքերը ըլլալնուն համար ալ. ըսել է թէ ամէնքն ալ իմ միտքէս չեմ հանած, թէև այս ցանկին մէջ սահեցուցած եմ նաև իմ սիրած մէկ քանի հեղինակներս ալ:

Այսպիսի ընտրութեան մը մէջ, շատ աղէկ գիտեմ թէ մեծ կարեւորութիւն տալու է մարդկութեան ընդհանուր վճիռին: Գիրքերուն մէջ ալ, ինչպէս կենդանիներուն ու տունկերուն, կայ գոյութեան կռիւր և ամէնէն արժանաւորներն են որ կը մնան: Ինչպէս կ'ըսէ Ալօնցօ տ'Արակօն, չորս բաներ կան որոնց համար հնութիւնը յանձնարարագիր մըն է. վառելու համար հին փայտը, խմելու համար՝ հին գինին, բարեկամութեան համար՝ հին բարեկամը, և կարդալու համար հին գիրքերը: Ասով հանդերձ, կարեւոր փոփոխութիւններ ընելէ յետոյ միայն ընդունելու ենք այս վճիռը. որովհետև ինչպէս ծանօթ է պատմութեան կամ գիտութեան ճիւղերուն մէջ, է՛ն վերջին գիրքերն են որ կը պարունակեն կամ գոնէ պարունակելու են

ամէնէն ճիշդ տեղեկութիւնները և ամէնէն վստահելի եզրակացութիւնները: Ասկէ զատ, մինչ ուրիշ ժողովուրդներու և ուրիշ ժամանակներու գիրքերը ճիշդ իրենց այդ հեռաւորութեան համար շահեկան են, պէտք է սա ալ ընդունինք թէ շատ մարդիկ ալ աւելի հաճոյք, և աւելի հանգիստ կը զգան զիրենք իրենց ժամանակին և իրենց երկրին գիրքերուն մէջ:

Եւ սակայն հակառակ ամէն բանի, աշխարհիս ամէնէն հին գիրքերը, իրենց տարիքին պատճառաւ իսկ, նշանաւոր ու շահեկան են, և այդ գիրքերը որոնք հասարակաց կարծիքին ազդած են, կամ երբեմնի և ամէնէն հեռաւոր երկիրներու միլիոնաւոր անհատներու հաճոյքի ժամեր հայթայթած են, այս պատճառաւ իսկ արժանի կը մնան միշտ ընթերցումի, եթէ նոյն իսկ իրենց համբաւին չափ արժէքաւոր չըլլան: Իրաւ, այս գիրքերու մեծ մասը կարդացողներու մեծագոյն մասին համար թարգմանութեանց ձեին տակ միայն մատչելի են, բայց այս թարգմանութիւնները, — որոնք գրեթէ երբէք բնագրին բովանդակ արժանիքը չեն կրնար ցոլացնել, — երբեմն իսկապէս սքանչելի են, ինչպէս Աստուածաշունչի թարգմանութիւնը, առաջին գիրքը իմ ցանկիս:

Ամէնէն վերը բոլոր հեթանոս բարոյախօսներուն, կը դնեմ ես Եպիկտետոսի Enchiridionը, որ ապահովաբար ամէնուն մէջ ամենապատուական գիրք մըն է, այնքան կուռ, և ասկէ զատ, այնքան ալ հասկնալի, որ շարունակական զարմանք մը կ'ունենամ, երբ անոր այնչափ քիչ կարդացուիլը կը տեսնեմ:

Եպիկտետոսի քով պէտք է դնենք կարծեմ Մարկոս-Աւրելիոսը: Հաւանական է որ Կոմիլիկիոսի Analecta՝ն քիչ մը խրաչեցնէ արդի ընթեր-

ցողը • բայց մարդկութեան ամէնէն շատուոր մասին վրայ անոր կատարած այնքան մեծ ազդեցութիւնը բաւական է խիստ մասնաւոր արժանիք մը տալու այդ գործին : Թերեւս Արիստոտէլի «Բարոյագիտութիւն»ը հիմա կորսնցուցած է իր արժէքէն մաս մը, գուցէ մեր բարոյական գաղափարներուն վրայ այնքան խորապէս քաղած ըլլալուն համար իսկ :

Ուէյք հատորի մը մէջ ամփոփած է Եկեղեցւոյ հայրերուն գրութիւնները : Հատորը խոշոր չէ և սակայն, խոնարհաբար կը խոստովանիմ թէ ասանգամ կը խրոչեցնէ կոր զիս : Թերեւս այս մարդոց գրութիւնները ամէնէն աւելի առաքեալներուն գրուածներէն իրենց ունեցած տարբերութեամբը հետաքրքրական են : Այս է պատճառը որ Եկեղեցւոյ հայրերէն մինակ Ս. Օգոստինոսի «Խոստովանութիւններ»ը առած եմ, որոնց մասին Տր. Բուսէյ կ'ըսէ թէ «Կրկին ու կրկին թարգմանուած են եւրոպական բոլոր լեզուներուն և բոլոր լեզուներով ալ հաւասարապէս սիրուած են» :

Բարեպաշտական ուրիշ գործերու մէջէն, որոնք ամէնէն աւելի կը փնտուռին, առած եմ Թովմաս Գեմբացիի «Նեանուքիւն Յիսուսի Քրիստոսի»ն, Բասքալի «Մսածուներ»ը, Սբինոզայի «Աստուծաբանական - Քաղաքական Տարերֆ»ը, Պըթլէրի «Կրօնիկն Յարաբերութիւնները», Երեմիա Թէյլըրի «Սրբօրէն ապրիչ եւ սրբօրէն սեռնիչ»ը, Պընեանի «Քրիստիանոսի ճամբորդութիւն»ը և Քէպլի գեղեցիկ «Քրիստոնեական Տարի»ն (*) :

Հեղինակներու ուրիշ կարգի մը մէջ առաջին

(*) Իր այս գիրքին մէջ տեղ մը, Սըր Ճ. Լըպպօք իրաւունք կուտայ իր տարբեր ազգերէ ընծերցողներուն ուզած փոփոխութիւններն մտցնելու իր այս ցանկին մէջ, իւրաքանչիւրը իր ազգային ամէնէն փրելի գրողները աւելցնելով : Արդ, ամէն իրաւունք չունինք մենք ալ մեր Նարեկը գերիվեր դասելու բոլոր այս գիրքերէն իր ճշմարտապէս հոյակապ կերտուածքին համար :

տեղը կը բռնեն Արիստոտէլ և Պղատոն : Արիստոտէլի «Քաղաքականութիւն»ը և Պղատոնի «Խօսակցութիւններ»ը, կամ գոնէ Փետոնը, Չասագոյնութիւնը և Հասարակապետութիւնը բնականաբար պէտք է կարդացուին բոլոր անոնց կողմէ որոնք կը փափաքին ճանչնալ Մարդկային Մտածումին պատմութիւնը, թէև ես անձնապէս այնչափ չեմ համակրած այս վերջին գործին :

Արիստոտէլ, հայրն է, եթէ ոչ ստեղծողը արդի գիտական մեթոտին և անոր սկզբունքները մեր մտաւոր էութեան մէկ մասը կը կաղմեն : Իրա՛ւ, բնութեան վրայէն իր կատարած դիտողութիւնները, թէև շատ կարեւոր, շատ առիթներու մէջը սխալ ճաշցուած են լաւագոյն պարագաներու մէջ կատարուած ուրիշ նոր դիտողութիւններու առջև, սակայն ապերախտ ըլլալու չենք երբէք մեծ վարպետին հանդէպ, որովհետև ճիշտ իր տուած դասերն են որ մեզի սովորեցուցած են զինքը գլել անցնելու ճամբան :

Գալով Պղատոնի, բոլոր կարելի յարգանքով կ'ըսեմ, ինծի այնպէս կուգայ թէ կարգ մը պարագաներու մէջ աւելի բառերու վրայ կը խաղայ ան . իր ապացոյցները շատ ճարպիկ են, շատ փիլիսոփայական, յաճախ շատ ազնուական, բայց միշտ չեն համոզեր : Եթէ իր այդ խօսքերը տարբեր կերպով մը կերտէինք, երբեմն ճիշդ իր ապացուցանել ուզածին հակառակ իմաստ պիտի արտայայտէին : Բայց եթէ այս մեթոտը նուազ պտուղ արտադրած է, եթէ իր յանցանքով բնագանցութեան մէջ քիչ յառաջդիմութիւն ըրած ենք, ասոր հակառակ իր «Սոկրատի խօսակցութիւնները» հիմակալ այնչափ շահեկան են որչափ էին իր ատեն, ու այն հարցերը որոնցմով կը զբաղի՝ միշտ պիտի գրգռեն մեր հետաքրքրութիւնը և զանոնք ներշնչող պայծառ ու գերագոյն հանճարը միշտ պիտի մեր սքանչացումը գրաւէ :

Պէտք է յիշատակեմ նաև Դեմոսթենէսի Ճառ թագի վրայ-ն զոր Լորտ Պրուկէյս «ամէնէն մեծ ճարտասանին ամէնէն գեղեցիկ ճառը» կ'անուանէր, յետոյ Լուկրետիոսը, Պլուտարքոսի «Վարժեր»ը, Ուրբատիոսը, և Կիկերոնէն գոնէ De Officii-ն, De Amicitia-ն, և Ծերուրթեան վրայ-ն:

Մեծ դիւցազներգութիւնները գրականութեան ամէնէն ժողովրդական մէկ ճիւղը կազմած են: Եւ սակայն բաղդատարար ո՛րչափ քիչեր կը կարդան Իշխականն ու Ողիսականը, Հէզիոդոսն ու Վիրգիլիոսը, դպրոցէն ելլելնէն յետոյ:

Անկլո-Սաքսոնական գեղեցիկ դիւցազներգութիւնն ալ Նիպտունիկներ-ը, շատ բարձի թողած է, անշուշտ իր տխուր նկարագրին համար: Ճիշդ է, Պրուսնիլա և Քրիմհիլա հեռու են կատարեալ կիներ ըլլալէ, բայց այսչափ կենդանի տիպարներու մենք չենք հանդիպիր յոյն կամ հռովմէական գրականութեանց մէջ: Չեմ ուզեր մոռնալ նաև Սըր Թ. Մալօրիի Արթիւրի մահը, թէև կը խոստովանիմ թէ այս վերջինը իմ ցանկիս մէջ կ'առնեմ պարզապէս ուրիշներու տուած խորհուրդին վրայ:

Յոյն ողբերգակներէն՝ անաւասիկ Եսքիլէսը, որուն եթէ ոչ ամբողջ գործը, Պրոնէթելար գոնէ, — բոլոր յոյն բանաստեղծութիւններու ամէնէն գերագոյն գործը, — և Եռարքանոթիւնը անպատճառ պէտք է կարդալ: (Պ. Սիմընտա, իր «Յոյն բանաստեղծներ»ը գործին մէջ հիացումով կը խօսի Ակամեմիոնի անհաւասարելի մեծ վայելչութեան վրայ և Մարք Բէզիարն այդ նոյն Ակամեմիոնը կը համարի իբր ամէնէն մեծ հրաշակերար զոր ո՛րևէ ստեղծող հանճար երբէք արտադրած է ո՛րևէ գրականութեան մէջ): Իսկ Պ. Է. Կրէնթ-Տըֆ կը յանձնարարէ Եսքիլէսի Իդիպոս արքայն, Եւրիպիտէսի Մեքեան, Արիստոփանէսի Չիաւորներն ու Անպերը, թէև այս վերջինին պարունակած ակ-

նարկութիւնները ամէնէն հմուտ յունագէտներն անգամ չեն կարող հասկնալ. ու կը խորհիմ թէ ընթերցողներու մեծագոյն մասը արդի բանաստեղծները պիտի նախընտրէ: — Սակայն պիտի սիրէի պղտիկ տեղ մըն ալ արեւելեան բանաստեղծութեան տալ, ինչպէս Մահարաշտրայէն և Ռամայանայէն հատընտիր կտորներու (որովհետեւ շափազանց երկար են ամբողջովին կարդացուելու համար), պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդուսիի Շահնամէին, և չինական հին տաղերու դասական հաւաքածոյին՝ Շիֆիենկի: Եւ դեռ շատեր ալ գիտեմ որոնք պիտի մտածեն թէ պէտք էր պարսիկ Օմար Խայեամն ալ յիշատակէի:

Պատմութեան գալով, ալ կամաց կամաց կը սկսինք կոր զգալու թէ իշխաններու և իշխանուհիներու կեանքն ու արկածները, պատերազմներու և կռիւներու թուականները շատ աւելի նուազ կարեւորութիւն ունին քան ուսումնասիրութիւնը մարդկային մտածումին զարգացման և արուեստներու, գիտութեան և իրաւաբանութեան յառաջդիմութեան. այս կերպով է որ պատմութիւնը նոր շահեկանութիւն մը ստացած է: Ասով հանդերձ պիտի յիշատակեմ, աւելի իրենց գրական քան պատմական արժէքին համար սակայն՝ Հերոդոտոսը, Քսենոփոնը (Anabase), Թուկիդիդէսը և Տակիտոսը (Գերմանացիներու վարքը). և նոր պատմաբաններէն Կիպպընը (Մեծուքիւն եւ Անկոււն Հոովսեական Կայսրութեան) — «չողուն կամուրջը որ հին աշխարհէն նոր աշխարհը կ'առաջնորդէ», Հումֆր Անգլիոյ պասմուքիւնը, Քարլայլի Ֆրանսական յեղաշրջումը, Կրօցի Յունաստանի պասմուքիւնը և Յ. Պ. Կրինի Անգլիոյ հաւստոս պասմուքիւնը:

Գիտութիւնը այնքան արագ կը յառաջդիմէ, որ թէև շատ մը միտքերու համար ամէնէն օգտակար և ամէնէն շահեկան ընթերցումը կը կա-

ցուցանէ, այս տիեզերական նախապատուութիւնը չպիտի կրնամ հոս իբր չափանիշ ընդունիլ ի նպաստ իմ կարծիքիս: Ասոր համար է որ ցանկիս մէջ միայն Ռօժէ Պաքօնի *Novum Organum*, Սթիւարթ Միլի *Տրանսքանտաթիւնը* և Տարվինի *Տեսակներու ծագումը* պիտի յիշատակեմ: Քաղաքական *Տնտեսութեան* բաժնին մէջ պիտի առնեմ Սթիւարթ Միլը և Ատամ Սմիթի *Ազգերու հարստութիւնը* և մէկ քանի մասեր, որովհետև բաց ի անոնցմէ որոնք իրենց մասնաւոր ուսումնասիրութեան առարկայ ընտրած են այս գիտութիւնը, չեմ կարծեր որ իմ ընթերցողներուս մնացեալ մասը համբերութիւնը ունենայ ծայրէ ծայր կարգալու այս վերջինը:

Ուղեգրութիւններու մէջ ամէնէն աւելի փնտուռածներն են Քուքի, Հումպոլտի ուղեգրութիւնները և Տարվինի *Բնագիտի* մը օրագիրը: Իմ մասիս պիտի ուզէի ասոնց վրայ ուրիշներ ալ աւելցնել:

Բուն գրականութեան գալով, կարծեմ թէ ոչ ոք պէտք է անգիտանայ Շէքսպիրը, Միլթընը, Չօսըրը, Տանթէն, Սքէնսըրը, Տրայտընը, Աքօթը, Ուօրտսուորթը, Բօքը, Սաութէյը, Պայրընը: Ուրիշ յաճախակի յիշուած գիրքերու մէջ կան նաև Կօլտամիթի *Վեֆֆիշի Երեցը*, Սուիֆթի *Կիւշիվերի նաւբորդութիւնները*, Ռօպէնսօնի *Քրիւզօհն*, Հազար ու ակ գիշերները, Տօնի *Քիշօքը*, Պօսուէլի *Ճօնարնի կեանքը*, Ուայթի *Սեչպրնի քնական պատմութիւնը*, Պրքի *Հասրնիսր գործերը*, Պաքօնի *Փորձերը*, Ատտիսըն, Հօւմ, Մօնթէյներ, Մաքօլէյ, Էմըրսըն, Մօլիէրի և Շէքսպիրի թատերգութիւնները, Քարլայլի *Անցեալը եւ Ներկան*, Սմայլսի *Ինֆլիգնութիւնը*, Կէօթէի *Փառասքը* և *Յիշատակները*:

Միայնևու Վախը չունինք բնաւ երբ յիշատակենք նաև Պէրքլէյի *Մարդկային գիտութիւնը*, Տէքարթի *Մեթոճի* վրայ նաև, Լօքի *Փորձ* հասկա-

ցողութեան վրայն, Լէվիտի Փիլիսոսփայութեան պատ-
մութիւնը: Սահման ընտրած հարիւր թիւս չանցը-
նելու համար հոս իբրև տրամերգակ Մոլիէռնու
Շէրիտանը միայն կրցայ յիշատակել: Ու հիմա
այդ հարիւր թիւս լրանալու այնչափ մօտեցած է
որ վիպասաններէն միայն Անգլիացի վիպասաննե-
րը պիտի առնեմ, — թէեւ Մաքօլէյ Մարիլօի Մա-
րիանի կեանքը կը նկատէ իբրև լաւագոյն վէպը որ
ու է լեզուով գրուած ըլլայ երբէք. — հետե-
ւաբար խորհուրդ պիտի տամ որ կարդաք Թաքը-
րէյը (Պարծենկոտութեանց զօնավանառը և Բեն-
դեննիս), Տիքընսը (Բիֆուիֆ և Դաւիթ Կօպպր-
ֆիլդ), Ճօրճ Էլիըթը (Ասէյմ Պէս և Ֆլօուիս վրայի
Ջադայֆը), Քինկսլէյը (Օ՛ն դեպ ի Արեւմուտք),
Լիտտընը (Պօնպէյի վերջին օրերը), և վերջապէս
ան որ ամէնէն պզտիկը չէ ասոնց մէջ, Ուօլթըր
Սքօթը, որուն գործերը ամբողջ մատենագարան
մը կրնան լեցնել, բայց իբրև վարձատրութիւն այս
ցանկս պատրաստելու համար իմ քաջած նեղու-
թեանս, պիտի խնդրեմ ձեռնէ որ Սքօթի ամբողջ
գործը իբր մէկ հատոր մը նկատէք:

Անունները մինակ այս գործերուն, խել մը
հեշտալի ժամերու, յոգնութիւններէ յետոյ տունը
անցուած խաղաղիկ վայրկեաններու անուշ յիշա-
տակներ պիտի արթնցնեն գիրքի բոլոր բարեկամ-
ներուն մէջ. որչափ երախտապարտ ըլլալու ենք
այս անգին նուէրներուն, բարեկամներու այս ան-
համար բանակին որ մեզ երբէք չեն յոգնեցներ,
ու երբէք չեն լքեր:

ՀԱՐԻԻՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՑԱՆԿԸ

(ԿԵՆՌԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ ԴԻՏՄԱՄԲ ՄԷԿԴԻ ԶԳՈՒԱԾ ԵՆ)

Ասուածաշունչը եւ Աւեսա- բանը	Կիկերոնի De Officis, De Amitia, De Senectate (Թ)
Քուրանը	Պղոտարբոսի Վարքերը (Թ)
Մարկոս-Աւրելիոսի Մսածու- մները (Թ)	Պէրբլէյի Մարդկային գիտու- թիւնը
Եպիկտետոս	Տէքարթի Մէթոսի վրայ նառ
Արիստոտելի Բարոյախօսու- թիւնը	Լօքի Փորձ մարդկային Հաս- կացողութեան վրայ
Կոմիւլկիոսի (AnalectaՆ)	—
Պարթէլլմի Սէնթ-Իլէռի Պոլս- սա եւ իր կրօնքը	Հոմերոս (Թ)
Եկեղեցւոյ հայրերը (Թ)	Հեզիոդոս
Թովմաս Գեմիացիի Նմանու- թիւն Յիսուսի (Թ)	Վիրգիլիոս (Թ)
Ս. Օգոստինոսի Խոսովանու- թիւնները	Մահապարածայէն կտորներ
Սբինոզայի Տարեւ Բաղաբա- կան-Ասուածաբանութեան	Ռամայանայէն »
Օ. Քօնթի Իրական իմաստա- սիրութեան բխսնէականը	Ֆիրտուսի Շահնամէն (Թ)
Բասթայի Մսածումները (Թ)	Նիպէլունկները
Պըթլէրի Կրօնքին յարաբերու- թիւնները	Մալորիի Արթիւրի մահը
Թէյլլորի Սրբօրէն ապրիլ ու սրբօրէն մեռնիլը	—
Պընտանի Բրիտանոսի համ- բորդութիւնը (Թ)	Շիքինկ
Քէպլի Բրիտանոսի սարին	Քալիտասայի Սափունթալան
—	Եսթիլէսի Պրոմէթէւսը
Պղատոնի Խօսակցութիւնները կամ գոնէ Apologies, Փե- տնը (Թ)	» Ովրեսի Եռաբանու- թիւնը
Քսենոփոնի Յիշատակները	Սոփոկլէսի Իդիպոսը (Թ)
Արիստոտելի Բաղաբականու- թիւնը	Եւրիպիդէսի Մեդէան
Դեմոսթենէսի Ճառ թագի վրայ	Արիստոփանի Ասպետներն ու Ամպերը
	Ովլապիոս
	Լուկրետիոս
	—
	Զօսըր
	Շէքսպիր (Թ)
	Միլթըն (Զիսիդաս, Կոմուս և Մանր բերթուածները)
	Տանթէի Ասուածային կա- սակերգութիւն (Թ)

Սբէնարրի Պայերու դշխոն
 Տրայտընի Բերթուածները
 Սքոթի »
 Ուօրտստլորթը
 Սառեթէյի Քանդիչ Թալապան,
 Քեհամայի անէծքը
 Բօքի Փորձ Բննասիրութեան
 վրայ (Թ), Փորձեր մարդուն
 վրայ,
 Պայրընի Չայլս Հարօլսը
 Կրէյ

Հերոդոտոս
 Քսենեփոնի Anabaseը
 Թուկիդիտէս
 Տակիտոսի Իերմաններու վարքը
 Տիտոս-Լիվիոս [(Թ)]
 Կիպպընի Մեծութիւն եւ ան-
 կում Հռովմ. կայսրութեան
 Հումի Անգլիոյ պատմութիւնը
 Կրօթի Յունաստանի պատմու-
 թիւնը
 Քարլայլի Ֆրանսայի յեղաշր-
 ջումը
 Կրիսի Անգլիոյ համառօտ պատ-
 մութիւնը
 Լէվիսի Փիլիսոփայութեան
 պատմութիւնը

Հազար ու մէկ գիշերներ (Թ)
 Սուիֆթի Կիւլիվերի համբու-
 դութիւնը (Թ) [(Թ)]
 Տը Ֆօէի Ռօպէնսօն Քրիւզօէն
 Կօլտամիթի Վէմբլիշիերէցը (Թ)
 Սերվանթէսի Տօն Քիտօթը
 Պօստէլի Ճօնսընի կեանքը
 Մօլիէռ (Թ)
 Շիլլերի Թատերգութիւնները (Թ)
 Շէրիտանի Քննադատութիւնը,
 Բամբասանի դպրոցը, և
 Հակառակորդները

Քարլայլի Անցեալը եւ Աերկան
 —
 Պաքօնի Novum organum
 Ա. Սմիթի Ազգերու հարսու-
 քիւնը (Կտորներ)
 Ս. Միլի Քաղաքական Տնտ-
 սութիւնը
 Քուքի Ուղեգրութիւնները
 Հումպօլտի »
 Ուայթի Սէլպրընի բնական
 պատմութիւնը
 Տարվինի Տեսակներու ծագումը
 — Ուղեգրութիւնները
 Ս. Միլի Տրամաբանութիւնը

Պաքօնի Փորձերը
 Մօնթէնէրի »
 Հումի »
 Մարքոլէյի »
 Ատտիսընի Փորձերը
 Էմբրսընի »
 Պըրքի գործերէն ընտրանքով
 Սմայլսի Ինֆնօզնութիւնը (Թ)

Վօլթէրի Չասիկը
 Կէօթէի Ֆաուսթը (Թ) և Ինֆ-
 անկենսագրութիւնը
 Թաքըրէյի Պարծենկոտութեանց
 տօնավանաւը, Բէնդէննիս
 Տիքընսի Բիբուլիք, Դաւիթ
 Կոպպըրփիլս (Թ) [(Թ)]
 Լիթթընի Պօմպէյի վերջին օրերը
 Ճ. Էլիըթի Ասէյմ Պէս
 Քիսկալէյի Օ՛ն, դէպ ի Արեւ-
 մուսի
 Սքոթի վէպերը:

ՄԱՆՕԹ — Այն գիրքերը
 որոնց առջև (Թ) նշանակուած է,
 կը նշանակեն թէ Թարգման-
 ուած են արդէն հայերէն լեզուի:

ՆՈՐԷՆ ՂԱԶԱՐՈՒՍ

— **ՍՆԱՆԿԱՆԱԼՈՒՍ** ամբողջ պատճառը հայրս եղած է, կ'ըսէր Ղազարոս անցած օր, մեռնելէն առաջ ամբողջ պարտքերս վճարեց :

—
Ղազարոսին մտածումները .

Ծառայ մը իր նոր էֆէնտին պէտք եղածին պէս ճանչնալու համար, անոր նամակները կարդալէ լաւագոյն միջոց չի կրնար գտնել :

—
Տասր տարի ետք .

Ղազարոս, օր մը Հայտար Փաշայի կայարանը հանրածանօթ ոսկերիչ Ա. Տ. Յեանի կը հանդիպի որ ճիշդ անոր դիմացը կենալով՝ կը հարցնէ .

— Զի ճանչցա՞ք դիս :

Եւ Ղազարոսի ժխտական պատասխանին վրայ .

— Զէ՞ք յիշեր, ասկէ տաս տարի առաջ ճիշդ այս տեղը շոգեկառքի մը պատուհանէն դուրսը կը դիտէիք կոր, ձեր շոգեկառքին ճամբայ ելած ատեն կատակով ապտակ մը իջեցուցիք ուրիշ ճամբորդի մը դէմքին, որ դիմացի գիծին վրայ գտնուող շոգեկառքին պատուհանէն ինքն ալ դուրսը կը դիտէր կոր . . .

— Օհ, ի՞նչպէս չեմ յիշեր, հա՛, հա՛, հա՛, գուցեց Ղազարոս քահ քահ խնդալով :

— Ահաւասիկ ես էի այդ ճամբորդը, պատասխանեց Ա. Տ-Յեան, և առանց ժամանակ ձգելու որ Ղազարոս ինքզինքը գտնէ այս անակնկալ հանդիպումէն, փառաւոր ապտակ մը կը փակցնէ անոր :

Ղազարոս պատասխանը տալու վրայ էր, երբ
 ոստիկան մը որ ականատես եղած էր, երկուքն ալ
 առաւ ոստիկանատուն տարաւ:

Երբ Ղազարոս հոնկէ դուրս ելաւ երեսը կը շփէր
 և կ'ըսէր.

— Տա՛սը տարի . . . և մտածել որ «միւրուրը
 զէման» ալ եղած էր:»

Տանտէրը՝ Ղազարոսին.

— Հրամմէ, կ'ուզեմ վեհանձնօրէն վարուիլ
 հետդ, և քեզի կը բաշխեմ պարտքիդ կէսը, բայց
 գոնէ մնացած կէսը վճարէ:

— Բնաւ չեմ ուզեր քենէ ետ մնալ, պատաս-
 խանեց Ղազարոս, և մնացած կէսն ալ ե՛ս ձեզի
 կը բաշխեմ:

— Ղազարո՛ս, ինչո՞ւ սուգը մտեր էք, ո՞վ
 կորսնցնելու դժբաղդութիւնը ունեցաք:

— Մի՛ ըսէք, Մանգուռեի բաժանորդութիւնս,
 որ այս շաբթու . . . հանգեաւ ի Տէր:

— Ի՞նչէ՛ ան Ղազարոս, քու ամէնէն սիրելի
 բարեկամիդ յուղարկաւորութեան չե՞ս երթար:

— Բնա՛ւ, սիրելիս, սկզբունքով որոշած եմ,
 իմ յուղարկաւորութեանս եկողներուն յուղարկաւ-
 րութեան երթալ մի՛նակ:

— Չափազանցութիւն է, տիկին, կ'ըսէր Ղա-
 զարոս իրենց հիւր եկած կնոջ մը, երբ կ'ըսեն թէ
 բժիշկներն Վն որ կը սպաննեն իրենց հիւանդները.
 Եթէ բժիշկները գոյութիւն չունենային, նորէն հի-
 մակուան չափ մարդիկ մեռնէին պիտի:

Ղազարոս՝ կոյր մուրացկանի մը.

— Կո՞յր էք . . . քանի՞ զաւակ ունիք:

— Չեմ գիտեր, տէր, քանի որ չեմ տեսնար:

Ղազարոս իր հորեղբորը որ հոգեվարք է և ուրկէ յոյս ունի... ժառանգելու.

— Մահուընէ մի՛ վախնաք բնաւ, հորեղբայր, մտածեցէք որ պիտի երթաք միանաք նորէն ձեր սիրելի կնոջ:

— Ահ, ա՛տ է արդէն որ ամէնէն աւելի զիս կը սարսափեցնէ կոր:

— Ղազարոս, քանի՞ եղբայր ունիս:

— Մէկ հատ, Տէր-Նախագահ:

— Չարմանալի բան, հապա նոյն հարցումը քրոջդ ալ ըրի, և պատասխանեց թէ երկու եղբայր ունէր:

Ղազարոս ողորմած է:

Անցեալ օր աղքատի մը ողորմութիւն կուտար.

— Առ նայիմ, բարեկամս, առ քեզի տասնոց մը, բայց անգամ մըն ալ մի՛ դիմեր ինձի:

Ղազարոս խորհուրդ կը հարցնէ իր բարեկամներուն մէկուն.

— Ի՞նչ ընեմ չիտեմ, տղաս գէշ ճամբաներու կ'երթայ և մտիկ չըներ ըսածս... յիմարներուն խօսքին միայն ականջ կը դնէ... անգամ մը խօսէի՞ր իրեն:

— Առաջին անգամ երբ անկուտի մնացի, կը բացատրէր Ղազարոս, իր սրտակից բարեկամ Ե. Թօլայեանի, քիչ մնաց ապուշութիւն մը ընէի պիտի:

— Իսկ յետո՞յ...

— Յետո՞յ, յետոյ շա՛տ ըրի ապուշութիւններ:

Սալօնի մը մէջ, նկարիչի մը վրայ կը խօսին որու ծուլութիւնը առասպելային բան է :

— Այնքան ծոյլ է, կ'աւելցնէ Ղազարոս, որ միայն ձմեռնային տեսարաններ կը նկարէ, որպէս զի ծառերուն տերեւներ շինելու յոգնութենէն ազատի :

— Ամուսնական անուիրութիւն .

— Բարեկամ մը ունէի, կ'ըսէր Ղազարոս սալօնի մը մէջ, որու կինը զինքը այնչափ կը սիրէր, որ ճիշտ անոր մեռած օրը ինքն ալ մեռաւ... իրաւ է թէ քառասուն տարի ետքը :

— Տէր Աստուած, կ'ըսէր Ղազարոս, պարտքերը երեխաներու կը նմանին, որչափ պզտիկ ըլլան, այնքան շատ աղմուկ կը հանեն :

— Ղազարոս վարձու տուն մը կը փնտռէ :

— Հանդարտ տուն մը կ'ուզեմ, կ'ըսէ դռնապանին, տուն մը ուր մինչեւ մահս կարենամ նստիլ :

— Օհ, պարոն, կ'ըսէ դռնապանը սքանչաքած, ամէն տանտէրի երազն է այդ :

— Հապա ի՞մս, կը պատասխանէ Ղազարոս, տուն չէ եղած ուրկէ երեք ամիս չքչած ճամբայ չի տան ինձի :

— Ղազարոս իր ամէնէն սրտակից բարեկամին .

— Ախ, սիրելիս, ալ կը մոռնաս կոր զիս, նամակ անգամ չես գրեր կոր :

— Նոր հասցէդ չէի գիտեր :

— Բայց թող գրէիր որ ղրկէի քեզի :

ԲԱՐՈՅԱԼԻՑ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Ա Ն Ձ Ր Ե Ի Ո Տ Ա Ռ Տ Ո Ւ Ո Վ Մ Ը

Խ Ն Ձ որ զիս երբեմն կը յուսահատեցնէ ա՛յն է թէ՛ հանճարը իր սահմանը ունի, բայց ապուշու թիւնը՝ ո՛չ :

×

Ամուսնական շղթան ա՛յնչափ ծանր է որ զայն քաշելու համար անպատճառ երկու հոգի ըլլալու է, երբեմն ալ երեք :

×

Կեանքերնին լաւ բաներու } յատկացնողները միայն կեանքը կը վայելեն :

×

Սկսեցէ՛ք նախ հիանալ Աստուծոյ ձեզի ցուցուցած քաներուն վրայ և ձենէ պահած բաները փնտռելու թամանակ չպիտի ունենաք :

×

Շատեր միմիայն իրենց բարեգործութիւններուն համար է որ կը զղջան ճշմարտապէս :

×

Աւելի դիւրին է բարի նկատուիլ հանդէպ ամէնուն, քան թէ հանդէպ մէկուն :

×

Կեանքը վերջին վարժութիւնն է զոր պարտաւոր ենք կորսնցնել, քանի որ մեր ստացած առաջին վարժութիւնն է ան :

×

Ինքզինքը սպաննող անձը խեղճ զոհ մըն է որ իր դահիճին կը հանդիպի և որ զինքը կը սպաննէ :

×

Երբէք մի՛ վիճաբանիք, քանի որ չպիտի կրնաք ո՛չ մէկը համոզել : Կարծիքները գամերու կը

նմանին, քանի՛ անոնց վրայ զարնենք, ա՛յնչափ
աւելի ներս կը մխուին :

×

Սիրոյ մէջ ճշմարիտ վերջին հրաժեշտը՝ չըս-
ուած հրաժեշտն է միշտ :

×

Իրենց դժբաղդութենէն օգտուիլ չկրցողները
արժանի են իրենց դժբաղդութեան :

×

Եթէ կը փափաքիք աստուածութեան մասին
գաղափար կազմել, այդ գաղափարը մի՛ փնտռէք
լոկ հանճարեղ մարդոց գործերուն կամ ընկերակ-
ցութեանը մէջ, այլ բարի անձերու ձեր յարաբե-
րութեանը մէջ : Հանճարը չի բացատրեր Աստուածը
բայց բարութիւնը կ'ապացուցանէ զայն :

×

Եթէ մարդիկ՝ իրենք իրենց գէշութիւն հաս-
ցընելու համար ըրածնուն քառորդը միայն վատ-
նէին ուրիշներուն բարիք ընելու, թշուառութիւնը
չատո՞նց պիտի անհետանար աշխարհիս երեսէն :

×

Դրամ տուէ՛ք, բայց փոխ մի՛ տաք : Տալով՝
ապերախտներ միայն կը հասցնենք, այլ փոխ տա-
լով՝ թշնամիներ :

×

Եթէ հարկադրուէի իմ կարծիքս յայտնել՝ էրիկ
մարդոց ու կիներու միջեւ եղած բարոյական տար-
բերութեան մասին, պիտի ըսէի թէ էրիկ մարդիկ
աւելի՛ կարող են, իսկ կիները լաւագոյն կ'արժեն :

×

Չարերը ապուշներէն աւելի կը սիրեմ, որով-
հետեւ գոնէ ասոնք կը հանգչին :

×

Էրիկ մարդիկ իրաւունք ունին երբեմն կիներու
դէմ խօսելու, բայց ո՛չ, երբէք կնոջ մը դէմ :

×

Տասը հազար հոգիի վրայ՝ եօթը-ութը հազար հոգի կիները կը սիրեն, հինգ-վեց հարիւր հոգի կինը կը սիրեն և մէ՛կը միայն կին մը կը սիրէ :

×

Ծերութիւնը տանելի չէ՛ առանց խոչալի մը կամ առանց մոլութեան մը :

×

Կինը՝ ըստ Աստուածաշունչին՝ Աստուծոյ կողմէ ստեղծուած վերջին էակն է : Տէրը զայն շարաթիրիկուն շինած ըլլալու է . յոգնութիւնը յայտնի է :

×

Անկարելի է հասկնալ թէ կին մը ճշմարտապէս կը սիրէ՞ թէ ոչ :—Բարեբաղդաբար՝ մենք մեր ուզած կերպովը կը հասկնանք , ապա թէ ոչ կեանքը ա՛լ աւելի անտանելի պիտի ըլլար :

×

Խնդա՛լս կուգայ , երբ կը լսեմ էրիկ մարդու մը բերնէն՝ «անգա՛մ մը միայն կին մը սիրեցի և մէ՛յ մըն ալ չպիտի սիրեմ» : Աստուած ա՛յնպիսի ստամոքս մը պարգեւած է այրերուն որ ամէն օր մէյ մէկ նոր կնոջ համար կրնան անճնասպան ըլլալ . բարեբաղդաբար քաջութիւնն է որ կը պակսի իրենց քով :

Ժողովեց Ե. Թ.

ԱՐԱՔ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

ԽՈՐՈՒՆԿ ու մեղամաղանս , պարզ ու ազգու է արաք իմաստութիւնը , եւ մաքուր ինչպէս իր երկինքը : Տարօրինակ սպաւորութիւն մը կը զգաս անկէ , ամենէն խորունկ դիտուած իմաստութիւնը գտնելով հոն ամենէն պարզ ձեւով ար-

սայայտուած : Մեկ քանի առաձներն ու խրատները
զոր կը դնենք հոս, լիովին զանոնք վայելելու փա-
փափր պիտի սան մանաւանդ մեր միտքին, որ մեկէ
աւելի հանգիստութիւններ ունի արաբ միտքին հետ :

ՍԻՏԻ ԱՊՏ-ԼՐ-ՌԱՀՄԱՆ ԷԼ ՄԷՃԷՏՈՒՊԻ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐԸ

Մէճէտուպը այն տեղիչն է որ գլուխը կ'ե-
րերցնէ երգած ու կարգացած առեւնը : Զարմանալի
արարած մըն է, որ հազիւ ցնցոտիով մը ծածկուած,
ցուպ մը ձեռքը քաղքէ քաղաք, գիւղէ գիւղ,
տուարէ տուար կը պտտի թափառական, միշտ ծաղ-
րելով, ամէնքը մտրակելով իր խայթող լեզուովը,
որ միշտ սրամիտ է ու միշտ պատրաստաբան, բայց
միշտ ալ ունենալով դիտողին համար թաքուն, ու
միշտ խորունկ իմաստութիւն մը :

Սիտի-էր-Ռահման պին Մօհամմէտ ալ Մէճէտուպ
մըն էր որ ծնած էր Մէքինէսի մէջ Հիճրէթի ԺԱ. դա-
րուն և նոյն տեղ մեռած էր 1085ին : Իր բովանդակ
կեանքը Ալճերիոյ մէջ անցուցած է, միշտ թափա-
ռելով. ու անշուշտ շատ մեծ տպաւորութիւն ձգած
ըլլալու է հոն, քանի որ այսօր ալ արաբ շինակա-
նին ամէնէն շատ գործածած առաձները իրենններն
են : Ահաւասիկ քանի մը հատը անոր իսկատիպ
քառեակներէն .

Կնոջ խօսակցութիւնը զուարթացնող է,
Միտքը կը բանայ (իր խորամանկութիւններուն վրայ).
Հովէ (= ոչինչէ) մանեակ կը շինէ քեզի,
Եւ առանց ջուրի քեզ կ'ածիլէ :

—
Մի' հրապուրուիւր այրի կնոջմէն,
Նոյն իսկ եթէ փունջեր ըլլան իր այտերը.
Ըլլաս իսկ լաւագոյնը ամուսիններուն,
Միշտ պիտի ըսէ. «Ասուած ողորմի լուսահոգրին» :

Նայիլը փոր չի՛ կշացներ,
 Հովը գե՛ս չի լեցներ.
 Կնոջ սէրը անհաւասարիմ շան սիրոյն կը նմանի,
 Վարժուելէ յետոյ քեզի, Թշնամիդ կը դառնայ:

Լեռան վրայ գե՛ս չըլլար,
 Զմեռը սաք գիշեր չըլլար,
 Բարիք գործող կին չըլլար,
 Վեհանձն սիրտով Թշնամի չըլլար:

Լռութիւնը իմաստութիւն մըն է,
 Բոլոր իմաստութիւնները անկէ կը բղխին.
 Տասրակին ձագը եթէ չի մ'նչէ,
 Թափառող օծի ձագը զինքը ուր տեղէն պիտի գտնէ:

Դեղը ճալէդ առաջ դրամը նո,
 Նայէ չի բռնուիս պարսպ խօսքերէ.
 Հիւանդը երբ առողջանայ՝
 Կը մոռնայ խնամողին ըրած բարիքը:

Աշխարհը սեխի նմանցուցի ես,
 Ուր կը գլխորի ուրիշ սեխերու մէջտեղ.
 Իմաստունը վայրկեան մը կը զբօսնու անով,
 Իսկ յիմարը՝ որչափ ուր ապրի:

Արցունքները ցաւը կը շացնեն,
 Աւելի աղէկ է ծածկել զայն.
 Գոցէ վէրքդ իւր մութովը,
 Ու պիտի առողջանայ:

Աղէկ մարդոց հետ տեսնուողը ինքն ալ կ'ազնուանայ,
 Ոչինչ մարդուն հետ խնամի եղողը գէշ զաւակներ կ'ունենայ.
 Սանին շփուողը ձեռքը մոտսած ետ կը քաշէ,
 Զեռքը օճառին քսողը մաքրութիւն կը բերէ անկէ:

Ու ահաւասիկ քանի մը պարզ գոհարներ որոնք
 Իրապէս խոշոր հատորներ կ'արժեն.

— Բարկութեանդ հետ պառկէ, ու զղջումին
 հետ պառկած պիտի չըլլաս:

(Արարականի առած)

— Բարկութեան դեղը լռութիւնն է :

Մեյսանի

— «Չաւակս, աշխարհի բարիքներէն պէտք ունեցածդ միայն առ. մի՛ գահավիժիր անոնց մէջ, ապագայ կեանքդ կը վտանգես» :

Լօֆնան ինաստուն

— Կեանքիդ դաշտին մէջ բարիքի հատիկը ցանէ և հարցուր գիւղացիին թէ անկէ ի՛նչ պիտի բուսնի. «Ցանածդ կը քաղեմ» պիտի պատասխանէ քեզի :

Միւր Աշի Շիւր Նեվաի

— Երկիրը կը թաւալի միշտ : Ինչ որ կայ լաւ՝ ճակատագրիդ մէջ, պիտի գայ քեզի, որչափ որ տկար ըլլաս, և ի՛նչ որ կայ դժբաղդ՝ չպիտի կրնաս վանել զայն որչափ որ ուժով ըլլաս : Առատութիւնը գէշ վայելելը ամբարտաւանութիւն յառաջ կը բերէ, իսկ աղքատութիւնը չի կրնալ տանիլը ազնուակա՛նութիւնը կը պակսեցնէ : Յարաբերութիւնները աւելի ամուր կ'ըլլան, եթէ քաղցրութեան վրայ հիմնուած են :

Ա. Բասաբ Պիև Սաիֆի

— Քեզի չի վերաբերող բանին վրայ մի՛ խօսիր. երբ խօսք մը ըսիր, ալ այդ խօսքը քու տէրդ է ու դուն մի՛շտ անոր գերին :

Շաֆեի

— Մերձաւորներու մէջ հասխանձը սովորական է. օտարականներու մէջ հազուադէպ բան մը :

Մեյսանի

— Եթէ փորին բռնակալութիւնը չըլլար, ոչ մէկ թռչուն պիտի իյնար թռչնորսին վարմին մէջ, և ոչ ալ այս վերջինը իր վարմը պիտի լարէր :

Սասի

— Կորովին առջև պէտքը կը դիմանայ :

Շեյխ Էլ-Պուսիրի-ՊՕՐՏԱ.-Գիրֆեև

— Լուռ կեցողը ապահովութեան մէջ է, աղէկ խօսողը շուտով կը հարստանայ, փուճ խօսքեր ընողը

սխալ կը գործէ, իսկ ով որ իր լեզուին տէրը չէ, պիտի զղջայ յետոյ :

Լօփման իմաստուն

— Լռութիւնը իմաստութիւն է, բայց քիչերը կը պահեն զայն :

Մեյսանի

— Լռութիւնը զինքը պահողին բարեկամներ կը հայթայթէ :

Մեյսանի

— Գիտութիւն չի սիրող մարդը " և է ինչք չունի ըսել է. ընկեր մի՛ ըլլար ասանկ մարդու :

Շաֆիհ

— Բանի մը կը հաւնիս կամ չես հաւնիր. մի՛ ըսեր ատիկա մինչև որ եօթ տարի չանցնի :

Արաքսկան առած

— Լօքման իմաստուն ըսաւ իր որդւոյն՝ Թաառանին .

« Զաւակս, համբերող եղիր միշտ ու ճշմարտախօս : Ու կիրքերդ զոհէ սկզբունքներուդ : Արհամարհէ՛ գէշ բաղդը և բան մը վեր մի՛ դասեր յաւիտենական փրկութենէդ : Քիչով գոհացիր և ամէն օրուան հացէդ աւելիին մի՛ ցանկար : Շատ մտածէ և լուռ կեցիր : Երբ քեզ գովեն քու շունեցած մէկ յատկութեանդ համար, շողոքորթութիւնը թող չի մոլորեցնէ քեզ : Մի՛ աշխատիր քու ունեցածդ կորսնցնելու և ուրիշներ յափշտակելու . քու սեփնական ինչքդ համարէ անդիւ աշխարհին համար հաւաքածդ միայն և ոչ թէ ինչ որ ուրիշներուն իբր ժառանգութիւն պիտի ձգես :

Ո՛վ զաւակս, Աստուծո՛յ ապաստանէ մոլի և ապականած կիներուն հանդէպ և զգուշացիր նոյն իսկ առաքինի կիներէն, որովհետև ամէնուն ալ ճամբաները դէպ ի մոլորութիւն կը տանին : Անհանգիստ ու կասկածոտ մի ըլլար, որովհետև եթէ այդպէս ըլլաս չես կրնար բարեկամ ունենալ : Իշ-

խանի մը համար աւելի դիւրին է մեռնիլը քան խաբերայ մարդիկներ կառավարելը : Շատ աւելի դժուար է պղտիկ հարստութիւն մը խելացիօրէն գործածել , քան մեծ հարստութիւն մը շռայլութեամբ վաանել :»

ՊԱՐԱՊ ՆՕՅԵՐ ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ ՇԱՀԵԿԱՆ ԸԼԸԱԼ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸՆԿԵՐԱՔԱՆՆԵՐՈՒ և քաղաքագէտներու աչքին սոսկալի մղձաւանջ մը եղած է սա դեղին վտանգը : Ինչեր չի խօսուեցան ու ինչեր չի գրուեցան այդ նիւթին վրայ : Բայց իրական վտանգ մը կ'այ , որ գրեթէ բոլորին աչքէն վրիպած է : Մազերու մրցումը :

Դեղիններու մազերը գրեթէ միշտ գեղեցիկ ու առատ կ'ըլլան : Մինակ Քանդոնէն 1904ին 80000 օխա մազ արտածուած է :

Դեղիններու այս մեզի ծախած մազերը կանոնաւոր առեւտուրի մը հետեւանքը չեն , որովհետեւ Չինաստանի մէջ մազերը ծախելը սրբապղծութիւն ընել կը նշանակէ , և իր ծակաչքութեամբը մազերը ծախող Չինացին մատով կը ցուցուի հոն , ամէն տունէ կը վտարուի և բարիա մը կը նկատուի : Շատ անգամ , Քանդոնի փողոցներուն մէջ , արիւնալից կռիւներ պատահած են Երկնացիներու և Եւրոպացի նաւագներու միջև , որոնք չէին կրցած դիմադրել այս կենդանի զանգակի թելերը քաշելու չարածճի հաճոյքին :

Ո՛ւրկէ կուգան ուրեմն գեղեցիկ տիկիներու հրապուրիչ գլուխները զարդարող սա մազերը :

Ատոնք պարզապէս մահուան պատժի դատապարտուած կամ փոխանցիկ հիւանդութիւններէ վախճանած մարդոց մազերն են : Մեր պշրուհիներու գլուխը զարդարող այս մազերը ուրեմն զազրելի մնացորդներն են գլխատուած, մորթագերծեղած, canguerի պատժին ենթարկուած մարդոց, որոնք միշտ գրեթէ ոջլոտ ու աղտոտ ալ կ'ըլլան իրենց կենդանութեանը :

—o—

Անգլիական թերթ մը հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կուտայ Էտուար Է.ի և Վիլհելմ կայսեր ծխած սիկառներուն վրայ :

Աւելորդ է ըսել թէ այս սիկառները բուն իսկ Հավանայի մէջ կը պատրաստուին : Էտուարա Է. իրենները՝ հասը 24 ղրշ.էն կը գնէ : Ատոնք ինը սանթիմետր երկայնութիւն ունին 5 ու կէս մմթ. հաստութեամբ : Վիլհելմ կայսրինները թէեւ աւելի աժան, հասը 9 ու կէս ղրշ., սակայն շատ աւելի փոքր են, որով ստիպուած է աւելի շատ սպառելու :

Ատոնք հազարով կ'ապսպրուին, և վերջերս Էտուարա Է.ի տուած յանձնարարութեան 250 ոսկինոց փոխգիր մը կ'ընկերանար : Խոստովանեցէք որ քիչ մը սուղի կը նստի կոր սա սիկարը :

—o—

ԽՆԱՄԵՑԷ՛Ք ԱԿՌԱՆԻԴ

Որովհետեւ, ինչպէս գիտական թերթ մը կը գրէ՝

«Առանց աղէկ ակռաներու, չէք կարող ծամել :

«Առանց ծամելու, չէք կարող մարսել :

«Առանց մարսելու, չէք կարող մարսուած սնունդը իւրացնել :

«Առանց իւրացնելու, չէք կարող սնանիլ :

«Առանց սնանելու, չէք կարող առողջ ըլլալ :

«Առանց առողջ ըլլալու . . . , աւելի աղէկ է մեռնիլը :

«Ուրեմն ահաւասիկ թէ ինչո՞ւ համար ամենա-
կարեւոր է լաւ ակռաներ ունենալ :»

—o—

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Առանց խօսելու օձահմայներուն վրայ, շատ մը
փորձերէ կրնանք հետեւցնել թէ խիստ շատ կեն-
դանիներ կը զգան երաժշտութեան հրապոյրը : Պ.
Քուբէն, նշանաւոր բնագէտ մը, հետեւեալ խիստ
շահեկան տեղեկութիւնները կը հաղորդէ այս մասին :

Կ'երեւայ թէ ձիերը կը սիրեն թմբուկին, սրին-
գին, ջութակին ձայները, պայմանով սակայն որ
ատոնք . . . սխալ կամ աններդաշնակ չի նուագուին :

Նշմարուած է նոյն իսկ թէ յաճախ, մտրուկ-
ները՝ առաջին նօթերէն իսկ, նուագողին կը դառ-
նան, ականջնին կը տնկեն, պոչերնին կը շարժեն,
ու կը մօտենան . . . երաժշտական գործիքը հոտ-
ուըտալու :

Փիղերն ալ երաժշտամուտ են ատոնց չափ : ԺԸ .
դարու վերջերը, Բարիզ՝ Բուսարանական Պարտէ-
զին մէջ զոյգ մը փիղեր կը գտնուէին : Մտածեցին
նուագահանդէս մը տալ ատոնց : Առաջին տպաւո-
րութիւննին տեսակ մը տարտամ անհանգստութիւն
եղաւ որ սակայն շուտով տեղի տուաւ ճշմարիտ ու
մեծ զուարթութեան մը : Եւ նոյն իսկ զարնուած
եղանակներէն մին հաճոյքի ճշմարիտ աղաղակներ
արձակել տուաւ ատոնց :

Նման փորձ մը կատարուեցաւ վերջերս Լոն-
տօնի Կենդանաբանական Պարտէզին մէջ, արջե-
րուն վրայ : Առտու մը ջութակահար մը սկսաւ
ջութակ զարնել տակաւին քնացած արջերուն վան-
դակին վերեր : Անմիջապէս արջերը արթնցան և
թաթերնուն վրայ ելան կանգնեցան իբր թէ երա-
ժշտին մօտենալու համար : Յետոյ, որովհետև այս
վերջինը եկեր վանդակին ճիշդ առջեւը կեցեր էր,

արջերէն մին թաթին մէկը ձողերէն դուրս երկըն-
ցուց կարծես ջութակը բռնելու : Իստամբու զար-
նուած սխալ նօթ մը բաւական եղաւ զինքը
սարսափահար ետ մղելու : Ուրիշ անդամ մը , ար-
ջերը հագիւ իմացան քայլերգի մը առաջին խաղերը
որ սկսան պարելու պէս պտտիլ :

Առիւծներու և գառներու վրայ նոյն փորձերը
նոյն արդիւնքները տուած են : Իսկ ընդհակառակն
գայլերը , շնագայլերը և կապիկները սոսկում մի-
այն կը զգային ջութակի ամէնէն ներդաշնակ
ձայներուն ի լուր :

— 0 —

Գրեթէ բոլոր մեծ մարդիկը աւելի կամ նուազ
չափով զինին սիրած են — խաթրը չի մնայ Թաւ-
շանճեանին : Նարուէոն խենդ կ'ըլլար Շանպերթեկին
համար : Մեծն Պետրոս կը լուրջնար Մասերայով ,
Ֆրէսէրիք տը Բրիւս՝ Թօֆայով , Ռիչըլիէօ Մեօֆը
կը սիրէր ամէնէն աւելի , Բիւպէնս՝ Մարսալան ,
Քրօմուէլ անուշահամ Մաշվազիան , Հումպօլտ՝
Սօթերնը , Կէօթէ՝ Եօհաննիսպերկը , Պայրըն՝ Բօր-
թոյի գինին , Հիւկօ՝ Բօմարը , Պալզազ երգած է
Վոշվրաժը դոր շատ կը մեծարէր , Տիւմա հայր՝
Մաֆօնը և Պուրկիինեօնի գինին :

— 0 —

Շատ անգամ բժիշկի մը իրր այցեզին մեր
տուած մէկ կամ երկու մէճիտը փուշ կ'երեւայ մեր
աչքին և կ'ուխտենք անգամ մըն ալ հիւանդ չըլ-
լալ ազատելու համար ատկէ : Բայց հետեւեալ
թուանշանները թող օրինակ ըլլան մեզ . այսպէս՝

Ամերիկացի միլիտառատէր Ճէյ Կուլտ իր բժիշ-
կին տարին 75000 Ֆրանք կը վճարէր , հիւանդ ըլ-
լար կամ ոչ : Իր քոյրը անգամ մը երկու ամիս
հիւանդ պառկեցաւ և Ճէյ Կուլտ ճիշտ 430000
Ֆրանք վճարեց բժիշկներուն :

Հաւանաբար , ուրիշ Ամերիկացի մը , Պր . Ու-

իթնէյն է որ իբրև բժիշկի այցեզին ամէնէն խոշոր գումարը վճարած է, 125000 ֆրանք մէկ շաբաթուան խնամքի համար :

Սըր Մօրէլ Մաքընզի, որ Ֆրէտէրիք կայսրը խնամեց անոր վերջին հիւանդութեան ժամանակ 100000 ֆրանք միայն առաւ :

Սակայն Մոսկուայի ուսուցչապետ Զաքարէն, որ հոգեւարք եղող Աղեքսանդր Զարին քով կանչուած էր, բոլոր իր ծախքերը հոգացուելէն յետոյ, երկու օրուան տեղափոխութեան մը համար 75000 ֆրանքի չէք մը ստացաւ :

—o—

ԱՒԱԶԱԲՈՒԺՈՒՄ (!)

Անգլիական բժշկական թերթը, The medical Press, դժուարամարտութեան դէմ հետեւեալ անվրիպելի դեղը կը յանձնարարէ :

Ուէպ Պարպըր, Աթէուսցի գիւղացի մը դիտեր էր որ հաւերն ու թուշուհներու մեծագոյն մասը մինչև որ իրենց կերած հատիկներուն հետ աւազի հատիկներ ալ կուլ չը տան, չեն կարող մարսել : Մտածեց հետեւաբար թէ աւազը մեքենական կերպով կ'ազդէր մարսողութեան վրայ, ստամոքսին մէջ գտնուող կերակուրի կոյտը աւելի ծակոտկէն և հետեւաբար, ստամոքսի հեղուկներուն զայն աւելի թափանցելի ընելով :

Ուէպ Պարպըր, երկար ժամանակէ ի վեր անբժշկելի դժուարամարտութենէ մը կը տառապէր և քանի որ, մտածեց, հաւերը աւազ կ'ուտնն մարսելու համար, ինչո՞ւ ես ալ չուտեմ, և... ամէն ճաշի, սկսաւ պէտք եղած քանակութեամբ աւազ ուտել և շատ քիչ ժամանակի մէջ... կատարելապէս առողջացաւ :

Անտէրսին դատաւորն ալ, քննիչ Երկրագործութեան նախարարութեան մէջ, որու Պարպըր

հաղորդեր էր իր գիւտը, սովորութիւնն ըրաւ աւալ ուտել իր նախաճաշերուն հետ և ինքն ալ շատ լաւ է հիմա :

Medical Press կ'աւելցնէ նաև թէ այս առաջին բժշկութիւններու հետեւանքով հիմա շատեր իրենց սեղաններուն վրայ աղամաններու տեղ մէյմէկ աւազամաններ դրած են :

Կրնաք փորձել, քանի որ... ճրի՛ է :

— 0 —

ԵՐԲԵՄՆԻ ԿԱՏԱԿԵՐԳԱԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

Երբեմն շատ մը կարողութիւններ պէտք էլին դերասանի մը, յաջողելու և համբաւ շահելու համար :

Յաճախ ուսնումները, ինքն իր վրայ դառնալները, թախանները պատասխանի տեղ կը ծառայէին : Գաւազանահարութիւններն ալ քիչ չէին : Comedia dell' arteի համբաւաւոր դերասաններու մեծագոյն մասը առաջնակարգ մարմնամարզիկներ եղած են միեւնոյն ատեն և իրենց համբաւը որչափ իրենց պատրաստաբանութեանց սրամտութեան, նոյնչափ ալ իրենց ուժի և ճարպիկութեան փորձերուն կը պարտին : Ֆիօրէլլի (Սքարամուշ) ու թ սուներեք տարեկան հասակին տակաւին կրնար ոտքովը... նպատակ զարնել : Թօմասէն (Թօմասօ-Անթօնիօ-Վիչէնչինի), Ժէ. դարու համբաւաւոր Թրիվըլէնը, երբ իբր Տօն Ժուանի ծառայ, հրաման կը ստանար տիրոջմէն հրամանատարին արձանին խօսք հասկցնել, ջուրով լեցուն գաւաթ մը ձեռքը թաքլա մը կը նետէր և ոտքերուն վրայ կ'իյնար առանց գաւաթէն կաթիլ մը ջուր թափելու : Ասկէ զատ, դուրսի կողմէն առաջին, երկրորդ և երրորդ կարգի օթեակներուն շրջանը կ'ընէր և այս այնչափ վտանգաւոր խաղ մըն էր, որ հասարակութիւնը, իր սիրելի արուեստագէտին կեանքին սպառնացող վտանգէն դողալով, ստիպեց զինքը որ հրաժարի այս փորձէն :

Հիմա երեւակայեցէք մեր Մնակեանը որ իր յուզիչ մէկ tiradeին . . . թաքլա մը նետէ տեսարանին վրայ :

— 0 —

Ի՞ՆՉ Կ'ԸԼԼԱՅ ՈՍԿԻՆ

Սարսափելի մարդիկ են սա գիտունները, մանաւանդ վիճակագիրները : Այս վերջիններէն մէկը, — չեմ գիտեր ինչպէս, — հաստատած է թէ ամերիկացի ատամնաքոյժները ամէն տարի, իրենց քաղաքացիներուն ակռաները լեցնելու համար ութը հարիւր քիլոկրամ ոսկիի սարսափելի քանակութիւն մը կը սպառեն : Այսչափ ոսկին երկուքուկէս միլիոն ֆրանքէն աւելի արժէք մը ունի, որուն ամենամեծագոյն մասը հողին սակ կը թաղուի իր տէրերուն հետ մէկտեղ :

Եթէ այս կերպով երեք դարձ շարունակուի, կ'արժէ ոսկեհանքեր փորել ամերիկեան գերեզմաննոցներուն մէջ, որովհետեւ պիտի կրնայինք եօթ հարիւր միլիօնի պատկառելի գումար մը գտնել հոն :

— 0 —

ՔԱՆԻ՞ ԿԻՆ ԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

Իրաւ է որ դիւրաւ լուծուելիք խնդիր մը չէ աս, և շատ ստուգութեամբ չենք կարող գիտնալ անոնց ճիշդ թիւը, բայց որովհետեւ վիճակագրութիւնը մօտաւորապէս կրնայ ճիշդ պատասխան մը տալ, անոր կը դիմենք նորէն ստոյգ պատասխան մը առնելու համար :

Շատերուն ծանօթ իրողութիւն մըն է թէ, թէև մանչերը աւելի շատ թուով կը ծնին, բայց աղջիկները աւելի կ'ապրին, որով հակառակ արական ծնունդներու առաւելութեան, իգական սեռն է որ թուով աւելի է միշտ : Բարիզի մէջ, 1901ի մարդահամարին՝ 1,255,492 էրիկմարդ կար 1,401,905

կիներու դէմ, և Ֆրանսայի ամբողջութեան մէջ կիները աւելի շատ են այրերէն: Այսպէս է խիստ շատ ուրիշ երկիրներու մէջ ալ:

1900ի դեկտեմբերին Գերմանիոյ մէջ կատարուած վերջին մարդահամարի ատեն, կիները 882890 միութիւն աւելի էին այրերէն և 1000 էրիկ մարդու համար 1038 կին կար: Հիւսիսի երկիրներու ամբողջութեան մէջ ալ կիները աւելի բազմաթիւ են այրերէն և շատ աւելի կարեւոր համեմատութիւններով: Շուէտի, Նորվեկիոյ և Անգլիոյ մէջ 1060 կին կայ 1000 էրիկ մարդու համար: Կեդրոնական Եւրոպայի երկիրներու՝ Ֆրանսայի, Պելճիքայի, Հունգարիոյ մէջ իրաւ է որ կիները նորէն աւելի բազմաթիւ են, բայց նուազ համեմատութիւնով, և հարաւային Եւրոպայի երկիրներու մէջ այրերու թիւը գրեթէ հաւասար է կիներու թիւին: Եւ սակայն սա ալ ճիշդ է որ Եւրոպա իր ամբողջութեանը մէջ 3,400,000 կին աւելի ունի, որոնք, խեղճերը, չպիտի կրնան ամուսնանալ, ո՛րչափ ալ փափաքին:

Բայց եթէ գերմանական օրաթերթի մը խօսքին հաւտալու ըլլանք, կիներու թուական առաւելութիւնը Եւրոպայի միայն յատուկ երեւոյթ մըն է: Աշխարհի մնացեալ մասերուն մէջ այրերու թիւն է որ աւելի է կիներէն: Ասիա իր 815 միլիոն բնակիչներուն մէջ 16 միլիոն այր աւելի ունի կիներէն: Ափրիկէի 27 միլիոն բնակիչներուն մէջ մէկ միլիոն աւելի էրիկ մարդ կայ: Աւստրալիա իր 4 միլիոն բնակիչներուն մէջ 500,000 այր աւելի ունի: Եւ աշխարհ իր ամբողջութեան մէջ ունենալով 649 միլիոն այր և 633 միլիոն կին, կրնանք գտնել թէ կիները 16 միլիոն քիչ են թիւով՝ այրերէն:

ՔՄԱԾԻՆ ԲԱՌԱՐԱՆ

- Ք**ՈՒՆԱՌՈՒՅԻԼԵՆ. — Թատերգութիւն մը, որու
առաջին արարուածը անօթութիւնով կը սկսի:
- Արկղակալ (caissier).** — Մարդ մը որ ոչ գեղեց-
կութեան, ոչ ալ սրամտութեան պէտք ունի
ամէնուն հաճելի ըլլալու համար:
- Խիղճ.** — Երկու երեսով հայելի մը, որուն բուն
մէջտեղը կը գործածենք զարդարանք ըրած
ատեննիս: Մեր յանցանքները պզտիկցնող
կողմէն կը ցոլանան անոր մէջ, իսկ բարի գոր-
ծերը՝ խոշորցնող կողմէն:
- Փորձառութիւն.** — Կեղծամ մը որ կեանքին մէջ
մեր հանդիպած մազերէն շինուած է:
- Կեղեւ.** — Ծառերուն բաշքօն:
- Միջակութիւն.** — Յաւակնատութեան նաւամա-
տայցը:
- Դագաղ.** — Կառք մը ուր մա՛րդ նստիլ չուզեր,
բայց անգամ մը որ նստի, բնաւ դժգոհու-
թիւն չի յայտներ:
- Կակազել.** — Տոտիկ տոտիկ խօսիլ:
- Ժառանգորդ.** — Ճշմարիտ և իրական փիւնիկ
թռչունը որ անդադար իր աճիւնէն կը ծնի.
որովհետև հազիւ ժառանգորդ մը կը ժառանգէ,
ուրիշ մը իր ժառանգորդը կ'ըլլայ:
- Թարգմանել.** — Գիրք մը ատեանի մը առջև հանել:
- Կենսագրութիւն.** — Այբուբենի կարգով մեռեալ-
ներն ու կենդանիները նախատելու արուեստը:
- Ապուշութիւն.** — Միտքի հիւանդութիւն մը ուրկէ
բռնուողը չտառապիր սակայն:
- Մրհարան.** — Նոյի տապանը ուր բազմաթիւ տե-
սակ կենդանիներ կը հաւաքուին:

ԽՆԴԱՅԻՆՔ ՔԻՉ ՄԸ

ՔԻՆՈՎԻՆ տրտուհի :

Գինովը՝ անձրևի ատեն՝ երկինք նայելով՝

— Ի՞նչ անիրաւ բան է աս, շարունակ ջուր կուգայ, տակառներով, և կաթիլ մը գինի անգամ ինկած չունի :

×

Հոռոփ, համը նայելու համար, մատը անուշին մէջ խոթած ատեն, տիկինը վրայ կուգայ :

— Հոռոփ, շատ անվայել բան է ըրածդ :

— Կարծեմ, տիկինն ալ համամիտ է թէ չէր արժեր որ այսչափ քիչ բանի համար դժուար մը աղտոտէի :

×

Գինեպան մը, որ խմելով ունեցածը ամբողջ ... ուտելու վրայ է, յաճախորդի մը կը բացատրէր իր մոլութեան գաղտնիքը :

— Ամէն անգամ որ գինի մը կը տնկեմ, կըսէր, կը վճարեմ դրամը, իբր թէ ես ալ յաճախորդ մը ըլլայի :

— Բայց ա՛տ ալ միեւնոյն բանը ըսել է :

— Բնաւ, անցեալ տարի, միայն ինչ հազար հինգ հարիւր զրուշ շահ եմ ըրած :

×

Տօնավաճառներու թատրոնի մը դրան վրայ սա տախտակը կախուած էր .

— Մտէ՛ք, պարոններ ու տիկիններ, մտէ՛ք, հոս պիտի տեսնէք ինչ որ Աստուած անգամ չի կրնար տեսնել :

Ամէն մարդ հետաքրքրութեամբ ներս կը ժողվուի, ու կը տեսնէ ... հայելի մը . չէ՞ որ Աստուած իր նմանը չէ կարող տեսնել :

×

Գիւղացի կին մը, որպէս զի ամուսնին վագ անցնել տայ գինետունէն ուշ վերադառնալու մոլութիւնը, խօսք մէկ ըրաւ եղբօրը հետ որպէս զի ան ուրուական ձեւանայ և գիշեր մը սարսափեցնէ գինովը :

— Ո՞վ էք դուք, հարցուց գիւղացին ուրուականին, որ յանկարծ դէմը ցցուեր էր :

— Սատանան եմ ես, պատասխանեց տեսիլքը :

— Վա՛յ, սատանան էք, գոչեց ուրախութեամբ գինովը, անանկ է նէ, տուէք սեղմեմ ձեռքերնիդ, ազգական ենք եղեր, քոյրերէդ մէկը ես առած եմ :



Աշխարհի ստեղծուելէն ի վեր չի տեսնուած շատախօսի մը վրայ կը խօսէին :

— Սարսափելի բան է, կ'ըսէր մէկը, որ զայն մտիկ ընելու ապաշխարանքը քաշած էր. առանց դադրելու՝ ժամերով կը խօսի, ու մինակ հազած ատենը լուռ կը կենայ :

— Գոնէ այդ ատեն դուն ալ խօսք մը ընելու ժամանակ կ'ունենաս :

— Բնա՛ւ երբեք, ձեռքովը նշան կ'ընէ թէ... շարունակէ պիտի :



Կիներու խօսակցութիւնը.

— Երբ իրեն իմացուցիք թէ ամուսնացեր եմ, ցաւեցա՞ւ շատ :

— Այո՛, չափազանց :

— Ահ...

— Եւ նոյն իսկ ըսաւ թէ, առանց անձնապէս ճանչնալու ամուսինդ, շատ կը մեղքնար զինքը :



Նաւաստի մը, նաւու մը վրայ անձարակութեամբ ձեռքէն ձգեց արծաթէ թէյաման մը, որ զնաց կորսուեցաւ ծովուն խորերը : Նաւաստին

անմիջապէս գնաց հրամանատար սպային ու հարցուց .

— Նաւապետ , կրնա՞նք ըսել թէ բան մը կորսուած է , երբ գիտենք անոր ո՛ւր ըլլալը :

— Ո՛չ , բարեկամս :

— Օ՛հ , թէ որ այսպէս է , նաւապետ , ձեր թէյամանը կորսուած չէ բնաւ , քանի որ գիտե՛մ թէ ծովուն խորը կը գտնուի :

— 0 —

ՉԱՓԱԶԱՆՑ ՉԱՐԱՃՃԻ

Ամերիկացի մը , որ աժան գինով լաւ սիկառներ ծխել կ'ուզէր , 300 հատ սիկառ գնեց , հատը 6 դրչ.էն և ապահովագրեց զանոնք հրդեհի դէմ ապահովագրական ընկերութեան մը : Սիկառները ծխել լմնցնելուն պէս , 375 ֆրանք սահանջեց ընկերութենէն , քանի որ իր սիկառները . . . կրակէ այրած էին : Գործը դատարան իյնալով , դատաւորը ծխողին ի նպաստ վճիռ տուաւ : Այս վերջինը կը հպարտանար իր այս գիւտով , բայց երկար չի տեւեց իր սերախութիւնը : Ընկերութիւնը իր կարգին դատի քաշեց ծխողը , իբրև հրձիգ կամ գոնէ ապահովագրուած ինչքի մը նպատակաւոր կերպով կրակ տուող , ոճիր մը , որուն համար դատարանը . . . 90 օրուան բանտարկութեան դատաւարտեց այս չափէն աւելի չարաճճի ծխողը :

×

Գիւղացիին աղօթքը .

— Ո՛վ Տէր , կտոր մը անձրև տուր մեր սիւնեաներուն համար , կտոր մըն ալ չորութիւն մեր գետնախնձորներուն համար , իսկ երկուքին մէջտեղը բան մը տուր մեր վարսակին համար :

Ահաւասիկ աղօթք մը , որ զԱստուած անգամ պիտի շուարեցնէր :

×

Այս սա employéներուն քաչաժը :

Մի կարծէք թէ ամէն բան վարդագոյն է Բե-
րայի սա շողշողուն նորածեւութեանց խանութնե-
րու պաշտօնեաներուն համար :

Պատմեմ ու տեսէք .

Տեսարանը կ'անցնի Օ Լիօնին , կամ Գաշիվ-
ռուսիին կամ Բառեիին խանութը , որը որ կ'ուզէք :

Շատ մաքուր հագուած տիկին մը ներս կը մտնէ
ու վերարկուի համար կերպաս կը հարցնէ :

Պաշտօնեան սանդուխը կ'առնէ և կերպասնե-
րու դարաններէն խել մը ծրարներ կ'իջեցնէ վար :

— Ո՛չ , չեղա՛ւ , կ'ըսէ տիկինը , քննելէ յետոյ :
Անձրեւին չեն դիմանար ասոնք : Կակուղ կերպաս
հանեցէք : — Ասոնք ալ շատ հաստ են , կ'ըսէ նո-
րէն տասը վայրկեանէն աւելի շօշափելէն յետոյ
զանոնք , ... drap de dame հանեցէք :

Պաշտօնեան նորէն կ'ելլէ սանդուղէն վեր և
բազմաթիւ ծրարներ կ'իջեցնէ ուզուած ապրանքէն :
Այս անգամ ալ տիկինը շատ բարակ կը գտնէ զա-
նոնք : Drap de dameին կը յաջորդեն թաւիչէ կեր-
պասները , ասոնք ալ սակայն չափազանց սաք կը
պահեն , ըստ տիկինին . յետոյ անգլիական թաւիչ
վար կ'առնուի , — ասոնք ալ շատ ստորին ապրանք
են . — յետոյ թրիֆոյ , մետաքս , սաթեն , վիտակ
(moire) : Հաշուեաւորանը աներեւոյթ կ'ըլլայ վար
առնուած և լայն լացուած ծրարներու դէզերուն
տակ , և ասոնց ետին հազիւ կը նշմարուէր պաշ-
տօնեային գլուխը , միշտ քաղաքավար , միշտ համ-
բերատար :

— Է՛ն աղէկը նորէն , կ'ըսէ յանկարծ տիկինը ,
կարծեմ ֆանեղան պիտի ըլլայ . . . կապոյտ ֆանեղա :
Տաս տասներկու նմոյշ ցոյց կը տրուի իրեն : — Ա՛ ,
անաւասիկ ճիշդ ուզածս , կը գոչէ , մանրակրկիտ
քննութենէ մը յետոյ : — Ո՛րչափ կտրեմ , տիկին ,
կը հարցնէ պաշտօնեան : — Դուք հաշուեցէք , կը

յարէ տիկինը, շունիս համար է, տեսէք: Եւ ցոյց կուտայ մանրադիտական պզտիկ շնիկ մը որ հաշուեսեղանին շուրջը ցատկրտելու վրայ է:

Պաշտօնեան ինքզինքը չ'աւերեր և մտովի հաշուելու պէս — վերարկո՞ւ մը... կը յարէ: — Այո՛: — Գրպան ալ պիտի շինէ՞ք:

×

Ընտանեկան տեսարան .

Պարոնը, տիկինը և զոքանչը կրակին քովիկը բոլորուած են:

Պարոնը (Լրագիրը կը կարդայ) . — Երէկ Կէտիկ Փաշայի մէջ հոգին աւանդեց պատուական անձնաւորութիւն մը, որ թէ իրեններուն և թէ զոքանչին խորունկ սուգ ու ցաւ պատճառեց. հանգուցեալը, օրինակելի ամուսին մը եղած էր, և իր ամուսնութեան ամբողջ քառասուն երեք տարուան մէջ գիշեր մը անգամ դուրս չէր ելած...

Զոքանչը . — Կը լսե՞ս կոր, Սաթենիկ: Քառասուն երեք տարուան մէջ գիշեր մը անգամ դուրս չէ ելեր. ո՛չ սրճարան գացեր է, ո՛չ բարեկամներու...:

Պարոնը (Կարդալը շարունակելով) . — Նոյն իսկ ցորեկներն ալ դուրս չէր ելլեր, ... թշուառ մարդը անդամալոյծ էր:

Tableau!

×

— Տղա՛ս, կրնա՞ս ինձի ըսել թէ ամէնէն շուտ ո՛ր ճամբով կրնամ գիւղ երթալ:

— Ամէնէն կարճ ճամբով, պարո՛ն:

×

Ունայնամտութեան երեսէն .

Թատրոնի մէջ կիներու գլխարկին խնդիրը հանճարեղ լուծում մը գտաւ վերջերս Միացեալ Նահանգները բողոքական տաճարի մը մէջ:

Այս միջոցը գտնող ժողովրդապետը սա խօսքերը ուղղեց զինք մտիկ ընող կիներուն .

«Միտքէս չեմ անցներ խնդրել տիկիներէն որ հանեն իրենց գլխարկները , թէև գիտեմ թէ ատոնք ո՛րչափ անհանգիստ կ'ընեն իրենց քովը հատողները : »

Բնականաբար , այս յորդորը ու է օգուտ չըրաւ : Ճառախօսը շարունակեց .

«Այո՛ , ասիկա չեմ խնդրեր , որովհետև շատ աղէկ գիտեմ թէ շատ մը կիներ եթէ իրենց գլխարկները հանեն , այնչափ աղուոր չեն երեւար : »

Այս խօսքերուն վրայ , քանի մը հորատի կիներ , քանի մը հատ ալ հորատի աղջիկներ կամաց մը հանեցին իրենց գլխարկները :

«Յետոյ , սա ալ կայ որ , շարունակեց ժողովրդապետը միամիտ դէմքով մը , որովհետև շատ մը կիներու մազերը կեղծ են , կը վախնան որ գլխարկը հանած ատեննին , դանոնք ալ մէկտեղ կը հանեն : »

Ասոր վրայ բուն և ընդհանուր բողոք մը բարձրացաւ և ակնթարթի մը մէջ . . . բոլոր գլխարկները աներեւոյթ եղած էին :

Հոն ուր բոլոր տրամաբանութիւնները ի գուր վատնուած էին , ունայնամտութիւնը յաղթած էր ամէն արգելքի :

×

Օր մը ժան Վանօ բանաստեղծը Անրի Պէքի կը հանդիպի .

— Սիրելի վարպետ , իրա՞ն է որ տան մը մէջ ուր պնդեր են թէ տաղանդաւոր տղայ եմ ես , դուք պնդեր էք թէ բնաւ չունիմ այդ ապրանքէն :

— Սխա՛լ , պատասխանեց Պէք , ես դեռ չեմ գացած այնպիսի տուն մը , ուր ձեզի համար ըսեն թէ տաղանդ ունիք :

×

Պօսակցութիւնը երջանկութեան և դժբաղդութեան շուրջը կը դառնար: Մէկը հարցուց Տիւմա Որդիի.

— Իսկ դո՞ւք, պարոն, դո՞ւք ինչ կը մտածէք:

— Ոչի՛նչ. միայն թէ երջանկութիւնները որոնց կը սպասենք, տօներ են մեզի համար:

«Իսկ երբ հասնինք անոնց, պատրանքներ կ'ըլլան:

«Ամէն վտանգ որու կը սպասենք, անձկութիւն կը պատճառէ մեզ:

«Իսկ երբ գայ անցնի, հանգստութիւն միայն կը ղգանք:»

×

Օր մը, Սպահանի հարուստներէն մէկուն դուռը մուրացիկ մը զարկաւ և ողորմութիւն խնդրեց: Տանտէրը իմացաւ ու ըսաւ ծառային. «Միւսպարէք, ըսէ ձաֆէրին որ ըսէ Եագութին, որ Էլմասին ըսէ, որ ըսէ Ֆիրուզին, որ Մէրճանին ըսէ, որ ըսէ սա մուրացիկին «Աստուած տայ»: Աղքատը՝ որ լսեր էր հարուստին հրամանը, ձեռքերը երկինք վերցուց ու աղաղակեց. «Ո՛վ Տէր, ըսէ Գաբրիէլին, որ Ազրայէլին ըսէ, որ ըսէ Ազրայիլին, որ առնէ սա անգութ ագահին հոգին:» Հարուստը ամօթով ծածկուեցաւ և մուրացիկը սիրտը թեթևեցած առաւ քակեց:

×

— Ի՛նչ է կեանքը:

— «Տղուն համար՝ հանոյ՛ մըն է:

«Բեռնակիրին համար՝ քեռ մը:

«Սպասաւորին համար՝ ծառայութիւն մը:

«Եւ մեռելաթաղին համար՝ ուրիշներու կեանքը:

×

Չափազանց մաքրատէր:

Ի՞նչապանուհի մը, որ չափազանց մաքրատէր էր, գիշեր մը կ'արթնցուի իր կէսին կողմէն.

— Ականջ դիր, կ'ըսէ անոր, կարծեմ թէ գող մը կ'ելլայ կոր սանդուխներէն վեր:

— Երանի՛ թէ ոտքը սրբած ըլլար, կը մըմնջէ կէս քուն, կէս արթուն:

×

Բժշկական այցելութենէ մը յետոյ.

— Հսէ՛ք, տօքթօ՛ր, ի՞նչպէս է հօրեղբօրս վիճակը:

— Քաջ էք, այնպէս չէ՞...: Ամէն բան կըրնա՞մ ըսել ձեզի:

— Այո՛, ըսէ՛ք, կ'աղաչե՛մ...

— Օ՛ն, սի՛րտ ունեցէք...

— Ունի՛մ, տօքթօ՛ր, ... անի, խեղճ հօրեղբայրս...

— Լա՛ւ, ութ օր չանցած, ոտքի ելլէ պիտի ձեր հօրեղբայրը:

Tête de neveu!

×

Թատրոնին մէջ.

Բիֆ-նիֆ, ֆլաուեր. — Հսէ՛ք նայիմ, պարոն Օկիւսթ, կրնա՞ք գիր գրել առանց գրիչի ու մելանի:

Օկիւսթ. — Ո՛չ, պարոն ֆլաուեր, ի՞նչպէս կարելի է:

Ֆլաուեր. — Եւ սակայն շատ դիւրին է ատիկա, մատիտով գրեցէք:

×

Պարծենկատութիւնը ս'ըրտեղերը կը տանի:

— Ես, կ'ըսէր մին, մէկ հարուածով ձի մը կը սատկեցնեմ:

— Հապա ե՞ս, կը պատասխանէր միւսը, մէկ ձեռքովս երկաթուղի մը կը կեցնեմ... քօնտիւք-թէօն եմ:

×

— Միշտ սգաւոր, հէ՞, տօքթօր:

— Ի՞նչ ընեմ, բարեկամս, այնչափ շատ են յաճախորդներս :

×

— Տղաս փարա մը չկրնար պահել գրպանը, կը տրտնջար հայրիկը :

— Շատ կը սխալիս կոր, բարեկամս, ահաւասիկ ամիս մը եղաւ որ ոսկի մը փոխ տուի իրեն, ու տակաւին պահեր է :

Ս Է Բ Ը Կ Ե Ն Կ Ա Ն Ի Ն Ե Բ Ո Ւ Ն Մ Է Զ

ՓԵՏՐԱԻՈՐ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ

(ՅՈՋՈՒՆՆԵՐՈՒ ՍԷՐԸ)

ԵԱՏ անգամ «բնութեան բանաստեղծները» կոչուած են թռչունները, և ոչ մէկ ատեն այս տիտղոսը այնչափ կը յարմարի իրենց որչափ սիրոյ եղանակին մէջ : Իրաւ ալ, այս տեսակէտով զգալի տարբերութիւններ կան թռչուններուն և ստնաւորներուն միջև : Մինչդեռ սերնդագործելու գործողութիւնը էգը հայթայթելէն մինչև բուն գործողութիւնը և ձագին կամ ձագերուն ծնունդը, վայրագօրէն կը կատարուի ստնաւորներուն մէջ, համակ բանաստեղծական կերպով տեղի կ'ունենայ ան թռչուններուն մէջ : Արուններուն միջև էգին ի խնդիր եղած կռիւները, պարզ կզուրտութիւններ են թռչուններուն մէջ, ուր արուն ամէնէն աւելի իր երգերովը, իր շքեղ արդուզարդովը, իր շնորհալիութեամբը, իր սիրովը, իր քաղցրութեամբը կը ջանայ էգը գրաւել. և զուգաւորութիւնը ակնթարթի մը մէջ կը

կատարուի, գրեթէ մակերեսային կերպով և յղութեան (gestation) օրերը իրենց փափկութեամբը պաշտելի բոյներ շինելու զբաղումներով կ'անցնին. հակիթ ածելը չափազանց մաքրասիրութեամբ կը կատարուի և վերջապէս ձագերուն դիեցումն ու մեծնալը երեւակայելի ամէնէն հրապուրիչ ընտանեկան կեանքի մը մէջ կ'աւարտի:

Թռչուններու մէջ սէրը տեւական է կրնանք ըսել, և թութակներուն մէջ զոյգը նոյն իսկ մինչև մահը միացած կ'ապրի. սակայն ընդհանրապէս այս միութիւնը եղանակ մը միայն կը տեսէ, միայն թէ այս եղանակին մէջ միաւորած զոյգը սիրոյ՝ ամէնէն շնորհալի արտայայտութիւնները կուտայ իրարու: Եւ ճիշդ հակառակը ստնաւորներու մէջ եղածին, արուն իր սեռային փափաքներուն յագենալէն ետքն ալ սէր կը յայտնէ իր էգին. երբ թութասի նստած է ան, արուն է զայն անուցանողը և իր երգերովը զայն զբօսցնողը:

Էգը հրապուրելու համար արուն շատ միջոցներ ունի, ուր գլխաւոր տեղը կը բռնէ երգը: Տեսակներ կան, որոնք ամենաքաղցր եղանակներ կը գեղգեղեն սիրոյ շրջանին, թէև ձուկի նման համր են սովորական ժամանակները. ուրիշներ ալ կան, որոնք թէև շատ քիչ կ'երգեն հանդարտ ատեննին, սակայն ճարտար երգիչներ կը դառնան երբ սիրով կը տանջուին:

Սիրոյ եղանակին՝ թռչունները կը խօսին իրարու հետ, կը խօսակցին, կը շաղակրատեն, գրեթէ միշտ ամէնէն հաճելի կերպով. և մինչ սէրը թռչուններու մէջ հմայիչ երգեր կ'արթնցնէ, ըստնաւորներու մէջ մեր ականջները պատուտող աղաղակներու միայն ծնունդ կուտայ: Ո՛րչափ տարբերութիւն օրինակի համար սոխակին երգին ու կատուին երգին միջև: Կատուին երգերը կոտրտած, այլափոխուած, ձեւէ ելած ձայներ են և ամէն մէկ

չեչտ արաունջի ականջ ծակող իսող մըն է լոկ ,
 մինչ սոխակին մէջ երաժշտութիւն մըն է ան հա-
 մակ և սիրոյ ամէնէն կախարդիչ երգը : Կատուին
 սիրոյ երգը միայն իր էգին հաճելի է , մինչ սոխա-
 կին երգը ամէնուն և մարդուն համար իսկ գերա-
 գոյն արտայայտութիւնն է սիրոյ : Ինչպէս Ռի-քէրթ
 կ'ըսէ . « Մարդը թող սիրէ կին մը և խոստովանի
 անոր իր այդ սէրը , ճանձրոյթ միայն պիտի պատ-
 ճառէ , եթէ երբէք բանաստեղծ մը չէ : Բայց եր-
 բէք չպիտի ճանձրացնէ մեզ իր սիրուն վրայ խօ-
 սող թռչունը . անոր ամէնէն խուպոտ ձայներն ան-
 գամ հնչուն են ու հաճելի մեզ : Մայրն ալ նուազ գո-
 րովալի չէ իր ձագերուն հանդէպ : Ոմանք կը խօսին
 ու կը պատասխանեն իրարու . ուրիշներ բառեր ու
 նախադասութիւններ կը կրկնեն որոնք արտայայ-
 տութիւնն իսկ են իրենց զգացումներուն : Այսպէս
 են երգող թռչունները , բնութեան այս սիրելիները » :

* * *

Սերնդագործութեան վայրկենին , շատ թրու-
 չուններ « հարախ զգեստ » կը հագնին , որոնք կը
 յատկանշուին իրենց աւելի մեծ , աւելի փայլուն
 փետուրներով , զորս յաճախ թռչունը ուզածին պէս
 կրնայ տարածել : Արուները միայն ունին այս զար-
 դը զոր գործածելու իրենց ձեւէն կը հասկնանք
 անոր պաշտօնը : Տեսէ՛ք օրինակի համար սիրա-
 մարգը երբ իր անիւր կը շինէ :

Ուրիշ տեսակներու մէջ որոնք շատ քիչ նպաս-
 տաւորուած են այս տեսակէտով , արուները
 իրենց պարերովը կը ջանան էգերը հրապուրել ,
 պարեր որ մեզի կոչտ կ'երեւան թէեւ , բայց
 անշուշտ հրապոյրներով լեցուն են իրենց էգե-
 րուն աչքին : Ընդհանրապէս հողին վրայ տեղի
 կ'ունենան այս պարերը : Երբեմն ալ , ինչպէս Գի-
 շատիչներուն մէջ , այս պարերուն տեղը կը բռնեն

բարձր թուիչքներն և օգին մէջ թափշա նետակները :

Գրեթէ միշտ՝ արուները կը կզուրտին իրարու հետ՝ էգը գրաւելու համար, բայց առանց շատ մեծ վնաս պատճառելու իրարու : Եւ սակայն տեսակներ ալ կան, ինչպէս կռուողներուն մէջ, ուր այս կռիւները սոսկալի կերպարանք կ'առնեն և ուր յաղթուողը եթէ չսպաննուիր ալ, կռիւէն ետքը շատ խեղճ վիճակի մէջ կ'իյնայ գոնէ :

Իբր զէնք թռչունները յաճախ եղջերաւոր անդամներ և սուր մագիլներ կ'առնենան, բայց միայն արուները, էգերը շատ քիչ անգամ :

Երբ արուները կը կռուին, էգերը ընդհանրապէս հեռու կը մնան իրենց ի պատիւ կատարուող սիրոյ այս մրցումներէն : Ու միայն իր թշնամիներուն յաղթող արուին հետ է որ կը սկսին խաղալ : Այդ ատեն է որ պուրակներուն խորը կը լսուին այն սիրոյ երգերը, այն միաձայն երգերը (solo) զորս արուն կ'երգէ և զորս երբեմն էգը երկաձայն (duo) ի կը փոխէ : Երկու խօսեցեակները իրար կը հալածեն, իրար կը կտցեն, իրարու բերնէն կը համբուրեն և շուտով մը կը զուգաւորին :

Ամէն զուգաւորութենէ առաջ էգը նազ կ'ընէ, դէմ կը դնէ, կը պչրի : « Պչրանքի տեսակէտով, կ'ըսէ Մանթէկացցա, աշխարհի վրայ ոչ մէկ կին կրնայ հաւասարիլ օրինակի համար դեղձանիկին էգին պարհուրելի նրբութիւններուն (raffinement), երբ իր արուին բուն ըղձանքներուն դէմ դնել կը ձեւացնէ : Մեր կիներուն «ոչ» ըսելու ձեւին տակ «այո՛» ըսելու հազարումէկ կերպերը ոչինչ են բաղդատամբ թռչուններու նրբանուրբ պչրանքին, կեղծ փախուստներուն, կտուցի հարուածներուն և հազարումէկ չարաճճիութիւններուն » : Ասոնք լաւ, բայց պէտք ենք աւելցնել նաև թէ երբեմն ալ էգն է որ զուգաւորելու բուն տենչը կը զգայ և այն ատեն ինքն է որ ուղղակի առաջարկներ կ'ընէ

արուին : Շատ անգամ տեսած եմ վանդակի մէջ դրուած թռչուններ , ուր էգը մասնաւոր եղանակով մը կ'երգէ , կ'ուռի , փետուրները կը ցցէ ձողին վրայ կը փռուի , մինչ արուն ո եւ է դարպաս չըներ անոր , թէեւ շատ լաւ կը հասկնայ էգին այս գործունէութեան իմաստը , որովհետեւ կը վազէ կ'ելլէ անոր կունակը և զուգաւորութիւնը տեղի կ'ունենայ ի մեծ ուրախութիւն էգին , որ սիրոյ այդ գիրկընդխառնումէն յետոյ կ'ունենայ մեզի անյնչափ ծանօթ ջիղերու այն թուլութիւնը որ կարծես կ'ըսէ « ո՛ւՖ , հանգիստ եմ հիմա » :

Հաւկիթները թխսելու միջոցին և նոյն իսկ անկէ առաջ ալ երկու ամուսինները կը սկսին բոյնին շինութեան : Երբեմն երկուքնին միասին կ'աշխատին . երբեմն մին նիւթերը հաւաքելու կ'երթայ և միւսը ձեւի կը բերէ զանոնք : Շատ անգամ ալ վերջապէս , էգը մինակ կը զբաղի բոյնին պատրաստութիւնով , մինչ արուն զայն իր երգերովը կը զբօսցնէ :

Ճարտարապետութեան հրաշալիքներ են այս բոյները և ձեւերով շատ այլազան : Այս ճարտարապետ թռչուններուն մէջ կան որ որդմնադիր են , ոստայնանկ են , բամպակի գործարանատէր են , հողաբլուր (tumuli) շինողներ են , կարուհիներ են , դարատափ շինողներ (terrassiers) են , հանքագործներ են , սակառ շինողներ (bourriches) են , բոլորաձեւ տուներու ճարտարապետներ են , կախանկողին շինողներ են , իրենց թուքը շահագործողներ են , հաճոյքի տուներ շինողներ են , ատաղձագործներ են , խրճիթ շինողներ են , և այլն :

էգը իր բոյնին մէջ կ'ածէ հաւկիթները , որոնք զանազան քանակութեամբ կ'ըլլան , և ընդհանրապէս ինքն է որ թուխսի կը նստի , արուն ալ երբեմն կ'օգնէ իրեն այս գործին մէջ :

Երբ ձագերը ծնին , ալ ծնողքին իրարանցումը

տես զանոնք կերակրելու համար. շատ լաւ կ'ելլեն սակայն այդ գործին մէջէն և անօրինակ քաջութեամբ մը կը պաշտպանեն զանոնք: Կը զբօսցնեն զանոնք անուշ ճռուողիւններով և ետքերը քալելու և թռչելու դասեր կուտան անոնց:

Երբ ձագերը իրենք իրենց ապրելու կարող վիճակի հասնին, կը ձգեն իրենց ծնողքին բոյնը: Ասոնք նորէն կը զուգաւորին, և երեք չորս անգամ ձագեր կ'ուսնենան մէկ տարուան մէջ:

Շատ հետաքրքրական պիտի ըլլար հիմա, քանի մը տեսակներու ամուսնական (!) սովորութիւնները քիչ մը աւելի մանրամասնութեամբ քննել ու կը յուսանք թէ այս գլուխը մեր Տարեցոյցին առաջին մասին է՞ն համով էջերէն պիտի ըլլայ:



ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆՑ ՍԻՐԱՀԱՐՆԵՐ — ՃՆՃՂՈՒԿՆԵՐԸ

Ճնճղուկները կրնանք համարել իբրեւ սիրահարներ մեղրալուսնի ճամբորդութիւններու եւ այս ճաշակին մէջ փնտռելու է թերեւս իրենց տարեկան գաղթականութեանց սկզբնապատճառը:

Ասոնց մէջ արուին զգեստը—փետուրները—աւելի գեղեցիկ կ'ըլլան ընդհանրապէս քան էգինները: Երբ սիրոյ շրջանը կը հասնի, արուները եռանդոտ, նախանձոտ ու անձնասէր կ'երեւան: Իրարու հետ կը կռուին կտուցի և եղունգի հարուածներով և իրենց երգերով իրար գլել կը ջանան: Գարունն է իրենց սիրոյ եղանակը, բայց ոչ ամէնուն համար:

Հարաւի երկիրներու դեղձանիկը, կ'ըսէ Պրէհմ, հրապուրիչ թռչուն մըն է, գործօն, եռանդուն ու ներդաշնակ երգիչ: Շատ հետաքրքրական են իր սովորութիւնները, մանաւանդ սիրոյ եղանակին մէջ: Էն առաջ եկողները արուներն են, էգերը

աւելի ուշ կուգան : Արուները անմիջապէս յայտնի կ'ըլլան իրենց երգերով և իրենց շարունակական գործունէութեամբ : Թառած ամէնէն բարձր ճիւղերուն վրայ , կը կախեն իրենց թեւերը վար , պոչերնին վեր կը վերցնեն քիչ մը , ամէն կողմ կը դառնան ու եռանդագին կ'երգեն . քանի կը մօտենայ սիրոյ շրջանը , դեղձանիկները այնչափ աւելի աշխուժով կ'երգեն : Ծանօթ իրողութիւն մըն է թէ կենդանիներու մեծ մասը կռիւով կը վաստկին իրենց ընկերուհիին սէրը ու այս դեղձանիկներն ալ ճշմարիտ պատերազմներ կը մղեն ասոր համար : Արուն իր էգը կը հայցէ ամէնէն խանդաղատալի երգերով . կկուին պէս կը կծկի ճիւղին վրայ , կարծես կը տափակնայ , կը փակի անոր , վիզին փետուրները կը ցցէ , պոչը կը լայնցնէ , կը դառնայ , նորէն կը դառնայ , մէկէնիմէկ ոտքի կը ցատկէ , օդին մէջ կը բարձրանայ , արտասուլոր , անկարգ ձեւերով կը թռչտի , աջ կողմ կը նետուի , ձախ կողմ կը նետուի , յետոյ նորէն տեղը կը դառնայ ու կը շարունակէ երգը : Միւս արուները իր նախանձը կը գրգռեն : Կը խոյանայ , կատաղութեամբ կը յարձակի իր հակառակորդին վրայ որ կրցածին չափ արագ կը խուսափի իրմէն : Կը հալածէ դայն և երկարատեն տերեւէ տերեւ , ճիւղէ ճիւղ կը հալածեն զիրար՝ պզտիկ՝ իրարու ետեւէ կրկնուող աղաղակներով յայտնելով իրենց բարկութիւնը :

Էգին թխսելու ատենն է որ միայն կը դադարին այս կռիւները : Սիրոյ շրջանը անցածին պէս , նոյն գաւառի բոլոր անհատները նորէն կը միանան ու խաղաղ կ'ապրին միասին :

ԱՄԷՆԷՆ ՆՈՒԱԶ ՊԶՐԱՍԷՐ ՍԻՐԱՀԱՐԷՆ

ՄԻՆՁԵՒ ԱՄԷՆԷՆ ՇՔԵՂ ՍԻՐՈՂԸ—LES CORACIROSTRES

Այս խումբին մէջ է որ կը գտնուին ամէնէն տգեղ թռչունէն մինչեւ ամէնէն սիրուն թռչունները, մթազգեստ ագռաւէն մինչեւ շողշողուն դրախտահաւերը:

Ասոնք խմբովին կ'ապրին ընդհանրապէս և նոյն իսկ սիրոյ շրջանին քով քովի բոյն կը շինեն ճշմարիտ գաղթականութիւններ կազմելով: Էգն ու արուն շատ կը սիրեն իրենց ձագերը և տարին մէկ թուխս միայն կ'ունենան:

Այս խումբէն Աւստրալիա ապրող ptilonorhynque-ները շատ նշանաւոր են, որովհետեւ իրենց սովորական բոյներէն զատ կը շինեն նաև տեսակ մը... ամարանոցներ, որոնք կ'երեւայ թէ իրարու դարպաս ընող էգերու և արուներու իբր ժամադրավայր կը ծառայեն:

Այս անդուսափայլ սև փետուրներով թռչունը, եղեւինի անտառներու մէջ ամարանոցներ կը շինէ որ կը հանգչին ամրապէս իրարու ադուցուած գաւաղաններով շինուած թեթև մը կորնթարդ տախտակամածներու վրայ: Այս գրեթէ թաւիչի նման կակուղ տախտակամածին վրայ է որ ptilonorhynque-ները գազաթնին կոր պզտիկ ձողեր կը տնկին որոնք իրարու կը կռթնին ինչպէս տանիքի մը տախտակները: Այս ձողերը կը հաւաքեն մօտակայ անտառներէն և կոշտ կերպով կը յօշեն: Եւ որովհետեւ այդ ձողերուն վրայ գրեթէ միշտ կողմնակի ճիւղեր ալ կը գտնուին, թռչունը խնամք կը տանի որ տունը շինած ատեն այդ ճիւղերը դուրսի կողմը մնան. այս կերպով, ներսի կողմը միշտ լերկ կը մնայ և փետուրները անոնց կառչելու և փրթելու վտանգէն զերծ կը մնան, որովհետեւ իր զարդարանքին շատ ալ խնամք տանող է թռչունը: Իր

վիլլային շուրջը կը հաւաքէ խղունջի պատեաններ, ուլականջի տիփեր (valve), ճերմկցած ոսկորներ և նոյն իսկ թութակի փայլուն ու գունաւոր փետուրներ: Եւ նոյն իսկ կուլտ, գիտուն թռչնաբանը օր մը այդ բոյներէն մէկուն մէջ, ո՛վ բանաստեղծութիւն, ծխափողի խողովակներ գտաւ թօմահաւքի սքանչելի քարի մը հետ ու նաեւ կապոյտ բամպակեղէնի ծուէններ ուրիշ մանր մանր առարկաներու հետ, որ անշուշտ մօտիկը բնակող բնիկներու տուններէն գողցուած էին: Շատ մը ptilonorhynque-ներ միանալով կը շինեն այս վիլլաները և նոյն իսկ սերունդներ իրարու կը փոխանցեն զանոնք, ինչպէս յայտնի կ'երեւայ անոնց մէջ նշմարուող նորոգութեան նշաններէն:

ԱՐԻՒՆԱԼԻՑ ԿՌԻՒՆԵՐԸ—ԳԻՇԱՏԻՉՆԵՐԸ

Սակայն թռչուններու մէջ ալ կը պատահին երբեմն արիւնալի կռիւներ, էգին ի խնդիր:

Գիշատիչները գարնան սկիզբը բոյն կը շինեն: Մէկ քանին կը բաւականանան բնական խոռոչով մը, բայց շատերը տեսակ մը կոշտ բոյներ կը շինեն հարթաբոյն կոչուած, որ իրարու մէջ անցած ճիւղերով կազմուած կ'ըլլայ:

Զուգաւորութենէն առաջ միշտ զանազան խաղեր կը կատարուին: Արուն կը թռչի հոյակապ կերպով, կ'օրօրի օդերուն մէջ. մէկ քանին մասնաւոր շատ գորովալի ազաղակներ, տեսակ մը երգ լսելի կ'ընեն: Նախանձը միահեծան կը տիրէ ասոնց մէջ. ամէն եկուոր գործ ունի նախապէս հոն գտնուողին հետ որ կը յարձակի անոր վրայ ու կը վռնտէ: Նոյն իսկ արուն ուրիշ տեսակի վերաբերող թռչունի ներկայութիւնն ալ չի կրնար տանիլ իր մօտը: Այս կռիւները տեսակ մը վեհափառ տեսք ունին:

Յանկարծական թիկնադարձութիւններ են ասոնք ,
արագ յարձակումներ , փայլուն ինքնապաշտպա-
նութիւններ , փոխադարձ հալածումներ , խիզախ
դիմադրութիւններ :

Պատերազմիկները իրար կը բռնեն , կը սեղմեն
ու իրենց թեւերը գործածել չի կրնալնուն վար
կ'իյնան դարձդարձելով : Եւ երբ գետին իյնան ,
մի՛ կարծէք որ կռիւր վերջացաւ : Քանի մը վայր-
կեան յետոյ օդին մէջ նորէն կը սկսի կռիւր : Եր-
կար կռիւէ յետոյ , պարտուողը կը քաշուի ,
մինչև յաղթողին սահմանէն անդին հալածուած :
Բայց հաշտութիւնը չի գոյանար ասով . կռիւր կը
վերսկսի հետեւեալ օրը , յաջորդ օրերն ալ և պէտք
է որ յաղթողը շատերուն դէմ տանի յաղթանակը ,
որպէս զի խաղաղութեամբ վայելէ իր յաղթութեան
պտուղը : Սակայն որչափ ալ կատաղի կ'ըլլան այս
կռիւները , նորէն շատ հազուադէպ բան է որ մէ-
կուն մահուամբը վերջանան : Էզը հետաքրքրու-
թեամբ կը հետեւի այս կռիւներուն , առանց մաս-
հակցելու սակայն , և յաղթութենէ յետոյ , ինքզին-
քը կուտայ յաղթողին : Ծնողքը մեծ սէր կը ցու-
ցնեն իրենց ձագին և մինչև մահ կը պաշտպանեն
զայն : Նոյն եռանդով կը սնուցանեն ալ զանոնք և
այնչափ կերակուր կը բերեն անոնց որչափ ձագերը
չեն կրնար ուտել : Երբ հալածուած և վտանգի մէջ
ըլլան , վերէն բոյնին մէջ կը նետեն բերած ուտե-
լիքնին : Նախ կէս մը մարսուած սնունդ կուտան
անոնց . յետոյ իրենց պատառած որսերը : Նոյն իսկ
թռչելու վարժուելնէն ետքն ալ ձագերը կ'ապ-
րին դեռ ծնողքնուն հետ , որ իրենց որսալ , սնանիլ
և վտանգի դէմ ինքզինքնին պաշտպանել կը
սորվեցնեն :

ԱՆՈՒՂՆԵՐԸ — ԵՐԳԻՋՆԵՐԸ

Ճշմարիտ երգիչ թռչունները իրաւ է որ քիչ մը կը կզուրտին իրարու հետ սիրոյ եղանակին, բայց իրենց ճշմարիտ զէնքը իրենց հեշտալի երգն է: Էզը հրապուրելու համար կոկորդալիը կ'երգեն և իրենց մեղեդին կ'իրքով կը թրթռայ: Ու երբեմն այնչափ եռանդով կ'երգեն որ մեռած գետին կ'իյնան:

Ասոնցմէ նարնջագոյն rupicoleը... պարելով դարպաս կ'ընէ իր էպին: «Օրերով տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ, կը պատմէ Ռիչար Ծոմպուրկ, վերջապէս հասանք տեղ մը ուր սա տեսարանը պարզուեցաւ մեր աչքին: Մեր քովիկը բազմաթիւ rupicoleներու իրար կանչելու ձայները լսելի եղան յանկարծ. անմիջապէս երկու հնդիկներ սողալով անոնց մօտեցան: Ասոնցմէ մին շուտով ետ դարձաւ և նշաններով հասկցուց թէ պէտք էր միասին երթայի: Անմիջապէս հնազանդեցայ: Գրեթէ հազար քայլի չափ առաջ դացինք ամենայն զգուշութեամբ սողալով և յանկարծ նշմարեցի միւս հնդիկը որ գետինը պառկեր էր, և rupicoleներու նարնջագոյն փետուրներուն արեւին տակ փայլիլը: Ամբողջ խուճի մը պարելու վրայ էր ահագին ժայռի մը վրայ և անկարելի է բացատրել թէ ի՞նչ ուրախութեամբ ականատես եղայ այս այնքան տեսնել փափաքած տեսարանիս: Շուրջի մայրառներուն վրայ, գրեթէ քսանի չափ հանդիսատեսներ թառեր էին, արու և էզ, իսկ ժայռին վրայ արու մըն էր որ ամէն կողմ կը պտտէր ամենատարօրինակ քայլերով ու շարժումներով: Երբեմն կէս մը կը բանար թեւերը, զլուխը աջ կամ ձախ կը նետէր, ոտքերովը քարը կը քերէր, կայնած տեղը աւելի կամ նուազ թեթեւութեամբ ցատկրտելով, երբեմն ալ պոչովը անիւ մը կը կազմէր, և լուրջ քայլերով վէսօրէն

կը պատէր ժայռին շուրջը, մինչև որ յոգնելով՝ իր սովորական ձայնէն տարբեր աղաղակ մը արձակեց և մօտիկ ճիւղի մը վրայ թռաւ: Ուրիշ արու մը եկաւ իր տեղը և ինքն ալ ցոյց տուաւ բոլոր իր շնորհն ու թեթեւաշարժութիւնը. յետոյ ինքն ալ տեղը երրորդի մը տուաւ: Էգերը առանց ճանճրահալու կը դիտէին այս տեսարանը և երբ արուն յոգնած ետ կը դառնար, աղաղակ մը, տեսակ մը ծափահարութիւն կ'արձակէին»: Ասոնք անշուշտ էգերը հրապուրելու և կին ճարելու եղանակներ են ասոնց մէջ:

Բայց երգող թռչուններու թագուհին սոխակն է անկասկած:

Երբ նախանձն ալ կը մտնէ իր սիրուն մէջ, սոխակը ա՛լ աստուածային կերպով կ'երգէ: Իր երգը զէնքը կը դառնայ իրեն ու անով կը գերազանցէ իր հակառակորդները: Ոմանք գիշերը կ'երգեն մանաւանդ, ուրիշներ ցորեկը միայն: Սիրոյ առաջին գինովութիւններուն, էգին հաւկիթ ածելէն առաջ, այս հեշտալի երգը գիշերուան ամէն ժամերուն ալ լսելի կ'ըլլայ. յետոյ թռչունը կը լռէ ալ և գտած կ'երեւայ սովորական կեանքի իր հանդարտութիւնը:

ԹՄԲՈՒԿԻ ԶԱՅՆՈՎ, ՀԱՐՍՆԻՒՒ — ՄԱԳԼՑՈՂՆԵՐԸ

Մագլցողներու սիրոյն մէջ, ինչ որ ամէնէն նշանաւորն է ու բոլորովին իրենց յատուկ, արուններուն գործածած միջոցն է էգերը հրապուրելու համար:

Թմբուկ կը զարնեն ասոնք կառուցնին ուժով ուժով զարնելով օտար մարմիններու, օրինակ աղէկ մը չորցած ճիւղերու: Մէկ քանին ալ կ'երգեն ու իրենց փետուրները կը ցուցադրեն: Ասոնց բոյնը

ընդհանրապէս ծառի մը բունին վրայ շինուած կ'ըլլայ և արուն ու էգը յաջորդական կերպով կը թիսեն :

Իրենց սիրոյ շրջանին ճշմարտապէս հրապուրիչ են colapte-ները :

Գարնան առաջին օրերը հազիւ թռչունները սկսած են սերնդագործութեան անուշ պարտականութիւններուն երբ ծառերու գագաթներէն կը լսուի ոսկեզօծ colapte-ին երգերուն հնչիւնը, որ աղուոր եղանակին դարձը կը ծանուցանէ : Հաճոյքին ճշմարիտ արտայայտութիւնն է այս ձայնը, երկարատե, զուարթ ու հնչուն քահքահ մըն է ան : Շատ մը արուներ էգ մը կը հալածեն միասին, կը մօտենան, գլուխնին կը ծռեն, պոչերնին կը փռեն, մօտ կուգան, ետ կ'երթան, ամենաայլազան դիրքեր կ'առնեն, ու հազար նեղութիւն կը կրեն իրենց սիրուն անկեղծութեան ու սաստկութեան մասին համոզելու համար զայն : Էգը կը թռի կ'երթայ ուրիշ ծառ մը, բայց անմիջապէս հատ մը, երկու, կամ նոյն իսկ 5—6 արուններ ետեւէն կ'երթան և ա՛լ կը կրկնեն ու կը կրկնեն իրենց սիրոյ արտայայտութիւնները : Իրարու հետ չեն կռուիր, և նոյն իսկ իրարու չեն նախանձիր ալ, և երբ էգը իրենցմէ մէկը ընտրէ, կը թողուն երջանիկ ամուր և ուրիշ ընկերուհի մը փնտուելու կ'երթան : Ասոր համար է որ բոլոր արուններն ալ կիներ կը ճարեն անպատճառ : Ամէն մէկ զոյգ անմիջապէս գործի կը սկսի փորելով ծառի բուն մը իր ու ձագերուն յարմար բոյնի մը վերածելու համար զայն : Արուն և էգը եռանդով կ'աշխատին, նոյն իսկ հաճոյքով : Մինչ արուն կ'ատաղձագործէ, էգը մօտիկը կը թառի և ամէն մէկ տաշեղին կը շնորհաւորէ զայն : Երբ արուն հանգիստ առնէ, կարծես էգը գորովով կը խօսի անոր, և երբ յոգնի, անոր օգնութեան կը դիմէ : Այս ընթացքով, շուտով կ'աւարտի բոյնը :

Այն ատեն, սիրազեղ զոյգը իրար կը գրգռեն, ճշմարիտ ուրախութեամբ մը բուններն ի վեր կը մագլցին, չոր ճիւղերուն վրայ իրենց կառուցներով թմբուկ կը զարնեն, իրենց բոյնին մօտեցող օտար թռչունները կը հաշածեն ու անտառը կը լեցնեն իրենց ճիչերովն ու խնդուկով: Երկու շաբաթէն, էգը ածած է իր չորս կամ վեց հաւկիթները և կարծես սքանչացած է անոնց ճերմակութեամբն ու թափանցկութեամբը: Երբ ամէն բան նպաստաւոր ըլլայ, բազմաթիւ սերունդ մը կրնայ արտադրել colapte մը, որովհետեւ երկու թուխս կ'ունենայ տարին:

ԿԱՏԱՂԻ ՊԱՐՈՂՆԵՐԸ — ՀԱՒԱԶԳԻՆԵՐԸ

Հաւազգիներու սէրը զգալիօրէն կը տարբերի բոլոր միւս թռչուններու սէրերէն, որովհետեւ արուն բազմաթիւ էգեր կ'ունենայ: Ասոնց մէջ էգերն են մինակ որ առասպելային քաջութեամբ կը խնամեն իրենց ձագերը: Շատ մը տեսակներ, կատաղի պարերով կը սկսին իրենց սիրոյ նախաբանը:

Ցարասիներու Քնարահաւը սիրոյ եղանակը կը սկսի երբ ցարասիներու կոկոնները կը սկսին ուռնալ, այսինքն մարտի վերջերուն ու կը տեւէ մինչեւ մայիս: Բարձր լեռներու վրայ և հիւսիսի երկիրներուն մէջ աւելի ուշ կը սկսի և մինչև յունիս, յուլիս կը տեւէ այս շրջանը: Եւ նոյն իսկ աշնան վերջերը կը լսուին ասոնցմէ մէկ քանիներուն տարօրինակ երգերը, կարծես յաջորդ գարնան կը պատրաստուին:

Իր սիրոյ մարդանքներուն համար, Քնարահաւը անտառին մէջ բաց տեղ մը կ'ընտրէ, մարդ մը, բացաստան մը ուր մատղաշ ծառերը չի նեղեն զինքը: Իրիկուան կ'երեւայ հոն ծառի մը վրայ

Թառած և շատ մը անգամներ, մինչև գիշերուան իջնելը, կը հնչեցնէ իր երգը: Առտուն կանուխ, կը թողու իր քնացած տեղը և գետին կ'իջնէ, որովհետև իր պարին համար լայն միջոցի պէտք ունի: Երբ շատուոր են, երբեմն մինչև յիսուն վաթսուն թռչուն միասին կը հաւաքուին: Առաջին երեւցող արուն քանի մը պուշտուքներ կ'արձակէ, վայրկեան մը կը լռէ, յետոյ կը սկսի դահակ սրելու քարին ձայնին նմանող աղաղակներ արձակել. ա՛ն ատեն է որ կը սկսի ճշմարիտ երգը: Մարտին ու Ապրիլի առաջին օրերուն, արուն պահ պահ միայն կ'երգէ, բայց ետքերը առտուան ամբողջ տեւողութեան միջոցին և ճշմարտապէս ապշեցուցիչ յարատեւութեամբ մը:

Քնարահաւը իր սէրը կը յայտնէ երգերով ու պարերով: Առաջին սուլումին կամ ճռուողիւնին կը յաջորդէ յեսանաքարի աղմուկին նմանող ձայն մը. դարմանալի սուլում մըն է ասիկա որ չիիիօի կը նմանի, յետոյ թաւալումի ձայն մը զոր Նիլսըն կը նօթէ *սութ-թուրուրուրուրու-րուիֆի-ուրր-ուրր-ուրրուրուրու-րու-րուրուրու-րուիֆի*: Երբ Քնարահաւը շատ գրգռուած է, այս բոլոր ձայները իրարու կը խառնուին և չես կրնար որոշել թէ ո՛ր մէկը կը սկսի կամ միւսը կը վերջանայ:

Միեւնոյն ատեն արու Քնարահաւը ամէնէն ծիծաղելի շարժումները կ'ընէ: Երգելէն առաջ վեր կը վերցնէ պոչը, հովանոցածեւ կը բանայ, գլուխը և վիզը կը տնկէ, բոլոր փետուրները կը ցցէ, թևերը կը տարածէ ու վար կը կախէ, քիչ մը աջ ձախ կը ցատկրատէ, քանի մը բոլորակներ կը շինէ, յետոյ կտուցը գետնին կը փակցնէ, թռչին փետուրները հողին քսելով ու մաշեցնելով: Միեւնոյն ատեն, թեւերը կը թափահարէ և ինքն իր վրայ կը դառնայ: Որչափ շատ գրգռուած է, այնչափ արագ կ'ըլլան շարժում-

ները, վերջ ի վերջոյ կատարելապէս խենդ կը դառնայ կարծես:

Բայց երբ բազմաթիւ արուեստ ժողովուած կ'ըլլան, այն ատեն է որ ոգեւորութիւնը իր գագաթնակէտին կը հասնի: Կատաղութեամբ կը կռուին իրարու հետ: Գլուխնին գետինը ծուած կը խոյանան իրարու վրայ, օդը կը նետուին իրարու եղունգի հարուածներ տալ ջանալով, գետին կ'իյնան, կը գոռան, նոր թափ մը կ'առնեն և կը ջանան իրար բռնել փոխադարձաբար: Երբ կռիւը աւելի լրջանայ, իւրաքանչիւրը կը կորսնցնէ քանի մը փետուր, և հակառակ իրենց բովանդակ կատաղութեան, լուրջ վէրքեր չեն պատճառեր իրարու: Կարծես մինակ իրար վախցնել կ'ուզեն: Բայց երբեմն կը պատահի որ ամէնէն ուժեղը կը բռնէ հակառակորդին գլխէն, քանի մը քայլ կը քաշկուտէ կը տանի, քանի մը հարուած ալ կուտայ կտուցով ու կը վռնատէ: Յետոյ յաղթողը պատերազմի դաշտը կը դառնայ յաղթական ու կը շարունակէ երգը: Ուժեղ արուեստը ամէն առտու շատ տեղեր կ'երթան իրարու հետ չափուելու: Շատ անգամ պարտեալը կռիւի դաշտը կը դառնայ ու կռիւր... նորէն կը սկսի, կամ թէ ուրիշ տեղ մը կ'առնէ կը քալէ նոր հակառակորդի մը հետ չափուելու:

Սովորաբար, բայց ոչ միշտ, սիրոյ երգերը այնչափ շուտով էգերը կը հրապուրեն, որ արուեստը անմիջապէս կրնան իրենց կիրքը գոհացնել: Զուգաւորութենէն յետոյ, արուն քիչ մըն ալ կ'երգէ, յետոյ ամէնքնին միասին, ուտելիք փնտուելու կ'երթան: Ուժեղ արու մը կրնայ միեւնոյն առաւօտեան մէջ չորս կամ վեց էգի բաւել, բայց քիչ անգամ այսչափ էգ կրնայ հաւաքել իր շուրջը:

ԲԱՐՁՐ ԹԱՌԱԾ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԸ — ԲԱՐՁՐԱՍՐՈՒՆՆԵՐԸ

Բարձրասրուններն ալ սիրահար են պարերու, բայց իրենց սրունքներով կարծես ամէնէն աւելի *խեյֆ-ուօֆ* խաղալը կը սիրեն:

Փետրուարէն սկսեալ, Արօսները (*outarde*) աւելի տենդոտ կ'երեւան, աւելի պչրոտ, ու կարծես ստիպուած են ամբողջ օրը մէկ տեղէն միւսը թափառելու: Արուները կը սկսին էգերը հալածել, ընկերութիւնը կը թուլնայ, առանց լուծուելու տակաւին սակայն: Այս շրջանին է որ մեր մէջ կը տեսնուին Արօսները, որոնք իրենց սովորական խոհեմութիւնը մոռցած, ծառերուն, գիւղերուն, և նոյն իսկ ամէնէն բազմամարդ տեղերուն վերևոյ շատ բարձրէն կը թռին: Կեցուածքը հպարտ ու վեհափառ, հնդկահաւի պէս ուռած, պոչը հովանոցաձև տարածած, արուն էգին քով կը յառաջանայ, քիչ մը հեռու կը թռի, յետոյ շտապով կը մօտենայ:

Սիրոյ ատենը, թռչունը ամէնէն տարօրինակ ու ամէնէն այլազան ձեւերը կ'առնէ, իր կոկորդային պարկը կ'ուռի, վիզը իր սովորականին կրկին ծաւալը կ'առնէ: Սկիզբները՝ կը քալէ թեւերը թեթեւ մը կախած, պոչը կորած և վեր վերցուցած, բայց սէրը շուտով ամբողջովին կը կերպարանափոխէ զայն: Արօսը բոլորովին կ'ուռեցնէ վիզը, գլուխը ետև կը ծռէ, կը բանայ ու կը կախէ թեւերը, բայց միեւնոյն ժամանակ անոր ամէն մէկ փետուրը դէպի առաջ և դէպի վեր կը ցցէ, այնպէս որ վերջին ուսին վրայի փետուրները գլխին ետևի կողմը կը ծածկեն, մինչ մօրուքին փետուրները առջևի կողմը, պոչը կը ժողվէ անանկ ձևով մը որ անոր միայն ստորին փափուկ փետուրները կը տեսնուին, ու դէպ ի դեպին կը հակէ մարմնին առջևի մասը: Միեւնոյն ժամանակ վերջին ծայր կռուասէր ու

յանդուզն կը դառնայ : Այս պահուն , արու մը ու է ուրիշ արուի համար ատելութեան առարկայ մըն է լոկ : Անմիջապէս որ իրարու հանդիպին , նախ իրար վախցնել կը ջանան , և որովհետեւ երկուքն ալ միեւնոյն մտադրութիւնը ունին , կռիւը անմիջապէս կը սկսի : Երկու քաջ ախոյեանները իրարու վրայ կը խոյանան , վեր կը ցատկեն , կտուցի և մազիլի հարուած տալ կը ջանան իրարու , թռելով իրար կը հալածեն և կտուցնին առաջ երկարած մէկզմէկու վրայ կը նետուին : Բայց շուտով կը ստիպուին հանգիստ առնել , յաղթողները էգեր գտած են : Աւելի տկար արուները , նուազ չափով անշուշտ , իրենց մեծերուն լուրջ կռիւները կապկելու կը ջանան : Այս վայրկեանին , արուն և էգը միասին կը հանդիպին ք ուր մէկը առաջնորդ է , և միւսը հետեւորդ միայն :

Ահաւասիկ , սիրելի ընթերցող , քեզի համառօտ տեղեկութիւններ սիրոյ վրայ , ուր մէկ բան միայն միտքդ պահելու ես , սա է թէ ինչպէս ամէն բանի , նոյնպէս նաև «քոյր հոգի» մը ճարելու համար յոյսդ միայն ու միայն ֆո՛ւ ուժիդ , ֆո՛ւ միտքիդ վրայ դնելու ես :

ՂԱԶԱՐՈ՛Ս

— **Մ**Ե՛ԿԸ կը ճանչնամ որ քաւորդ ժամ կրնայ ջուրին մէջ մնալ առանց շունչ առնելու :

— Ատ ալ բա՛ն մըն է , պատասխանեց Ղազարոս , ես ուրիշ մէկը գիտեմ որ չորս ամսէ ի վեր ջուրին տակ կը գտնուի և տակաւին դուրս ելած չէ :

Ղազարոսի բարեկամներէն մէկը ճարոն պիտի մեկնի :

— Ա՛խ , ի՞նչպէս պիտի ընեմ այս անհատնում ուղեւորութիւնը , կը տրտնջար անցեալ օր :

— Բայց Նշան-Պապիկեան Տարեցոյց մը չառնե՞ս հետդ , պատասխանեց Ղազարոս , վայրկեանի մը պէս պիտի անցնին օրերը :

— Ե՛ս , հաւատա , ալ չեմ կրնար քնանալ , երբ գաւաթ մը սուրճ խմեմ :

— Ինձի ալ ճիշդ հակառակը կը պատահի , պատասխանեց Ղազարոս , ալ չեմ կրնար գաւաթ մը սուրճ խմել , երբ կը քնանամ :

Ղազարոս ճամբորդութենէ կը դառնայ :

— Կարմիր Ծովէն անցած ատեննիս , կը պատմէր , 200 աստիճան ջերմութիւն կրեցինք :

— Օ . . . օ . . . օ . . . ի՞նչպէս դիմացաք :

— Այո . . . հինգ օր վրայէ վրայ 40 ական աստիճան :

Ղազարոս նոր ամուսնացած է .

— Անկեղծօրէն , բայց անկեղծօրէն ըսէ տեսնեմ , Ղազարոս , կը հարցնէր կինը անցեալ օր , ի՞նչ պատճառաւ ամուսնացար հետս :

— Օ՛հ , ատիկա ես ալ շատ անգամ կը հարցընեմ ինքզինքիս :

— Իմացա՞ր , Բ . . . բանաստեղծը ամուսնացեր է :

— Այո՛ , պատասխանեց Ղազարոս , որպէս զի իր ընթերցողները գոնէ երկու հատ ըլլան :

Ղազարոս , իրիկուն մը տուն դառնալով կը պատմէր կնոջը թէ քաղքին մէջ պտտած խօսքե-

րուն նայելով բոլոր քաղաքին մէջ մէկ մարդ մը միայն կը գտնուի եղեր որու կինը զինքը խաբած չէ : կինը վայրկեան մը մտածեց և «իրաւ որ, բնաւ չեմ գիտեր թէ ո՞վ է այդ մարդը» ըսաւ ի վերջոյ :

Ղազարոսին հաւատամքը .

— Աղջիկս երբէք խմբագրի չպիտի տամ, կ'ըսէր Ղազարոս, այնչափ շուայլ կ'ըլլան անոնք որ թուղթին մէկ երեսին վրայ միայն կը գրեն . իսկ բանաստեղծներուն, Աստուած չընէ, անոնք տողերուն կէսն ալ բաց կը ձգեն :

— Սիրտս, կ'ըսէր Ղազարոս, ժամացոյց մըն է որու երեսը դէմքս է : Միշտ մէկուն վրայ ճիշդ ու ճիշդ կը տեսնենք թէ միւսին մէջ ժամը քանին է :

Ղազարոս, որ ամէնուն գլուխը կը տանէր իր քաջութիւնները պատմելով, օր մը կռիւի մը ատեն, կծիկը կը դնէ : Բարեկամները հարցուցին թէ ո՞ւր էր իր գոված քաջութիւնը : — Սրունքներուս մէջ, պատասխանեց Ղազարոս :

Բարեկամներէն մէկը կ'իմացնէր Ղազարոսի թէ իր տաներէց քահանան մեռեր է . «Մի՛ հաւտար, պատասխանեց Ղազարոս, տաներէցս ամէն բան կը գրէ ինծի, և հարկաւ, եթէ մեռած ըլլար, ան ալ պիտի իմացնէր :

— Ի՞նչ է ատ, Ղազարոս, վեց ամիս եղաւ կնոջդ մեռնիլը, և տակաւին կուլաւ անոր վրայ, կը հարցնէր բարեկամներէն մէկը : — Ի՞նչ, բայց ութսուն տարի ալ անցնի, նորէն պիտի լամ, . . . ցաւս զմուսել տուի յաւիտեան պահելու համար :

Ղազարոսին պարտքերը վճարելու կերպը .

Ղազարոս միշտ կը կորսնցնէր խաղի մէջ . իր շարունակական դժբաղդութենէն զգածուելով , կին մը կը գլխարկ վրան . «Տիկին , պատասխանեց Ղազարոս , կ'աղաչեմ , վազ անցէք այդ գլխարտութենէն , փոխանակ ինձի , գլխացէք անոնց վրայ , որոնց պարտք ունիմ :»

— Ո՞ր երաժշտութիւնը ամէնէն՝ աւելի կը սիրես , կը հարցնէր անցած օր նշանածը Ղազարոսին , գործիականը թէ ձայնականը :

— Ի՞նչպէս բացատրեմ , պատասխանեց Ղազարոս , երբ կ'երգես , գործիական երաժշտութիւնը կը նախընտրեմ միւսէն , իսկ երբ կը նուագես ձայնականը կը նախընտրեմ :

— Եթէ նորէն կարգուելու ըլլայիր , ո՞վ պիտի առնէիր , հարցուց իր նորափ կինը :

— Միշտ քեզ պիտի առնէի , պատասխանեց Ղազարոս , բայց չպիտի կարգուէի :

×

Ղազարոս՝ սպասաւոր է :

— Այս հաւկիթները քանի՞ վայրկեան խաչեցիր , հարցուց տիկինը :

— Ինը վայրկեան , տիկին :

— Բայց երեք վայրկեանէն աւելի մի՞ խաչեր ըսի քեզի :

— Բայց տիկին , հաւկիթները երեք հատ էին , և երեք անգամ երեք ինը կ'ընէ :

— Մէյ մըն ալ քիչ մը զօ՞ռ կը խամեմ . . . երեւակայէ , սիրելիս , որ վերջին գինովութեանս բոլոր պարտքերս վճարեմ , կը գանգատէր Ղազարոս :

×

— Ղազարոս, կ'ըսես թէ դիս շատ կը սիրես, բայց ապացուցուր նայիմ ատիկա :

— Կ'երդնում, օ'րիորդ :

— Երդում ըրէ քեզի ամէնէն նուիրական եղող բանին, անանկ բանի մը, որուն հագիիդ չափ կապուած ըլլաս :

— Ամսականներո՛ւս վրայ կ'երդնում, օրի՛որդ :

— Ղազարոս կարճատես է, ակնավաճառի մը կ'երթայ :

— Սե ապակիներով ակնոց մը տուէք ինձի, կ'ըսէ :

— Կապոյտ ապակին աւելի յարմար է պարոնին :

— Գիտեմ, բայց սգաւոր եմ :

— Երկուքէն ամէնէն գոհը ո՞րն է, կը հարցընէին Ղազարոսի, միլիոն մը դրամ ունեցողը, թէ տասներկու հատ զաւակ քով քովի շարողը :

— Երկրորդը անվիճելիօրէն, պատասխանեց Ղազարոս, որովհետեւ միլիոնը ունեցողը աւելին կը բաղձայ, մինչդեռ տասներկու զաւակ ունեցողը . . . :

— Ղազարոս հազար մեծարանքներ ընելու վրայ է իր դերձակին որ բացարձակապէս կը մերժէ նոր զգեստ մըն ալ շինել իրեն, . . . ապառիկ :

— Բնա՛ւ, բնա՛ւ չեմ կրնար, կը յայտարարէր դերձակը ուժգին, եթէ միմիայն նորոգութիւն ընել տալ ուզէիր, ինչ որ էր :

Այն ատեն Ղազարոս, կոճակ մը հանելով գըրպանէն .

— Անանկ է նէ, բալթօ մը կարեցէք սա կոճակին, ըսաւ :

— Ի՞նչ զարմանալի բան է, կ'ըսէր Ղազարոս, որչափ աւելի գաւաթ պարպենք մեր կենացը, այնչափ աւելի գէշ կ'ըլլայ ան :

×

Ղազարոս ծառայութեան պիտի մտնէ :

— Լաւ, որոշուեցաւ, պիտի առնեմ քեզ քովս, ... բայց առաջուց ըսեմ որ երբեմն չափազանց բարկացոտ եմ ու բերնէս ելածը չեմ գիտեր :

— Հոգ չէ՛, պատասխանեց Ղազարոս, ես ալ այդպէս եմ :

×

— Այո՛, պարոն, երկու գաւակ ունիմ, մին 4 տարու և միւսը 6 :

— Ի՞նչ շուտ կ'անցնի ժամանակը, պատասխանեց Ղազարոս, բնաւ չէի կարծեր թէ 10 տարիէ ի վեր ամուսնացած էք :

×

— Չգիտցած բաներովդ աղուոր գիրք մը կարելի էր շինել, ըսաւ բարեկամ մը Ղազարոսին :

— Մինչդեռ քու գիտցած բաներովդ շատ գէշ գիրք մը պիտի յօրինուէր, պատասխանեց Ղազարոս :

×

— Կտակս շինեցի, կ'ըսէր անցած օր Ղազարոս, և ամբողջ հարստութիւնս կնոջս կտակեցի, պայմանով սակայն որ մեռնելէս անմիջապէս ետքը ամուսնանայ : Ասով պիտի գտնուի աշխարհի վրայ մէկը գոնէ որ ցաւի մահուանս վրայ :

×

Ղազարոսին գաղափարը .

— Ինչո՞ւ չամուսնանամ այդ կնոջը հետ որ պառաւ է :

Հարուստ է ու հետեւարար երջանիկ պիտի ընէ զիս. գէր է ու կաղ է, ա՛տ, ի՛ր դժբաղդութիւնն է :

×

— Ի՞նչ կարծիք ունիք երազներու մասին :

— Կը հաւատամ ես անոնց , պատասխանեց Ղազարոս , օրինակի համար , երէկ իրիկուն երազեցի որ արթնցեր եմ , ու այս առտու իսկ իրականացաւ այդ երազս :

×

Ղազարոս այցելութեան կ'երթայ իր մէկ բարեկամին որ շատ հիւանդ է : Իւան առջեւ հասնելով կը տեսնէ դագաղ մը ու բազմութիւն մը որ եկեղեցի երթալու կը պատրաստուի : Այն ատեն դռնապանին դառնալով՝

— «Ըսել է յոյս չկայ , հէ՞ , հիւանդէն : »

×

Սօսակցութեան մէջ Ղազարոս երբեմն սիրուն գիւտեր կ'ընէ . այսպէս , անցած օր խօսելով իր ընկերոջ մասին , կ'ըսէր .

«Աշխարհի ամէնէն ազնուական տղան է , ու խելացի ալ , ինչ որ կ'ընեմ , հաւանութիւն կու տայ :»

×

— Տօքթօր , ըսաւ Ղազարոս , պզտիկս սխալմամբ շիշ մը մելան խմեց :

— Ի՞նչ կ'ըսէք , ի՞նչ ըրիք այդ ատեն :

— Անմիջապէս երկու թերթ ծծուն թուղթ կ'ըլլել տուի :

×

Ղազարոսի մտածումները .

Կնոջ մը պարտականութիւնն է միշտ գեղեցիկ ըլլալ , երբ կրնայ :

Իսկ էրիկ մարդուն պարտականութիւնն է կնոջ կարծել տալ թէ գեղեցիկ է , նոյն իսկ եթէ կինը տգեղ ալ է :

×

— Կիներ կան , կ'ըսէր Ղազարոս , որ կատակի մը առթիւ , որչափ ալ ապուշ կատակ ըլլայ , կը խնդան միշտ :

— Որո՞նք են անոնք :

— Այն կիները, որոնք գեղեցիկ ակուաներ ունին :

— Ղազարոս, շատ համարձակ է կիներու հանդէպ, այնչափ որ անցեալ օր կին մը կռնակը դարձուց իրեն ու ըսաւ բարկութեամբ .

— Պարո՛ն, անանկ առաջարկութիւններ կ'ընէք ինձի, որ առանց կարմրելու չպիտի կրնայի ընդունիլ :

— Բայց տիկին, պատասխանեց Ղազարոս, կարմրեցէք ու . . . ընդունեցէք :

×

— Ինչո՞ւ կին մը իր ամուսինին անունը կ'առնէ, երբ կ'ամուսնանայ :

— Քանի որ, պատասխանեց Ղազարոս, անոր ամէն ունեցածը կ'առնէ, ի՞նչ պատճառ կայ որ անունն ալ չառնէ :

×

— Տե՛ս ի՞նչ սիրուն նամակ մը ստացայ, կ'ըսէր մեր համբաւաւոր Միմոսը իր սիրելի Ղազարոս բարեկամին. ասիկա գրող անպիտանը «ապուշ» ըսեր է ինձի :

— Ո՞վ է գրողը :

— Չեմ հասկնար կոր ո՞վ ըլլալը, ստորագրութիւն չկայ տակը :

— Գիրէ՞ն ալ չէք հասկնար կոր, անպատճառ ձեզ ճանչցող մէկը ըլլալու է, պատասխանեց Ղազարոս :



ՅԱԿՈՒԿԻՆ ՆԷՔԵԱԹԸ

ՅԱԿՈՒԹԻՆ ջութակի դաս կ'առնէ և շատ գոհ չէ շիտակը: Հայրիկը մէջ կը մտնէ:

— Բայց, հայրիկ, դուն ալ չես գիտեր ջութակ վարնել:

— Որովհետեւ ժամանակին ծնողքս չի սորվեցուցին ինձի:

— Օ՛հ, հայրիկ, յայտնի՛ է թէ ծնողքդ խելացի մարդիկ են եղեր:

Կարծեմ թէ Յակոբիկ ծեծ կերաւ ան օրը:

— Յակոբի՛կ, կը հարցնէր ուսուցիչը իրագիտութեան դասին, կաթը ինչո՞ւ աւելի սուղ կ'ըլլայ ձմեռը քան թէ ամառը:

— Որովհետեւ, միւսիւ, ձմեռը ջուրը սառած կ'ըլլայ:

Պատմութեան դասին.

— Միւսի՛ւ, ի՞նչպէս գիտնամ թէ հազար հինգ հարիւր տարի առաջ ի՞նչ պատահեր է, երբ հազիւ եօթը տարեկան եմ:

— Է նայինք, Յակոբիկ, աղէկ դիրք ունի՞ս դպրոցին մէջ:

— Այո՛, հայրիկ . . . ճիշդ վառարանին քովն եմ:

Յակոբիկ դառնապէս լալու վրայ է, երբ ձայնը կը կտրէ մէկէնիմէկ:

— Գիտէի որ վերջապէս ձայնդ կտրէիր պիտի, կ'ըսէ մայրիկը յաղթական:

— Բնա՛ւ, հանգիստ կ'առնեմ կոր:

— Ի՞նչ է ան, Յակոբիկ, կը պոռար ուսուցիչը քարկուժեամբ, երեք տեղ մեղան ես ըրեր պարտականութեանդ վրայ, ուրեմն իբր պատիժ երեք անգամ այդ էջը ընդօրինակես պիտի:

Քառորդ ժամ ետքը, Յակոբիկ՝ ուսուցչին.

— Միւսի՛ւ, որպէս զի պարտականութիւնս երեք անգամ չընդօրինակեմ, այս երեք մեղանները միացուցի և մէկ մեղան շինեցի:

— Յակոբիկ Քրիստոնէականը սորվելու վրայ է և ինքն ալ մտածումներ ունի:

— Հայրի՛կ, կը հարցնէ յանկարծ, երբ Յիսուս յարութիւն առաւ, ինչո՞ւ համար ամէնէն առաջ կիներուն երեւցաւ:

— Հաւանականաբար, տղաս, որպէս զի լուրը շուտ տարածուի:

— Ըսէ՛ք նայիմ, տղաքս, հարցուց ուսուցիչը, խնձոր քաղելու է՞ն յարմար եղանակը ո՞րն է:

— Երբ պարտիզպանը հոն չէ, և երբ պարտէզին մէջ պահապան չուն ալ չկայ, պատասխանեց Յակոբիկ:

— Մայրի՛կ, կը հարցնէր օր մը Յակոբիկ, երբ հայրիկիս հետ ամուսնացած չէիր դեռ, ես կը ճանչնայի՞ քեզ:

— Յակոբի՛կ, մատներովդ մի՛ ուտեր կերակուրը:

— Բայց մայրի՛կ, մատները պատառաքաղէն առաջ ստեղծուած էին:

— Ո՛չ քուկիներդ, Յակոբիկ:

— Յակոբի՛կ, կը հարցնէր ուսուցիչը, քու անունդ Յ ո՞վ կը գրես թէ Հ ո՞վ:

Յակոբիկ որ ուղղագրութեան մէջ իր գիտութեամբը չէ որ կը փայլի մասնաւորապէս, վայրկեան մը մտածելէ յետոյ՝

— Ոչ Յ-ով, ոչ ալ Հով, միւսիւ, պատասխանեց, այլ երբեմն գրիչով, իսկ շատ անգամ ալ մատիտով կը գրեմ:

×

— Տեսա՞ր. Յակոբիկ, ըսաւ մայրիկը, խելօք կենալուդ համար, ուօքթօրը քեզի պղտիկ աղբարիկ մը բերաւ:

— Ի՞նչ աղուոր է, մայրիկ, ասկէ ետքը միշտ խելօք կը կենամ:

— Օ՛հ, չէ՛, չէ՛, ո՛չ միշտ, պատասխանեց մայրիկը:

—

— Ըսէ՛ք նայիմ, հարցուց օր մը դաստիարակը կրօնագիտութեան դասին, ինչո՞ւ համար Գրիգոր Լուսաւորիչ մեծ սուրբ մըն է:

— Որովհետեւ անոր տօնախմբութեան օրը դպրոցը դոյ է, միւսիւ, պատասխանեց Յակոբիկ անմիջապէս:

×

Յակոբիկ մայրիկին կը պատմէր թէ՛ դպրոցը տղայ մը գրասեղանին վրայէն վար ինկաւ, և թէ՛ բոլոր միւսները խնդացին անոր վրայ, բաց ի իրմէն:

— Ա՛՜՜ քերիւն տղաս, ըսաւ մայրիկը, բայց դո՞ւն ինչո՞ւ չի խնդացիր:

— Վար ինկողը ես էի, մայրիկ:

×

— Վարժապետդ շատ կը սիրե՞ս, Յակոբիկ, կը հարցնէր մայրիկը:

— Այո՛, մայրիկ:

— Ինչո՞ւ համար կը սիրես:

— Որովհետեւ, մայրիկ, Ս. Գիրքին մէջ գլորուած է որ պէտք է սիրենք մեր թշնամիները:

×

— Յակոբի՛կ, 7 անգամ 6 քանի՞ կ'ընէ տեսնեմ :

— Է՛, հայրիկ, չե՞ս գիտեր կոր ատիկա . . . :

— Այո՛, հարկաւ գիտեմ, բայց . . .

— Ինչո՞ւ կը հարցնես ան ատեն :

×

Ճաշի ատեն, Յակոբիկ և քուրիկը կը խօսակցին :

— Իմ հաւկիթս շատ պաղ է, կ'ըսէր քոյրիկը :

— Իմս ալ, պատասխանեց Յակոբիկ, կ'երեւայ մայրիկը պաղ ջուրի մէջ խաշեր է :

×

Յակոբիկ, ծայրայեղ յամառութեամբ մերժած է առտուն այբուբենին առաջին գիրը ըսել, ու . . . աղուոր ծեծ մըն ալ կերած է մայրիկէն : Իրիկունը, հայրիկը սուն դարձած ատեն, բարձրաձայն լալու վրայ է. հայրիկը կը կանչէ զինքը, ծունկերուն վրայ կ'առնէ, և՛

— Բայց Յակոբիկ, ինչո՞ւ չուզեցիր այբը ըսել, այնչափ դժուար էր ատիկա :

Տղան կուլայ ու չի պատասխաներ. հայրիկը նորէն կը հարցնէ, նորէ՛ն լռութիւն. վերջապէս այնչափ կը ստիպէ որ Յակոբիկ լալկան ձայնով մը .

— Որովհետեւ, հայրիկ՛, այբը ըսածիս պէս, թե՛ն ալ ըսել պիտի տար մայրիկը :

×

Յակոբիկ ուշադրութեամբ հայրիկին մտիկ կ'ընէ որ աշխարհի զանազան դարերուն, ոսկեդարին, արծաթի դարին, պղինձի դարին, քարի դարին և այլնի վրայ կը ճառէ :

Յակոբիկ, անմեղօրէն՝

— Հայրի՛կ, ե՞րբ եղած է Շաքարեղէնի դարը :

×

Հօրեղբայրը, որ դիտելու վրայ է Յակոբիկը և իր պզտիկ ընկերը, որոնք կռիւի խաղ կը խաղան, կ'ըսէ. — Յակոբի՛կ, եթէ յաջողիս ամրոցը գրաւել, քառսուն փարա պիտի տամ քեզի :

Յակոբիկ , վայրկեան մը ետքը . — Հօրեղ-
բայր , ամրոցը գրաւուեցաւ :

Հօրեղբայրը . — Իրա՞ն :

Յակոբիկ . — Այո՛ , քսան փարան պաշարեա-
լին տուի , ու անմիջապէս անձնատուր եղաւ :

×

— Գոհ եմ որ այս շարժու վեցերորդ եղեր ես
կարգիդ մէջ , մինչ անցեալ շարժու տասնևմէկե-
րորդ էիր եղեր :

— Այո՛ , հայրիկ , պատասխանեց Յակոբիկ ,
այս շարժու ընկերներէս հինգը հիւանդ եղան ու
դպրոց չեկան :

×

— Յակոբիկ , կ'ըսէր մայրիկը , եթէ երբեմն
հայրիկը քեզ կը ծեծէ , քեզ սիրելէն է :

— Հայրիկը քեզ ալ կը սիրէ՞ , մայրիկ :

— Բայց հարկաւ :

— Ան ատեն ինչո՞ւ քեզ ալ չի ծեծեր :

×

Յակոբիկ , մայրիկին հետ դաշտը պատելու ե-
լած է :

— Ըսէ՛ , մայրիկ , էշերն ալ ակուայի ցաւ կ'ու-
նենա՞ն :

— Հարկաւ :

— Օ՛հ , ո՞րչափ բամպակ պէտք է ուրեմն
ականջնին լեցնելու համար :



ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական Humour ք

ԼՕՆՏՕՆԻ երգեցիկ սրճարաններէ մէկուն մէջ անցեալ տարի ամենասրամիտ խաղ մը կը ներկայացնէին, ուր կատակերգակ դերասանը իր ընկերներէն մէկուն կը հարցնէր.

— Քու կարծիքովդ, աշխարհիս երեսը ո՞րն է ամէնէն ցեխոտ քաղաքը:

— Օ՛հ, առանց վարանելու, կրնամ ըսել թէ Լիվրբուլն է այդ քաղաքը, և աս՝ ես անձնական փորձառութիւնովս գիտեմ: Օր մը երբ կը պտտէի հոն, պատահմամբ ձեռքէս շիլին մը ձգեցի, շիլինը ցեխին մէջ մտաւ ու աներեւոյթ եղաւ, գաւազանովս սկսայ ցեխը խառնչտկել որպէս զի շիլինը գտնեմ, խառնեցի, խառնեցի, այնչափ որ գաւազանս կարծր քանի մը եկաւ: Ցեխին մէջ մնացած պարոնի մը գանկն էր և որովհետև զարմացեր մնացեր էի այնչափ խորը թաղուած ըլլալուն, պարոնը քաղցրութեամբ պատասխան տուաւ և ըսաւ.

— Եթէ մինակ այսչափ ըլլար ցեխը, բայց ոտքերս թրամվայի մը երկրորդ յարկին վրայ կոխած եմ:

×

Դիւրին հաշուաբիւնը

Օր մը իշխանի մը եկան իմացուցին թէ ապարանքին մէջ երկու կիներ սոսկալի կերպով կռուեր էին իրարու հետ և անհամար նախատիւքներ թափեր էին իրարու գլխուն: — «Իրարու տգեղ մակդիրը տուին, հարցուց իշխանը: — Ոչ, Տէ՛ր: — Լա՛ւ, թէ որ այդպէս է, ըսաւ իշխանը, ես յանձն կ'առնեմ զանոնք իրարու հետ հաշտեցնել:»

×

Ակնոցը

Գիւղացի մը կը խնդրէր իր փաստաբանէն որ եռանդով պաշտպանէ իր դասը : Փաստաբանը որ մինչև այդ ատեն չէր տեսած տակաւին գիւղացիին դրամին գոյնը, միշտ կը պատասխանէր. «Բարեկամս, այնչափ կնճռոտ է քու դասդ, որ բնաւ բան մը չեմ տեսներ կոր անոր մէջ :» Գիւղացին ի վերջոյ հասկնալով անոր կարճատեսութեան նշանակութիւնը, գրպանէն երկու ոսկի հանեց ու փաստաբանին տուաւ «հրամմեցէք, պարոն, ահաւասիկ ձեզի զոյգ մը ակնոցի ապակի» ըսելով :



Մեր քարոզիչ Սրբազաններէն մէկը մէկ քարոզ մը միայն գիտէր ամէնը ու բոլոր այցելած գիւղերն ու քաղաքները այդ միւսնոյն քարոզը կը խօսէր . որ մը, գիւղապետ մը հրաւիրեց զինքը որ հետևեալ օրն ալ քարոզ խօսի նոյն գիւղին մէջ : Սրբազանը գիշերը մինչև լոյս մտածեց գործին մէջէն խելով ելլելու միջոցներուն վրայ և երբ ատենը եկաւ . «Սիրեցեալ ժողովուրդ, ըսաւ, ձեր մէջէն ըսողներ կան եղեր թէ, երէկուան քարոզիս մէջ, հաւատքի հակառակ խօսքեր ըրեր եմ ու Ս. Գիրքի վկայութիւնները սխալ մեկներ եմ, հիմա, որպէս զի համոզուիք թէ զրպարտիչներ են այդպէս խօսողները, նորէն պիտի կրկնեմ երէկուան քարոզս, աղէկ մտիկ ըրէք :»



Սոխակը

Հարուստ գիւղացի մը օր մը ծառային հետ քաղաքացի բարեկամի մը նամակով մը վանդակի մը մէջ դրած սոխակ մը կը զրկէ նուէր : Ճամբան, վանդակին դուռը բացուելով, սոխակը կը փախի կ'երթայ : Գիւղացին աչքերովը կը հետեւի թռչունին, մինչև որ աներեւոյթ կ'ըլլայ և շարունակելով ճամբան, քաղաք կը հասնի և կը տանի կը յանձնէ

նամակը, որու որ ուղղուած էր: Քաղաքացին,
 նամակը բանալով քարձրածայն կը սկսի կարդալ.
 «Ձեզի սոխակ մը կը ղրկեմ:» «Ի՞նչ, կը պուռայ
 գիւղացին, սոխակը նամակին վրայ է եղեր, Օխ,
 սրչափ հանգիստ եմ հիմա, հապա ե՞ս որ կը կար-
 ծէի թէ փախեր է:»

×

Երկու գիւղացիներ պզտիկ տակաւ մը գինի
 կը տանէին քաղաք ծախելու: Մեկնելնէն առաջ
 սակայն որոշեցին որ բնաւ չխմեն տակառէն, մին-
 չեւ որ խմածնուն դրամը չվճարեն: Մէկը վեց
 տասնոց ունէր գրպանը, իսկ միւսը՝ ոչինչ: Ատեն
 մը քալելէ յետոյ, դրամը ունեցողը սաստիկ ծա-
 րաւնալով 60 նոցը ցնծաց ու կուշտ մը խմեց տա-
 կառէն: Ժամանակ մըն ալ քալեցին, ան ատեն՝
 60 նոցը առնողը ծարաւնալով, ինքն ալ ցնծաց ու
 կուշտ մը խմեց: Բայց սրչափ զարմացան երկուքն
 ալ, երբ քաղաք հասնելով տեսան թէ տակառը
 ամբողջ պարպուեր էր, և երկուքնին միասին, նո-
 րէն միմիայն... 60 նոց մը ունէին:

×

— Ղազարո՛ս, կը հարցնէր բարեկամ մը, կըր-
 նա՞ս ինձի բացատրել թէ ի՞նչ է պատասխանա-
 տուութիւնը:

— Այո՛, պատասխանեց Ղազարոս, երբ բան-
 թալօնիս վրայ երկու կոճակ ունենամ, և երբ կոճա-
 կիս մէկը փրթի, ան ատեն ամբողջ պատասխա-
 նատուութիւնը մնացած միակ կոճակին կ'իյնայ:

×

«Եթէ զաւակս ապուշ մը ըլլար, զինքը քա-
 հանայ պիտի ընէի, կ'ըսէր մարդ մը:

— Կ'երեւայ թէ, պատասխանեց ներկաներէն
 տէրտէր մը, հայրիկդ միեւնոյն գաղափարը չունի
 եղեր:»

×

— Ի՞նչ բան է որ երբեմն լռութիւն տիրել կուտայ, բայց ինք միշտ կը խզէ լռութիւնը:

— Բառ մը:

×

Քաղաքավարութեան մրցում.

— Իմ նշանածս քաղաքին ամէնէն աղուոր աղջիկն է:

— Կրնայ ըլլալ, քանի որ իմս գիւղը կը բնակի:

×

Ուսուցիչը. — Մարդս ինչո՞ւ երկու ձեռք ունի:

Աշակերտը. — Մէկը առնելու համար, միւսիւ, միւսն ալ առածը պահելու համար:

—

Երկու երիտասարդներ ուզեցին գիւղին տէր-տէրին հետ իյնալ, և ճամբան անոր հանդիպելով՝

— Իմացա՞ք, տէր հայր, հարցուցին անոր:

— Չէ՛, ի՞նչ բան, տղաքս:

— Սատանան մեռեր է:

— Վա՛յ, իրա՞ւ, ըսաւ տէրտէրը, շեշտակի անոնց նայելով, երթամ հոգոց մը ըսեմ իր երկու որբերուն համար:

—

Նորատի կին մը որ այրի մնացեր էր, հոյակապ դամբարան մը կանգնեց ամուսնին գերեզմանին վրայ, ուր հետեւեալ արձանագրութիւնը քանդակել տուաւ. «Շատ մեծ է ցաւս, չպիտի կրնամ դիմանալ»: Երբ քանի մը ամիս ետքը կրկին ամուսնացաւ, միակ բառ մը աւելցնել տուաւ դամբարանին վրայ. «Մի՛նակս»:

×

Փիլիսոփայի մը կարծիքին համեմատ՝ «ամէն մարդ կ'ամուսնանայ հիմա, բայց ի անխելք կիներէն և խելացի մարդոցմէն»:

×

Ամերիկացի համբաւաւոր գրագէտը Ռօլլիթըր Սալէյճ Լէնտըրը չափազանց մտացիր մարդ մըն էր : Գրեթէ միշտ իր պայուսակին բանալիները առնելու կը մոռնար ճամբորդած ատեն : Օր մը ա՛լ չի դիմանալով բանալիները առաջուց գրպանը դըրաւ , և ճամբան ձեռքը միշտ գրպանը կը տանէր վատան ըլլալու համար թէ հոն են : Երբ տեղը հասաւ , հպարտութեամբ ամէնուն կը ցուցնէր զանոնք . բայց ի՛նչ դառն յուսախարութիւն , այս անգամ ալ . . . պայուսակը առնելու մոռցեր էր :

×

Հետեւեալ տողերը համբաւաւոր վէպէ մը քաղուած են .

«Կինն ու ամուսինը սեղանի նստան . որոշ յայտնի էր թէ կաիւ մը տեղի ունեցած էր իրենց մէջ : Էրիկը լափեց իր առջև դրուած կերակուրը , — խոշոր ձուկի մը կէսը և պնակ մը միս — , առանց մէկ անգամ գոնէ բերանը բանալու :»

×

Պիզմարք բնաւ չէր սիրեր որ հարցումներով զինքը ձանձրացնեն : Օր մը նորատի բժիշկ մը կանչել տուաւ որ առանց իր բարձր աստիճանը նկատի առնելու , բոլոր պէտք եղած հարցումները ըրաւ : Ի վերջոյ , նախարարապետը ձանձրացած , ըսաւ թէ ա՛լ չպիտի պատասխանէ :

Բժիշկը ըսաւ այն ատեն .

— Այդ պարագային աւելի լաւ էր որ անասնաբոյժ մը կանչէիք . անոնք են որ վարժուած են պատասխան չընդունելու իրենց հիւանդներէն :

Զարմացած՝ Պիզմարք պատասխանեց .

— Երիտասարդ , եթէ ժպրհութեանդ չափ ճարտար ալ ես , իրաւցնէ մեծ բժիշկ մըն ես դուն :

×

Անլուծելի խնդիրը

Մարդ կենդանին ընդհանրապէս ապուշ կեն-

դանի մըն է. շատ մը դժուարութիւններու կը հանդիպինք մեր կեանքին մէջ, որոնց երեսէն շատ անգամ դժբաղդ ալ կ'ըլլանք, մինչդեռ ամենափոքր ուշադրութիւն մը, կտոր մը փորձառութիւնը բաւական պիտի ըլլային մեզ փրկելու :

Ահաւասիկ զուարճալի ապացոյց մը ասոր :

Անգամ մը, Բարիզի Գիտութեանց Ակադեմիան հետեւեալ կնճռոտ հարցումը հրապարակ նետեց զոր լուծողին չեմ գիտեր որչափ դումար մը պարգեւ պիտի տար :

Հարցումը սա էր .

« Եթէ առնէք գաւաթ մը լեփ-լեցուն ջուր և ո եւ է առարկայ մը, օրինակ քարի մը կտոր նետէք մէջը, ջուրը դուրս կը թափի, իսկ եթէ այդ քարին մեծութեամբ ձուկ մը նետէք գաւաթին մէջ, ջուրը չի թափիր : Ի՞նչպէս կը բացատրէք այս երեւոյթը » :

Ու անմիջապէս հարիւրաւոր պատասխաններ եկան, մէկը միւսէն աւելի հանճարեղ : Բայց ատոնցմէ ոչ մին ճշմարտապէս գոհացուցիչ և անվիճելի ապացոյցը կուտար եւ պարզեւը ոչ մէկուն տրուեցաւ, և հարցումը մրցումի դրուեցաւ :

Հինգ տարի պատասխան չեկաւ, խնդիրը անլուծելի կերեւար :

Եւ իրաւ ալ, անլուծելի էր, որովհետեւ մարդուն մէկը, օր մը փորձել ուղեց խնդիրը և տեսաւ որ, ձուկն ալ ճիշդ ու ճիշդ քարին պէս ամանէն դուրս կը պոսթկայնէ ջուրը :

Ակադեմիան խնդիրը մրցումէն հանեց, բայց լուծողը . . . կարծեմ թէ չին հողաթափներս շահեցաւ :



Պարտնք. — Բայց ինչո՞ւ կը ձամբես սոցատուհին, կարծեմ շատ լաւ կը կատարէ կոր իր պարտականութիւնները :

Տիկիճը . — Այո՛ , շատ լաւ կը կատարէ կոր , միայն թէ իմ պարտականութիւններս ալ կը փորձէ կոր կատարել :

×

Կատուն խռկալու վրայ է վառարանին քովիկը :
— Օհ , մայրիկ , կը պուռայ Չապէլ , որ հաղիւ չորս տարու կայ , վերցուր կատուն այդ տեղէն այրի պիտի :

— Ի՞նչպէս այրի պիտի , կը քնանայ կոր :

— Բայց ոչ , չե՞ս լսեր կոր , եռալու սկսաւ :

×

Բառական իմաստով .

— Մարիամ , կ'ըսէ տէրը ճաշի ատեն , կտոր մը աղ բեր :

Սպասուհին վայրկեանէ մը կը դառնայ , կտոր մը աղ ձեռքը :

— Ուրիշ անգամ , աղջիկս , կ'ըսէ տէրը , ինչ որ ուզեմ , պնակի մը մէջ դնելով բեր :

Իրիկունը , տէրը հողաթափները կ'ուզէ , որոնք . . . պնակի մը մէջ դրուած կը ներկայանան իրեն :

×

— Տիկի՛ն , կը պաղատիմ , ողորմութիւն մը առէ՛ք :

— Չեմ կրնար , ձենէ առաջ քսան մուրացկան եկան արդէն :

— Պատճառ մը աւելի է աս պիս մխիթարելու համար , մտածեցէ՛ք , տիկի՛ն , թէ ի՛նչ սոսկալի մրցում կայ դէմս :

×

Գող մը ճիշդ յանցանքը գործած պահուն բռնուելով՝ կ'առաջնորդուի դատարան :

— Ի՞նչ է ձեր արհեստը , կը հարցնէ դատաւորը :

— Չեռքերուս աշխատութեամբը կ'ապրիմ , Տէր Նախագահ :

×

Կը պատահի երբեմն որ ամբողջ տունը տակնուվրայ ընէք գնդասեղ մը գտնելու համար, ու չգտնելով, յուսահատած իյնաք բազմոցին վրայ ուր անմիջապէս ուժգին ցաւ մը ձեր նստելու տեղին վրայ, վարձատրէ ձեզ ձեր աշխատութենէն:

×

Շողոքորթութիւն.

Օրիորդը, երեսը կախած քիչ մը. — Կէս ժամէ ի վեր մէյ մը անգամ չի համբուրեցիր զիս:

Պարոնը. — Գիտեմ, բայց ակռայիս մէկը չափազանց հիւանդ է ու պիտի ցաւի, եթէ քեզ համբուրեմ:

Օրիորդը. — Այդ ինչ ըսել է:

Պարոնը. — Այո՛, որովհետեւ բժիշկը արգելեց անուշ բաներու դպցնել:

×

Չափազանց խղճամիտ.

— Երէկ լաւ մը գինովցեր էիր նորէն, ու մէյ մըն ալ խճօք կուտաս որ վեց գաւաթէ աւելի չպիտի խմես:

— Իրաւ է, սիրելի կինս, բայց խմած ատենս մոռցայ հաշիւը ու չէի գիտեր թէ հի՞նդ թէ վեց գաւաթ էի խմեր. ու ատոր համար էր որ ստիպուեցայ նորէն սկսիլ ճիշդ հաշիւը գտնելու համար:

×

Վիճարանութիւն մը.

— Որոշ, բացորոշ է թէ 2 և 2 կ'ընէ 4:

— Բնա՛ւ, բնա՛ւ, բնա՛ւ, 2 և 2 կ'ընէ 22:

×

— Սիրուն հրեշտակս, ըսաւ անոր, կը կարծե՞ս որ եթէ ամուսնանանք, հայրիկդ պիտի ներէ մեզի:

— Վստահ եմ, պատասխանեց մանկամարդ աղջիկը սիրով գինովցած:

— Եւ թէ տուն մըն ալ պիտի տայ որ հոն
հասինք :

— Այո՛ , սիրելիս :

— Ու զիս ընկեր պիտի առնէ :

— Այո՛ :

Ու տարփանքով անոր թեւերուն մէջ նետուե-
ցաւ : Բայց տղան , ցրտութեամբ ետ հրեց
զինքը :

— Բնաւ պիտի չամուսնանամ քեզի հետ , պո-
ռաց , հայրիկդ շատ կը շտապէ կոր գլխէն սեժ
ընելու քեզ :

×

Հայր մը կը խրատէր իր տղան թէ այդչափ ան-
կարգ կեանք մը անցնելով իր օրերը պիտի կար-
ճեցնէր :

— Ան ատեն ես ալ գիշերներս կ'երկնցնեմ ,
պատասխանեց տղան :

×

— Երէկ քեզ համբուրելը տեսայ , ի՞նչ յանդգ-
նութիւն , բնաւ չէի կարծեր որ այդչափ յառաջ
պիտի երթար :

— Ես ալ չէի կարծեր , մայրի՛կ , պատասխա-
նեց աղջիկը , և գրաւ դրեր էի հետը թէ չպիտի
համարձակէր :

×

Մեղրալուսնէն ետքը .

— Քեզի հետ ամուսնանալէս առաջ բնաւ
ապուշ մը չի գտնուեցա՞ւ որ սիրահարէր քեզի ,
հարցուց ամուսինը :

— Այո՛ , մէ՛կ հատ մինակ :

— Կը ցաւիմ որ մերժեցիր զինքը :

— Կը սխալիս , չի մերժեցի , ամուսնացայ հետը :

×

— Իմացա՞ր , կ'ըսէր կին մը իր բարեկամու-
հին , տիկին Ք** բաժնուեր է իր ամուսնէն :

— Ինչո՞ւ արդեօք :

— Անցեալ չարթու ամուսինը երկու ժամ բանտարկեր է զինքը սենեակի մը մէջ ուր հինգ նոր չրջագգեստ, տասը գլխարկ կան եղեր, բայց ոչ իսկ հայելի մը : Ինչ անգթութիւն, հէ՞ :

×

Սալօնի մը մէջ խօսք կ'ըլլար հպարտութեան զգացումին վրայ, զոր աղքատութիւնը կորսնցնել կուտայ :

— Ինչպէս այդպէս չըլլայ արդէն, ըսաւ Ա. Տիւմա որդի, մէջը պարապ պարկ մը կրնա՞յ կանգուն կենալ :

×

— Երբէք կից մի՛ զարնէք մարդու մը, որ գետին ինկած է արդէն, վատ բան է. ոտքի եղած ատենն ալ մի՛ զարնէք, աս ալ պէտք եղածէն աւելի յանդգնութիւն է :

×

Անկլօ-Պօէրական պատերազմին ատեն Քարի անգլիացի զինուորները Լոնտոնէն քանի մը սնտուկ գարեջուր ստացան : Զօրավար Պուլլըր հրամայեց որ որոշ ժամերու մէջ միայն բաժնեն գարեջուրը զանազան զօրաբաժիններուն և երկու պահապան զինուոր դրաւ թանկագին հեղուկին վրայ հրակելու :

Հետեւեալ օրը շիշերէն տասներկու հատ պակաս էին :

Բարկութիւն մե՞ծ զօրավարին, որ հրամայեց կրկին թիւով պահապան կարգել :

Եւ յաջորդ օրը, 12 ին տեղ 24 շիշ կը պակասէին :

×

Ամուրիք. — Ո՛րչափ գոհ եմ ամուսնացած չըլլալուս, որչափ ալ ուշ դառնամ տուն, ստիպ-

ուած չեմ ժամերով բացատրութիւն տալու կնոջս,
իսկ դո՞ւն, բարեկամն, ի՞նչ կ'ըսես կնոջդ, երբ
ուչ տուն կը դառնաս :

Ամուսնացած մարդը . — Մեծ հանդարտու-
թեամբ կ'ըսեմ « բարինկուն » ու մնացածը . . . կինս
կ'ըսէ :

×

— Օ՛Ք, տիկի՛ն, ըէք գիտեր թէ ո՞րչափ նա-
խանձում է ամուսինս :

— Իրաւունք ունի՞ :

— Աւանդ, ո՞չ :

×

Խմբագիրներու խօսակցութիւն .

— Օ՛հ, ի՞նչ անհուն առաւելութիւն մը կայ
նոր թերթ հրատարակելու մէջ :

— Ո՞րը :

— Բնաւ նամակ չես ընդունիր հին բաժա-
նորդներէ :

×

Խելացի մարդը երբէք չըսեր կնոջը թէ ի՞նչ
պիտի փափաքէր ուտել հետեւեալ առտուան նա-
խաճաչի ատեն, ասով այն աստուածային հաճոյքը
կ'ունենայ որ է տրանջալ կնոջը իր առջեւ բերուած
բոլոր կերակուրներու մասին :

×

ալօնին մէջ .

— Կ'ըսեն թէ Պ . Ք** շատ հարուստ է :

— Անհունօրէն, այնչափ հարուստ է որ կինը
չի կրնար կոր մխսել իրենց ունեցածը :

×

Սիրահարութիւն .

Տղան . — Ըսէ՛ք, օրիորդ, ի՞նչ պիտի ընէք
եթէ համբուրեմ ձեզ :

Օրհորդր. — (Արժանապատուութեամբ). — Ան-
միջապէս պիտի մայրիկին պռռամ. բայց (միտքը իյ-
նարով) . . . բայց ան ալ դուրս ելաւ այս իրիկուն :

×

Գերագոյն Աստիճանները .

Ապուշութեան գերագոյն աստիճանը՝

— Իրամապանակ մը գնել ունեցած վերջին
քառորդովդ :

×

Ագահութեան գերագոյն աստիճանը .

— Ամառ շաբաթ իրիկուն մը վոսբոր կամ
կղզիները մեկնող շոգենաւերը նստելու ատմակ
առած ատենդ , ամէնէն վերջը մնալ , որպէս զի
դրամէդ ամէնէն ետքը բաժնուիս :

×

Մտազբաղութեան գերագոյն աստիճանը .

Կը հանդիպիս մարդու մը , զոր երբեմն , քանի
մը անգամ տեսած ես , բարեւ կուտաս ու կը
հարցնես :

— Ի՞նչպէս էք , աղէ՞ք էք :

— Շատ աղէկ :

— Իսկ Տիկի՞նը :

— Ան ալ շատ աղէկ , շնորհակալ եմ :

Բայց յանկարծ , ձեր դէմինը ինքզինքին գալով՝

— Ներեցէ՛ք , ո՛չ , ո՛չ , բնաւ . . . մոռցայ որ
վեց ամիսէ ի վեր մեռած է կինս :



ԶՈՒԱՐՋԱԼԻՔՆԵՐ

ՄԻԼԻԱՌԱՏԵՐԵՐՈՒ ԳՈՂԱՐԱՏՈՒՓԵՐԸ

ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ու սարսափելի են սա Եանքիներու աներեւակայելի շռայլութիւնները ամէն բանի մէջ : Ամերիկեան օրաթերթ մը, ասոր ապացոյց, սա տեղեկութիւնները կու տայ այդ պարզասէր (!) կիներու գոհարեղէններուն վրայ :

«Տկն. Ասթըրի գոհարեղէններու արժէքն է 3,700,000 Ֆրանք : Տկն. Ճօն Ասթըր աղամանդներով ու զմրուխտներով շինուած մանեակ մը ունի որ 425,000 Ֆրանք կ'արժէ : Տկն. Օլիվիէ Հ. Բ. Պէլմընթ երջանիկ տիրուհին է այն համբաւաւոր մանեակին որ երբեմն Մարի-Անթուանէթի կը վերաբերէր : Աշխարհի ամէնէն հրաշալի հաւաքածոն է սա մարգրիտներու, և ամէնէն չափաւոր գինը որ անոր արժէքը կը ներկայացնէ 900,000 Ֆրանք է :

Տկն. Ճօրճ Կուլտ, բացի իր սուտակներու և աղամանդներու անգին հաւաքածոյէն ունի նաև այս քարերով շինուած մանեակ մը որ 675,000 Ֆրանք կ'արժէ :

Տկն. Էնրի Սլօէյն երբ երեկոյթի երթայ, մարգրիտներու շարքերով զարդարուած աղամանդէ մանեակ մը կը կրէ որ 850,000 Ֆրանքի նստած է :

Տկն. Հըրրի Ուիթնէյ դժուարաւ կը ներէ իր քենիին, Տկն. Ուիլերմ Գ. Ուիթնէյի որ 825,000 Ֆրանքի մանեակ մը ունի : Այսպէս ալ Տկն. Հ. Մաք Թուօմպլի, որուն աղամանդները 1,750,000 Ֆրանքի արժէք մը կը ներկայացնեն, բացէ ի բաց կը նախանձի Տկն. Պրօպէյ Մարթէնի որուն աղամանդէ մանեակը 1,700,000 Ֆրանք կ'արժէ և սուտակէ վարդը 2 միլիօն :»

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Այն է զոր Տր. Սթօքթըն, Նիու Ճէրսէյի Թրէնթըն քաղաքէն, կտակեց Ֆիլատելֆիոյ հիւանդանոցին: Անոր մէջ կային վեց հատ մարդկային մորթով կազմուած գիրքեր:

Մին՝ Գրացուցակ Բժշկական Գիտութեանց, 1857-73, խոշոր քառածալ հատոր մըն է, որ մարդու մը կունակի մորթով կազմուած է: Ուրիշ հատորի մը՝ Քառփրրի «On impregnation»ի առաջին էջին վրայ Տր. Սթօքթընի ձեռքովը հետեւեալ տողերը գրուած են. «Այս գիրքը կազմուած է Մարիա Լ. . .ի սրունքին մորթէն շինուած կաշիով, որ ձարակախաէ (trichinose) բռնուելով մեռած է Ֆիլատելֆիոյ հիւանդանոցին մէջ: Այրի Իուլանտուհի մըն էր այս կինը, 28 տարեկան:»

Այս Մարիա Լ.ի մորթով կազմուած են նաև երեք ուրիշ հատորներ:

Վեցերորդ գիրքը «De conceptione Adversaria», Տրըլէնքուրի գործը որ 12ածալ պղտիկ հատոր մըն է, իր կիսակաշի կազմը առած է նոյնպէս Ֆիլատելֆիոյ հիւանդանոցը մեռնող հիւանդի մը դաստակի կտածուած մորթէն:

Ամէն անգամ, Տր. Սթօքթըն անձամբ դանաժ է մորթերը: Ըստ Medical Newsի տեղեկութեան, կունակի մորթով շինուած կազմը կոշտ, խոշոր հատիկներով կազմ մըն է: Իսկ Մարիա Լ.ի սրունքին մորթով շինուած կազմը այնքան ճշգրտօրէն կը նմանի խոզի մորթին որ գրեթէ անկարելի է զայն զանազանելը:

— 0 —

ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ

Մէկ մատիտով մինչև քանի՞ բառ կարելի է գրել, հարցուցեր էր վերջերս ինքզինքին անգլիացի վիճակագիր մը, որ կ'երեւայ համբերութեան ան-

սպառ տոպրակ մը և նաև պարապ անցնելու ահագին ատեն ունի եղեր :

Ու գործի սկսաւ աւելի լաւագոյն նպատակի մը արժանի համբերութեամբ և որպէս զի թէ արագ գործէ և թէ հաճոյք մը զգայ ըրածէն ընդօրինակեց Ուօլթըր Սքօթի լաւագոյն վէպերէն մէկը «Իվանօհ»ն : 95,608րդ բառին ստիպուեցաւ կանգ առնել, որովհետև ձեռքը մնացած մատիտի կտորով ալ կարելի չէր բառ մը անգամ գրել :

Այս օրինակէն մտրակուած, գերման նորատի գրագիր մը, աւելի աղէկը ընել ուզեց և միտքը դրաւ ձեռնարկը մինչև ծայրը յաջողցնել : Եւ միակ սովորական կապար մատիտով մը յաջողեցաւ 400 հազար բառ գրել, որով փայլուն ու բացարձակ յաղթութիւն մը տարաւ իր անգլիացի մրցակցին վրայ :

Օտար թերթը, ուրկէ այս տեղեկութիւնները կը քաղենք, — կ'աւելցնէ նաև թէ այս վերջին փորձին մէջ, փորձարկուն յիսունըինը անգամ տաշելու ստիպուեր է մատիտը :

— 0 —

ՈՐԶԱՓ ԾԽԱԽՈՏ ԿԸ ՍՊԱՌԻ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ

Իրան է որ վիճակագրութիւնը բանի մը չի ծառայեր : Սխալ է բոլորովին . երբեմն, անիկա՛ պզտիկ ու անկարեւոր մանրամասնութիւնները քով քովի բերելով այնպիսի հսկայ եզրակացութիւններու կը յանգի որ շլմորած կանգ կ'առնես անոնց առջև :

Տնտեսագէտ մը հաշուած է որ մինակ Ֆրանսայի մէջ մէկ տարուան միջոցին սպառած ծխախոտը եթէ պլորելով երկու սանթիմետր տրամագծով շուան մը շինենք, այդ շուանը ճիշդ երեսո՞ւն անգամ աշխարհի շրջանը պիտի ընէ Հասարակածին գիծէն անցնելով :

Այդ միեւնոյն ծխախոտը եթէ ճնշելով աղիւսներու ձեւով կտրենք, պիտի կրնանք Եգիպտոսի մեծ բուրգերուն երրորդին մեծութեամբ բուրգ մը բարձրացնել :

Վերջապէս, եթէ քերոցենք ծխելու ծխախոտի ձեւով, այս թուխ փոշիին կուտակումին տակ կարելի պիտի ըլլար ամբողջ քաղաք մը թաղել, ինչպէս երբեմն Հերքուլանում և Պոմպէի թաղուեցան :

Սա ալ իրաւ է թէ հիմա ամէն կամ գրեթէ ամէն մարդ կը ծխէ և շատ կանուխ կը սկսի այդ մոլութեան :

— 0 —

ՐԷՔԼԱՄԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՍԱՀՄԱՆԸ

Ալ ճշմարտապէս հինցանք, ու մեր միտքը, մեր ճարտարարուեստը ոչինչ կ'արժեն բաղդատմամբ սա Միացեալ-Նահանգներուն, ուր ամէն բան հսկայական է, քաղաքները, երկաթուղիները, շէնքերը, և անոր ժողովուրդին յղացումներն ալ, գործելու կերպն ալ, կորովն ալ :

Ահա ասիկ հազարէն մին անոր ապացոյցներէն :

Վերջերս, Միացեալ-Նահանգներու գլխաւոր քաղաքներէն մէկուն մէջ, մուրացիկ կին մը թեւերուն մէջ խանձարուրով պատած ու սքանչելիօրէն գեղեցիկ մանկիկ մը գրկեր էր որ աղեկատու ճիշեր կ'արձակէր, այնքան ցաւալի կերպով մը որ ամբոխը խոնուեցաւ կնոջը շուրջը և անշուշտ ինչ մը պիտի բերէր անոր գլխուն, երբ այս վերջինը խոստովանեցաւ թէ այս լացող պղտիկը խաւաքարտէ շինուած պուպրիկ մըն էր մեղրամոմէ սքանչելի կերպով յարմարցուած գլուխով մը, և թէ այդ աղաղակները պէպէքին փորին մէջ պահուած Փօնսկրաֆէ մը կուգային :

Ինականաբար կրնաք եզրակացնել թէ այս սեւ-

սարանին միակ նպատակը հետաքրքրութիւն ար-
թընցնել էր այս նորահնար ֆոնսկրաֆին նկատմամբ
որ այնքան լաւ կերպով կրցեր էր խաբել բոլոր
անցորդները :

Եւ կը կարծէք թէ այս միջոցը վերջնական
սահմանն է ըէքլամի համար եղած բոլոր գիւտե-
րուն : Երբէք, և Աւստրալիոյ մէջ հրատարակուող
մեծ օրաթերթ մը շատ աւելի գեղեցիկ միջոց մը
գտաւ լաւագոյն ըէքլամի :

Այս օրաթերթին գրասենեակները կը գտնուին
քաղաքին ամէնէն բանուկ փողոցներէն մէկուն մէջ :
Օր մը, բազմութեան ամէնէն խիտ եղած միջոցին,
յանկարծ ահագին աղմուկով մը շէնքին դուռները
կռնակի վրայ բացուեցան և երկու խափշիկ իրենց
«հանրածանօթ հագուստները» հագած և Եւրոպացի
կին մը որու դէմքը հասա քօղով մը ծածկուած
էր, դուրս խոյսոյան : Խափշիկներէն մին ուժով մը
բռներ էր կնոջը մէկ թեւը և կը քաշէր կը աանէր
զայն հակառակ անոր բուռն ընդդիմութեան, մինչ-
դեռ միւս խափշիկը, աչքերը շլմորուն, անոնց կը
հետեւէր :

Փողոցին մէջ քանի մը քայլ առնելէ յետոյ,
խուճըր կանգ առաւ : Կնոջ թեւէն բռնող խափ-
շիկը, որու սեւ թանձր մօրու քէն յայտնի կ'ըլլար
թէ միւսէն աւելի տարիքուտ էր, գաշոյն մը երկը-
ցուց օդին մէջ, գետին խոնարհեցնելով թշուառ
կներ, մինչդեռ երկտասարդ խափշիկը միւսին վրայ
ատրճանակ մը կը շտկէր :

Սարսափահար, ամբոխը արիւնալից առամ մը
կարծելով, սոսկումի աղաղակներ արձակելու ոկը-
սաւ, մէկ քանիներ փախան. բայց ընդհանուր
ապշութեան մէջ, երեք անձերը անշարժ կեցան,
tableau vivant մը կազմելով :

Այն ատեն, ամենամաքուր անգլիներէնով մը,
սուս-մարդասպանը աղաղակեց թէ եղածը «էն

աղօտ մէկ տեսարանն էր միայն այն մեծ վէպին ,
 զոր թերթը նոյն օրն իսկ հրատարակելու սկսած էր :»

— 0 —

ՅՈՒՆՆԵՐՈՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆԸ

Թուշարանները տակաւին վերջնականապէս չեն
 լուծած սա խնդիրը թէ թուշուները ե՞ն թէ ոչ բո-
 լոր կենդանիներու ամէնէն երկարակեացները :

Հաստատուած իրողութիւն մըն է թէ կարապ-
 ները 300 տարի կ'ապրին սովորաբար : Քնաուրը իր
 Բնական Պատմութիւն գործին մէջ կ'ըսէ թէ 150
 տարի ապրած շատ մը բազէներ տեսած է ինք :
 Արծիւներն ու ցիւներն ալ նոյնպէս շատ կ'ապրին .
 նոյն Քնաուրը կը պատմէ թէ 1819ին , Պէրլինի մէջ
 մեռնիլը տեսած է 1715ին բռնուած արծիւի մը որ
 արդէն քանի մը տարեկան էր բռնուած ատեն :
 Սպիտակ գլուխով ցին մը որ Աւստրիոյ մէջ բրու-
 նուած էր 1706 ին , Վիէննայի մօտ Շէօնպրէօնի
 պալատին հաւնոցին մէջ մեռաւ 1824ին , 118 տարի
 գերութեան մէջ անցնելէ յետոյ :

Ծովու և ճահիճի թուշուները քանի մը մարդ-
 կային սերունդներ կ'ապրին : Բազերն ու կիւռներն
 ալ շատ կ'ապրին : Կը հաւատան թէ ագուաները
 յաճախ 100 տարեկան կը մեռնին : Անծեղները որոնք
 հազիւ 20—25 տարի կ'ապրին վանդակի մէջ , ա-
 ղատութեան մէջ շատ յառաջացած տարիքներու
 կը հասնին : Հազուադէպ բան չէ մեր աքաղաղնե-
 րուն 15 տարիի հասնիլը և երբ լաւ խնամենք զա-
 նոնք մինչև 20 տարի կ'ապրին :

Աղաւնիներու գոյութեան սահմանը 10 տարի
 է . ամէնէն մանր ցեղերը 8—18 տարի կ'ապրին .
 սոխակները 10 տարիէն աւելի չեն ապրիր վանդա-
 կի մէջ . դեղձանիկները 12—15 տարի մը կ'ապրին ,
 և իրենց բնիկ կղզիներուն մէջ , քանի մը տասն-
 եակ տարիներ . . . չեն մեռնիր :

ԳՈՅՆԸ ԵՒ ՀՈՏԸ ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Կա՞յ յարաբերութիւն մը տուենկերուն գոյնին և հոտին միջև: Քննենք, եթէ ժամանակ ունիք, թէ պարտէզներուն մէջ, որո՞նք են այն պարզ գոյներով ցեղերը որոնք ամէնէն հոտաւէտներն են: Ծաղիկի հազար ցեղի վրայ 284 հատ ճերմակ կը գտնենք, 221 հատ դեղին, 220 հատ կարմիր, 144 հատ լեղակագոյն, 72 մանիշակագոյն, 36 կանաչ, 12 նարնջագոյն, 4 թուխ և 2 սեւ: Ութսուն հատէ աւելի միջնորդ գոյներ կը գտնենք, ինչպէս՝ վարդագոյն, լիլա, կարմրագոյն, գորշ, ևայլն ևայլն:

Գալով հոտին, հաստատուած է թէ տասը ծաղիկի վրայ հազիւ հատ մը կը գտնուի, որուն հոտը զգալի ըլլայ մեր հոտառութեան զգայարանքին:

Ամէնէն հոտաւէտները ճերմակ ծաղիկներն են, 15⁰/₀, կարմիրները՝ 9⁰/₀, կանաչները՝ 8⁰/₀, մանիշակագոյնները և դեղինները՝ 7⁰/₀, նարնջագոյններն ու թուխները 6⁰/₀, կապոյտները 5⁰/₀ և սեւերը բնաւ:

Ճերմակ ծաղիկները 175 անգամ մեր քիթին հաճելի հոտ ունին և միայն 12 անգամ անհաճոյ հոտ: Կարմիր ծաղիկներու մէջ այս թուանշանները կ'իջնեն 76ի և 9ի. դեղնագոյններուն մէջ 61ի և 4ի. կապոյտներուն մէջ 23ի և 7ի. մանիշակագոյններուն մէջ 17ի և 6ի. կանաչներու մէջ 10ի և 2ի: Ընդհակառակն 2 նարնջագոյն ծաղիկ 31ի վրայ գէշ հոտ մը ունին և բոլոր թխագոյն ծաղիկները գէշ կը հոտին:

Վերջապէս սա ալ դիտուած է որ ընդհանուր գեղեցկութեան տեսակէտով միշտ տեսքով ամէնէն ազուր ծաղիկները չեն որ լաւագոյն հոտերը կ'արձակեն, ճիշդ ինչպէս որ ամէնէն հրաշագեղ թրուշունները չեն որ ամէնէն անուշ կ'երգեն:

ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՐՃԵՑՆԷ՞ ՄԱՐԴՈՑ ԿԵԱՆՔԸ

Մինչև հիմա շատ թեր ու դէմ կարծիքներ յայտնուած են այս խնդրին նկատմամբ առանց զայն վերջնականապէս լուծելու :

Այս մասին սակայն շատ շահեկան վիճակագրութիւն մը եղած է, չափագէտներու, բանաստեղծներու և նկարիչներու հաւասար թիւի մը վրայ :

Չափագէտներէն՝ Լայպնից 70 տարեկան մեռած է, Էօլէր՝ 76 տարեկան, Լակրանտ 77, Լարլաս՝ 78, Պլատոն՝ 82, Նիութըն՝ 85, Արքիմէդէս՝ 86 և Պիւթագորաս՝ 90 : Բանաստեղծներէն ու նկարիչներէն Պինդարոս՝ 80 տարի ապրեցաւ, Սոփոկլէս՝ 90, Եւրիպիտէս՝ 75, Միքէլ-Անճէլօ՝ 90, Լը Թիթիէն՝ 99 :

Գիտութեան մարդոց տարիքին միջինը 79 է. բանաստեղծներուն և նկարիչներուն 80 :

Որչափ ուղեղի աշխատութեան վատնում որ պէտք է քերթուած մը ստեղծելու կամ պատկեր մը գծելու համար և չափական ստեղծութիւն մը կամ աստեղագիտական հաշիւ մը ընելու համար, միեւնո՞յնն է : Ո՛չ, ապահովաբար :

Երկարակեցութեան այս վիճակագրութեան քով կրնանք դնել նաև անոնց ալ անունները որոնք երիտասարդ մեռած են. եթէ Միքէլ-Անճէլօ 90 տարիի հասաւ, անդին Ռաֆաէլ 37 տարեկան մեռաւ. Շէքսպիր և Պայրըն դեռ երիտասարդ մեռան, մինչդեռ Վ. Հիւկօ 83 տարին թեւակոխեց :

— 0 —

ԾԱՌԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Աշխարհի վրայ, գրեթէ ամէն տեղ տարածուած է ծառերու պաշտամունքը : Ինչպէս դիտել կուտայ ժ. Գօնսթանթէն իր Նախնական մարդոց կրօնի խիստ նշանաւոր ուսումնասիրութեան մէջ,

այս պաշտամունքը կը գաննենք արդի բոլոր վայրենի ժողովուրդներու մէջ, ըլլան Ափրիկէի, Ամերիկայի կամ Ովկիանիոյ մէջ, ինչպէս նաև Եւրոպա և Ասիա բնակող բոլոր նախկին բարբարոս ժողովուրդներու քով :

1883ին, երբ Տարվին, Հարաւային Ամերիկան կը հետազօտէր և դէպ ի Պուէնսու-Այրէս կ'ուղղուէր, նշմարեց համրաւատ որ ծառ մը զոր հնդիկները կը պաշտէին իբրև գլխաւոր ներկայացուցիչը իրենց Ուալլիքու կամ Կամալասքուէ աստուծուն որ հողին տակը կը բնակէր: Ծառը կը բարձրանար դաշտին մէջտեղը, որով խիստ հեռուէն ալ կը տեսնուէր: «Հնդիկները, կ'ըսէ Տարվին, զայն տեսածնուն պէս բարձրաձայն աղաղակներով կը յայտնեն իրենց սքանչացումը: Զմեռ ըլլալուն, ծառին տերեւները թափած էին, բայց անոնց տեղ անթիւ անհամար թելեր կախուած էին, որոնց կապուած էին ժողովուրդին բերած նուէրները, հաց, միս, լաթի կտորներ և այլն: Ետ աղքատ հնդիկները, որոնք բան մը չունին նուէր տալու, գրպաննուն թել մը կը հանեն ու կը կապեն ծառին: Էն հարուստները ցորենի և մաթէի ոգի կը լեցնեն ծառին տակ ծակի մը մէջ, ու կը սկսին ծխել, մուխը դէպի ծառը փչելով, ու այնպէս կը հաւատան թէ ասով ամենաքաղցր հաճոյք մը կը պատճառեն Ուալլիքուի:»

Նիկէրի ափունքը, Աշանթիները, դեռ քիչ տարի առաջ ծառերուն, — նուիրական միմոզաներուն — զոհեր կը բերէին, կերակուր կը բերէին և լաթի կտորներ կը կախէին ճիւղերէն: Անցեալ դարուն, Տէմարչէ, իր դէպի Կուինէա ըրած ուղեւորութեան ատեն Տահօմէյի մէջ տեսաւ թէ հիւանդները կը բերէին կը պառկեցնէին ծառերուն տակ անոնցմէ բժշկութիւն սպասելով, և Ռիչարտսըն կը գրէ թէ Պօրնուի մէջ, Զատ լիճի արեւմտակողմը, ծառերը կը

պաշտուին. հինգ վեց ծառ տեսաւ հոն, որոնց կով
ու ոչխար կը գոհէին. մեծ տօնի օրեր, երկրին
իշխանը ամենամեծ հանդէսով պաշտելու կ'երթար
այդ ծառերէն ուրէ մէկը:

Հին հաւատալիքներու նոյն յետամնացութիւնը
կը տեսնուի նաև Պարսկաստանի մէջ: Քրիստոնէու-
թիւնը երկարատե կռիւ մղելու ստիպուեցաւ նման
ծէսերու դէմ: Դ. Դարուն, Օքսէրի շրջակաները
նուիրական ծառ մը կար, որուն վրայ կը կախէին
թշնամիէն կողոպտուած աւարը և այնքան կը յար-
գուէր այդ ծառը որ Քրիստոնէութեան համար ա-
մենամեծ յաղթանակ մը նկատուեցաւ անոր տա-
պալիւր:

Ամէն մարդ գիտէ թէ ի՞նչ աստիճան ջերմ
հաւատք ունէին հին գերմաններն ու սլաւները
կաղնիին նկատմամբ ու ամէնուն ծանօթ է նաև թէ
այս ծառը, և մանաւանդ անոր վրայ բուսնող
մղամուրճը (gwi) սրչափ մեծ պաշտամունքի աւար-
կայ էր հին Գալլիացիներուն մէջ:

Ասիոյ հին կրօնքներուն մէջ ամէնէն շատ պաշ-
տուած ծառն էր Բաղօսներու թղենին:

Հրաշալի բան է այս ծառին տեսքը: «Երբ այս
ծառերէն մէկուն մօտենաս, կը գրէ Ժ. Բօնսիման-
թէն, այնպէս կը կարծես որ իբրև թէ հինգ հա-
րիւր մեթր կամ աւելի իսկ շրջապատ ունեցող ան-
տառի մը մէջ կը մտնես կոր: Իրաւ ալ կը տեսնես
հազարաւոր սիւներ որոնք առաջին ակնարկով նոյն-
չափ ծառեր կ'երևան քեզի, բայց շուտով կը հաս-
կնաս թէ միեւնոյն ծառին իրարու միացած ճիւ-
ղերն են անոնք:

Ծառը, իրաւ ալ հորիզոնական է, և այնպէս
գրեթէ անհունապէս լայնքին կը տարածուի, խիստ
բազմաթիւ և խիստ մեծղի արմատներով կռթնե-
լով հողին, զորս կրնան գեանին գամուած հսկայ
հրէշի մը թաթերուն նմանցնել:

Եւ հաւանաբար իր այս արտասովոր յատկութիւններուն շնորհիւ է որ ասիաքան կամ կրօնական թղենին (ficus religiosa) պուտոտայականութեան մէջ այնքան նշանաւոր դեր մը կը կատարէ : Իմաստութեան ծառն է անիկա, ոչ սկիզբ ոչ ալ վախճան ունեցող ծառը, որու արմատները վերը կը գտնուին, ճիւղերը վարը, որոնց վրայ ամէն մարդ կրնայ հանգչիլ :»

Երբ մեր թուականէն վեց դար առաջ Սաքիա-Մուսի ծնաւ, կ'ըսեն պուտոտայական հէքեաթները, ասիաքայի հրաշալի ճիւղ մը բուսաւ տիեզերքին կեդրոնը : Անոր մայրը, Մաեա, գիշեր մը, վեր վերցուեցաւ իր անկողնէն ու Հիմալայի վրայէն անոյնուելով, դրուեցաւ ծառի մը տակ, որու հոծ տերեւները մինչև հեռուն կը տարածուէին, և երբ թագուհին ճիւղ մը բրցունել ուզեց, ճիւղը ինքնիրենը ծուեցաւ անոր առջև :

Պուտոտայականութեան Հնդկաստանէ վտարուելէն ետքն ալ, ու դեռ մինչև այսօր հոն մնացած է թղենիին պաշտամունքը, սրովհետև ասիաքան մասնաւորապէս Վիշնուի նուիրուած ծառ մըն է. ասկէ զատ այս ծառին պաշտամունքը պուտոտայականութենէն ալ հին է, քանի որ Ռիկ-Վէտայի մէջ, որ մեր թուականէն հազար տարի առաջ գրուած է, ակնարկութիւն կայ «հիւթեղ թուղը կրող ծառ»ին :

Մեր օրերուն, Վիէնայի արուարձաններէն մէկուն մէջ, աշխարհի մէջ հաւանաբար մէկ հատիկ եղող ծաղկեմշակական հաստատութիւն մը կայ, որու նպատակն է տղոց մէջ զարգացնել ծաղիկներու և ծառերու ճաշակը : Մօտ եօթը հարիւր յիսուն աշակերտ հետեւած են այս տարի այդ հաստատութեան դասընթացքներուն և փորձերուն, իրենց ձեռքերով սնկած, խնամած ու մեծցուցած են երկու հազարէ աւելի ծառեր ու ծաղիկներ, և մրցա-

նակներ ալ շահած են անոնք որոնց ածուները ամէնէն աւելի խնամքով նայուած և տուները ամէնէն աւելի գեղեցիկ զարգացած էին :

Սքանչելի գաղափար մը չէ՞, պատանութեան տալ, ուրիշ պաշտամունքի մը չգոյութենէն, գոնէ ծառերուն ու ծաղիկներուն պաշտամունքը :

Շատ հետաքրքրական պիտի ըլլար մեր հայերուս մէջ ալ փնտռել այս հին հաւատալիքին հետքերը : Ո՞վ չգիտեր թէ գաւառներու մէջ խիստ շատ տեղեր անանկ ծառեր կան որոնց շինականը լաթի կտորներ կը կապէ իր հիւանդին բժշկութեանը համար, ու զորս իր ամէնէն սիրած սուրբին չափ կը մեծարէ ու կը պաշտէ :

— 0 —

ԲԺԻՇԿԻ ԱՐԶԵՍՏ ԲՕՐԷԱՅԻ ՄԷՋ

Հարուստ Բօրէայիները պաշտօնական բժիշկներ կը գործածեն, և նոյն իսկ երբեմն Եւրոպացի բժիշկներ ալ, բայց հասարակ ժողովուրդը նախամեծար կը համարի կախարդը, որ հիւանդութիւնը ինչ ալ ըլլայ, չար ոգիի մը կը վերագրէ զայն : Հիւանդութենէ բուժող Բօրէայի մը է՞ն առջի ու է՞ն մեծ փափաքն է նախ հասկնալ թէ ի՞նչ է զինքը շարչարող սատանային սնունդը, ու հետեւաբար շունչը շիտակ կախարդին տունը կ'առնէ ուր կը սորվի թէ փսխելը և ախորժակ չունենալը «Աղօթքներու և խնդիրքներու պղտիկ սատանային գործն է :» Եթէ գլուխը կը ցաւի կոր կամ եթէ զօրաւոր տենդ մը ունի, յանգանքը՝ «Արեւմուտքի մանկամարդ էգ սատանայինն է» :

«Հարաւ-Արեւմուտքի նկարիչներուն սատանան» ալ գլխու ցաւ կուտայ. եթէ ան է քեզ բուժողը, անպատճառ գլուխդ կը դառնայ ու ծայրաստիճան սոկարութեան մէջ կ'իյնաս :

Կան տակաւին «Արեւելքի պղտիկ խեցիներու

սատանան», «Հարաւ-Արեւմուտքի ուտելիքներու սատանան», որոնք քօլէրայի պատճառ կ'ըլլան Լայլն Լայլն :

Բոլոր այս չարագործ էակները կրնան հալածել յարմար գործողութիւններով, ինչպէս արշալոյսէն առաջ պատրաստել աղջուր մը եօթը գաւաթ լեցուն եփած բրինձով, գաւաթ մը գինի աւելցնել, նաև պտուղներ, բանջարեղէններ, և ամէնը մէկ խաշել, յետոյ, այս պատրաստութիւնը ձեռքդ, հիւսիսի ուղղութեամբ քառասունըփնը քայլ առաջ երթալ, երևք անգամ հիւանդութեանդ պատճառ եղող սատանան կանչել իր անունովը և վռնտել զայն :

Ամէն պարագայի մէջ, այս դեղերը շատ աւելի աղէկ են մեծապատիւ պարոն տօքթօրներու տուած դեղերէն, որովհետև եթէ օգուտ չեն ընէր, դոնէ յետոս ալ չեն պատճառեր :

— 0 —

ԾԱՌԵՐՈՒ ՅՇՆԱՄԻՆԵՐԸ

Ի՞նչ, կը կարծէք թէ փայտահատներն են ծառերու ամէնէն մեծ թշնամիները : Բնա՛ւ, դրագէտներն են անոնք, որովհետև գիրքի ու անտրակներու տպագրութեան ծառայող թուղթին մեծագոյն մասը փայտանի թուղթով (matières ligneuses) կը շինուի :

Անգլիական հանդէս մը, The Bystander, շատ շահեկան հաշիւ մը ըրած է այս մասին : Յաջողութիւն գտած ինը վէպ, որոնցմէ 1 միլիօն 600,000 օրինակ տպուած է, կը պահանջեն 22 միլիօն լիպրա թուղթ : Այսչափ թուղթ շինելու համար պէտք է 4,000 ծառ կտրել, խմոր շինել ու կռոցէ (laminage) անցնել : Ըսել է մինակ այս ինը վէպը տպելու համար պզտիկ անտառ մը պէտք է :

Շէքոպիր, ինքը մինակ, մինակ Ամերիկայի մէջ տպուող իր քիւրաւոր օրինակներուն համար

այնչափ թուղթ կը սպառէ ամէն տարի, որչափ որ ծառ կայ ամբողջ Թիւրքիոյի կամ Բառ-Մօնսօյի մէջ :
 Հապա թերթերը :

Ամբողջ անտառներ արմատախիլ ընելու է անոնց թուղթ հասցնելու համար, որովհետեւ գրեթէ միայն ծառերու միջուկով (pulpe) կը շինուին թերթերուն գործածուող թուղթերը : Եւ ամէնէն խօլ երեւակայութիւնը իսկ չի կրնար ըմբռնել այն անլուր, անհաւատալի, ցնորեցուցիչ քանակութիւնը որ պէտք է թերթերու օրական, շաբաթական ու տարեկան սպառումին : Ամէնէն հսկայական պէտքը Միացեալ-Նահանգները ունին . Նիւ-Եօրքի թերթերէն մէկը միայն՝ The Journal 40,000 թոնս թուղթ կը գործածէ, Հերալդ՝ 25,000 և միւսները կը մօտենան ասոնց : Օրական 20,000 Ֆրանքի թուղթ կը սպառէ The Journal և 800,000 օրինակ ծախելու է ամէն օր որպէս զի միմիայն թուղթին դրամը հանէ : Առանց իրենց ծանուցումներուն, Միացեալ-Նահանգներու ոչ մէկ թերթը կրնայ ապրիլ :

— 0 —

ԳԵՏԻՆԻՆ ԱՐԺԷՔԸ ԲԱՐԻՁԻ ՄԷՋ

Հարկահաւաքութեան վարչութիւնը կալուածներու Գիրքը վերնագրով շատ կարեւոր հրատարակութիւն մը ըրաւ այս տարի որ ծայրէ ծայր լեցուն է ճշմարիտ շահեկանութիւն մը ունեցող տեղեկութիւններով :

Իբրեւ հետաքրքրութիւն, մեր Տարեցոյցին համար այդ գիրքէն կը քաղենք հետեւեալ թուանշանները այսօր Բարիզի զանազան թաղերուն մէջ գետինին ունեցած արժէքին վրայ :

Հողի այն պղտիկ մակերեւոյթը որ « քառակուսի մեթր » անունը կը կրէ կայեօն թաղին մէջ կ'արժէ 51 ոսկի . սղութեան գերագոյն սահմանն

է ասիկա : Այդ քառակուսի մեթրը 45 ոսկի միայն կ'արժէ Բալէ-Ռոււայեալ թաղին մէջ, 40 ոսկի Վիվիէն թաղին մէջ, 39 ոսկի Մատրլէնի մէջ, 38 ոսկի Շանգ Էլիզէ և Էթուալ թաղերուն մէջ : Իսկ իր արժէքը մինչև մէկուկէս ոսկի կ'իջնէ Փավէլ թաղին մէջ, 150 դրշ. ի Շարօնի մէջ, 125 դրշ. Մէզօն-Պլանչի մէջ, և 110 դրշ. Սէն-Ֆարժօի մէջ, է՛ն ատան թաղն է աս :

Իսկ ամբողջ Բարիզի համար քառակուսի մեթր գետինին միջին արժէքը 840 դրշ. է :

Տարեցոյցը իր բոլոր ընթերցողներուն գոնէ քանի մը սեօնիւմ հող ունենալ կը մաղթէ այդ կողմերը :

— 0 —

ՊԱՐԱՊ ԽՐԱՏՆԵՐ ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ ՕԳՏԱԿԱՐ ԸԼԼԱԼ

Կատարեալ ու պայծառ լոյս մը կ'ուզէ՞ք ունենալ : Կը բաւէ ձեր քարիւղի կանխեղին ընդունարանին մէջ գնդիկ մը նաֆթալին դնել կամ պարզապէս կտոր մը աղ, միջակ մեծութեամբ կանխեղի մը սուրճի դգալի մը համեմատութեամբ : Կրնաք նաև աղը նետել քարիւղի շիշին մէջ : Այս կերպով հեղուկը աւելի լաւ կը վառի և լոյսը շատ պայծառ կ'ելլայ :

Տանտիկիները կը գանգատին, նաև կազի շիշերուն դիւրաբեկութենէն : Օդը կտոր մը խոնաւ եղածին պէս, նայիս չըթ, շիշը կը ճաթի, կտոր մը պատրոյգը վեր առի՞ր, նորէն չըթ, կը ճաթի, և սակայն ամենադիւրին դարմանը կայ ասոր : Ամանի մը մէջ պաղ ջուր լեցուցէք, դրէք շիշերը մէջը ու դրէք ամանը կրակին վրայ, աւելցնելով նաև կտոր մը խոշոր աղ, և ձգեցէք որ ջուրը եռայ. յետոյ վար առէք և սպասեցէք որ կամաց կամաց պաղի : Այս կերպով, շիշերը գրեթէ անբեկանելի կը դառնան, մանաւանդ եթէ համբերութիւն ունեցաք ջուրը շատ կամաց պաղեցնելու :

ՆԱՐԻՆՁԻՆ ՈՒՍԱԿԱՆԸ

Բազմաթիւ են նարինջին օգուտները և այլազան: Երբ փողացաւէ (angine) բռնուիք, առաջին նշաններէն իսկ, նարինջի ջուրով ցողուեցէք բերաննիդ. երբ տղայ է բռնուողը, նարինջի ջուրի մէջ թաթխուած վաթկայի կտորով մը լուացէք կոկորդը:

Իւզոտ դեղեր, օրինակ Մօրիւ ձկան իւղ խմած ատեննիդ, գաւաթին մէջ նարինջ մը քամեցէք, վրան լեցուցէք իւղը, յետոյ վրան նորէն կտոր մը նարինջ քամեցէք ու կուլ տուէք առանց շունչ առնելու. իւղին համը չէք առնել անգամ:

Երբ լինդերը բորբոքին, բաւական է զանոնք նարինջի ջուրով շփել:

Քամօմիլի լուծումի մը վրայ աւելցուած կտոր մը նարինջի ջուր մէկ հատիկ դարմանն է ստամոքսի ցաւերուն. թէյի լուծումի մը վրայ նարինջի ջուրը Լօքման բժիշկն է լեարդի հիւանդութիւններուն:

Մեղանով կամ տան գործերով աղտոտած ձեռք մը նարինջի ջուրով լուալէն աւելի մաքրող բան չկայ. նոյնպէս փոշիէն կամ անձրեւէն աղտոտած և կամ արեւէն գունաթափուած յարդէ գլխարկը ձեռի ձերմակ կ'ընէ նարինջի ջուրով լուալը:

Սեղմող (astringent) է և կ'անցնէ ձեռքի՝ ճաթուտութիւնները, կարմրութիւնները կ'անհետացնէ, մորթը կ'աղուորցնէ և շրթունքներուն փայլ կուտայ:

Ու մտածել թէ տակաւին նարինջ չի սիրողներ ալ կան:

— 0 —

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ

Գիտէ՞ք թէ ինչ կը կոչուէր աշխարհի առաջին դրամատունը: Խոշոր հաստատութիւն մըն էր այս, որ Քրիստոսէ 600 տարի առաջ կը գործէր. Բաբելոնի մէջ «Էճիպի և Բնկ.» անուանով: Հիմնարկու-

Թիւնը, ինչպէս կը տեսնէք, չափազանց հին է, ինչպէս կը ցուցնեն նաև Միջագետքի մէջ գտնուած արձանագրութիւններով լեցուն աղիւսները: Այս աղիւսներու վրայի գիրերը սրածայր գործիքով փորուած են և կրկին եփուած փուռին մէջ՝ տառերը անջնջելի մնալու համար: Ասոնք շատ թանկագին օժանդակներ եղան ասորաբաններու ձեռքը Քրիստոսէ 700 տարի առաջ ապրող Բաբելացիներու և Նինուէացիներու կեանքը ուսումնասիրելու համար: Այս ձեռագիրներու մէջ անանկներ կան որոնք ճշմարիտ փոխգիրեր են, հրամանի մուրհակներ, ամէն տեսակ տեսօրին, անուանական, կրողին օպլիկասիօններ, ընթացիկ հաշիւներ եւ այլն:



ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԻՆ

Իմաստասիրար

Ա. Բ. Գ. — Սկիզբը և վերջը շատ մը բանգէտներու գիտութեան, որոնք շատ բաներ գիտնալ կը կարծուին՝ բնաւ բան չգիտցողներու աչքին:

Ադամ. — Մեզի ծանօթ առաջին ժօրժ Տանտէնը:

Արար. — Աղէկը կայ, գէշը կայ, ընտիրը կայ. — Գէշ արարք մը ըրած կ'ըլլանք, երբ մեր

դրացուհին բանբասենք, աղէկ action մը գործած կ'ըլլանք, երբ աղքատի մը տասը փարա տանք, բայց ամէնէն ընտիր actionը նորէն Քրէստի Ծօնսիւնի ազսիօնն է :

ԱկռաՖ. — Արծաթազօծ պղտիկ գուռէներ, որ կը գործածուին գորսէի մը երկու կողմերը իրարու վրայ բերելու համար : — Ապահով բանալիներ արկղներու, որոնք երբեմն գանձ կը պարունակեն երբեմն ալ ոսկոր :

Ասեղ. — Աղքատ և պատուաւոր աղջիկներու ապրուստի միջոցը : — Երբէք չխաբող ջերմաչափ, քանի որ այս պղտիկ գործիքը բանելէ դադրելուն պէս, շատ անդամ պարկեշտութիւնն ալ թելով մը միայն կ'ցուած կ'ըլլայ :

Ալպօմ. — Չարչարանքի հինաւուրց գործիք մը, որ բարեբաղդաբար մոռցուած է այս օրուան սալօններուն մէջ, թէև գաւառներու մէջ շատ տեղեր գոյութիւն ունի :

Անկողնախորտ. — Ննջասենեկին պատին մէջ ներս մտած տեղ մը, ուր առանց արտօնագրի՝ ոչ մէկ որսորդ կրնայ որսալ : Հոն մաքսատէրը սամուսինն է և կրնայ՝ իր արգելքին հակառակ հոն որսացող որսորդը զարնել :

Ալիանա. — Չոյգ մը ամուսինները իրարու կապող շղթային առաջին օղակը : Ատենօք կարգուողները անուննին փորագրել կուտային մէջը, մինչ անտեսանելի ձեռք մը կ'աւելցնէր. ցնան դասապարտուած : Այսօր, այդ ախուր բառերուն տեղը սա՛ զուարթ բառերը կը դրուին՝ միշտ անտեսանելի ոգիին կողմէ. — «Անուսնաշուծուեցան 19...» : Թուականին տեղը բայ կը ձգուի, որովհետև այս բանը ամուսնութեան օրն իսկ գուշակելը շատ դժուար է :

Ամսական. — Ոչնչութիւն մը՝ աւնողին համար և մեծագին գումար մը՝ տուողին համար :

Ասեցոք. — Անդեային կողմէ ներկային երեւին զարնուած ապտակ մը, զոր իր կարգին պիտի վերադարձնէ տոկոսով:

Ագահ. — Ապուշ մը, որ անօթութենէն կը մեռնի՝ չմեռնելու համար անօթի:

Աղմուկ. — Բան մը, զոր շատ մը երաժիշտներ ներդաշնակութիւն կ'անուանեն:

Անբժուօթիւն. — Պարզամտութիւնը կրնայ ապուշութիւն նկատուիլ, միամտութիւնը կրնայ տգիտութիւն համարուիլ, սակայն անբժութիւնը՝ բարոյական բոլոր ճիրքերուն ամէնէն գեղեցիկն է ու... թանկագինը նաև, քանի որ անթիխայի կարգը անցած է:

Ծանօթ. — Անբժութիւնը կը վերջանայ միշտ այն ատեն, երբ աղջիկ մը կը սկսի շիկնիլ:

Ամուրի. — Ինքզինքը խելացի կարծող անխելք մը, որ երկոտասնեակ մը շղթաներ ունի կռնակը, ինչու որ չէ ուզած անգամ մը միայն շղթայուիլ:

Անուանի. — Մարդ մը որ կենդանութեանը ատեն կը քարկոծուի ճիշդ անո՛նց կողմէ, որոնք մեռնելէն վերջը իր արձանը պիտի կանգնեն:

Արարողութիւն (յուդարկաւորութեան). — Մեծարանքներ որ կ'ըլլան մեռելի մը, կենդանիներու Եսասիրութիւնը գգուելու համար:

Անարասութիւն. — Յատկութիւն մը, զոր էրիկ մը՝ ամէնէն աւելի կ'ուզէ գտնել իր կնոջ քով և զոր ամէնէն առաջ ինք կորսնցնել կուտայ անոր:

Ակուայ. — Բերանին կահկարասիները:

Ամուսնալուծում. — Բան մը, որուն ո՛րչափ դիւրութիւններ ընծայենք, նոյնչափ կը պակսի:

Աղջիկ. — Վէպի մը յառաջաբանը, ուրկէ շատեր համ մը չեն առներ է՛ն առաջ:

Անկեղծութիւն. — Հիանալի բարեմասնութիւն մը, երբ զգուշութեամբ գործածելու ըլլանք զայն.

— Հակառակ պարագային՝ թերութիւններուն ամէնէն գէշը կը դառնայ :

Անասօթ . — Տիտղոս մը՝ որուն շատեր արժանի են իրաւամբ և զոր համեստարար ո՛չ ոք կ'ուզէ գործածել այցաքարտին վրայ :

Անկողմնակալ . — Ձեր դատը ձեզի վասարկցրնող դատաւորը :

Ազգապղծութիւն . — Սիրել բայը՝ ընտանեօք խոնարհուած :

Անսարբերութիւն . — Միակ ոճիրը, զոր կիները չեն ներեր :

Աննշան . — Մարդ մը, որուն համար ոչինչ կ'ըսուի, ո՛չ գէշ, ո՛չ ալ աղէկ :

Անսանելի . — Այն մարդը որ կը պահանջէ անպատճառ թէ կին մը պէտք է բացարձակապէս հաւատարիմ ըլլայ իրեն :

Անօգուտ . — Աւելորդ կարասի, որ պարսպ տեղ՝ տեղ բռնելու կը ծառայէ :

Անօրոտ . — Մարդ մը որ կեանքին կէտը կ'անցրնէ ընելիքին մտաին վարանելով և միւս կէտը՝ զղջալով թէ ինչո՛ւ չըրաւ այն բանը զոր պիտի ընէր :

Արդարութիւն . — Արդարութիւնը՝ միշտ արդար կ'ըլլայ, թէև շատ անգամ չափազանց քմայքոտ : Գիշերանց մէկու մը տունը կը մտնէք և մօրդուն կնիկը կը գողնաք, մարդը քանի մը ապտակ կ'իջեցնէ ձեր երեսին : Բայց, փորձեցէ՛ք նայինք անգամ մը մարդուն շնիկը գողնալ, շիտակ բանալ կ'երթաք :

Առասպել . — Սուտ մը, որ շատ անգամ պատմութենէն աւելի ճիշդ կ'ըլլայ :

Անկողին . — Տեղ մը, ուր կը մտնենք հանգչելու համար, և ուր շատ անգամ ամէնէն աւելի կը յոգնինք :

Անիկա . — Կո՛ւտք մը, կուտքէ աւելին՝ հերոս մը, հերոսէ աւելին՝ մարդ մը, մինչև այն օրը

որ սիրէ զայն : — Սիրելէն դադրելէ վերջ՝ մեծա-
գոյն անպիտանը անոր աչքին :

Արհեստ . — Արուեստին հակոսանեան :

Աղսոս խօսքեր . — Ասեանօք կ'ամչնային ասոնցմէ ,
հիմա կիները խնդալով՝ մտիկ կ'ընեն : Յառաջդի-
մութեան նշան է արդեօք :

Այո . — Բառ մը զոր կիները երբէք չեն ար-
տասաներ , բայց հասկցողները կը հասկնան :

Առաքինութիւն . — Պառաւ աղջիկ մը , որուն
խօսքը չըլլար ա՛լ :

Այրի . — Պայմանաժամը լրացուցած բանտար-
կեալ մը :

Ապրիլ . — Հիւանդութիւն մը , ուրկէ չափա-
զանց կը տառապինք և որ միշտ մահացու է :

Քարեկամ . — Մէկը որ քովերնիդ կը գանուի
ձեր գէշ կամ աղէկ օրերուն : Մա՛նաւանդ աղէկ
օրերուն :

Բաւական . — Եռաւանկ բառ մը , զոր կին
մը չարտասաներ երբէք , երբ խնդիրը իր հաճոյք-
ներուն վրայ է :

Բաղնիք . — Բաղնիք երթալու համար տանէն
դուրս ելլող կիներուն մեծ մասը ընդհանրապէս բաղ-
նիքէն ասորքեր տեսլ կերթայ . — Ճշմարտապէս բաղ-
նիք գայող կինը ապահովաբար ամէնէն մաքուրն է :

Բարեբաւութիւն . — Աշխարհիս վրայ գտնուած
բոլոր բաներէն ամէնէն աւելի շնորհ հինցողը :

Բարեգործ . — Մարդ մը որ բոլոր լաւ ձիրքերը
իր մէջ կ'ամբողջացնէ . . առժամապէս :

Բարութիւն . — Սիրտի հիւանդութիւն մը ,
ուրկէ կը բժշկուինք կամայ կամայ՝ քանի՛ տա-
րիքնիս առնենք :

Բնաւորութիւն . — Ինչ որ մարդ մը կը զատէ
միւսէն : — Ո՛չ ոք զայն կը յայտնէ ինչպէս որ է ,
այլ միշտ ինչպէս որ կ'ուզէր ըլլալ :

Բաղձալի. — Կնոջ մը մեծագոյն արժանիքը :

Բառարան. — Հաւաքածոյ բառերու , որոնք իրարու քով դրուած ըլլալուն համար կը զուան և կը ճաթին ձանձրոյթէ : — Անկարելի է հաճելի բառարան մը շինել :

Բժիշկ. — Մարդ մը , ուրկէ կիշեօթիւնի պաշտօնեաները կը նախանձին , որովհետեւ անիկա ունի վկայական մը , որու տրամադրութեանը համեմատ կրնայ շատ մը մարդիկ անդիւ աշխարհ դրկել , մինչդեռ իրենք հազիւ տարին քանի մը հատ այս բաղդին կ'արժանացնեն :

Բանբասանք. — Անմեղ զբօսանք մը , առանց որուն ա՛լ աւելի պիտի ձանձրանայինք :

Բանագողութիւն . — Սովորական քրիշգ մը , որ մեծապէս կը ծառայէ գրողները չափէն աւելի չյոգնեցնելու , երբ անդին ուրիշ գրող մը միեւնոյն բանը ըսելու համար յոգներ է արդէն :

Բրօժեւոր. — Մէկը որ երբեմն դաս կուտայ , բայց ամսականը միշտ կ'առնէ :

Բառասի. — Ինչո՞ւ արդեօք այս անունը սրբուած է թատրոնի մը ամէնէն գէշ տեղին : — Թերեւս անո՛ր համար որ հոն գտնուող ալքատ մարդիկ երանելի մարդոց պէս կը զուարճանան :

Փեղեցկութիւն. — Պարկեշտ կիներու պերճանքը , իսկ միւսներուն՝ ապրուստի միջոցը :

Քերեզմանասուն. — Հանգստավայր մը , ուրկէ կը սկսի ճշմարիտ հաւասարութիւնը :

Գորսե. — Պզտիկ կարասիապահ մը , ուր կին մը միմիայն իր կարասիները կրնայ պահել :

Գիտուն. — Մարդ մը որ խիստ շատ աշխատած և սովրած է վերջապէս թէ՛ տակաւին խիստ շատ բաներ կան , զորս չի գիտեր :

Քերեզման. — Տեղ մը ուր կ'երթանք ընդհանրապէս , ճիշդ ա՛յն ատեն , երբ կեանքի դժուար

բութիւններուն յաղթելէ վերջ, կը կարծենք վերջապէս մօտեցած ըլլալ երջանկութեան :

Գող. — Մարդ մը, որ գտածը կ'առնէ :

Գիշեր հիմենեան. — Սկիզբ մը և վերջ մը :

Գիշերօթիկ վարժարան. — Տեղ մը, ուր աղջիկները կը սովորին անա՛նկ բաներ, զորս պարտէին սովորիլ և անա՛նկ ալ բաներ, զորս պարտ էին չսովորիլ :

Պրաւաճեք. — Մարդ մը որ իր և ուրիշներուն դրամները կը վարձէ կարելի եղածին չափ սուղ գինով : Թէ ի՛նչ է տարբերութիւնը վաշխատուին և դրամատիրոջ . . . դժուարինս խնդրեցեր :

Դահիճ. — Փիլիսոփայ մը, որ կեանքին կարեւորութիւն չի տար, — մա՛նաւանդ ուրիշներու կեանքին :

Դերասան. — Մարդ մը որ կ'աշխատի շարունակ բնոյթ փոխել և բնականօրէն ըսել ի՛նչ որ ուրիշ մը մտածեր է :

Դրամօժիտ. — Տուգանք՝ զոր հայր մը հաճոյքով կը վճարէ ա՛յն մարդուն, որ սիրելի աղջիկը կ'առնէ իր ձեռքէն :

Դպրոցական. — Տղայ մը որ կ'աշխատի սովորելու համար թէ իր հայրիկը տգէտ հերիճին մէկն է :

Դժբաղդ. — Խեղճ մարդ մը, ա՛յն աստիճան տարափոխիկ հիւանդութենէ մը վարակուած կարծես, որ ամէն մարդ կը լքէ զայն :

Դուն. — Սքանչելի բառ մը, երբ արտասանողը աղուոր կին մըն է :

Դժոխք. — Հնոց մը, ուր շատերը պիտի այրին. այս բանին միայն բարիները կը հաւատան :

Երջանկութիւն. — Անըջա՛նք, զոր կ'երազենք շարունակ ձեռք ձգել, երբ քովերնիս իսկ ըլլայ ան և որուն գոյութիւնը կը հասկնանք ա՛յն ատեն :

միայն՝ երբ ձեռուընէս փախած է : — Սիրելի բարեկամս Ղազարոս, որ ապուշ մը չէ, կ'ըսէ թէ՛ երջանկութիւնը կը կայանայ ունենալու մէջ բաւականաչափ առողջութիւն՝ հարստութիւնը վայելելու համար և բաւականաչափ ալ հարստութիւն՝ առողջութիւնը վայելելու համար :

Երգչուհի . — Կին մը որ կը պօռայ, — երբեմն աղուոր կը պօռայ :

Եսասիրութիւն . — Ինքզինքին համար տածուած չափազանց սէր, որ յաճախ մրցակից չունենար :

Եսասէր . — Մարդ մը, որ նախ ինքզինքը կը խորհի, յետոյ՝ ինքզինքը, այնուհետև՝ ինքզինքը : Պատրաստ է մատներուն ծայրը տաքցնելու համար տուն մը վառել ամբողջ, բաւական է որ տունը իրը չըլլայ :

Երգիծաբան . — Մարդ մը որ կը ձանձրանայ և ուրիշները կը ձանձրացնէ, գուցէ անո՛ր համար որ . . . սիրտի հիւանդութիւն մը ունի :

Ենթադրութիւն . — Եթէ կինս Ղազարոսը իրօք սիրած ըլլար, անշուշտ չպիտի ըսէր թէ տգեղ ու ապուշ մէկն է. ասիկա յայտնի՛ է :

Երիտասարդութիւն . — Երջանկութիւն մը, որ միայն ծերութեան ատենը կը գնահատուի :

Ես . — Ամենայն ի՛նչ : Մարդ ո՛րչափ պզտիկ ըլլայ, իր ետը ա՛յնչափ մեծ կ'ըլլայ :

Երածեսութիւն . — Բոլոր արուեստներուն առաջինը : Անվիճելի է այս, քանի որ բոլոր երածիչտները կը հաստատեն :

Երեսուն տարու . — Cercle vicieux մը, ուր կիները դժուարաւ կը հաճին մտնել, բայց եթէ անգամ մը մտնեն, ա՛լ երբէք չեն հաճիր անկէ դուրս ելլել :

Զգուանք . — Զգացում մը զոր ամէն կին կը զգայ ատենօք իր սիրած մարդուն հանդէպ, երբ

զայն տեսնելու ըլլայ ուրիշ սիրուհի մը հետ, որ զուրկ է ամէն վայելչութենէ :

Ծանօթ. — Նոր սիրուհին միշտ վայելչութենէ զուրկ եղած կ'ըլլայ :

Զգեստ. — Զգեստին ազդեցութիւնը շատ մեծ էր ատենօք, բայց այն օրէն ի վեր որ Հաճի Շահին հարիւր յիսուն դրուշի զգեստ կը կարէ, այս թրիւզին ալ յօտան անցաւ. — մե՛ղք :

Զղջում. — Տեսակ մը տկարութիւն, զոր մեր գործած յանցանքները կը պատճառեն մեզի ճի՛շտ այն ատեն միայն, երբ այդ յանցանքները չենք կրնար կրկնել ա՛լ :

Զգայնութիւն. — Միտքի և հոգիի բարեմասնութիւն մը, որ կը թոյլատրէ ձեզի դժբաղդ ըլլալ բանի մը համար, որ բացարձակապէս անտարբեր կը ձգէ միւս բոլոր մահկանացուները :

Զարմանք. — Զարմանք կայ, զարմանք ալ :
Օրինակի համար .

Շուշանին հետ կը կարգուիմ, կարգուելնէս շարաթ մը վերջ իր մէկ անժանօթ հօրեղբայրը կը ձօղի և տասը հազար ոսկի կը ժառանգենք : — Ու կը զարմանամ, ինչու որ չէի գիտեր թէ կինս հօրեղբայր մը ունէր, թէ այդ հօրեղբայրը այսչափ հարուստ էր և թէ իմ կինս էր անոր ժառանգորդը :
Երկրորդ օրինակ .

Ք*** ամուսնութենէն վեց ամիս վերջը կ'իմանայ թէ կինը՝ որ հինգ օխա նարնջածաղիկով մտած էր իր թեւը, երկուօրեակ մը ունի եղեր Պարտիզակ՝ ստնտուի մը քով : Զարմանք... բայց խառնջինէն նուազ հաճելի զարմանք մը անշուշտ :

Ընկեր. — Գործի մէջ՝ թշնամի մը, զոր թերեւս պիտի սիրէինք, եթէ պէտք չունենայինք իրեն : — Կեանքի մէջ՝ ընկեր կը նշանակէ ընկեր և ո՛չ ուրիշ բան : — Երկու ընկեր միեւնոյն թատրոնը կը

խաղան, միեւնոյն թատերաբեմին վրայ կ'աշխատին, միեւնոյն սենեակը կը հագուին, միեւնոյն սենեակը կը պառկին և նորէն ընկե՛ր են իրարու, բայց ո՛չ բարեկամ:

Ընդարձակ. — Մեր բոլոր ծրագիրները, միայն մեր գործերն են որ ընդարձակ չեն:

Փաստական գործակալ. — Մարդ մը որ դերասանի առեւտուրը կ'ընէ: Ունի՞ իբր պատրաստ ապրանք՝ սիրահարներ, պառիզոններ, թէնորներ, սիրուհիներ, զորս կը զրկէ գաւառ և օտար երկիրներ, իրենց ճի՛շդ գինով և առանց երաշխաւորութեան:

Թեկնածու. — Մարդ մը որ այսօր հլու է և վաղը գլուխ պիտի բռնէ:

Թնդանօր. — Դատաւոր մը, զոր կարեւոր խնդիրներու մէջ տէրութիւնները մէջտեղ կը հանեն և որուն բերնէն դուրս կ'ելլէ ճշմարիտ պերճախօսութիւնը:

Փամանակակից. — Այսպէս կը կոչուին այն խիստ բարի մարդիկը, որոնք ձեզ շատ աւելի պիտի սիրէին, եթէ մեռած ըլլայիք:

Փամանակաւ. — Անցած ժամանակը. — երբէք ասոր խօսքը մի՛ ընէք, ապա թէ ոչ թերեւս չհաւատան ձեր երիտասարդ ըլլալուն և կարծեն թէ ծերացած էք:

Ձեզմանք. — Մեր բոլոր գործերուն ձանձրացուցիչօրէն անտանելի վկան. — Դադանի դատարան մը որ միշտ նիստ գումարած է մեր ներսիդին և զոր շէն կրնար ամենեւին խաբել, ապականել կամ կաշտակել:

Խնայասէր. — Շուայր և խնայասէրը՝ երկուքն ալ կը յառաջանան դէպի միեւնոյն նպատակը, որ

է բարիք ընել մարդոց, մէկը մեռնելէն առաջ, իսկ միւսը մեռնելէն վերջը:

Խնայասիրութիւն . — Աղուոր յատկութիւն մը որ միայն աղքատին քովը կրնայ գոյութեան իրաւունք ունենալ, քանի որ հարուստ խնայասէրը սարսափելի ագահ մըն է:

Խոստում . — Ամէն մարդ կ'ընէ և ո՛չ ոք կը բռնէ:

Խուլ . — Պակասաւոր մէկը, զոր նուազ պիտի մեղքնայինք անշուշտ, եթէ խորհելու ըլլայինք անգամ մը բոլոր այն ապուշութիւններուն զորս չի լսեր (Տե՛ս Կոյր):

Խոստովանիլ . — Բայ մը, զոր կիները երբեք իրենց էրիկներուն առջև չեն խոնարհեր պէտք եղած կերպով:

Խօլաբար . — Մակբայ մը, որ միշտ սիրոյ կ'ընկերանայ: Մարդ երբ դադրի խօլաբար սիրելէ դադրած կ'ըլլայ նաև սիրելէ:

Շննդաբերութիւն . — Արարք ինչ, որով աշխարհ կուգայ պզտիկ մէկը կամ մէկուհի մը: Կինը կը տառապի, էրիկը կը յուսահատի, և սակայն շատ անգամ մարդուկը իր կնոջ ցաւերուն պատճառ չէ:

Շուկ . — Մարմնին այն մասը, զոր կը գործածենք գործի մը կատարը հասնելու համար:

Շիժեռնակ . — Առանց անցադիրի ճամբորդ մը:

Շրագիր . — Այն բանը զոր մտադիր կ'ըլլանք ի մօտոյ ընել և զոր երբէք չենք ընել: Ամէն մարդ անպատճառ ծրագիրներ ունի շինած, մանաւանդ անիկա որ կ'ըսէ ամէն առթիւ . — Երբէք ծրագիր չեմ շինել:

Շիժաղելի . — Յանցանք մը չէ՛, մոլութիւն մը չէ՛, ոճիր մը չէ՛, այլ շատ աւելի գէշ բան մըն է ամէնուն աչքին:

Պարողութիւն . — Բան մը զոր քիչ անգամ կը պահանջեն պաշտօն փնտռող անձէ մը :

Կիրակի . — Օր հանգստեան շատ մը մարդոց համար , որոնք շաբթու մէջ ոչինչ ըրած են :

Կին . — Խեղացի էակ մը , որ միշտ կը ջանայ անխելք երեւիլ : Ատենօք սպասուհի , այսօր տիրուհի :

Կին (անպարկեց) . — Իմաստասէր մը ըսած է թէ՛ անպարկեշտ կինը վարդ մըն է , որուն մէն մի թերթիկները առած տարած են սիրողները . — Ի՞նչ կը մնայ անդին . . . փուշերը :

Կին (օրինաւոր) . — Կին մը որ հնազանդութիւն ուխտած է էրիկմարդու մը և գիտէ միշտ այդ էրիկմարդը իրեն հնազանդեցնել :

Կարելորութիւն սալ ինֆզինֆին . — Տե՛ս Ապուշոթիւն :

Կոյր . — Պակասաւոր մէկը , զոր նուազ պիտի մեղքնայինք , եթէ անգամ մը խորհէինք բոլոր այն ազատութիւններուն , զորս անիկա չի տեսներ : (Տե՛ս Խոշ) :

Կոյս . — Chrysalide մը , որ թիթեռնիկ ըլլալ կ'ուզէ :

Հումերոս . — Հելլէն բանաստեղծ մը , բանաստեղծներու ամէնէն արտասովորը և ամէնէն սքանչելին , քանի որ երբէ՛ք գոյութիւն չէ ունեցած և զոյգ մը անզուգական գլուխ-գործոցներ ձգած է :

Հորիզոնականուհի . — Թեթեւաբարոյ կին , որ իր անունը ստացած է սովորաբար իր ունեցած դիրքէն :

Հայրիկ . — Առաջին սուտը զոր ոմանք կը սովրեցնեն պզտիկներուն :

Հարցաֆնութիւն . — Չարչարանք մը , որուն կ'ենթարկէ ամուսինը իր կինը , երբ ասոր մէկ սուտը բռնելու ըլլայ .

— Ո՞ւր կ'երթաս կոր ամէն օր . . . :

== Գուզինիս :

— Գուզինդ վեց ամիսէ ի վեր մեռած է :

Հանում . — Հանումը որ թուարանութեան մէջ երկրորդ կանոնն է, առեւտուրի մէջ առաջին կանոնը կը դառնայ : Եթէ չէք հաւատար հարցուցէք՝ գեաիեներու և խարդախ սնանկներու :

Համակրութիւն . — Զգացում մը զոր կ'ունենանք՝ ատենօք մեր սիրած մէկ կնոջ հանգէպ, երբ ալ չենք սիրեր զայն :

Հոգեվարժ . — Տռամի մը վերջին վարսագոյրը :

Հոգի . — Պատրանք մը, որ անշուշտ կրնայ մխիթարութիւն մը ըլլալ :

Համբոյր . — Ծնորն մը, որ ոչինչ կ'արժէ տուողին համար և որուն գինը սակայն շատ սուղի կը նստի յաճախ :

Համբոյր յուղայական . — Այն համբոյրը, զոր կը փոխանակենք բարեկամներու և ազգականներու միջև :

Հովիւ . — Ոտանաւորի մէջ սիրուն պարոն մը, արձակի մէջ՝ փխս հերիճ մը :

Հովուհի . — Idem.

Հանելուկ . — Կնոջ մը գլուխը :

Հպարտութիւն . — Ծիծաղելիութիւն մը հարուստին քով, որ կրնայ սակայն ձիրք մը դառնալ աղքատին համար :

Հանճար . — Հոգեկան կարողութիւն մը, որ նոր գաղափարներ կը գտնէ կամ կը ստեղծէ . — Հանճարը մարդս ամէն տեղ կը տանի, նոյն իսկ հիւանդանոց :

Հայլայժ . — Անգլիերէն բառ մը, որուն հայերէնը չկայ :

Հաւասարութիւն (ամուսնական) . — Հին բառ մը, հիմա անգործածելի :

Պանձրոյթ . — Սիրահարներու մեծագոյն սպա-
սարկուն : — Այն ամուսինը որ կը թողու կինը
ձանձրանալ՝ շատ մօտ է խաբուելու , և անանկ
մէկու մը կողմէ , որ արժանի չէ ակնոցին սպա-
կիներն իսկ մաքրելու :

Չրի . — Աշխարհիս ամէնէն գեղեցիկ բանը :

Ճիլվի . — (Այս բառին հայերէնը չկայ , որով-
հետե նախնիք չէին գործածեր զայն) :

Սիրուն սրունք մը ունեցող կին մը՝ երբ սի-
րողին առջեւը ծնրակապը դրած ատենը ըսէ .

— «Մի՛ նայիր» , — ինչ որ բնականաբար նա-
յելու բաղձանքը կը ներշնչէ դիմացինին — *ճիլվի* մը
ըրած կ'ըլլայ :

Ծանօթ . — Եթե արուևիք աղուոր չե , եղած
*ճիլվի*ն *ճիլվի* եղած չըլլար :

Բ. [Ծանօթ . — Այն կիւնը որ գիտե թե աղուոր
արուևի մը չունի , ծնրակապ աչ չգործածեր :

Ճաշակ . — Աշխարհիս բոլոր բաներուն մէջ՝
ամէնէն դիւրաւ հասկնալի և ամէնէն դժուարա-
հասկնալի բանը . — սպահովաբար այնչափ աղուոր
բան մը չպիտի ըլլար , եթէ առաջին դէմերնիս ել-
լողը կարենար բացատրել զայն :

Ծանօթ . — «Ճաշակ Ոսկեդէն Դպրութեան»ը . . .
աննաշակ բան մըն է :

Ճումարսու թիւն . — Դիցաբանական աստուածու-
հի մը որ մայրն է Առաքինութեան : Նկարիչները
ընդհանրապէս մերկ ու . . . անվարտի կը ներկայա-
ցնեն զայն :

Ճոգապահութիւն . — Բարեմասնութիւն մը ,
զոր կը փնտռենք՝ չորս հարիւր զրուշ վաստկող
պաշտօնեային քով , բայց ո՛չ երբէք՝ հարիւր ոսկի
չահողին քովը :

Մերձանայիութիւն . — Յատկութիւն մը որ

յաճախ կը գտնուի ատենապետի մը քով, սակայն ո՛չ երբէք ատենադպիրի մը քով :

Միաձայնութիւն. — Հազուադիւտ ապրանք՝ երաժշտախումբերու և ընտանիքներու մէջ :

Մարմարիոն. — Շատ յարգէ ինկած է ա՛յն օրէն ի վեր, որ բանաստեղծները սկսած են իրենց հերոսահիներուն կուրծքերը և ուսերը ասով շինել :

Մարդակերութիւն. — Իր ընկերը սիրելու տեսակ մը եղանակ :

Միականի. — Մարդ մը որ ամէն բանի վրայ՝ գէշ կամ աղէկ՝ մէկ աչքով կը նայի :

Մնջկասակ. — Սիրոյ մէջ գտնուած ամէնէն գեղեցիկ բանը :

Մեկը. — Շատեր « բա՛ն » մըն են, բայց քիչեր՝ « մէկը » :

Յափօսակիչ. — Մէկը՝ որ կին մը և սիրուհի մը ունի միանգամայն և չուզեր որ երբէք կինը՝ հօրեղբորդաւակը Յակոբիկը տունը ընդունի և սիրուհին՝ իր բարեկամը Պօղոսիկին հետ տեսնուի :

Յաւիտեանականութիւն. — Անորոշ ժամանակամիջոց մը : — Հի՛նգ վայրկեան՝ եթէ սիրուած կնոջ մը կը սպասենք :

Յաւակնոս. — Ապուշ մը, որ մեծ պատիժի մը արժանի չէ, քանի որ ո՛չ մէկը խաբած ունի :

Նուեր. — Պզտիկ նուէրները բարեկամութիւնը հաստատ կը պահեն, իսկ մեծ նուէրները՝ սէրը :

Նե. — Նախ՝ հրեշտակ մը, բայց յետոյ՝ սատանայ մը շատ անգամ :

Նպարավաճառ. — Մարդ մը որ շատ քիչ անգամ հմայիչ փեսացու մը կ'ըլլայ : Սակայն, նպարավաճառ էրիկ մը ունեցող կինը գոնէ կրնայ վստահ ըլլալ թէ երբէք անօթի չպիտի մնայ :

Նախանձոս. — Խեղճ մարդ մը, որ կը փնտռէ հետք մը, զոր կը փափաքի չգտնել :

Շեռս. — Խօսքին ու երգին հոգին : Մեր սպասուհին Պարտիզակցիի շեշտը ունի, Յընտրգլեան Արմենակը ձայնին մէջ հմայիչ շեշտ մը ունի, Մնակեանը՝ լալկան շեշտ մը, իսկ սուտ խօսող փաստաբանը՝ ճշմարտութեան շեշտ մը :

Շամբանիա . — 108 դրուշ՝ շատ մը տուներ . 17 դրուշ՝ պախաշին խանութը :

Շնորհիվութիւն. — Արտաքին ցոյց մը, զոր կը խնդրուի չչփոթել պարկեշտութեան հետ :

Շռայլութիւն . — Բնաւորութիւնը ա՛յն մարդուն, որ հարստութիւնը կը վատնէ խօլաբար : — Էրիկ մարդոց շռայլութիւնները կիներու հարստութիւնը կը կազմեն :

Շռայլ . — Վարժապետս կ'ըսէր թէ՛ շռայլը ա՛յն մարդն է որ ցորեկ ատեն լոյս կը վառէ և գիշերը՝ մութը կը նստի, ինչու որ լամբարին մէջ քարիւղ չէ մնացած :

Պրդեգրութիւն. — Գործողութիւն մը, որ շատ անգամ սիրոյ ու դիպուածին սխալները կը սրբագրէ :

Ուղեղ . — Ամէն բան հո՛ն է :

Չափահաս . — Մէկը որ ա՛լ խելացի ըլլալու կատարեալ իրաւունքը ունի, սակայն յաճախ մէկդի կը դնէ իր այս իրաւունքը :

Չափազանցել . — Բայ որ շատ անգամ կը գործածուի, երբ խնդիրը բարեկամ մը գովելու վրայ ըլլայ :

Պատանեկութիւն . — Տարիք մը, որ մանկութեան կը յաջորդէ և որ յաճախ ծերութեան յառաջաբանը կ'ըլլայ :

Պատճոյ . — Փոփոխամիտ բարի մանչ մը , որ կին մը կը պաշտէ , մինչ ուրիշ կին մը կը սիրէ անդին , և երբեմն ալ՝ ուրիշներ :

Պատճում . — Արարչին ուղղուած անուղղակի փառաբանութիւն , երբ կնոջ մը գեղեցկութիւնն է զոր կը փառաբանենք :

Պարահանդես . — Տեղ մը , ուր ամէն բանի վրայ կը խօսուի , ինչպէս՝ օղին վրայ , Օր . Ք***ի ամուսնութեան և Տիկին Ճ***ի ամուսնալուծման վրայ : Ոմանք կը պարեն :

Պարահանդես (Դիմակաւոր) . — Տգեղ կիներու յաղթանակը :

Պարագայ եւ առիթ . — Հանձարեղ մարդը պարագան ու առիթը կը ստեղծէ , տաղանդաւորը՝ կը գործածէ զանոնք ամէն բանի հասնելու համար , իսկ անխելքը անոնց անցնիլը կը դիտէ՝ առանց տեսնելու :

Պարտապահանջ . — Մարդ մը , որ մեծ ծառայութիւն մը կը մատուցանէ մեզի և որուն ըրած այս ծառայութիւնը երբէք չենք ներեր իրեն :

Aultre մեկնութիւն . — Պարտապահանջը այն մարդն է , որ ինքզինքին պարտք կը համարէ ամէն առաւու ձեր դուռը զարնել և որ անհուն հաճոյք մը կը զգայ միշտ իմանալով թէ՛ «Պարոնը տունը չէ:»

Պարտկանութիւն . — Բան մը , զոր շատեր չպիտի ուզէին ընել՝ ճիշդ անոր համար որ ստիպուած են ընել :

Պարտք . — Պարտքերը վճարող անձը կը հարստանայ . — այս սուտը դերձակները և նպարավաճառները հնարած են : Բարեբաղդաբար ո՛չ ոք կը հաւատայ :

Պոլսուառ . — A la mode կնոջ աշխատութեան սենեակը :

Սեր . — Պզտիկ տղեկ մը , որ շատ անգամ մեր քիթէն կը բռնէ :

Սիրահար . — Խոհարարուհին՝ «Մարդս» կ'անուանէ զայն , սենեկապանուհին «Սիրողս» , իսկ շնորհքով կին մը ոչինչ կ'ըսէ :

Սնանկութիւն . — Հարստանալու տեսակ մը միջոց :

Սիրս . — Արիւնի շրջանին գլխաւոր գործարանը , որ ամէն գործի մէջ քիթը կը խօթէ :

Սիրոյ յայտարարութիւն . — Քաղաքավարօրէն ըսուած սրիկայութիւն :

Սուգ . — Սեւը կիներու շատ կը վայլէ . — անա՛ թէ ինչո՛ւ սեւը՝ սուգին խորհրդանշանն է եղած :

Սակայն . — Մակբայածև շողկալ , որ քիչ մը կը սփոփէ մեզ՝ երբ պարտաւորուինք աղէկ խօսիլ բանի մը կամ մէկու մը մասին : Օրինակ . —

Յակոբիկ աղէկ տղայ է , սակայն քիչ մը ապուշ է . . . և այլն :

Սիրոյ երգում . — Զոյգ մը սուտեր՝ անկեղծօրէն փոխանակուած :

Սակարան . — Պզտիկ եկեղեցի մը , ուր ամէն կրօնքէ հաւատացեալներ կ'երթան՝ պաշտել միեւնոյն աստուածը :

Պիծում . — Յաճախ մեր գաղափարներուն ծնունդին եղանակը :

Վարժարան . — Տեղ մը , ուր դժբաղդ ենք եղած և ուր կը փափաքինք վերադառնալ :

Վանառականութիւն . — Եթէ ականջ տալու ըլլաք վաճառականներու խօսքին՝ ասպարէզ մը , որ երբէք աղէկ վիճակ մը չունի , սակայն անով զբաղողները՝ հաղար ոսկիէ պակաս դրամօժիտ չեն ընդունիր :

Վիճակահանութեան առաջին պարգեւը . — Տունը մնացած աղջիկներու համար այն անձը որ կը յօժարի զիրենք Ս . Խորան սուաջնորդել :

Վաղր . — Բան մը , որ ո՛չ մէկուն կը պատկանի և որ ամէն մարդ ուղածին պէս կ'առնէ կուտայ :

Վրեժ . — Երբեմն հաճոյք մը , բայց միշտ գէշ արարք մը :

Տարիք . — Փաղանիք մը , զոր կարելի չէ խել ո՛չ մէկ կնոջ բերնէն : Որչա՛փ էրիկ մարդիկ այս տեսակէտէն չեն տարբերիր կիներէն :

Տգեհ . — Այն մարդը որ ոչի՛նչ գիտէ , կա՛մ գիտցած բանը աղէկ մը չգիտեր և կամ գիտնալիք բանէն տարբեր բան գիտէ :

Տխմար . — Ապուշ մը , որ կը կարծէ խելացի ըլլալ :

Տգեղ . — Բառ մը , զոր կենցաղագէտ պարոն մը երբէք չգործածեր կնոջ մը նկատմամբ և կը գոհանայ ըսելով՝ «Տիկին Ք * * * գեղեցիկ չէ , բայց նորէն աղուոր է :»

Տրամաբանութիւն . — Չապէլ իր էրիկը կը խաբէ դրացիներէն մէկուն հետ :

— Լկաի՛ , կը պօռայ խելո՞ճ ամուսինը , դիս ամէնէն սիրելի բարեկամիս հետ կը խաբես կոր , առ ըրածդ վատութիւն է :

Ուրիշ անգամ մը՝ Չապէլ իր էրիկը կը խաբէ բոլորովին անձանօթ մէկու մը հետ :

Էրիկը նորէն կը պօռայ :

— Լկաի՛ , դիս՝ բնա՛ւ չճանչցած մէկ մարդու հետ կը խաբես կոր , այս ըրածդ վատութիւն է :

Որուն Չապէլ կը պատասխանէ . . . տրամաբանօրէն .

— Երբ քեզի ծանօթ մէկու մը հետ խաբեցի՞ բարկացար , հիմա անձանօթ մէկու մը հետ կը խաբեմ կոր՝ նորէն կը բարկանաս . . . սակայն , վերջապէս մարդ քի՛չ մը տրամաբանութիւն ունենալու է . որո՞ւ հետ կ'ուզես որ քեզ խաբեմ :

Փաստաբան . — Անտարբեր անձ մը , որ պարագային համեմատ կը բարկանայ կամ կը յուզուի . — Իր տաղանդը անվիճելիօրէն կը յայտնուի , երբ կարենայ ապացուցանել թէ՛ սա՛ գոյը պատուաւոր մէկն է և սա՛ պատուաւոր մէկը պատիւն ունի գող մը ըլլալ :

Փորձառութիւն . — Երկարատե ուսումնասիրութեանց արդիւնքը , որ երբէ՛ք տասնոց մը հարժեր :

Փեսայ . — Մարդ մը , որուն մասնագիտութիւնը կը կայանայ յարաժամ գէշ խօսելու մէջ իր գործանշին նկատմամբ , որ ընդհանրապէս աղէկութիւն մը ըրած է իրեն , քանի որ . . . աղջիկն է տուած անոր :

Փզնական . — Շատ մը էրիկներու մտերիմ բարեկամը :

«Տնտես-աղբօր» մէն աստիճան մը վեր՛ երբ խօսքը օգնական ուսուցչի մը վրայ է :

Փզնութիւն . — Եթէ պէտք ունենանք՝ չե՛նք գտներ : Երբեմն՝ երբ աղուոր կին մը ունենանք թեւերնիս՝ չուզած ատեննիս կը գտնենք :

Օրացոյց . — Երկասիրութիւնը գիտունի մը , որ առանց սենեակին դռնէն դուրս ելլելու՝ կը ծանուցանէ յունուար 1ը և Չատիկին ու Ծնունդին ընելիք օդը : — Միշտ կը սխալի : — Բայց , երբ պատահմամբ՝ շիտակ բան մը զրուցելու ըլլայ՝ մենէ առաջ ինք կը զարմանայ :

ԵՐՈՒԱՆԴ ԹՕՒԱՅԵԱՆ



ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՏԱՐԵՑՈՅՑԻՆ ՔԵՐԹՕՆԸ

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՍԱՏԱՆԱՆ

Կ Ա Մ

ԱՆՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Հետևողութեամբ **ԳԱՍԻՄ**ի

էւ մեր ուրիշ մեծ վիպասաններուն

Ա.

Խորհրդաւոր տունը, խորհրդաւոր մարդիկը. —
Աղջիկը պիտի սպաննեն. — Բռնեցե՛ք մարդասպանը. — Բացասիրտ անձանօք մը, որ ուրիշ
մեկը չի, այդ աղջկան նշանածը. — եւ այլն . . . :

189 . ի ձմրան մէկ տխուր գիշերն էր, — ի
Բարիզ :

Ձիւնը կը տեղար, քամին կը փչէր, անձրեւը
կուգար, կարկուտը ապակիները կը կտարէր, լուսինը
կը փայլէր . . . :

Տուները՝ միմուխեան մէջ թաղուած էին ամբողջ,
միայն հսկայ շէնքի մը վերնայարկին մէջ պզտիկ լոյս մը կը սլլսլար՝ խորհրդաւոր, իմաստալից : — Ի՞նչ էր այդ լոյսը . . . :

Այնինչ եկեղեցիին հսկայ ժամացոյցը՝ գիշերուան խոր ու միօրինակ լուսեան մէջ՝ կէս-գիշեր զարկաւ, իր տասուերկու հարուածներուն արձագանգները նետելով հեռուն, որոնք գիշերային անդորրութիւնը կը ձեղքէին :

Յանկարծ, փողոցի մը անկիւնէն դուրս եկան երեք անձանօթ և խորհրդաւոր անձեր, երեքն ալ դիմակաւոր ու վերարկուներու փաթթուած, որոնք կը քալէին՝ իրենց մատներուն ծայրը կոխելով և առանց բառ մը արտասանելու:

Ո՛վ էին այս մարդիկը. — Գաղտնիք:

Այս երեք անձանօթներէ մէկուն վերարկունին տակ բան մը պահուած ըլլալ կը թուէր:

Հազիւ այս երեք անձանօթները տասը քայլ առած էին, ահա՛ անոնց ետեւէն ուրիշ մէկն ալ ելաւ փողոցին անկիւնէն, որ տուներու տակէն կը քալէր և որ կարծես երեք անձանօթները կը հետապնդէր:

Այս նորեկը գեղանի ու հմայիչ աղջիկ մըն էր, որուն դէմքը չէր տեսնուեր խաւարին մէջ:

Մէկէն ի մէկ սուր սուլում մը ձեղքեց օդը:

Աղջիկը — որուն անունը չենք գիտեր — սարսափահար երկու ձեռքերը ճակտին զարկաւ, իսկ միւս ձեռքովը՝ ընկուկէրին կոթը բռնեց:

Երեք անձանօթները — որոնց անունը չենք գիտեր հաւասարապէս — կանգ առին տենդահար, մինչ իրենց աչքերը՝ կատուի աչքերուն նման կը փայլէին մութին մէջ:

— Կո՛մս, — մուլտաց մէկը, — բռնուեցանք:

Երեք անձանօթներէն մէկը, որուն կոմսութեան տիտղոս մը ունենալը հասկցանք, պատասխանելու համար բերանը բացաւ, բայց չպատասխանեց:

Ուժգին հարուած մը ստացած էր գլխուն վրայ: Կոմսը գլուխը վեր առաւ, բայց ոչի՛նչ տեսաւ:

Բայց անտեսանելի ձայն մը կը հարցնէր բարձրաձայն.

— Ո՛վ էք դուք և ո՞ւր կ'երթաք:

Երեք անձանօթները իրարու երես կը նայէին՝ ձայնին ո՛ւրկէ գալը հասկնալու համար:

— Պատասխանեցէ՛ք, ապա թէ ոչ ձեր երեքէն ո՛չ մէկն ալ չկրնար քայլ մը խակ առնել :

Վերարկուաւոր անձանօթը, որուն վերարկուին տակ բան մը պահուած ըլլալը կ'երեւար, ամէնէն աւելի տժգունած էր :


— Քանի որ չէք պատասխաներ, կրկնեց անտեսանելի ձայնը, ուրեմն հիմա ես ձեզի կը հասկըցնեմ :

Այս խօսքերուն վրայ՝ գետինը բացուեցաւ և գեհենային դէմքով մէկը դուրս ելաւ՝ բերնին մէջ թիթօ մը բռնած :

Աղուոր ու հմայիչ աղջիկը որ տասը քայլ հեռուն դրան մը մէջ պահուրտած էր, մէկ ոստումով այս չորսին քովը վազեց և երկու ձեռքը ասորձանակ ունենալով՝ պօռաց .

(Շարունակութիւնը... յաջորդ սարի)

Ե . Թ .





ԳԵՐ. ՄՈՒՇԵՂ, ԵՊՍ. ՍԵՐՈՒՆՍԻ

(ՄՈՒՇԵՂ ՎԱՐԳԱՊԵՏ)



ՊԱՏԿԵՐՆԵՐԸ



Գրեց ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ



Ուանձնացումի նուիրական տրամութեանը մէջ, ուրկէ մեր հոգիները մերթ երազանք և մերթ ձանձրոյթ կը ծծեն, աչքերս՝ յուսահատօրէն՝ կը փնտուեն, պատերուն վրայ, զգացումի և ներշնչումի ձեռարուեստներ, դոնէ անոնց գողտրիկ թելադրանքին տակ հաշտուելու համար այն կեանքին հետ, զոր ստիպուած ենք մեկուսի ապրիլ, և այն միջավայրին հետ, ուրկէ վիշտի և սարսուռի խառնուրդ մը միայն կրնանք զգալ մեր քառսունքի նախօրերուն: Եկեղեցին, լուռ՝ իր սրբութեանը մէջ, հազիւ սրտուած ժամերուն թոյլ կուտար, որ աղօթքներու կրկնուած ուղորներով արձագանգեն իր կամարները: Իր սեղաններուն շարունակ վառուող կանթեղները, նման հիւժախառնոր լուսիններու, հոգեվարքի սիրտմաշտօք ցոլք մը հազիւ կը փուեն իր տարածուն լայն գաւիթին մէջ, ուր երբեմն մոլորած ծիծեռնակներ, հազիւ թէ իրենց ծիւղ կ'երգեն, խռոված

ու շուարքոտ, իբր թէ մեծ վանդակի մը մէջ եղած ըլլային :

Եւ անա, պատկերնե՛րը, այդ յաւիտենապէս անխօս պատերուն վրայ թառած պատկերները, իբրեւ վերջամնացութիւնը երկնաալաց հողիներու, իրենց դէմքերէն կը կաթեցնեն երկնային անուշութիւն մը, զոր ծծելէ պիտի չյագենար մարդ : Մեծ Սեղանին աստիճաններուն վրայ բազմող Կոյս-Մայրը, որ երբեմն իր գեղեցկութեան յանցանքով Պոլսոյ Մայր Եկեղեցիէն մինչեւ հոս աքսորուած է, կ'ըսուի, հրեշտակային գեղեցկութեան տիպար, ո՛չ միայն ինքզինքը կը վերյայտնէ իր որդեծնութեան հրաշքին մէջ խանձարուրուած, այլև այն արուեստագէտը, որուն աշխարհիկ վրձինը կրցաւ ա՛յդքան բարեպաշտօրէն, դոյներու մէջ խտացնել երազող երեւակայութեան մը բոլոր թափառկոտութիւնները, բոլոր մոլորանքը, անոնցմէ Կուսութեան և Մայրութեան աստուածային խառնուրդը հիւսելու համար : Ու պատկերին Մարիամը, իր կանաչի ամօթխածութիւնովը քողարկուած, մարդասէր, թաւիչէ նայուածքը յառած դէպ ի վար, կը նայի լուռ պարապին, որ աւանդ, հազիւ մերթընդ մերթ բարեպաշտիկ ոգեւորութիւն մը կը ծընցընէ իր մէջէն : Մնոր աչքերէն ծորող խորհրդազգած սարսուռը, որ նժդեհի մը անգիտակից յոյզերովը կը խորունկնայ, ու կը մ'իժնի, քեզի զգացնել կուտայ ապագայ խաչին սիրտ-աշուքները : Ժպիտը և վիշտը աստուածայնացած են այդ քնքուշ նայուածքին մէջ, ուրկէ արեւելքի արեւները կը ծագին :

Ս.յդ պատկերներէն ոմանք յաւիտենական վիշտը կ'երգեն մեզի, ոմանք վէրքերնին ցոյց կուտան, ոմանք արցունքի մը բիւրեղացումը կը թուին ըլլալ, խորհրդաւորին արբեցութենէն գինովցած, ոմանք չարչարանքի հաճոյքը կը խմեն երկնային նեկտարի մը պէս, և ուրիշներ՝ կոշկոճումներու

անուշ դառնութիւնը : Ու չկայ անոնց մէջ հաստ մը ,
 որ մտածումներուդ անիւը դէպ ի անվիշտ խաղա-
 դութիւն մը առաջնորդէ : Բոլոր այդ մահարձանա-
 կան նկարները , ներքին ու անօրինակ խառնուրդով
 մը ներդաշնակուած , ընդվզումները կը թուին ըլ-
 լայ աշխարհի պատրանքներուն հանդէպ , և յաւի-
 տեան յուցանիշերը , որոնք սահմանուած ըլլան
 մարդկութեան քայլերը ուղղելու՝ գերեզմանաբոյք
 այս տիեզերքին բոլոր մանուածներուն մէջէն դէպ ի
 երկնային խաղաղութիւնը : Եւ կը խորհիմ , թէ
 Կրօնքն ու Արուեստը իրարու միացած , ամէնէն
 անհերքելի , խմաստասիրուած ու դարերով փոր-
 ձարկուած ճշմարտութիւնը կը խօսին մեզի , երբ
 կ'ըսեն մեզի , թէ Կեանքը իր գերադոյն վախճա-
 նին կարենալ համակու համար , պիտի անցնի դրժ-
 ուարութիւններու , նեղութիւններու , չարչարանքի
 ու մարտիրոսութեան օթեւաններէն : Եւ այդ օթե-
 վանները , ուր կանգ պիտի առնունք անհամաչափ
 միջոցներ , պիտի կազմեն բուն իսկ մեր կեանքին
 արժանիքը վերջայտնող փուլերը : Մատամ ար Սթալ
 կը գրէ . «Մարդ շատ քիչ խորհած կ'ըլլայ , երբ
 տառապած չ'է» : Այս բացատրութիւնը բաւականին
 չափ չկրնար թարգմանել տառապանքին կատարած
 դերը : Ո՛չ միայն խորհուրդին ծնուցիչն է տառա-
 պանքը , այլեւ կեանքին : Եւ որովհետեւ կեանքը
 միայն խորհուրդներէ չէ որ կազմուած է , պիտի
 ըսենք ուրեմն , թէ մարդ շատ քիչ ապրած կ'ըլ-
 լայ , երբ տառապած չէ : Իժուարութիւնները իրենց
 մէջ ծնուցիչ ուժ մը ունին , տառապանքը ստեղ-
 ծող դօրութիւնն է եղած շարունակ : Այդ լուռ
 նկարները , այդ սուրբ պատկերները ամէնէն ան-
 սուտ վկաներն են այն ճշմարտութեան , թէ ոչ
 միայն քրիստոնէութիւնը , այլեւ ընդհանուր Կրօնքն
 ու Արուեստը կրցած են՝ ամէնէն նեղ օրերու մէջ ,
 աշխարհի պատմութեան ընծայել մեծ սուրբերը ,

մեծ քրիստոնեաները , մեծ խորհողները , և անոնց
մեծ հրաշակերաները :


Այդ պատկերներուն մէջ , սակայն , գոյութիւն
ունեցող արուեստին վրձնութիւնը կը խայթէ
զիս : Արուեստէ անբաժան կողով պչրանքը կարծես
չստ ըան կը գողնայ ենթականերու կրօնականու-
թեանէն , ու կը տեսնես , որ նոյն իսկ վիշտը ա՛յն-
քան կրօնական , նոյն իսկ մարտիրոսութիւնը ա՛յն-
քան հոգեթով , աշխարհայնացած երանգով մը կը
ցուցադրուին , ու արուեստի արտադրութիւններուն
մէջ կը կորանցնեն այն խորին հոգեղգածութիւնը ,
զոր կոչա իրականութիւնը միայն գիտէ տալ մեզի :
Յաւին մէջ ուրուագծուած ժպտը նիւթական կ-
րանգ մը չունի , և ո՛չ ալ այն ուրախութիւնը ,
զոր վսեմ գաղափարի նուիրուած մարդիկ կ'ունե-
նան նոյն իսկ իրենց կախաղաններուն ներքե : Այդ
ուրախութեան և այդ ժպտին մէջ պէտք է որ
մենք կարող ըլլանք տեսնել անդր երկրային՝ գեր-
աշխարհիկ երազանքը , որուն արբեցութիւնը քրիս-
տոնէական սրբութեան և մարտիրոսութեան մեկ-
նակէտը կը աւ շարունակ : Պէտք է որ , մէկ բառով ,
անդրիի (d'au-delà) միադիք խորհրդազգածու-
թիւնը միայն խօսի նկարներու լուռ պատառնե-
րէն , հրեշտակային մունջ քարոզի մը պէս , առանց
արուեստին արուեստականութեանը , առանց անոր
արեւմանքին , ու քմայքոտ նրբերանագութիւններուն :
Պէտք է ընդունիլ , թէ քուրձերու և թարախոտ
վէրքերու ներքեւ անդամ գեղագիտական կեանք
մը կրնայ ապրիլ : Օ՛հ , այս իսկ պատճառով , եր-
բէք չպիտի կրնամ մտնալ աջակողմեան փոքր
Սեղանին քարախորչին մէջ անխնամօրէն ազուց-
ուած այն գլուխը , որուն մէջէն ա՛յնքան հիանալի
կը խօսին կրօնքն ու կրօնական արուեստը : Յիսու-
սի փշապատ գլուխն է անիկա : Խորհուրդը ո՛րքան
խոշտանգուած , գաղափարը ո՛րքան հալածուած ու

զգացումը ո՛րքան փշոտուած է այդ գանկին խորը :
 «Այդ նկարը երբէք չպիտի մեռնի, որովհետեւ յա-
 շիտենական ճշմարտութիւն մը կը պարունակէ իր
 մէջ» : Այլ արուեստ չկայ անոր մէջ, բառին աչ-
 խարհիկ խմատովը : Կոշտ բնականութիւնը հիանա-
 վորէն կը պարզէ մեղի արուեստը, որուն համար
 ըսուած է, թէ «պէտք է որ մի ըլլայ իրականին
 հետ, պէտք է որ մենք անկէ իրականին երթանք,
 գիտակցութեան խոշորացումով, ըմբռնելու համար՝
 շարունակաբար՝ կեանքի ներդաշնակութիւնը, և
 մեր ուրախութիւններէն իւրաքանչիւրը գեղեցկու-
 թեան սրբազան նկարագիրը պիտի ունենայ» : Անոր
 աչքերուն քաղցրանուշ խորհրդաւորութենէն, և
 վիշտերու փառապաակին տակ միթաստուերող նայ-
 ուածքէն ո՛չ միայն կը ծծենք համայնական սէրը,
 գեղեցկութեան և եղբայրութեան կրօնքը, այլեւ
 այն առինքնուած տառապանքը, որ փրկութիւն կը
 բուրէ համակ : Եւ սէրն ու տառապանքը ա՛յդքան
 ներդաշնակուած պիտի չկրնայինք գտնել, եթէ ոչ
 այդ աստուածային գլուխին շուրջ, ուր սուր փու-
 շերու հիւսուածքը, և անոնց խոցումէն կաթկթող
 բոսոր արիւնները, նուաղկոտ աչքերուն արցունքի
 կաթիլները, և կարմրած շրթներուն շուրջը սառող
 ներողութեան խորհուրդին երկնաբուրումը, աստ-
 ուածային ու մարդկային խառնուրդով մը մեղի
 կուտան երկնային ըմպելին, աշխարհի փրկագոր-
 ծութեան թաքուն խորհուրդին նախասահմանուած :





ՏԱՐՕՐԻՆԱԿ ԽՈԿՈՒՄՆԵՐ



Գրեց Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆ



արիւ մը մէջ՝ յաւիտեանի մը ներդաշնակութիւն կայ նմանաբար :

— Ժամանակ՝ միշտ է նշան ու դէմք յաւիտեանին , դեղեցկութիւն լա՛յն ու ան՛ դր՝ յարախառնուած անհուն գոյութեան :

Անոր անհուա բղխումներն են դարք , տարիք , ամիսք , շաբաթք , օրեր , ժամեր , ու բուռներ : Անոր անշափելի երազութիւնը՝ ներկան ու նի դիտակէտ անցեալ յաւիտեանին ու ապագայ յաւիտեանին միջև , ներկան , վա՛ն , որ մեր կեանքի ստոյգ ժամն է միայն , այն նաև , աւա՛ղ , պահակիրը մեր օրհասին :

— Աստուած , տիեզե՛րք , հողի՛ , սէ՛ր , անձանութի՛ւն՝ ամենայն մը կայ այդ հնգեակին մէջ :

— Սկիզբի ու վերջի մը միջևն ենք , առաջինին դառնալն ու երկրորդէն խուսափիլը միապէս անհնար է մեզի . այլ այդ անհնարներու մէջէն կրնանք վայելել բացարձակ մը , տիեզերք մը և անհուն մը , եթէ միայն գիտնանք ապրիլ , պաշտել և ուսանիլ ճշմարտութեամբ . ճշմարտութիւնը՝ յաւիտենակա՛նն է ան , և կրնայ ապրեցունել բնաբար յաւիտեան մը՝ նոյն իսկ մահկանացուիս մէջ :

— Եթէ Պիւթագոր, Նեւտոն և Ֆրանգլին մը-
սակեր ըլլային՝ չպիտի ըլլային նոյնքան սուր և
ճշմարիտ գիտուններ և մարդկութիւնը չպիտի կըր-
նար ժառանգել իրենցմէ այնքան բացարձակ նշոյլ-
ներ ստոյգ գիտութեանց վրայ :

— Հին օրէնսդիրներու մեծութեան աղբիւրը
բո՛ւն իրենց բանաստեղծութիւնն է, որով կը խօ-
սէին բնութեան հետ և կը խօսեցունէին անոր զօ-
րութիւններն իրենց հաստած կարգերուն մէջ :
Մովսէս, Կոնիուկիոս, Սողոն, Թադէս, Եպիմենի-
դէս, Նումայ, Պիւթագոր և այլ նմաններ բնածին
բանաստեղծներ էին :

— Խաղաղութիւն, յաւիտենակա՛ն սիւբի մը
կեանք կայ այդ գաղափարին մէջ. պատերազմ,
յաւիտենակա՛ն դիշերի մը դժոխք ու մահ կան
այդ սատանին մէջ :

— Ծշմարտութիւնը՝ միշտ առաջ է սուտէն,
լոյսը՝ խաւարէն, երկուքն ալ միշտ յաղթող են
հետեւորդ երկուքին. ինչո՞ւ այսպէս չըլլայ խաղա-
ղութեան համար ալ ու չյաղթէ յառաջագոյնն յե-
տագային : Պատմական դիպաց մէջ ալ չե՛նք
տեսներ մի՛շտ խաղաղութիւն՝ պատերազմէ առաջ
և խաղաղութիւն պատերազմէ ետք. այլ պատե-
րազմը չէ՛ որ խաղաղութիւնը կը ծնուցանէ, ո՛չ
ալ խաղաղութիւնը՝ պատերազմ. ներհակներ չեն
ծնիր իրար, այլ նմաններ :


— Գործէ երկիրն որչափ որ կրնաս հնար եղա-
ծին չափ նուազ խառնուելով բնական կարգին՝ և
ան պիտի հատուցանէ քեզի որչափով որ կարօտ
չես մնար և աւելի՛ եւս, որպէս զի ապրիս երկա՛ր,
խաղա՛ղ և երջանի՛կ :

— Միդ՝ գոհացիր միովդ, որ ունիս, և ան՝
իր բազմապատիկ մանրամասերովը՝ պիտի տնտեսէ
բազմապատիկ պէտքերուդ թերեւս աւելի քան ինչ

որ չպիտի վայելէիր շուտով՝ խաղաղութեամբ և արդարութեամբ :

— Շատ անգամ շատին ցանկութիւնն է որ կորսնցունել կամ չվայելել կուտայ մին ալ որ արդար բաժինն է միուն . այդ ցանկութիւնն է՝ իր ամէն համեմատութիւններով՝ պատճառ կռիւներու , ատելութեանց , աղքատութեանց , հիւանդութեանց , չարագործութեանց և մահերու :







ՄԵՍՐՈՊ ԿՈՒՊԱԼԵԱՆ



ԻԶՄԻՐԻ ՀԱՅՈՑ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԱՍԿԷ ԿԷՍ ԴԱՐ ԱՌԱՋ



Գրեց ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ



զմիր, ինչպէս յայտնի է, գրական գար-
 թումի առաջին նշանը տուած է Արեւմտա-
 եան Հայոց մէջ: Ասկէ շուրջ կէս դար յա-
 ռաջ ուսումնասիրական այնպիսի անօրի-
 նակ խանդ ու եռանդ մը ու այնպիսի
 գրական գործունէութիւն մը ցոյց տուած է
 որ ստուգիւ նշանակելի երեւոյթ մը կրնայ համար-
 ուիլ ժամանակակից հայ դպրութեան տարեգրու-
 թեանց մէջ: Տաճկաստանի Հայոց անդրանիկ լրա-
 գրին՝ Ղուկաս Պալթաղարեանի Արշալոյսին՝ ծնունդ
 տալէ ետք՝ որ քանի մը տարի ետք քաղաքակից
 Մելիք-Սելիմովի խմբագրութեամբ իր հակառա-
 կորդ ու մրցակից թերթն ալ պիտի ունենար, իր
 թեմօրէից մէջ և անկէ դո՛ւրս անգամ յուռթի ճիւ-
 ղեր արձակող դպրոցասիրական նշանաւոր ընկե-
 րութեան մ'որրանն ըլլալէ ետք՝ ժիր և կարող
 գրագէտներու արդիւնաւոր հոյլ մը յառաջ կը բե-
 րէր՝ որոնց գրական օգտակար արտադրութիւն-
 ներն Իզմիրի սահմաններէ դուրս ալ ծայր կուտա-
 յին, ինչպէս պիտի տեսնենք վարը:

Ո՞վ էր այս մեծ ու կարեւոր շարժման գլու-
 խը, ո՞վ էր այն նշանաւոր դէմքը՝ որ ուսումնա-

սիրական այսպիսի ուշագրաւ յեղաշրջում մը մեր Իզմիր քաղաքին մէջ յառաջ կը բերէր յեղակարծ ու լուսաւորութեան շաւղի մէջ առաջնութեան պատիւը կ'ապահովէր անոր: Անդրէաս Փափազեանն էր այն, համբաւաւոր տեսուչը և արժանաւոր վարժապետը Մեսրոպեան վարժարանի, որ անընդհատ քսան և վեց տարի իր բերրի և արդասաւոր քրտամբ ուսուցեց, արդիւնաւորեց Աբ. Մեսրոպայ անդաատանը, անոր փայլուն անունը տարածելով բովանդակ Տաճկաստանի Հայոց մէջ: Չէ թէ միայն ներքին գաւառներէ՝ այլ նոյն իսկ մայրաքաղաքի Հայերէն՝ որք իմացական զարթումի զգալի նշան մը չէին տար տակաւին, անուանի ընտանեաց զաւակներ կը դիմէին Իզմիր վարժ ու դաս առնելու քաջիմաստ Անդրէասի հովանաւորութեան տակ:

Պատուելիներու խիստ ընտիր ու յարգելի տիպար մ'էր Պոլսոյ զաւակ Ռուբէն Անդրէաս Փափազեան, հին բարի ժամանակներու վարժապետ՝ որ վաղնջական մեթոտներով կ'աւանդէր իր դասերը՝ որոնց հիմը խորունկ հայկաբանութիւն մը կը կաղմէր միշտ. — մեր ժամանակները ճիշդ երևց դասարան կար գրարաւ ճարտասանութեան նըւիրուած — : Այլ ի՞նչպիսի հրաշք էր այդ, ի՞նչպէս կ'ըլլար որ պատուելի Անդրէաս վարժապետ մը՝ ուսուցման իր հնաւանդ և հետեւապէս յաւէտ կամ նուազ ամուլ մեթոտներով ա՛յսքան կարեւոր արդիւնք յառաջ բերէր իր ժամանակի Մեսրոպեանը Տաճկաստանի Հայոց առաջին վարժարանն հանդիսացնելով, և անօրինակ փայլ ու հմայք տալով Իզմիրցի Հայու անուան: Այս զարմանալի երևույթին ուրիշ պատճառ չկրնար ցուցուիլ, բայց եթէ այն խանդն ու եռանդը՝ որով այդ հին պատուելին փարած էր իր պաշտօնին, իր բոլորանուէր ոգին, ուսուցանելու և միանգամայն ուսնելու ա-

հազին փափաքը , և այն հայրական գործիւն ու
խանդաղատանքը՝ զոր ունէր իր աշակերտաց վրայ՝
զորս կը սիրէր իբր բուն իսկ իր զուակները՝ փո-
խադարձաբար սիրուելով , մեծարուելով , պաշտուե-
լով անոնցմէ :

Մենք եւս մեր սխառանութեան վերջին տարի-
ներուն մէջ բազում ունեցած ենք աշակերտիլ բազ-
մարդիւն պատկառելի վարժապետին՝ որուն յիշա-
տակն այնքան գուրդուրանօք պահած ենք մեր
մաքի մէջ , ինչպէս իր բոլոր աշակերտներն անխը-
տիր : Ինչպէս յօժարափոյթ կը վաղէինք դասարան
որ անհնարին ոգեւորութիւն մը կը ստանար Անդ-
րէասայ ներկայութեամբ : Ո՛րպիսի խանդով և յա-
փրշտակութեամբ կ'ունկնդրէինք իր դասերուն՝ որք
կը կրթէին , կը հրահանգէին առանց երբեք ձանձ-
րացնելու : Ահ , վարժապետ մ'որ գիտէ այս գաղա-
նիքը , ունի արժանիքը սիրելի ընծայելու իր անձը , իր
դասն ու դասարանը , ահա՛ բուն և ճշմարիտ դաս-
տիարակը՝ որ ստուգապէս արժանի է այդ անուան ,
և որու անձնուէր ջանքերը՝ Անդրէասի նման՝ ան-
վրէպ յաջողութեամբ մը պիտի պատկուին միշտ . . . :

Ի՞նչպէս ուրեմն կարելի ըլլայ մեզ՝ որ ասկէ
կէս դար յառաջ Իզմիրցի Հայուն խմայական ար-
տակարգ գործունէութեան վրայ կը ճառենք , չյի-
շել Անդրէասի անունը՝ որ անմոռաց ու անբաժա-
նելի կերպիւ կապուած է այդ մեծ շարժման հետ :

Արշալոյս լրագրի խմբագրութեան մէջ ի՛նքն
էր Պալթաղարեանի խորհրդականը , աշխատակիցն
ու սրբագրիչը , եթէ ոչ նոյն իսկ թելադրիչը այդ
թերթի հրատարակութեան : Ուսումնասիրական այն
հզօր ընկերութեան զոր յիշեցինք վերը , և որ ետ-
քէն այնքան մեծ թռիչ մ'առաւ , ի՛նքն էր հիմ-
նադիրը և խնամակալ ու պաշտպան բուն ոգին :
Նա լոյս և ուսում կը ախօէր թէ՛ իր իսկ ձեռօք և
թէ՛ իր ձեռնասունն ընտիր աշակերտներուն՝ որք

1850ական թուականներուն մէջ լեզուն կը կազմէին :

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էր Տիգրան Յարութիւն Տէտէեանը, այն վաստակաւոր գրագէտը, տպագրապետը, թարգմանիչն ու հրատարակիչը՝ որ Տէտէեան բաժմարդիւն տպարանն հիմնեց և այդ բեղմնաւոր շրջանին մէջ հարիւր խանկտոր հրատարակութիւններ ըրաւ՝ որոնցմէ շատերը բազմահատոր, որ Իզմիրի ժամանակակից գրագէտները նիւթապէս և առատաձեռնօրէն վարձատրելով (և ինքն ալ ոչ սակաւ օգտուելով) ա՛յնքան նշանաւոր դրական արտադրութիւններ յառաջ բերաւ, և ազգին մէջ ուսումնասիրութեան խթան եղաւ կրնայ ըսուիլ առաջին Մխիթարեաններէ ետք՝ որք հաւասար յաջողութեամբ չալիտի կրնային համեմել այս նպատակին, քանի որ իրենց հրատարակութեանց մէկ մեծ մասը դրարառի վրայ կը դառնար, անհասկնալի մնալու սահմանուած լեզու մը բազմութեան համար : Տէտէեան Յարութիւն հանեց նաև Արփի գեղեցիկ հանդէսը՝ որ այնքան ուշադրութիւն դրաւնց իր ժամանակին : Անդրէաս՝ ինչպէս կրնայ երեւակայուիլ՝ մեծապէս կը քաջալերէր այդ հրատարակութիւնը՝ աշխատակցելով իսկ անոր և գեղեցիկ քերթուածներ տալով միշտ գրարատ : Գրաբարը անօրինակ պաշտամունքի մէջ էր այն ատեն, և հմտութեան տեսակ տեսակ մրցումներ կ'ըլլային՝ անոր ճոխութենէ օգուտ քաղուելով : Անդրէասայ անայք ոտանաւորն երեւելի հանդիսացաւ :

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էին Զմիւռնացի Գրիգոր Էֆ. Մարկոսեան և Սահակ Էֆ. Ապրոյ որք՝ Նոյեան Աղաւնի քաղաքական լրագիրն հրատարակեցին Պոլսոյ մէջ՝ ուր սկսաւ տպուիլ նաև Իւթիւձեանի Մաւիսը՝ Արշաղոյսի հրատարակութենէ տասն և չորս տարի ետք :

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էր Ստե-

փան Ռսկանեան, այն փայլուն գրագէտը՝ որ այն-
քան յատակ ու ներդաշնակ կը գրէր՝ այն ժամա-
նակները տակաւին անմշակ մեր աշխարհիկ լեզուն,
և որ նոյն թուականներուն իր հռչակաւոր Արեւելք
հանդէսը և անկէ ետք իր ոչ նուազ հռչակաւոր
Արեւմուտքը կը հրատարակէր Բարիզի մէջ: Իր գե-
ղեցիկ աշխարհարաւին ամենամեծ գաղտնիքն էր
խժաղուր հնչիւններէ խնամով զգուշացում, ու
կարճ բառերու ու ձեւերու ուշադիր գործածում:

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էր Կա-
րապետ Տէտէեան, եղբայր նշանաւոր տարգրապե-
տին ու հրատարակչին որ կ'աշխատակցէր Արփիի,
և որ բազմաթիւ թարգմանութիւններէ զամ՝ ետ-
քը Իզմիրի մէջ հրատարակեց Դիւնակ զաւեշտա-
թերթը: Կարապետ Տէտէեան կ'աշխատակցէր նաև
Յաւերժահարսի՝ զոր կը խմբագրէր Սարգիս Բա-
բաղեան՝ միշտ աշակերտ Անդրէաս վարժապետի:

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էր
Գրիգոր Չիլինկիրեան որ երկար տարիներ հրատա-
րակեց Ծաղիկ հանդէսն որ այնքան հռչակ ու փայլ
տուաւ իր անուան, բայց ի բազմաթիւ օգտակար
թարգմանութիւններէ, որոնց մէջ մասնաւորապէս
յիշատակելի են տասնահատոր Թշուառները:

Անդրէաս վարժապետի աշակերտներէ՛ն էին՝
զմեզ հաշուի մէջ չդնելով՝ ուրիշ բազմաթիւ ու-
սումնականներ՝ որք յաւէտ կամ նուազ փայլած
են Հայ գրական ասպարէզին մէջ՝ Բարազեաններ,
Նդիազար Չայեաններ (Իլիաս Էփէնտի), Պալտապան-
եաններ, Չաքրեաններ, Տէր - Բասպարեաններ,
Սարգսեաններ (վաղամեռիկ երիտասարդ՝ որ բա-
նաստեղծական մեծ տաղանդ կը յայտնէր), Պար-
տիզպանեաններ ևն. ևն: Ասոնք ամէնքն ևզած են
մէյմէկ գրագէտ, ուսուցիչ, խմբագիր, դիւանա-
պետ, բարեխնամ տէրութեան պաշտօնատար ևն:

Իզմիրի Հայոց գրական այդ բեղմնաւոր շրջա-

նին մէջ քանի տեսակ հանդէսներ ու պարբերա-
կաններ կը հրատարակուէին՝ գրեթէ ամէնքն ալ
Անդրէաս վարժապետի աշակերտներու ձեռք խմ-
բագրուած : Գարուն, Միութիւն, Յառժամարս և
Դիմակ նոյն շրջանին ծնունդներ էին : Անկէ ե՛տքն
էր Սարգիս Միրզայի Իրաւունք քաղաքական լրա-
գիրը՝ որ կարճատև կեանք մ՛ունեցաւ :

Ուսումնասիրութեան այդ երանելի ժամանակ-
ները նոյն իսկ դպրոցական աշակերտներ՝ իրենց
օրական դասերէն ժամանակ գողնալով՝ միջոյ կը
գտնէին մանրադիտական հանդէսներ խմբագրելու
ու նաև տպագրելու : Երկասերը կը հրատարակուէր
մեզմէ և ուրիշ երկու ընկերակիցներէ : Վաճառա-
տուններու մէջ գործածուող երկաթեայ մամլակին
նման մամուլ ունէինք . . . պարզապէս փայտեայ,
որով կը տպէինք Երկասերը, անուն մը գեղեցիկ
դոր թելադրած էր մեզ Յարութիւն Տէտէեան :
Ի՞նչ գրաշար մ՛եղած էր ես : Թուրքալը կը խմբագ-
րուէր ուրիշ երեք ընկերակից դպրոցականներէ, ու
կը տպուէր միեւնոյն փայտեղէն կաղամածով : Այս
երկու մանր հանդէսներու մէջտեղ եւս անհրաժեշտ
մրցակցութիւնը ծնունդ առած էր, և տևեց մին-

Մեծանուն Մամուրեան որ ետքէն Իզմիրի գրական
շորձունէութեան մէջ անագին գեր մը պիտի կատարէր իր ան-
ժիւ հրատարակութիւններով և Ա. Մամուրչ հանդէսով, Իզմիրի
ա՛յնքան պատիւ բերող այդ փայլուն գրագէտը, հեղինակը, Թարգ-
մանիչը, խմբագիրը, տպագրապետն ու դաստիարակը Մեսրոպ-
եանի աշակերտ չէր այլ Մուրատեան վարժարանի : Մարկոս Ա-
ղաբեկեանի հետ՝ որ նոյնպէս աշակերտ էր Մուրատեանի,
1852ին հիմնած էր Աղաբեկեան վարժարանը՝ որու բաղդ ունե-
ցանք աշակերտիլ և մենք մեր մանկութեան ժամանակ : Աղաբեկ-
եան վարժարանը նոր ու լուսաւոր մեծոտներով կը դասաւանդէր
ոյժը տալով աշխարհաբառին, ու քիչ ժամանակի մէջ շատ յաջող
արդիւնքներ տուաւ : Մանկավարժական արդի առողջ ու բեղմ-
նաւոր սկզբանց համեմատ հիմնուած վարժարանի մ՛առաջնու-
թիւնը նորէն Իզմիր ունեցած էր իր այդ փայլուն շրջանին մէջ :

չեւ վերջ : Եղիազար Չայեան Երկասերի գործա-
կալը եղած էր Պոլսոյ մէջ :

Թէ՛ Երկասերի և թէ՛ Թուրքալի խմբագիրք
ու տպագրիչք՝ տպարանի գործն աւարտելէ ետք՝
մնացած կտորիկ մը ժամանակէն օգուտ կը քաղէին
պարտէզ իջնելով և ընկոյզ խաղալով : Անդրէան
վարժապետ կարգապահութեան թէպէտ ծայր աս-
տիճան նախանձախնդիր՝ աչք կը դոցէր, ներողա-
միտ կ'ըլլար մեզ եթէ տպարանական զբաղմանց
պատճառաւ երբեմն ուշ հասնէինք դպրոց . . . :

Ըստ ամենայնի նշանաւոր ուսումնասիրական
այս պերճ շրջանը՝ որ Իզմիրցի Հայուն գրական
ոսկեդարը կրնայ կոչուիլ, իր փայլուն շարունակու-
թիւնը չունեցաւ դժբաղդաբար : Իզմիրի նոր սե-
րունդը՝ աշխարհաքաղաքացի սկզբունքներով տու-
գորուն և դբօսասէր ուղղութիւն մ'առած՝ շատ
քիչ կը պատասխանէ այս գովելի շարժման՝ որու
հակիրճ մէկ տեսութիւնը պարզեցինք հոս : Իզմիր-
ցի Հայն աւելի իր հին համբաւովը կը փայլի այսօր :





ՍԻՐՈՅ ՇՈՒՐՋԸ



Ա.



L'amour est enfant de Bchême . . . etc.

Գրեց Յ. Ա. Փ. Ի. Ա. Ր



Գացումներու այդ անառակորդին — Սէրը — հրամանի անապու բնութիւնը չունենալուն համար է որ մեծ է ովկիանին պէս, առիւծին վեհութիւնը ունի և անդիմադրելի է հոսանքներու նման :

Սէրը՝ այն վայրի բայց աղնիւ կենդանին է որուն եղջիւրներէն չի բռնուիր . . . ճիշդ տեսակ մը սիրողներու պէս : Եթէ սէրը խօսք հասկըցող, զսպուելիք յասկութիւն մը ունենար, ապահովապէս առաջին սիրողը՝ Ադամ՝ աչքը չպիտի առնէր ձեռքէ հանել Եդեմին նախանձելի Dolce far nienteն, ինչպէս նաև դարեր ու դարեր ետքը, ամենուրեք տեղի չպիտի ունենային այն արուամները որ այնքան սարսուեցուցիչ և այնքան ցաւակցական յիշատակ մը թողած են մեր ամէնուն մտքին և պատմութեան էջերուն մէջ :

Սիրող սիրար՝ անօթի փորին կը նմանի, ակամօջ չունենար :

Ահաւասիկ ինչու համար անօթաւթեմէ մղուած

մէկը երբ հաց մը կը գողնայ՝ կը պատժուի և ան-
դին ուրիշ մը երբ սէրէ թելադրուած աղջիկ մը
կ'առեւանգէ . . . կ'ամուսնացնեն . . . առ ալ պատիժ
մըն է , առ տարբերութեամբ որ մին միայն պարզ
բանտարկութիւն է , իսկ երկրորդը . . . տաժանակիր
աշխատութիւն : Առաջինը շատ շատ երեք ամիս կը
տեւէ , իսկ երկրորդը դժբաղդաբար . . . ցկեանս :
Ուրիշ կը հետեւի թէ աւելի դիւրին է խօսք հաս-
կըցնել փորին քան թէ սրտին :

Պարզապէս սրբապղծութիւն մըն է ենթադրել
վայրկեան մը իսկ թէ ճշմարիտ սէրը կրնայ ստոր-
նանալ , հպատակիլ , ծառայել կամքին և կամ հա-
մակերպիլ դատողութեան :

Անոնք որ սիրոյ համար կ'ապրին և անով
վարդագոյն պտըտիկ բոցներ կրցած են շինել , շատ
անտանելի , շատ աննպատակ պիտի դառնէին կեան-
քը՝ եթէ ասոր գերագոյն վայելքը՝ Սէրը , չըլլար
այն ահարկու և միանգամայն գողտրիկ ոյժը , որով
իրարու կապուեցան Բոլ և Վիրժինի , Ռոմէո և
Ճիւլիէթ , սիրակցորդ զոյգեր , որոնց յար և նման-
ները չեն պակսիր այսօր և որ սակայն անժանօթ
կը մնան մեզի , որովհետև սիրելը , սիրուիլը դիւ-
րին է , բայց Պէռնարտէն տը Սէն-Բիէռ մը կամ
Շէքսպիր մը ըլլալը դժուար : Նոյն իսկ ամէն երկրի
օրէնքները միթէ ներողամիտ աչօք չեն նայիր այն
ամէն ոճրագործներու վրայ որոնք իբրև շարժա-
սիթ «սէրը» ունեցած են միայն : Յանուն սիրոյ
դորժուած ոճիրները՝ եթէ ոչ համակրանքը , գոնէ
գութը չեն շարժեր ամէնէն կարծր հոգի դատա-
ւորին անգամ :

Ասկէ աւելի համոզիչ փաստ մը մէջ բերելու
հարկ չի կայ , հաստատելու համար թէ Սէրը . . .
c'est plus fort que nous :

Միմիայն մեր ազնուաշուք օրիորդներն են որ
լնծի պէս չեն մտածեր տարարաղդաբար :

Եւ անոնք ալ իրենց պատճառը ունին :

Կրնամ արգիլել որ չըսեն մտովի .

— Շոշո՛րդ , ի՛նչ , կը կարծես թէ սէրը մեզի ալ չի հպատակիր : Չե՞ս ուզեր համոզուիլ թէ սիրոյ սահմանին մէջ մենք մէյմէկ Քալիոսթրոներ ենք , բաւական է որ ըսենք — Կ'ուզե՛մ — և ահա այդ քու ըսած հպա՛րտ , խօսք չհասկցող սէրդ մեր սաներուն առջեւ պիտի ստորնանայ , պիտի քծնի , մենք պիտի յաղթենք անոր :

Հակառակը պնդելու համար արդի ամուսնու թիւններուն վրայ գաղափար ունենալու չէ :

Սակայն այդ օրիորդները անշուշտ կը ներկն խոնարհարար դիտել տալ իրենց թէ այդ սերը՝ այնքան սէր է որքան անկիւնի կաթնալաճառիս սերը սեր :

Անոնցը՝ ամբողջ պատրանք , ինչպէս ասորը . . . ամբողջ ճարպ :

Բ.

Սէրը՝ իր առաջին փուլին (phase)ին մէջ կ'աղնուացնէ : Ասոր տարակոյս չկայ :

Պէտք չէ մտնալ թէ սէրը երկու շրջան ունի .

1. Վայելումէն առաջ :

2. Վայելումէն ետքը :

Սիրոյ ազնուացուցիչ դերը ուրանալու համար մարդս կեանքին մէջ երբեք սիրած ըլլալու չէ :

Ուրկէ կը հետեւցնեմ թէ մեր ազնուաշուքներէն շատերը սիրոյ ի՛նչ ըլլալը չեն գիտցած , հակառակ իրենց տրուած ածականին :

Նախ տեսնենք թէ սէրը ի՛նչպէս կը սկսի :

Օր մը շոգեհաւին , թրամուէյին մէջ , թաաւրոնը , փողոցը , ես ի՛նչ գիտնամ , յանկարծ աղջիկ մը դէմդ կ'ելլէ :

Չես գիտեր ինչպէս կ'ըլլայ , ակնարկով մը

միայն կը գտնեն թէ բնութիւնը մասնաւորապէս
 - sur commande - քեզի համար ստեղծած
 է այդ աղջիկը :

Երազած խաչալի, և հողւոյդ փնտռած քայրն
 է կարծես :

Սիրահարուած ես :

Եւ ահաւասիկ կը սկսիս աղնուանայ, ճիշդ
 ինչպէս կ'աղնուանան մեր մէջ Օ/Տ/ին 35 տոկոսով
 ստակ փոխ տուողները և պաշտօնով պատմա բերել
 տուողները : Սա տարբերութեամբ որ անոնց շուքը
 աղնիւ է, իսկ քու աղնուութիւնդ անշուք :

Սիրած վայրկեանէդ նոր կեանք մը կը սկսի
 քեզի համար : Երբ սիրուհիդ կը ժպտի քեզի, կը
 զգաս թէ սրտիդ մէջ սիրոյ ահագին գանձեր կան :

Ա՛յ կը դադրիս գործնական դարավերջիկ
 մարդ ըլլալէ :

Երկինքը աւելի կապոյտ կը գտնեն և լուսինը
 աւելի կը որ :

Ջերմ կը բռնէ քեզի, գոյնդ կը տժգունի,
 ախարժակդ կը դոցուի և կը սկսիս նիհարնայ :

Առաջին պայման աղնուութեան :

Առտու մը կ'արթննաս և բանաստեղծ կը
 գտնես ինքզինքդ, ոտանաւոր շինելու կ'ելլես,
 դուն որ Յովհաննէսեանի աւարակը անգամ կար-
 դացած չես :

Երկրորդ նշան աղնուութեան :

Սպուշ բան մը կ'ըլլաս, դողեր կը բռնէ քեզ
 երբեմն, ըրածդ թողածդ չես դիտեր, բարեկամ-
 ներդ և դերձակին հանջիւնները կը մոռնաս և կը
 գտնես թէ կեանքը անուշ է :

Կամայ կամաց աղնուաշուք ըլլալու վրայ ես :

Սիրած էակիդ կ'ուզես մօտենալ, բարձրանալ
 մինչև իրեն, ամէն հարբ կը գտնես և վերջապէս
 կը յաջողիս :

Սիրոյ «Երգ երգոյ»ը արդէն դո՛ւք ես ըրած :

Ահաւասիկ առիթը կը ներկայանայ հետը խօսելու, կը շփոթիս, կաս կարմիր կ'ըլլաս և սիրոյ լեզուին մէջ ունեցած հմտութեանդ համեմատ կամ քանխմաց կը նկատուիս և կամ սլարդապէս խելագար. դիմացինիդ ազնուութենէն կախում ունի ասիկայ և ոչ թէ քուկինէդ:

Եթէ բաղդաւոր ես, աղջկը սիրոյդ նպատակը պատասխան մը կուտայ, և խել մը քմշտութիւններէ ետքը «Քեզ կը սիրեմ» է շրթներէն կը սասի:

Բոլորովին ազնիւ ըլլալու մաս մը մնաց:

Այ դուն, դուն չես, երջանկութենէդ խելքդ կը կորսնցնես: Բարի, առաքինի ըլլալ կը սկսիս, թնութիւնդ, սովորութիւններդ կը փոխուին, առջ մարդը չես:

Գուն որ երբեմն կոլտէնպէրիէն կը հաղնէիր, հիմա Պոթթէրին կը դիմես:

Այս ալ ազնուութիւն չէ:

Աշխարհիս ընթացքը շատ դանդաղ կը դաննա. Գոտորգիւղի շողենաւներն ալ աշխարհիս պէս:


Վաթսուանոց ծխախոտը էքսթրա սիկատէթի կը փոխես — (ամէն անգամ որ կրնաս) —, ոչ կ'երթաս գործիդ և կանուխ կը դառնաս: Առատ առատ ողորմութիւն կուտաս աղքատներու, միշտ ուրախ, միշտ զուարթ ես, շարունակ կ'երգես, և ձեռնոց հաղնելու սովորութիւնը կ'ընդունիս:

Այ բոլորովին ազնիւ ես:

Եւ երկուշարթի մը կ'ամուսնանաս:

Ահա ինչպէս կ'ազնուացնէ սէրը իր առաջին phaseին մէջ: Ամուսնութենէդ ամիս մը ետքը երկրորդ phaseը կը սկսի: Ազնուացումը կը շարունակէ: Ի՞նչ հարկ կայ ըսել մնացեալը, քանի որ ամուսնացածները արդէն դիտեն և ամուրիներէն ալ աւելի ազէկ է որ չգիտնան:





ԾՈՎԱԴԱՄԲԱՆՍ Ի ՊՈՍՅՈՐ



Գրեց Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Բի հրաշագեղ կիև մը շիևի՛
Գեղոյս հաւասար ընչաւե՛ս, Պոսփո՛ր,
Թոսկապոյ՛ս ջուրցո՛ղ մեջտեղ կանգնե՛ի
Մահարձան մարմա՛ր՝ քույս պիսակաւո՛ր:

Կեանց հուսկ տունո՛յ ամենակապո՛յս,
Մահարձանիս վրայ կը տարածուե՛ի,
Շողից ու քեւոց յաւե՛ս ի համբոյ՛ր,
ձերմակ շանջքս մերկ, անդիմադրեղի՛:

Ոսկի մահիկ մը՝ պսակ վե՛հ հակիսիս,
Մազերքս հովո՛ւն ու շրդարչս աշեա՛ց,
Կոյս ասեղա՛սան յառեալ ծայր մասիս,
Փակ աչքերս ժպտո՛ւն ասեղա՛ծ, առ Ասունա՛ծ:

Ս Տ ՈՒ Ե Ր Ք

Ըսուերն հերաց ծոճակին վրայ կաթնաբոյր՝
Անիայշարի և արաշիւրն և հեշագին.

Ըսուերն շսեանց՝ աղբիւր կաթին կենսաբոյր՝
Քեֆոյշ քաշիշն և արգանդին խայսագին:

Ըսուերն ամպոց, ձիւնապրասկ կասարաց,
Որ արածուի դաշաց վրայ ու ծովուն,
Կազ ըզգեսն և որ իբր կրկնէ զգեղ կանանց
Գուշակեղ մեզ սաշով հըմայիք մարմնոյն:

Իսկ սսուերաց սսուե՛րն, ա՛յն զոր մըսածմունք,
Կենաց՝ մահուան խորհուրդներէն կազմուած,
Արարչութեան վրայ ձրգեն, ի՛նչ քովմունք
Չընծայեր այն և իկնի ու երկրի հրաշայեաց:



Ծան. — Եղիա էֆ. Տէմիրճիպաշեանի սոյն երկու սիրտ
նտանաւորները կը պարտինք Հրանտ էֆ. Նազարեանի հանդէպ
կատար քարեացակամութեանը

1870

1871

1872

1873

1874

1875

1876

1877

1878

1879

1880

1881

1882

1883

1884

1885

1886

1887

1888

1889

1890

1891

1892

1893

1894

1895

1896

1897

1898

1899

1900



ՏԻԿԵ ԶՍՊԷԼ ԵՍԱՑԵԱՆ



ԳՈՒԾԱԿԸ

ՕՐ. ՄԱՐԻ ՄԻՒԶԷՆՏԻՍԵԱՆԻՆ

Գրեց ՋԱԳԷԼ ԵՍԱՑԵՈՒՆ



նչ յիմարութիւնս, Աստուածս, երբէ՛ք, երբէք, կը հասկընամք, պէտք չէ այդպիսի բանս փորձել... օհ չէք հաւատար, խաղ մըն է, պարզ հետաքրքրութիւնս մը, կ'ըսէք, բոլոր ատնք ես ինքզինքիս ըսած եմ ժամանակաւ, բայց կը յիշեմ հաւ որ սրտիս մէջ զգացում մը կար վարանումի, կասկածի... և դեռ կ'ուզէ՛ք որ անկեղծօրէն ըսեմ. վատահ եմ որ ձեր սիրտն ալ կը բարախէ այս միջոցին, թէ ձեր հոգիին մէջ վրդովմունք կայ որ չէք ուզեր խոստովանիլ, որուն վրայ կը խնդաք. բայց ապահով եղէք որ երկար ատեն չպիտի խնդաք այդպէս:

Իրաւամբ անսահմանելի անձկութիւնս մը կը զգայի այն օրը, բայց օդը սաստիկ տաք էր և կը ճնշէր վրաս. սենեակին վարագոյրները գոց էին և կէս մթութեան մէջ էինք. երբեմն յամբօրէն քանի մը ումպ կը խմէի զովացուցիչ ըմպելիէ մը որուն բուրումնաւէտ հեղուկը անմիջապէս կը շոգիանար կարծես տենդագին շրթունքներուս վրայ: Այնքան հեղձուցիչ կերպով տաք էր այն օրը. կը յիշեմ որ հիւանդի պէս էի, շնչառութիւնս ծանր էր և գըլուխս կ'իյնար բարձին վրայ թոյլ և ծանր: Ինծի կը թուէր թէ միտքս պղտորուած է անբացատրելի

զգայնութիւնով մը, որուն մէջ գաղափարները անորոշ և տարտամ կ'անցնէին ուրուականներու նման ու կը վարանէի խօսելու, որովհետեւ բառերը տարբեր և անժանօթ նշանակութիւններ կը ստանային և կցկտուր ու անկապակից կը ցրուէին, կ'անհետանային:

Մթին ու փակ սենեակին մէջ ուր կը գտնուէինք, ծաղիկներն ալ կը թռումէին չորցած ծաղկամաններուն մէջ և իրենց բուրմունքն ալ տարբեր և անժանօթ կը թուէր և կ'օրօրէր իմ մտածումներս իր անսահմանելի խռովքովը:

Ըսէք ինձի թէ չպիտի երթաք, խոստացէք ինձի. ձեզմէ պարտական եմ այդ խոստումը առնել իբրև բժիշկ և իբրև բարեկամ, և յետոյ... ա՛հ, հարկ է վերջապէս ձեզի ըսել թէ...

Անհամբեր շարժում մը ըրաւ չկրնալով խօսքը վերջացնել, յետոյ ակնու մը առնելով մօտս եկաւ և թեթեւ մը տժգունած սկսաւ պատմել.

— Տարիներ, տարիներ անցեր են անկից ի վեր. այն ատեն հազիւ 23 տարեկան էի, երիտասարդ, առողջ և իմ դէմս ունենալով պատրաստ և հաճելի ասպարէզ մը որուն դժուարութիւնները հա՛յրս կրած էր և որ օր մը ինձի պիտի յանձնէր. թէ ի՞նչպէս գաղափարը ունեցայ գուշակող կնոջ մը երթալու, անկարելի է որոշել ինձի համար. ինչ որ կրնամ ըսել՝ այն է թէ ոչ մէկ հաւատք ունէի այդ մասին, ոչ մէկ որոշ պատճառ ալ ունէի. պարզ հետաքրքրութիւն մըն էր առիկա, դիպումս մը. ընկերներէս մէկը խօսած էր ինձի այդ կնոջ մասին և ես շահագրգռուած էի և յետոյ ՅԱՏ մըն էր ինձի համար, վերջապէս երբէք գիտե՞նք կեանքի մէջ թէ ինչո՞ւ և ինչպէ՞ս թեթեւութեամբ և յաճախ դուարթութեամբ դժբաղդութեան ընդ առաջ կ'երթանք... ա՛հ, հաւանաբար ճանչցած էք տիկին Ն... կը յիշէ՞ք Պօթիշէլիի գլուխ մը, տրխ-

բութիւնով և անմխիթարելի ցաւով օծուած . . .
այդ կիներ չգիտցուիր թէ ի՞նչ տառապանք ունե-
ցած է, թէ ինչո՞ւ գեղեցիկ, հարուստ, չէ կրցած
երջանիկ ապրիլ. տիկին Ն. . . հասե այդ կնոջ գա-
ցած էր: Բոլոր ասոնք չէի գիտեր այն ատեն, ան-
ո՛չ, բայց արդէն ըսի ձեզի թէ ճնշում մը կը զգա-
յի ու ատիկա կը վերագրէի բոլորովին արտաքին
պատճառներու ձեզի պէս, ճիշդ ձեզի պէս:

Վերջապէս տեսայ զինքը. երկար ատեն խոր-
հած էի իր վրայ և մտքիս մէջ պատկեր մը կար
ուրուագծուած, վհուկի պատկեր մը, որուն սիլ-
ուէթը կը յիշեմ և պիտի ուզէի գծել եթէ կարե-
նայի. բայց առաջին ակնարկով ո՛չ մէկ տարօրի-
նակ երեւոյթ ունէր և ինծի թուեցաւ որ չէր հա-
մապատասխաներ մատախպարիս. կարճահասակ, նի-
հար կին մըն էր շատ սեւ մազերով որոնք կը հա-
կասէին իր խորշոմած դէմքին: Շրթունքը, չափա-
զանց բարակ, կարմիր ձեղք մը կը շինէր իր դէմ-
քին վրայ, և աչքերը ծածկուած էին սեւ խոշոր
ակնոցներով. ինչպէ՞ս կ'ուզէի սակայն այդ աչքե-
րը տեսնալ: Իմ բոլոր երեւակայութիւնս կեդրոնա-
ցաւ իր աչքերուն վրայ. ապահով անմարդկային
բան մը ունենալու էին զանոնք ծածկելու համար
այդպէս սև և խոշոր ակնոցներուն ներքև որոնք
դէմքին վերի մասը կը ծածկէին գրեթէ:

Աւելի ուշադրութեամբ դիտելով անդրադար-
ձայ որ իր շարժումներն ալ անօրինակ բան մը ու-
նէին, արագ, կարճ և զգուշաւոր շարժումներ
իրբեւ թէ թեւերը և ամբողջ մարմինը բեռնաւոր-
ուած ըլլար ինծի անտեսանելի բանով մը. հետը-
հետէ նոյն իսկ զարմացումով կը նշմարէի որ այդ
առաջին երեւոյթով սովորական կինը իրապէս նը-
մանութիւններ ունէր իմ մտքիս մէջ երեւակայած
վհուկի պատկերին հետ: Այդ նմանութիւնը կարելի
չէր սակայն բոլորովին արտաքին նկատել. սապէս

զգայնութիւն մը ունէի թէ զինքը տեսած էի արդէն, երկար ատենէ ի վեր, թէ ինծի անձանօթ էակ մը չէր. կարծես իր ակրողջ էութիւնը պարուրուած էր նախապէս քողով մը, որ հետզհետէ թափանցիկ կը դառնար, կը փարատուէր ու ճշմարիտ տիպարը, վհուկը երեւան կուգար այնպէս ինչպէս երեւակայած էի օրերէ ի վեր:

Առաջին անգամ այս պարագան էր որ սիրտս բարտխել տուաւ և կարելի է ըսել թէ պաղարիւնութիւնս կորսնցուցի: Գուշակը իմ բոլոր հարցումներուս կը պատասխանէր գլխի շարժումներով. ուզեց ոտքի ելնել բայց չկրցաւ. յայտնի կերպով յոգնած և սպառած կը թուէր, յետոյ ակնոցը հանեց և քովը դրաւ, բայց աչքերը գոցած էր արդէն: Տասը վայրկեանէ ի վեր հոն, դիմացը կեցած էի և արդէն գլուխս լեցուած էր տարտամութիւնով, իրական աշխարհը ոտքերուս սակէն կը հեռանար կարծես. ամէն բան մոռցած էի, ծնողքս, բարեկամներս, ասպարէզս ու հաւատքս բնական գիտութեանց. միւսնայն ատեն կոկորդս և բերանս չորցած էին, լեզուս ծանր կը զգայի, բառերը չէի կրնար արտասանել, գլուխս կը դառնար և աչքերուս առաջք գոյնզգոյն լուսաւոր պղպջակներ կը պարէին և կը խուսափէին:

Երբէք պէտք չէ այդ բանը ընել, — ըսաւ բարեկամս աւելի ջերմօրէն, — երբէ՛ք, կը հասկնամք. ի՞նչ փոյթ ձեզի ապագան. թողէք որ գայ անիկա անձանօթին խորերէն և դուք հանդարտ ու զուարթ սպասեցէք անոր. աչքերնիդ գոցեցէք ու թողէք որ կեանքը ձեզի առաջնորդէ հոն ուր սահմանուած էք երթալու. բոլոր մարդկային տառապանքը անոր դիմադրելուն մէջ է արդէն... ու ճամբուն վրայ եթէ գտնէք գեղեցիկ ծաղիկներ, քաղեցէք որչափ կրնաք, որովհետեւ, բաղդը ձեզի համար ծաղկեցուցած է զանոնք. ո՞վ գիտէ թէ միշտ

անոնցմէ պիտի դանէք ձեր կեանքի ընթացքին մէջ
 և թէ չպիտի ցաւիք անոնց վրայ որ ձեր ետեւ ձգե-
 ցիք, որ անսխալ զանուեցաք քաղելու աւելի գե-
 ղեցիկներուն ցանկալով :

— Պահ մը լուց ու ինծի հասցեցաւ ու կարծես
 տալած իր իսկ խօսքերէն աւելի տեղունեցաւ և
 շարունակեց. —

Գուշակը հասած էր սրահին դիմացը գորգով
 ծածկուած բազմոցի մը վրայ, ձեռքերը ծունկե-
 րուն վրայ դրած էր և պիշ կը հայէր ինծի աչքերը
 բացած որոնք չարադուշակ թռչուններու հայուած-
 քէն բան մը ունէին :

— Ի՞նչ կ'ուզէք դիմնալ, հարցուց յանկարծ
 այնպիսի ձայնով մը որ կարծես հեռուներէն կու
 դար :

— Ապագաս, ըսի :

Անոր արդէն տեղոյն դէմքը բոլորովին ձեր-
 մը կեցաւ. շրթունքներուն կարմիր գիծն իսկ աւ-
 րուեցաւ դէմքին վրայէն և արտեւանուենքը կրկին
 գոցեց. աչքերս այնքան պլատր էին որ տարտամ
 ձերմակութիւն մը կը տեսնայի միայն շրջանակ-
 ուած սև մազերով. ձեռքերը ծունկերուն վրայ կը
 դալարուէին և կը սկսէր շարժիլ համաչափ շարժու-
 մով մը. բոլոր սահնք կարելի է ըսել թէ մէկ քա-
 նի վայրկեան հազիւ տեւեց, բայց ես ժամանակի
 տեւողութեան զգացումը կորսնցուցեր էի, ինծի
 կը թուէր որ տարիներէ ի վեր, մանկութենէս ի
 վեր այսպէս անորոշ և տարտամ բանի մը սեւե-
 ուած էի աչքերս և անոր կը հարցնէի ըլլալիքը . . . :
 Ես՝ ընդհանրապէս այնքան ապահով և վատահա-
 պագայիս համար, սկսայ յարակուսիլ, անբացատ-
 րելի սարսափ մը հոգիս գրաւեց, շրթունքս և
 ձեռքերս կը դողային :

Նոյն միջոցին գուշակող կնոջ արտեւանուենքը
 սկսան բացուիլ, շրթունքին կարմիր գիծը վերստին

երևցաւ. ամոյն դէմքին վրայ ու սկսաւ խօսիլ . երկայն ատեն անձկութեամբ մտիկ ըրի զինքը առանց բառ մը հասկնալու . երբեմն զայրոյթէս կուզէի իր մօտ երթալ, զինքը ցնցել ու խնդրել որ աւելի հասկնալի ըլլայ, բայց իր անձը այնպիսի հեռաւորութիւն մը կը ներշնչէր ինձի որ ասիկա անկարելի կը դառնար . յետոյ վերջապէս բառերը սկսեց էին կցկտուր բայց որոշ դառնալ, հետզհետէ կը հասկնայի .

— Այն ճամբան որ կը բացուի դիմացդ, մութ է և վտանգաւոր... վերադարձի՛ր, վերադարձի՛ր...

Սարսափի բուռն արտայայտութիւն մը կար դէմքին վրայ :

— Օ՛հ, կը խնդրեմ, կը պաղատիմ, ըսէք թէ ի՞նչ կը տեսնէք հոն... :

Գուշակող կինը ինձի նայեցաւ պիշ և լռեց . երկար ատեն լռեց այսպէս ու չէի հասկնար թէ իր անօրինակ և անամարդկային աչքերուն մէջ հեզնութիւն կար թէ դժութիւն : Այդ նայուածքը զիս ինքզինքէս դուրս հանեց, կ'ուզէի դեռ պաղատիլ, կ'ուզէի զինքը ստիպել որ ըսէր թէ ի՞նչ բան կը դանէր իմ կեանքի ճամբուս վրայ . բայց իր նայուածքը սեւեռած աչքերուս մէջ զիս կը խայթէր և կը թռնաւորէր հոգիս և սկսայ զինքը նախատել, սպառնալ, այո՛, և՛ս զինքը նախատեցի այնպիսի բառերով որոնց յիշատակը անդամ զիս դեռ կը կարմրցնէ . բայց անսկա զիս մտիկ չէր ընել, անշարժ և ամբոյն կեցած էր այսպէս իր գիշատիչ թռչունի նայուածքը աչքերուս մէջ . երբեմն բառ մը կուգար չրթունքներուն, որոնք հազիւ թէ կը շարժէին լուելեայն . երբեմն կը մրմնջէր արագ արագ մինչեւ որ վերջապէս կրցայ մէկ քանի բառ որսալ :

— Կին մը կայ այդ ճամբուն վրայ . . . գեղեցիկ
և ամենակարող . . . վերադարձի՛ր , վերադարձի՛ր . . . :

Երկար ատեն մնացի հոն կախարդուած և ան-
գիտակից և այդ երկար ժամանակէն ահաւասիկ
ուրիշ բան չեմ յիշեր : Երբ երեկոյին ծերունի հօրս
դէմ նստած կ'ընթրէի , լսելով իր հանդարտ և սի-
րելի ձայնը ինձի կը թուէր որ դէշ երազէ մը ար-
թընցած եմ :

Երբեմն ալ մտովի կը խնդայի ունեցած սար-
ասիններու և այդպիսի կնիան մը խօսքերուն ար-
ւած կարեւորութեան համար . բայց բան մը հո-
գիս մէջ դղրդուած էր , մեծ և անխուսափելի
դժբաղդութեան մը առաջք դանուողի մը ջլասիչ
և դառն համակերպութիւնը կը դգայի որ կը քնա-
ցընէր բոլոր կեանքի և երջանկութեան յոյսերս ու
տենջանքս . իմ մէջս բան մը մտրած էր և հողիս
մութ կը դգայի : Հակառակ երիտասարդ տարիքիս
սկսայ վերջին ծայր խոհուն և կասկածոս դառնալ .
այն չեմ գիտեր ինչը խանդավառ և վատան որ ե-
րիտասարդութեան յատուկ է այն օրէն կորուսած
էի , ի դուր կը ջանայի ինքզինքս համոզել և ըսել
թէ ծիծաղելի բան էր ազդուիլ այսպէս ջղազար
կնոջ մը դառանցանքներէն , թէ ամէն օր յիմարա-
նոցներու մէջ աւելի շարադուչակ խօսքեր կը լը-
սենք , թէ թերեւս անսխալութիւնս այդ կինը
ամէնուն նոյն բանը կը կրկնէր . բոլոր ատենք ի
զո՛ւր , ի զո՛ւր . . . : Ամէն անգամ որ կ'ուզէի դարձի
մը ձեռնարկել ներքին ձայն մը ինձի կ'ըսէր .

— Վերադարձի՛ր , վերադարձի՛ր . . .

Ու այդ ձայնը իմս չէր , օ՛հ , չէ , կարծես գու-
շակող կինը բռնաբարած էր հողիս և հոն բունած
էր իր անողոք ձայնովը : Այլ ևս անկարող և ա-
պիկար դարձայ բոլորովին , հօրս մահուրնէ կարբ
չկրցի իր գիտունի խիտ և կանոնաւոր կեանքին
հետեւիլ , բոլոր իր սրտորստած գիտական պաշտ-


րը, հօթերը, փորձերը ապարդիւն մնացին գրա-
դարանին մէջ. ինծի ձգած հարստութիւնը կար-
գադրեցի, համեստ բայց բաւական եկամուտի մը
վերածեցի և սկսայ ապրիլ այն անգործ և աննշան
կեանքերէն մէկը, որուն ձանձրոյթը շատ լաւ կը
զգայի. իմ միջակ կենցաղս գեղեցկացնելու կարող
չեղայ բնաւ. բոլոր գեղեցիկ կիները զիս կը սար-
սափեցնէին, որովհետեւ ամէնուն մէջ Չայն կը
կարծէի տեսնել, բոլոր ղուարճութիւնները անձ-
կութիւն կը պատճառէին ինծի. կրնայի ձամբարդել,
բայց հազիւ թէ մտադրութիւնը կ'ունենայի, ձայնը
անողոք և միօրինակ կը գոչէր ներսէս.

Վերադարձի՛ր, վերադարձի՛ր . . .

Ինքզինքիս մէջ բանաարկուած, երկչոտ և
աջարի, հիւանդ և դատապարտուած մէկու մը պէս
էի ու այսպէս անցաւ բոլոր կեանքս: Անգամ մը
միայն, քառասուն տարեկան էի արդէն, բնութիւ-
նը իմ մէջս ընթատացաւ, տարօրինակ պարագա-
ներ զիս հարկադրեցին շանաչու ներքին ձայնիս.
այլ եւս աւելի լաւ էր մեռնիլ քան թէ այդպէս
չարունակել ու երեկոյթի մը հրաւերը ընդունեցայ:
— Այն իրիկունը ուղեցի ելնել երկայն ատենէ ի
վեր դրկուած և հսկմ գրեթէ վանականի կեան-
քէս: Ապրելու, խենդութիւններու և նոյն իսկ տա-
ռապանքին ծարաւը ունէի, կը ղարմանայի իմ եր-
կայն դիմադրութեանս վրայ և կը հեզնէի ներքին
ձայնս, կարելի է ըսել որ գուշակող կիներ տեսնե-
լէս ի վեր այդ օրը միայն ապրեցայ . . . :

Բայց այդ իրիկունն էր նաև որ առաջին ան-
գամ ըլլալով Անոր հանդիպեցայ:







ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(ԹԼԿԱՏԻՆՑԻ)



ԸՍԷ՛ ԻՆՏԻ, Ի՞ՆՉ ԿԱՅ



ՄՕՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ (*)



Գրեց ԹԼԿԱՏԻՆՑԻՆ



Երայի աքաղաղներուն գիշերավերջի յող-
նած ու խուպոտ ճիչերէն յետոյ, կ'ապասէր
ձայն մըն ալ այն կողմէն լսել, ուրկէ լայն-
կեկ տանիքի մը ծայրը՝ մարմար խաչ մը
կը շեշտուի մանուկ հասակի մը ճերմակ ու
թեւաբաց մերկութեան մէջ: Սպասուած
այն ձայնն ալ ինք կը լսէր ամէնէն առաջ. այն
կողմէն մեր ակամջը բան մը չէր հասնիր, մենք կը
քնանայինք տակաւին, մենք կ'ուզէինք որ դեռ
քիչ մըն ալ երկնայ գիշերը մեր թարթիչներուն
վրայ:

Կանուխ եկեղեցի կ'իջնար, կանուխ՝ շատ ան-
գամ Տ. Յակոբէն ալ առաջ, եթէ իր աղջիկ թու-
նիկները պզտիկ, ցորեկի իրենց խաղերուն ատենը,
իր գլխուն շալն ու կօշիկները հոս հոն նետած ու
հեռացուցած չըլլային բնաւ, որ շատ ուշ կը դրու-
նըւէին, ու ինք երբեմն շատ ալ նեղսիրտ դժուա-
րանքներով կը ժողվէր պզտիկներուն այն ցանած
ցրուածները, որ միշտ իրենը կ'ըլլային. ու անոնք
ուրիշ ատեններ ալ համարձակ ձեռքերով իրեն վե-
րաբերածները կ'առնէին գործածել, երբ պէտք

(*) Սառա Յարութիւնեան:

ունենային, կամ յաճախ անանկ ատեններ, որ ժամ կամ քաղնիք գացող կնկան մը ձեւը կ'ուզէին ներկայացնել Այաին (*) շալն ու չիթերը վրանին առած: Այս բնատուրքներով կ'ուշանար երբեմն ու քնացող ան պղտիկ ստահակներուն հասցէին բաներ մը դրդրալով մէկտեղ՝ աս իսկ պահուն նորէն ա նոնց անկողիններուն կողմը ձեռք մը կ'երկնցնէր, քացուածք մը կը ծածկէր ու ճամբայ կ'իյնար: Այս սովորութիւնը միշտ դէպ ի եկեղեցի, ու այսչափ կանուխ, գեղէն բերած էր օր մը ու քաղքին մէջ ալ պահել չէր մոռնար նոյն իսկ եթէ ան առաւօտը կանուխ՝ երկինքէն երկիր ալ փլած «արքայութեան» մը գուժը լսէր:

Ան ատեն, ուր ինք արդէն հեռացած կ'ըլլար դէպ ի աղօթարան, ես ու իմիներս բոլոր, որ իրենն ալ էին, ան հաւատքը ունէինք թէ՛ նա հարկաւ մեր կողմէն ալ կ'աղօթէ, կամ իր առաջին աղօթքը անպատճառ իր տունին կամ տունեցիներուն համար, արեւշատ կեանքի մը խնդրանքովը կը վերջացնէ կ'ըսէինք, մենք դեռ քիչ մըն ալ կը քնանայինք:

Բայց՝ պահէ մը վերջ ահա, ժամէն դարձած՝ ա՛լ հեշտ չէինք կրնար տէր մնալ մեր բարձերուն, ցասկոտ մեղադրանքներ մը կը թափէր վրանիս, որ ատեն ես զիս իմ հինգ ու վեց տարեկանի վախերուս մէջ կը զգայի, որ մօտս սաստող ձայնը կը փշրուէր ականջիս մէջ, «Մարդ մը որ իր օրը աղօթքով չսկսի, կ'ըսէր, ինչի՞ կուգայ, ի՞նչ բանի կը յուսայ տիրանալ ա՛ն օրը, ա՛ն ցորեկը, ու ամբողջ իր կեանքին մէջ»:

Յաւ կ'ընէր ու միշտ անոր համար մամնաւորապէս, որ պղտիկները իրեն գլուխ ծուելու ծոյլի անտարբերութիւններ կը ցուցնէին, աղօթք չէին

(*) Պղտիկները աս անունով կը կանչէին զինքը:

ըներ, ու կը վախնար կարծես, որ մեր տունէն ու մեզնէ բոլորէս քէն ընող Աստուծոյ մը վրէժխնդիր բարկութեանը դէմ մնանք օր մը չէ օր մը:

Բայց ես վստահ էի թէ՛ ինք անտարակոյս մեր ամբարիշտ թերացումներուն համար ալ իր Աստուածին գթութիւնը խնդրելու սուրբէ մ'աւելի բարեխօս անկեղծութիւնը ունի՝ ա'յնպէս ու այն սեռակ մաքուր հողիով մը, որուն պէսը մայր մը կ'ունենայ վստահաբար, մայր մը՝ իմ պաշտելի մօրս անձնուիրութիւնով, որ իր զաւկին բաժին հանուած դժոխքը, բոլոր իր արհաւիրքներուն ամբողջութեամբը, սիրով պիտի ուզէր որ իրեն վիճակուած երջանիկ յաւիտենականութեան մը հետ փոխէր անմիջապէս:

Անոր անձնուիրութեան չափը այլապէս չէի կրնար բացատրել ու ըսէի որ նա արդէն իր ողջ կարծուած կեանքին մէջ ալ շատ տալացոյցներ տուած թէ՛ ինք իր զաւակներուն սիրուն համար քսան կուտուն տարիներ առաջ արդէն սկսած էր մեռնիլ ու վերջապէս հինգ-վեց ամիս առաջ՝ ա'լ բոլորովին փակեց իր աչքերը յողմած, հատած իր վերջին ուժերուն անէացումովը:

Հիմա, հինգ-վեց ամիս եղաւ որ ալ չեմ տեսներ զինքը, բայց անկէ ի վեր վայրկեան մըն ալ չեմ մոռցեր զինքը, չեմ մոռցեր ո'չ իսկ մէկ վանկը իր մեղրիկ բառերուն, իր աղօթքի բանաձևն ալ միտքս է: Աս աղօթքը պզտիկ Զաւէնիս սովրեցնելու ջանք մը կ'ընէր ա'ն ատեն, ուր անոր ու միւսներուն համար իր դիտցածներէն սիրունիկ հէքեաթ մը կը վերջացնէր:

Մօրս աղօթքն ալ կը յիշեմ, այո՛, ինչպէս անոր լուռ, անձայն առաքինութիւնները կը յիշէի, որոնց միայն մէկուն պատմութիւնը, օր մը, այնքան եղական ու լուսաւոր վկայութիւն մը պիտի մշտնջենաւորէր թէ՛ գեղի Հայ կիսն ալ ի'նչ ունի

երբեմն , որ աշխարհք չգիտեր , աշխարհք տակաւին հասկցած չըլլար անոր այն բիւրեղիկ հայեացքէն ու բարութենէն , որ կը մտածես թէ՛ անկասկած՝ աւուր կրօնքէն ու ներշնչումներէն ալ շատ առաջ տեղ առած ըլլան անոր յատակ ու ջինջ խորքը կուրծքին , որ դուրսէն շատ անգամ սեւաների քուրջերու կտորուանքներով ծածկուած է :

«Տէ՛ր , բարի՛ լոս , բարի՛ Քրիստոս , չարը տանիս , բարին բերես , աշխարհի խաղաղութիւն , թագաւորաց հաշտութիւն պարգեւես : Դուն կանի կարողն ես (*), Աստուած , կապուտիկ Աստուած , կարճ գիշեր , երկայն ցորեկ , կարճ լաց , երկայն խնդուք , կարճ նեղութիւն , երկայն հանգիստ , կարճ աղքատութիւն , երկայն վայելք , Դո՛ւն , ի՞նչ բանի կարող չես , որ չի տաս : Լեռները քեզնէ կը դողան , երկինք , գետինք քու ահէդ կը սասանին , բարի՛ լոս , բարի՛ Քրիստոս , քու լո՛ս երեսիդ դուրպան , հաւատօքս հաւատամ քեզի , երեսանկեալ կ'երկրապագեմ , դաւակներուս հոգուն առողջութիւն , բանին , գործերուն ալ աջողութիւնս առ՛ւր , մուխէննէթին մուխթաճ չընես , ինծի ալ բարի մա՛ն մը ու շէն արքայութիւն մը պարգեւես , մեր մեղքերը մեր երեսին մի՛ բերեր , մեզ մեր մեղքերովը մի՛ պատժեր , մեր ննջեցեալներուն հոգեատրնուն համար ալ մեր աղօթքն ու խնդրուածքը մի՛ մերժեր , քեզի ինք ապաւիներ Տէ՛ր , բարի՛ լոս , բարի՛ Աստուած , եւն . եւն . . . » :

Ու վերջին մըն ալ իր երեսը խաչակնքելով «Չայր մեր»ը վերջին ըսելիքը կը պահէր ու լմնցած կ'ըլլար աղօթքը :

Անկէ վերջ , պզտիկները իր բոլորտիքը առած՝ երբ ժամէն կը դառնար , պզտիկներուն՝ միշտ , որովհետեւ ես ա՛լ ձանձրացեր էի լսելէ , իր անպատ-

(*) Կամք ընող ու կրցողն ես :

ճաս գիշերուան տեսած երազները պիտի պատմէր ,
 երազներ , որոնք մեկնել , բացատրելու համար իր
 շատ վատահ ու խորհրդաւոր կերպերն ունէր , որ
 կ'ըսէր թէ՛ իր ճիշդ համոզումներուն ու փորձա-
 ութեան վրայ հիմնուած են : Այնպէս նախապա-
 շարուեր էր թէ՛ լուսադէմի երազները առ հասա-
 րակ ուչ կամ կանուխ ո՛ր և է կերպով իրականու-
 թիւններ պիտի դառնային : Ամէն օր ալ աս էր
 ըսածը , ու կամաց կամաց , եւ ալ ան օրուան պա-
 տահելիքէն նախապէս բան մը հակցած ըլլալու
 համար , իմ նոյն իսկ շուղելովս ալ սովորութիւն
 ըրած էի գաղտուկ մը իր երեսին նայիլ , ուր եթէ
 դուարթ ժպիտ մը նշմարէի , ինչ որ ստոյգ նշանը
 պիտի ըլլար ան գիշերուան գեղեցիկ երազին , եւ ալ
 թեթեւ ուքով մը դործիս կ'երթայի , հակառակ
 պարագային իմ ալ բերանս չէր բացուեր կարծես :

Չիս ալ այնչափ պաշարեր էր իր երազներուն
 պէտպիտութեան վրայ , նոյն ատեն ճշմարիտ որ ամ-
 բողջ տունեցիները նախապաշարեր էր :

«Կարծիր ձին մը հեծուած ո՛ր և է մէկերնէս ,
 գեղեցիկ քաղղի մը մօտաւորութիւնը կը ցուցնէ ,
 կ'ըսէր , ազը՝ սրճի կսկծակի , եղը՝ թափուած հա-
 դուտի վրայ՝ գեշ բան , հաց եփել , ձերմակ , կրս-
 կուն հաց ունենալ տունը՝ վերահաս յաջողութեան
 հաւատարիք , պատարագ , քահանայ՝ կոխ , աղմուկ
 տունին մէջ , հարանիք , թմբուկ՝ տունին մէջ ման
 անպատճառ , տկուայ քաշուած կամ փրթած ան-
 ցաւ՝ կորուստ ազգականի , էգիին մէջ ծառ , ծա-
 դիկ ու վաղք մաքուր ջուրի՝ քարի երագ , ևն . . . » :

Նախապաշարում թէ ինչ մը , շատ անգամ ի-
 ըրաւ է որ ան երազներուն մէկ կամ միւսը իրակա-
 նացուած տեսնելու ձախաւեր անակնկալը կ'ըլլաք
 լացածնիս , աղուոր տեսիլքի մը ետեւէն սպասուածն
 ալ շատ քիչ պատահական , կամ շատ ուչ կուգար
 վերջապէս ամսեղ խնձիղ մը ծնցնել դէմքերու վրայ :

Հետաքրքրական մըն ալ ան որ գեղը կ'ըթ թողած էր ու ա'լ քովերնիա քաղքենուհի մը կ'ապ-
րէր, այնքան երկար տարիներ անցնելէ վերջն ալ
իր բոլոր երազներուն յատակն ու ամբողջ ճոյրը,
գեղը կը պահէր շարունակ: Գեղը՝ իր էգիին ծառ-
ներուն հետ, գեղը՝ իր քալած ու քաղած դաշտե-
րուն մէջ, գեղը, միշտ գեղը, ուր անայատճառ դի-
չերը պիտի ճամբորդէր թեւերովը իր երազներուն,
ու կանուխ լուսաբացին ալ անկէ դարձած ակա-
հատեսի մը ստոյգ մանրամասնութիւնովը պիտի
պատմէր բաները:

Հոն, այն ինչ կողմ, այն ինչ կանանչ առուա-
կը հոյն կը մնայ եղեր, որ դաժքած չէ տակաւին,
գեղին մէջտեղը՝ Փիլոննց (*) խաչը աւերակներու
ուակ խեղդուած, Ս. Գաւթի ալ գեղէն դուրս
լքուած ուխտատեղի մը մնալը կողքար: Այսպէս իր
կարգին կարմիր Եկեղեցիին (*) վրայ կ'ըսէր բա-
ներ մը, անոր մօտերը այն պատմական Աւագը
տեսած կ'ըլլար որ աղբիւրի աղջկան հէքեաթը
դիտէ:

Աղբիւրի այն սիրուն պայիկը պիտի դրնամ ու-
րիչ անգամ թէ ի'նչպէս ան թլկատինցի աղջիկնե-
րէն սօնուած նահատակուհի մը կը մնայ ամէն
տարի տախի ու ծախի աղմուկներով:

Գիշերուան մը ճամբորդութիւնով դէպ ի գե-
ղը, անկէ անվերջ, բայց շատ շահեկան յուշքեր մը
կը բերէր, որոնց սկիզբը մինչեւ իր հարմութեան
օրերու երջանիկ առաւօտը կ'ըլլար: Առաւօտը Չա-
տիկին, որ ատեն իր դիւղայի կնկան մը զարդե-
ղէններուն պէսպիսութիւնովը գեղեցկացած՝ թրուչ-
կոտ վաղքով մը Չատիկի պարին կ'երթար ու ան-
պատճառ ինք պիտի ըլլար պարերգին առաջնորդող
երգիչը: Իր ճայնին, այն քան զմայլելի իր ճայնին

(*) Ուխտատեղի

հմայքով, երբ քներդ մը կամ պարերդ մը կ'ըլլար սկսածը, ըսածը, օձերն ալ նոյն ատեն իրենց ծակերէն դուրս՝ մտիկ ընելու կ'ելլային:

* * *

Մա'յր, բոլոր ասոնք ու աս պատմածներուդ ամենայեւորն մանրամասնութիւններն ալ միտքս են սակաւին, որոնք տունին պզտիկներն ալ չեն մոռցեր ու անոնք մէկ մէկ սովբեցուցած աղօթքիդ պէս կը յիշեն, բայց՝ քանի որ կ'ըսեմ, միայն գիշեր մը ճամբորդելով, այնքան մը տեղեկութիւններ կը բերէիր գեղէն որ այնքան հեռու կը մնար մեզնէ, հիմա ալ պահ մը վեր ա'ռ դլուխդ ու ըսէ՛ ինձի, ի՞նչ կայ անդին: — Ի՞նչ ունիս գերեզմանէն, որ հունա այնքան ալ մեր մօտը կը գրասուի: Ըսէ՛, Մա'յր, վատան եղիր որ չպիտի մերժեմ լսել, երբեք չպիտի ձանձրանամ ըսելիքներէդ: Երազներուդ պէս արդեօք գերեզմանէն անդիիններն ալ նորէն ճշմարիտ իրականութիւններ պիտի հաշակես թէ բացարձակ ոչնչութիւն պիտի ըսես զարգապէս: Հարցուկի մը պատկառոտ սարսուանքներուն մէջ ու միշտ անհուն կարեւորութիւնով մը պիտի լսէի քեզ, մա'յր, ո՞րն է երազը, աս արեւի՞նը թէ՛ վաղուան ստուերներուն կեանքը, որուն դուն ամիսներէ ի վեր սկսուածքն ըրեր՝ դեռ մեզի բան չես ապսպրած, մեզ յուսահատ սպասանքի մը մէջ սգաւորներ կը պահես. բայց դուն այսչափ երկար չէիր քնանար, Մա'յր, դուն աքաղաղին ճիշովը ընդոտտ արթնցող մը, հիմա ամպելը կը սրտան ականջիդ ու բնաւ չես շարժիր, վեր չես առներ դլուխդ, աղօթքի չես վազեր, երազներդ իրականութիւն թէ ինչ, չես յայտնէր մեզի. ու կը դարմանամ թէ՛ ի՞նչպէս կրնաս համբերել:

Այսչափ երկար ու խորունկ քուն քնանալով, մինչեւ հիմա աշխարհք մը ըսելիք կը կախէիր

չրթուենքէդ . թողուկ գիշերի մը կեանքէն ամէնքն
ալ , հիմա ի՞նչ պիտի կրնայիր խօսիլ ան մեծ գի-
շերին կողքէն , անոր սոսկալի ու խաւարակուռ
ալքերէն , ուր մտար ու մարեցիր ճրագը ետեւէդ :

Առաջին օրը ի՞նչպէս ճամբորդեցիր , որո՞ւ հան-
դիպեցար , ո՞ւր ըրիր հանգիստի վարկենային դա-
դարդ , դուն որ արդէն շունչէդ կը կանչէիր :

Այն պահուն , ուր հողն ու քարը բուռ բուռ
քու մարմինդ խրող անտուկին վրայ թափուելով՝
դու թնդիւն մը կը լեցնէր գերեզմանդ , ի՞նչ խոր-
հեցար արդեօք , հէ՛ք մայր , մեղաւոր հնդկուհի՞ մը
կը թաղեն ըսիր , թէ՛ մարդիկ մահուան վրէժը
կ'առնեն այնպէս հողին տակ քեզ՝ քու մարմինդ
ծեծելով :

Ի՞նչ սակայն զգացի՞ր ասոնք , անդրադար-
ձա՞ր ան եղածներուն , երդում քեզի որ ես աւա-
զահատ մըն ալ հնետեցի վրադ , այդպէս թող
ձեռքս փրթէր , մա՛յր , թող այդ տեսակ յիմար
սովորութեան (*) մը համակերպութիւնով աջ ձեռ-
քէս , աջ աչքէս զրկուէի : Բարերը , հողերը քու
կուրծ քիզ նետուած , իմ գլխուս կ'իյնային արդէն ,
գերեզմանիդ քովէն դէպի տուն ես արդէն ճշմարիտ
մեռելի մը դարձայ : Առաջին մուտքը դժուար քայ-
լափոխ մըն է եղեր կ'ըսեն , հողի՛ս , աս կողմէն
այն կողմը սաւառնող հրեշտակներն ալ անխուսա-
փելի այդ դժուարութիւններէն պիտի անցնին եղեր
անպատճառ , հող մի՛ ըներ : Ի՞նչ միայն հիմա ըսե-
լու եղիր թէ՛ ի՞նչ տեսար այդ մուտքի դուռնէն
անդին , գտա՞ր , համբուրեցի՞ր այն քուկիներդ ,
որոնց կը փափաքէիր հէնց թերաստուերը աւանել :

Հայրս ո՞ւր կը մնար արդեօք , չտեսա՞ր , չի բա-

(*) Սովորութիւն մը , որ մեռելին տէրը ասի մը երկու ասի
հող կը նետէ իր մեռածին վրայ զայն գերեզման իջուցուելու
պահուն , և այս իբր թէ վերջին յարգանք մը ըլլայ մեռնողին
անունին :

ընկեցի՞ր բնաւ, չըսի՞ր թէ՛ երեսիս վրայ իր դար-
կած ապտակներուս տեղը հիմա աղէքեկ մօրուք մը
կը շփէ սողաղ, անստենս, որ անեկ ու թնճկոտ
խորհուրդ մը կը ճմռթկէ իր մտքին մէջ:

Ես ալ ո՞ր ճամբով գայի, որ շխտակ քեզի
հասնէի, հոն ալ մէկտեղ ապրէինք. առանց քու
ներկայութեանդ, ինձի համար այդ լոյսերու աշ-
խարհն ալ տրտում դատարկութիւն մըն է յայտ-
նապէս, ինչպէս հոս քեզ կորսնցնելէս ի վեր դը-
ժոխքի մը ցաւերն ունիմ հողիիս մէջ: Միայն քե-
զի կը հաւտամ, մա՛յր, պահ մը վեր ա՛ռ գլուխդ
ու ըսէ՛, կարճ ըսէ՛, հէնց ակնարկով մը հասկը-
ցո՛ւր, ի՞նչ կայ անդին: Միայն քու ըսածներուդ
անձնատուր պիտի մնամ, մա՛յր:





ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆԸ



Գրեց ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ




Մարդկային մտքին և հոգիին գործունէութեան մէջ շատ մը թաքուն և խորհրդաւոր կողմեր կան որ վերջին տարիներու մէջ հոգեկան երեւոյթներով զբաղող կարգ մը գիտուններու քննութեան և փորձարկութեան առարկայ դարձած են, առաջնորդելով զանոնք գեղեցիկ գործնական գիւտերու, որոնք գիւտ ըլլալէ աւելի ինչ ինչ մարդկային ամենահին ծանօթութիւններու հասկցողութիւնն ու գիտականացումն են: Այս կարգէն է ինքնաթելադրութիւնը (auto-suggestion), որ նոր բառի մը տեսքին տակ կը ցուցնէ մարդկային հոգիին յատուկ ամենահին երեւոյթ մը որ գոյութիւն ունի յորմէ հետէ մարդը գոյութիւն ունեցած է:

Հոգեկան այս երեւոյթին գործունէութեան պայմանները, անոր ոյժը և արդիւնքները ճանչնալ կարի գործնական օգտակարութիւն մը ունի, ահա թէ ինչո՛ւ համար այս նիւթն ընտրեցինք տարեցոյցի մը համար որ ամէն բանէ առաջ ժողովուրդին օգտակար և գործնական թելադրութիւններ պարունակելու է:

Յայտնի է թէ, արատքին ամէն զգայութիւն, ինչպէս նաև ներքին ամէն գաղափար կամ մտածում ուղեղին վրայ տպաւորութիւն մը յառաջ կը



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶՍՆՃԵԱՆ



բերէ : Այս տպաւորութիւնն ընդունող ուղեղային կէտը՝ անդրադարձ հակազդեցութեամբ մը, այդ տպաւորութեան համապատասխան գործ մը առաջ բերել, կամ դայն համապատասխան գործի մը վերածել կը ձգտի : Եթէ այդ տպաւորութեան համապատասխան գործը ուղեղին գիտակից կեդրոններուն յարակից և մեր կեանքին ենթակայ գործ մըն է, անմիջապէս կրնայ կատարուիլ, բայց եթէ ջղային անգիտակից և ինքնաշարժ կեդրոններէ կախում ունի, և մեր կամեցողութենէն անկախ է, ուղեղին հակազդեցութիւնը անզօր կը մնայ և առաջին տպաւորութիւնը գրեթէ արդիւնք մը չունենար : Այսպէս գործօրինակ, ենթադրենք թէ պարտէզի մը մէջ ենք, այն վայրկեանին որ փափաքը կ'ունենանք մեզ հրապուրող վարդենիէ մը վարդ մը քաղելու, անմիջապէս մեր այդ փափաքը գործի կը փոխուի և մեր ձեռքը կ'երկննայ ծաղիկը բրցնելու : Բայց ենթադրենք թէ տենդ ունինք և մեր բազկերակը 120 անգամ կը դարնէ, կամ պալար մը հանած ենք որ սաստիկ կը կոտտայ, մեր փափաքելովը կամ կամեցողութեամբը կարող չենք ըլլար ո՛չ մեր բազկերակին դարկը ծախի իջեցնելու, ո՛չ ալ զմեզ անզգայ դարձնելու պալարին ցաւին :

Ասոր հետ մէկտեղ պէտք չէ կարծել թէ մեր այն փափաքը կամ կամեցողութիւնը որ և է ազդեցութիւնն չունենար. ապահովաբար այն ալ տպաւորութիւն մը կը թողու ուղեղին վրայ, միայն թէ որովհետեւ ուղղակի մեր կամքէն կախում ունեցող գործ մը չէ, առաջին տպաւորութիւնը չի բաւեր, այլ պէտք է որ այդ տպաւորութիւնը կրկնուելով շեշտուի, համապատասխան արդիւնքը յառաջ դալու համար : Ըստ Տօքթ. Լիէպօի՝ յաճախ կրկնուած ամէն գաղափար վերջապէս ուղեղին մէջ կը փորագրուի և առաջ կը բերէ այդ գաղափարին համապատասխան գործը : Ուրեմն այս կերպով, զոր

օրինակ, արեան շրջանին վրայ ազդելու կամ ինք-
զինք որ եւ է զաւի անզգայ դարձնելու կարելիու-
թիւնն ալ անհաւանական չէ. այս կարողութիւններն
ունեցող մարդոց օրինակներ տեսնուած են, ինչպէս
են Հնդիկ Ֆաբիւրները:

Պէտք է ընդունիլ ուրեմն թէ, մարդկային
կամքը, սուսական ճիգով մը, կարող է ներգործել
իրմէ ուղղակի կախում չունեցող ջգային կեդրոն-
ներուն վրայ ալ և հետեւաբար ազդեցութիւն մը ի
գործ դնել մարդկային գործարանաւորութեան ամէն
մասերուն և անոր պաշտօններուն վրայ, առաջ բե-
րելու համար անոնց մէջ բաղձացուած փոփոխու-
թիւնները: Այն ներգործութիւնը զոր այս կերպով
մենք մեր անձին վրայ պիտի կրնանք ընել, կը
կոչուի ինքնասթեւադրութիւն, որ թեւադրութենէն
(suggestion) կը տարբերի անով որ այս վերջինը
ուրիշի մը կամքին միջոցաւ կը ներգործէ, մինչ
ինքնասթեւադրութիւնը ինք իր կամքին միջոցաւ:

Որպէս զի ինքնասթեւադրութիւնը բաղձացուած
արդիւնքը առաջ բերէ, հարկ է որ կրկնուի, և
որքան աւելի կրկնուի, այնքան աւելի ազդեցիկ
կը դառնայ: Յետոյ՝ ինքնասթեւադրութեան ատեն
հարկ է մեկուսանալ արտաքին աշխարհէ և ազդե-
ցութիւններէ, պէտք է ջգային հանդարտ և կրա-
ւորական վիճակ մը ստանալ և միաքէ հանելով
տարբեր ամէն խորհուրդ և մտածում ուշադրու-
թիւնը կեդրոնացնել ինքնասթեւադրութեան առար-
կայ եղող գաղափարին վրայ: Մարդ որքան աւե-
լի կարող ըլլայ այս պայմաններու մէջ կատարել
ինքնասթեւադրութիւնը, այնքան աւելի արդիւնա-
ւոր կ'ըլլայ այն:

Ինքնասթեւադրութեան ամէնէն յարմար ժա-
մանակն է գիշերը, պառկելու միջոցին: Ենթադ-
րենք թէ ձեր մարմնին որ և է մէկ կէտին վրայ
ցաւ մը, անհանգստութիւն մը կը զգաք. գիշերը

երբ քնանալու համար անկողին մտնէք, գիշերային լուծեան և մթուժեան մէջ ձեր մտածումը կեդրոնացուցէք ձեր մարմնին ցաւած կամ անհանգիստ կէտին վրայ, աչքերնիդ գոցեցէք և սկսեցէք միտքով կրկնել սա տեսակ խօսքեր. «Յա՛ւս կ'անցնի կոր, ցաւս անցաւ, ա՛լ ցաւ չունիմ, հանգիստ եմ, այլ եւս ցաւ չպիտի ունենամ» ևլն: Այս թելադրութիւնը 15-20 անգամ կրկնեցէ՛ք, յետոյ քիչ մը կեցէք և վերսկսեցէք կրկնել նոյն խօսքերը մինչև որ քուններնիդ տանի:

Առտուն երբոր արթննաք՝ հաւանաբար բարւոքում մը պիտի զգաք ձեր վիճակին վրայ, բայց երբ որ և է բարւոքում չզգաք, հետեւեալ գիշերը կը կրկնէք միեւնոյն թելադրութիւնը և այսպէս կը շարունակէք քանի մը գիշերներ, մինչև որ բաղձացուած արդիւնքը ձեռք բերէք: Միտքը, մտաւորապէս քունի միջոցին, անգիտակից գործունէութեամբ մը կ'աշխատի արդիւնագործել ինքնաթելադրութեան գաղտնիարը: Ասոր մէկ սովորական օրինակը տալու համար յիշենք թէ մարդ երբ առտուն կանուխ կատարելու գործ մը ունենայ և առջի իրիկունէ պառկելու ատեն միտքը դնէ իր արթննալու սովորական ժամէն առաջ այս ինչ ժամուն արթննալ, ճիշդ այդ ժամուն կ'արթննայ ինքնին. ասիկա արդիւնք է ինքնաթելադրութեան:

Ինքնաթելադրութիւնը աւելի ազդեցիկ կ'ըլլայ եթէ պառկելէ առաջ թուղթի մը վրայ 15-20 անգամ գրէք դայն, յետոյ բարձրաձայն նոյնքան անգամ կրկնէք, յետոյ պառկիք և մտաւորապէս կրկնէք միեւնոյնը մինչև որ քնանաք: Այս կերպով կատարուած ինքնաթելադրութիւնը գրելու և կարդալու միջոցաւ տեսութեան և լսելու միջոցաւ ալ լսողութեան կրկնակ ճամբաներով ուղեղին վրայ տպաւորուած կ'ըլլայ և բնականաբար աւելի ուժ

կ'առնէ, որովհետեւ տպաւորութիւնը ընդունող ուղեղին քանի մը կէտերը միանգամայն կը գործակցին թելադրեալ գաղափարն իրականացնելու համար:

Այսպիսի ինքնաթելադրութիւններ կրնան արդիւնաւորապէս ի գործ գրուիլ եթէ ո՛չ ծանր կամ քրոնիկ հիւանդութիւններու, գոնէ ամէն տեսակ թեթեւ ցաւերու և անհանդատութիւններու համար (ինչպէս են գլխացաւ, ակռայի կամ ականջի ցաւ, անքնութիւն, դժուարամարսութիւն, գէշ ակտրժակ, սնդութիւն, յօդացաւ, ևն.) և վերջապէս այնպիսի՝ պարագաներու մէջ ուր գործարանական ծանր մնասուած մը (lésion) գոյութիւն չունի, կամ հիւանդութիւնն արդիւնք է գործարանի մը տարականոն (anormal) գործունէութեան կամ կենսական ոյժին նուազման կամ սպառման: Ասկի դատ ինքնաթելադրութեամբ կրնանք դարմանել նաև դուա հոգեկան կամ բարոյական տրամադրութիւններ, ունակութիւններ կամ նկարագրի թերութիւններ. օրինակի համար՝ երկչոտ մէկը՝ համարձակ ըլլալու, ակտրաբարոյ կամ մեղամտոճոտ մէկը՝ զուարթ դառնալու ինքնաթելադրութիւններ կրնան կատարուիլ և բարեփոխումներ ձեռք բերուիլ ինք իր վրայ:

Ինքնաթելադրութեան համար պէտք է ընտրենք այնպիսի բառեր և խօսքեր որոնք պարզօրէն արտայայտեն թելադրելի գաղափարը և ճշդիւ հակադրեն դարմանել ուղուած հիւանդութեան կամ թերութեան վրայ: Յետոյ՝ աւելի լաւ է ներկայ ժամանակ գործածել քան թէ ապառնի և իբրև թէ դարմանելի հիւանդութիւնը կամ թերութիւնը գոյութիւն չունենար մեր վրայ. ըսել, զոր օրինակ «Ես աւտղջ եմ, ես զուարթ եմ ևն.», փոխանակ ըսելու «Ես աւտղջ պիտի ըլլամ, ես զուարթ պիտի ըլլամ ևն»: Ապառնի ժամանակ կրնանք գործածել որոշ ժամանակի մը հետ յարաբերելով

միայն . այսպէս կրնանք ինքնաթելադրութիւնը կատարել ըսելով . «Երբոր առտուն արթննամ գլխուս ջաւը անցած պիտի ըլլայ ևն» : Եթէ որոշեալ ժամանակին բարւոքում մը չզգաք իսկ ձեր վրայ՝ մի հաստատէք հիւանդութեան գոյութիւնը , այլ ուրացէք զայն , և եթէ կարելի է ձեր շուրջիններուն ալ պատուիրեցէք որ հաստատեն թէ «զուք առողջ էք , ցաւերնիդ անցած է» ևն :

Մարդկային միտքը՝ իր անդիտակից գործունէութեան պայմաններուն մէջ որու շնորհիւ ինքնաթելադրութիւնը կ'իրագործէ , կամ ուրիշ բառով , ինչպէս շատերը կ'ընդունին , մարդկային գիտակից եսին տակ թաքուն անդիտակից ետը կարելի է նմանցնել դիւրահաւան մարդու մը որ ամէն սուտի կը հաւատայ և կ'աշխատի համակերպիլ անոր : Ինքնաթելադրութեան տակն հարկ չկայ կա՛քի բռնադրօսիկ ճիգեր ընել , այլ հանդարտօրէն և վստահութեամբ պէտք է կատարել զայն : Նոյն իսկ հաւատքն ալ անպատճառ պայման չէ և մեքենայէս կատարուած ինքնաթելադրութիւններն ալ զուրկ չեն ազդեցութենէ : Երբեմն ինքնաթելադրութեան արդիւնքը ժամանակի կը կարօտի երեւան գալու համար . բայց վերջապէս ամէն թելադրութիւն ուշ կամ կանուխ իր ազդեցութիւնը կ'ունենայ . ուրեմն եթէ աւաճին փորձերուն արդիւնքը բողձայուածին չտի անմիջական և վճռական չըլլայ իսկ , պէտք չէ բնաւ յուսահատիլ , այլ պէտք է համբերութեամբ շարունակել փորձերը և սպասել եղի՛ք որ ի վերջոյ դուք ալ պիտի դարմանաք ձեր ձեռք բերած յաջողութեանը վրայ , ու հետզհետէ որոշ գիտակցութիւնը պիտի ունենաք թէ ձեր գործարանաւորութեան մեքենական պաշտօններուն , անոր բոլոր կենսական գործողութիւններուն սկսած էք դիտող դառնալ և ձեր մէջ թաքուն ջղային ոյժը կարող էք ըստ հաճոյս ու-

դարկել կամ կուտակել ձեր մարմնին ո՛ր կէտին վրայ որ ուզէք, ձեր մարմնական կամ հոգեկան առողջութեան մէջ բաղձացուած կանոնաւորութիւնը ձեռք բերելու համար:

Ինքնաթելադրութիւնը նաև կամքի մարզանքի առաջնակարգ միջոց մըն է: Կամքով տկար մէկը կրնայ ուղղակի իր կամքը զօրացնելու ինքնաթելադրութիւններ ալ կատարել, բայց որ և է տարբեր ինքնաթելադրութիւն ալ անուղղակի կերպով կամքի զօրացման կը նպաստէ, որովհետև որքան որ սլ պարզ և դիւրին բան ըլլայ ինքնաթելադրութեան փորձը, եթէ մեքենաբար իսկ կատարուի՝ անձանձրոյթ կերպով և կանոնաւորութեամբ կատարուելու համար կը պահանջէ աստիճան մը յարատեւութեան ոգի: Ուրեմն երբ մարդ կամքի ճիգով մը դիտնայ դիմադրել առաջին թուլացումներուն և համբերութեամբ և կանոնաւորութեամբ շարունակելով փորձերը ինքնաթելադրութեան վարժութիւնը ձեռք բերէ, այդ վարժութիւնն իսկ կամքի մարզանք մը պիտի ըլլայ և պիտի նպաստէ անոր զօրանալուն, և կամքը զօրանալով փոխադարձաբար պիտի նպաստէ ինքնաթելադրութեան, դայն հետզհետէ աւելի ազդեցիկ և արդիւնքը աւելի անմիջական դարձնելով:

Երբոր մարդ ինքնաթելադրութեան վարժութեամբ կամքի զօրութիւն ձեռք բերէ, անոր շնորհիւ պիտի կրնայ իր անձին վրայ իշխել, ինքզինքը վարել և մարդ ինքզինքը վարել դիտնալով կարող պիտի ըլլայ իր բարոյական անձը փորձութիւններէ հեռու պահել, իր մէջ ծնող յուսի միտումները կամ ակորժակները դիւրութեամբ զսպել, մոլութիւններու դիմադրել, իր թերութիւններն ուղղել և իր յատկութիւնները կատարելագործել: Ուր որ կամքի ուժը առանձին չի բաւէ այս բանին, ինքնա-

Թելադրութիւնը օգնութեան պիտի հասնի և արդիւնքը վճռական պիտի ըլլայ :

Այնպիսի պարագաներու համար խակ՝ որոնք ընդհանրապէս կը կարծուին թէ արտաքին պայմաններէ կախում ունին, ինքնաթելադրութիւնը կրնայ իր օգուտը ունենալ : Զորօրինակ կեանքի մէջ յաջողութիւնը շատ անգամ բաղդի գործ կամ միջավայրի պայմաններու արդիւնք կը համարուի . բայց ուշադրութեամբ քննելով խնդիրը, պիտի համոզուինք թէ յաջողութիւնը աւելի ներքին անհատական պայմաններէ կախում ունի քան թէ արտաքին : Յաջողութեան տարրերը մարդ էապէս ինք իր մէջ կը կրէ : Յարատեւութիւնը, պատեհութենէն օգուտ քաղելու ձարպիկութիւնը, սուր դիտողութիւնը, համակրութիւն ներշնչելու, սիրազրաւելու յատկութիւնները ևն ևն . որոնք յաջողութեան ճշմարիտ պայմաններ կը համարուին, էապէս անհատական են և կրնան ինքնաթելադրութեամբ ու կամքի զօրութեամբ ձեռք բերուիլ և մշակուիլ :

Ինքնաթելադրութիւնը արդի հոգեբանութեան մէկ նոր էջը կազմած է այլ ևս և թէև իր գործնական գիտակից կիրաւութիւնը կրնայ նոր գիւտ մը համարուիլ, բայց իր արդիւնքները մարդկութեան շափ հին են : Այսպէս՝ ուխտավայրերու միջոցաւ հաւատքով կատարուած բժշկութիւնները արդիւնք են անգիտակից ինքնաթելադրութեան : Հիւանդը կատարեալ վստահութեամբ կը դիմէ ուխտավայր մը որուն կատարած հրաշալի բժշկութիւններուն համբաւը մեծ տպաւորութիւն թողած է իր մտքին վրայ . այս տպաւորութիւնը և անոր ծնցուցած հաւատքը հիւանդին համար կ'ըլլայ զօրեղ ինքնաթելադրութիւն մը որուն շնորհիւ իրապէս կը բժշկուի : Ուխտավայրերը այս տեսակէտով նշանա-

կելի օգտակարութիւններ ունեցած են ժողովուրդին, և կ'արժէ որ անոնց համբաւը պահպանուի:

Աղօթքն ալ գերազանց ինքնաթելադրութիւն մըն է. սկեպտիկներն ի՛նչ կ'ուզեն ըսեն, աղօթքէն արդիւնաւորուելու հնարաւորութիւնը կարելի չէ ուրանալ և հարկ չկայ զայն միշտ գերբնական ազդեցութեան վերագրել, վասն զի կան պարագաներ՝ ուր աղօթքին ծնցուցած ինքնաթելադրութիւնը կը բաւէ բաղձացուած փոփոխութիւնը առաջ բերելու աղօթողին գործարանաւորութեան կամ հոգեկան տրամադրութիւններուն մէջ, երբ աղօթքի առարկայ եղող խնդրանքը աղօթողին անձնական պայմաններէն կախում ունի: Ո՞չ ապաքէն աղօթքն ալ նոյն պայմաններու մէջ կը կատարուի որոնց մէջ որ պարտի կատարուիլ ինքնաթելադրութիւնը, զոր օրինակ առանձնանալ, արասքին աշխարհէն մեկուսանալ, բոլոր ուշադրութիւնը գաղափարի մը վրայ կեդրոնացնել ևլն: Յետոյ, աղօթքն ալ ինքնաթելադրութեան պէս կրկնուելու, յեղյեղուելու պէտք ունի:

Կարգ մը ժողովրդական աւելորդապաշտութիւններու մէջ ալ քիչ շատ բանաւոր հիւմ մը կըրնանք գտնել երբ նկատի առնենք թէ կրնան ինքնաթելադրութեամբ մեկնուիլ: Օրինակի համար՝ ինչ ինչ հիւանդութիւններէ կամ փորձանքներէ զերծ մնալու կամ բուժուելու համար մասնաւոր բրժժանքներ կամ նուսխաներ կը յանձնարարուին պառաւ մամիկներու կամ վհուկներոց կողմէ: Անշուշտ այդ առարկաներուն գերբնական ազդեցութիւն մը ընծայել տղայական ըմբռնում մը պիտի ըլլար: Բայց զանոնք կրողին այն համոզումը և հաւատքը թէ ինք այդ բրժժանքներու շնորհիւ պիտի բուժուի կամ պաշտպանուած է այս կամ այն հիւանդութեան դէմ, զօրաւոր ինքնաթելադրութիւն մը կ'ըլլայ իրեն և այդ ինքնաթելադրութեան շնորհիւ

կրնայ ստուգիւ բժշկուիլ կամ զերծ մնալ այն հիւանդութենէն :


Բայց ինքնաթելադրութիւնը միշտ բարերար արդիւնք մը չէ որ կ'արտադրէ . սն որքան բարերար՝ նոյնքան ալ յուր ազդակ մը կրնայ ըլլալ մեր գործարանաւորութեան համար ինչ ինչ պայմաններու մէջ : Մարդկային մտքին կամ ուղեղին վրայ անգամ մը ընդունուած ո՛ր և է տպաւորութիւն անպատճառ հետք մը , ծալք մը կը թողու և դադափարներու զուգորդութեան օրէնքով այդ տպաւորութիւնն ինքնին կը կրկնուի ամէն անգամ որ նման պայմաններ գոյութիւն առնեն : Այսպէս շատ անգամ միտքը իր ընդունած ո՛ր և է յուր տպաւորութիւնը ահամայ կրկնելով՝ անգիտակից թելադրութիւն մը ի գործ կը դնէ ինք իր վրայ որ վերջապէս գործի կը փոխուի և կազմութեան մէջ առաջ կը բերէ համապատասխան մնայուն ախտահիշեր : Զորօրինակ՝ մարդ անգամ մը գիշեր ատեն մութին մէջ բանէ մը կը վախնայ , այդ կրած վախին տպաւորութիւնը կրկնուելով կամ վերջիշուելով ամէն անգամ որ գիշերային մթութեան մէջ առանձին գտնուի , մարդը կը դառնայ երկչոտ մէկը և այլ եւս չի կրնար գիշերն առանձին դուրս ելլել : Երբեմն անգիտակից ինքնաթելադրութեան ծագումն անյայտ կը մնայ : Միտքը՝ գիտակից տպաւորութիւններէ զատ՝ շատ անգամ ալ կ'ընդունի այնպիսի հարեւանցի տպաւորութիւններ , որոնց բնաւ չանդրադառնար մեր գիտակցութիւնը , բայց որովհետև ուղեղը ամէնէն աննշան տպաւորութիւնն ալ կ'արձանագրէ , այս անգիտակից տպաւորութիւններն ալ իրենց կարգին կը վերյուշուին և կը կրկնուին անգիտակցաբար , և ահա տեղի կ'ունենան այնպիսի ինքնաթելադրութիւններ որոնց պատճառներն անգամ անձանօթ կը մնան մեզ :

Դժբաղդաբար մարդիկ շատ մը ջղային հի-

ւանդութիւններ ու բարոյական ախտեր կամ հոգեկան յոռի տրամադրութիւններ, ինչպէս նաև բոլոր գէշ սովորութիւններն ու ունակութիւնները գիտակից կամ անգիտակից տպաւորութենէ առաջ եկած անգիտակից ինքնաթելադրութիւններու կը պարտին: Նախապաշարումներն ալ շատ անգամ շարժառիթ են մնասակար ինքնաթելադրութիւններու: Ռամիկներու մէջ գէշ նշան համարուած դէպք մը, հանդիպում մը, զորօրինակ գէշ մեկնուած երազ մը, շան մը ոռնալը, աչք խաղալը ևն. ևն, կրնան ախտածին շարժառիթներ ըլլալ այնպիսիներու որոնք այս տեսակ նախապաշարումներու կը հաւատան:

Ընդհանրապէս ջղային անձերը պատրաստ որսեր են այսպիսի անգիտակից և ակամայ ինքնաթելադրութիւններու. բայց ո՛վ որ ալ ըլլայ՝ ամէն պարագայի մէջ պարտի զգուշանալ այսպիսի յոռի ինքնաթելադրութիւններ առաջ բերող պատճառներէ և եթէ անգիտակցաբար ենթարկուած է՝ պէտք է գիտակից ինքնաթելադրութեամբ հակադդէ անոր արդիւնքներուն վրայ և ինքզինք փրկէ անոր ազդեցութենէն: Յուսահատութիւնը, յոռեատեսութիւնը, կասկածոտութիւնը, մելամաղձոտութիւնը միշտ յոռի ինքնաթելադրութիւններ կը ծնցնեն մեր մէջ, մինչդեռ լաւատեսութիւնը, զրւարթաբարոյութիւնը, ինքնավստահութիւնը կազդուրիչ ինքնաթելադրութիւններու ազբիւրն են և մեզ կը դորացնեն միտքով ալ, մարմնով ալ:

Ահաւասիկ ամենապարզ միջոց մը, ինքնաթելադրութիւնը, որ շատ մը բարիքներ կրնայ ապահովել տառապող մարդկութեան: Թերեւս շատերուն ծիծաղը պիտի շարժեն մեր այս տողերը, բայց պարտին գիտնալ թէ այսօր Եւրոպայի և Ամերիկայի մէջ շատ նշանաւոր գիտուններ և բրոֆէսէօրներ անկեղծ հաւատացեալներն են ինքնաթելադրութեան և թելադրութեան հրաշայլիքներուն, որոնց գործնական կիրառութիւններուն վրայ բազմաթիւ գիրքեր կան հրատարակուած:





ՕՆՆԻԿ ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՅ



ԻՆՉՊԵՍ ԿԸ ԽԱՐԵՆ



Գրեց ՉԻՖԹԻ-ՍԱՆՆՅ



անրածանօթ անձնաւորութիւն մըն էր մայրաքաղաքին մէջ վարդան խալֆան : Մատով կը ցուցնէին զինքը : Այդպէս ընողները մեծապէս իրաւունք ունէին : Անժըխանլի արժանիքներ ունէր ան ու բաղդն ալ երբեք չէր դադրած իրեն ժպտելէ : Այլ ամէնէն շատ աւածի կարգ անցած էին , դրամականի մէջ իր պարկեշտութիւնը , ուղղամտութիւնը , խոստմնապահութիւնը : Ինչ որ կարգ մը ասպարէզներու մէջ , ինչպէս ճարտարապետութիւն , փաստաբանութիւն և այլն և այլն , խիստ հազուադիւր բաներ են : Իր ճաշակին , հրմտութեանը և կարողութեանը չափ ալ և թերեւ աւելի , այդ պատուաւորութեան համար ըլլալու էր որ այսչափ յաջողած էր ան : Ժողովուրդը և իր բանեցուցած գործաւորներու լէզէնը «Վարպետ խալֆա» կը յորջորջէին զինքը և իրաւամբ ասպահովարար : Մայրաքաղաքին ամէն կողմը հիւանդանոց , եկեղեցի , դպրոց , արարթըման , խան և և ուրիշ ինչ խոշոր ու շքեղ շէնքեր որ տեանայիբ կամ ինք էր կառուցած և կամ իր գծած պատկերին վրայ շինուած էին , իր տեղակալներուն ձեռքով , երբ ինք չափազանց դբաղած կ'ըլլար : Անոնք բոլոր , քսան-քսանըհինգ տարուան շրջանի մը մէջ հրաշքով կարծես գեաինէն բուսած , անկորնչելի

յիշատակներու պէս կը կարկառէին, սուղորական ու
փնթի շինութիւններու խաժամուժի մը մէջէն և
անսուտ վկաներ կը թուէին ըլլալ, մշտնջենապէս
պանծայնելու համար վարպետ խաղֆային մեծա-
գործութիւնները ու փառքը:

Վարդան Վարպետեան, Բալուցի որմնագիրի
մը Տէրտէրեան համբար վարպետին տղան, շատ
պզտիկ տարիքէն բուռն հակում մը ցոյց կուտար
ճարտարապետութեան ու դժագրութեան, երբ թա-
ղին դպրոցէն իրիկուան արձակուելով ուղղակի
կուգար հօրը բանած ետրուն և ուսումնասիրելով
շինուելիք շէնքին յատակագիծները, ինքնորեր կ'ուր-
ուադժէր մարմարներուն կամ մալթաներուն վրայ:
Այն աստիճան որ կանուխէն ուշադրութիւնը գրա-
ւած էր ան, այն ճարտարապետին՝ որուն քով կ'աշ-
խատէր իր հայրը և ժամանակէն շատ առաջ մեկ-
նելով դպրոցէն մտած էր անոր քով: Ըսինք թէ
բաղդը միշտ ժպտած էր իրեն: Բաւական ատեն
դորձնական կերպով եփելէն ետքը ասպարէզին
մէջ, մէկը այն ատենի հարուստ ու բարեկիրտ անձ-
նաւորութիւններէն, որոնց սերունդը հետզհետէ
հատնելու վրայ է հիմա դժբաղդարար, իր սրաշա-
պանութեան տակ առած էր զայն և Իտալիա դըք-
կած, ուր լեզուն սորվելու և ուրիշ նախնական
դժուարութիւններու անդամ մը յաղթելէ վերջը
յաջողութիւն յաջողութեան վրայ ձեռք բերած էր,
մասնաւորապէս գեղեցկագիտութեան ու գժագրու-
թեան ճիւղերուն մէջ: Անկից մեկնած օրը, առա-
ջին կարգի վկայականի մը հետ կ'արժանանար նաեւ
ոսկիէ մրտալի մը:

Հիմա հին ու անառչ յիշատակներ էին ատենք:
Երիտասարդը, յուսալից ու անկուտի, Պոլիս էր վե-
րադարձած այն ատեն: Արքունի ծառայութեան
մէջ գտնուող մէկ քանի ականաւոր ճարտարապետ-
ներէ զատ ուրիշ Եւրոպա ուսում առած խաղֆա

չի կար դեռ ան ատենները, որ հանրային դործն-
 քու մէջ մտած ըլլար և անանկ ատեն մը ուր,
 դրամը առատ, փոխանցումի շրջանի մը մէջ էր,
 կալուածաշինութեան դործը, և ամէն մարդ հին
 ձեռ ու պզտիկ շէնքեր շինելու դրութիւնը ձգելով,
 ահագին խաներ, արարդրմաններ, հիւանդանոցներ,
 մթերանոցներ կառուցանելու ետեւէ էր, ու ամէն
 բան խոշոր կը տեսնար, այն ատենները ամէնուն
 վրայ ծանրացող տեսակ մը մեծամոլութեան հե-
 տեւանքով: Եւ Վարդան դիպոցեր էր օգտուիլ այդ
 շրջանէն ու հիմա այդ մէկ քառորդ դարու ժա-
 մանակամիջոցէն վերջը, ոչ նուազ քան քառսուն-
 յիսուն հազար ոսկի կը բռնէր, թէև բնաւ առջի
 trainը չէր փոխած և արտաքին ոչինչ կը յայտ-
 նէր իր այդ մեծ հարստութիւնը: Միեւնոյն ատեն
 իր վաստիած ստակը կրցած էր շահագործել, խիստ
 աժան տեղերու վրայ, կէս դինով շէնքեր կառու-
 ցանելով շնորհիւ իր արուեստին, որոնք ժամանակ
 անցնելով կրկնասպասիկ, քառասպասիկ և աւելի
 կ'արժէին:

Հայրը որ շատոնց դործէ քաշուած էր, ազուն
 փառքին ու մեծութեան ականատես ըլլալէ վերջը
 մտած էր քանի տարիէ ի վեր, անձուկ ու անշուք
 այն բնակարանին մէջ ուր կը նստէին միշտ, հա-
 կառակ իրենց ազուն նիւթական յաջողութեան:
 Յետոյ մայրն ալ մեռեր էր օրհնելէ վերջը ազան
 ու խօսք առնելէ ետքը անկէ որ պիտի ամուսնա-
 նայ ու դաւակններու տէր պիտի ըլլայ: Հէք կինը
 ողջութեանը շատ ինկեր էր ազուն ետեւէն, բայց
 ան՝ ամբողջութեամբ իր արուեստին նուիրուած,
 անոր սիրահարուած կարծես, բնաւ չէր ուզեր տես-
 նալ, իմանալ բան մը որ ճարտարապետութեան
 շրջանակէն դուրս կ'իյնար: Երանիկ խաթուն կ'ող-
 բար այն հարստութեան վրայ, որ հետզհետէ կը
 մեծնար անհամեմատ կերպով, զոր իրենք չէին

վայելած, զոր Վարդան՝ ինքն իսկ մանանեխի չափ
 չէր գործածեր իր հաճոյքին ու հանդատութեան
 համար և զոր ժառանգող մըն ալ չպիտի ըլլար
 գէթ, իրենց սերունդէն ու արիւնէն, որուն մտա-
 ծումովը կարենային հրճուիլ ու մխիթարուիլ: Վեր-
 ջապէս վերջին վայրկեանին Վարդան ստիպուեցաւ
 խօսք տալ, իր ցաւին մէջ անգիտակից, և միա-
 միտ կինը հանգիստ սիրտով փնէց իր շունչը վերջին:

Ըսինք թէ իր խօսքը յարգող մարդ էր խալ-
 ֆան, մանաւանդ իր մօրը տրուած խօսք մը, այդ-
 քան հանդիսաւոր վայրկենի մը: Յետոյ երբոր քիչ
 մը ժամանակ անցաւ և իր միայնութեան ծանրու-
 թիւնը զգաց հօրենական տնակին անկիւնը, խոր-
 հեցաւ որ, թերեւս նախախնամական բան մը կար
 մօրը տուած այդ in extremis խոստումին մէջ:
 Եթէ մինչև այն ատեն չէր կարգուած, պատճառը
 պարզ էր: Նախ ուզած էր դիրք մը շինել, յետոյ
 արուեստին համար ունեցած անսահման սէրը, չէր
 ուզած ու չէր կրցած բաժնել որ և է բանի մը հետ,
 յետոյ գիտէր իր բնութիւնը որ սարսափելի կերպով
 նախանձոտ էր: Գիտէր որ իր այդ այլանդակ հա-
 կամխտութիւնով դժբաղդ պիտի ընէր իր կինը և
 իր գլխուն ալ հազարումէկ դժուարութիւններ պի-
 տի փաթթէր: Ի՞նչ պէտք ողջ գլուխը Աւետարանի
 տակ դնել:

Հի հա, յիտունը անցուկ այդ մարդուկը, բաղ-
 մոցին անկիւնը, մինտէրին վրայ ծալլապատիկ նրա-
 տած, հօրը համբիչը ձեռքը, կը խորհէր ու իր անց-
 եալ կեանքին հաշուեկշիռը կ'ընէր: Տեսակ մը խե-
 շայեղ վաղք եղած էր ան, դէպ ի հեռաւոր նայա-
 տակ էր, որուն հասած էր ալ: Իրամ շահած էր,
 ամէն կողմ իր մեծագործ ձեռակերտներով լեցու-
 ցած էր ու զինքը կը պատուէին իբր մեծ արուես-
 տագէտ մը:

Կերպով մը իր խտէպին լրացունն էր այդ:

կայն գոհունակութիւն մը կ'զգար իր էութեան խորը, որ իրեն հետ կը բերէր նաև անխուսափելի յամիրացումը: Հիմա նոր հորիզոններ կը բացուէին իր չորս դին զորս մինչեւ այսօր ոչ իսկ ընդհնմարած էր: Երիտասարդ ու աղուոր կին մը, սիրոյ կեանքը, պաշտելի զաւակներ, ընտանեկան յարկ, երջանկութիւն: Ի՞նչը կը պակսէր այդ ամէնը ունենալու համար: Եւ այսպէս, օրերով շարաթնէրով, ամիսներով, մտածելէն, տատանելէն, տուայտելէն վերջը որոշումը տուաւ կարգուելու:

Էմիլիէնի կողմերը, ծովահայեաց բարձր դիրքի մը վրայ ընդարձակ գետին մը ունէր, ծառազարդ ու հովաատն, զոր գործի մէջ առնելիքի փոխարէն ձեռք անցուցած էր: Շքեղ վիլլա մը շինեց հոն, իր ապագայ բոյնը կազմելու համար և իր բովանդակ տաղանդը թափեց անոր վրայ, զայն confortի, ճոխութեան, նուրբ ճաշակի ու գեղեցկագիտական կատարեալ հրաշալիք մը ընելու համար: Եւ ճարտարապետական անբաղդատելի այդ արտադրութիւնը, գերընտիր այդ գոհարը, պակումը եղաւ իր ասպարէզին. տեսակ մը հրաժեշտի ողջոյն կարծես, արուեստի սիրուն ընծայուած բացարձակ սարկութենէն պրծելու և զայն ուրիշի մը հետ բաժնելու յանցապարտ գաղափարին ի քաւութիւն: Մասնագէտ կահաւորիչներու խորհուրդով Եւրոպայէն սքանչելի ու ծանրագին կարասիներ բերել տուաւ և յարդարեց վիլլան:

Անասնման պարտէզը, արդէն բնական գեղեցկութիւնով հարուստ, կատարեալ դրախտ մը դարձաւ, տարդած յարատեւ ու բանիրուն խնամքներու տակ: Ծառաներ, տունէն կառքեր, խովաթ, սէյիս, serre, զմայլելի collectionներ, հազուագիւտ թռչուններ ու կենդանիներ և ուրիշ ինչ որ կարելի է երեւակայել: Դրախտ մը վերջապէս ուր դշխոն միայն կը պակսէր:

Բայց դրամին միւս երեսն ալ կար: Ինչպէս ըսինք Վարպետ խալֆան յիսունը անցուցած էր արդէն: Գլուխին plate-formeին վրայ մազին հետքն իսկ չէր մնացած և լերկ մերկութիւն մը միայն իր իւղափայլ ամայութիւնը կը ցուցադրէր: Երկու քովերը, ականջներուն վրայ ու ետին խառնիխառն, գորշագոյն մազեր, լայնանիստ ֆէսէն դուրս կը խռուանային: Պեխերն ալ ու մօրուքը, նոյնչափ ճերմակախառն ու անխնամ, լայն բերնին վերեւն ու շուրջը: Քիթը, այտերը ու ճակատը ծաղիկի փոսիկներ կը կրէին և պզտիկ աչքերը ճպռտտած ու կարմրած շրջանակներու մէջ ազուցուած էին: Խիստ կարճ հասակ մը ու լայնչի մարմին մը՝ որ կը Ֆշար միշտ, այլանդակ երեւոյթ մը կուտային իրեն ամբողջութեան, և մարդ կը զարմանար թէ, կոպիտ այդ անօթին մէջ ինչպէս կըրցած էին պարտրկուիլ, այնքան գեղեցիկ դանձեր, օրինակի համար ճաշակ, նրբութիւն, արուեստ, երեւակայութիւն, ներդաշնակութիւն: Վրան դլուխը միշտ անխնամ, օձիքը միշտ իւղոտ, կօշիկները միշտ ներկաթափ, քրավաթը միշտ ծուռ, կոճակը միշտ փրթած, փանթալօնը միշտ փոշոտ ու ծունկ շինած, շապիկը միշտ շտարէ դուրկ: Անտաշ հօրմէն մնացած սովորութիւններու ու արուեստագէտի պօհեմութեան տեսակ մը խառնուրդ կարծես: Ասոր համար էր թերեւս որ, սովորութիւն չէր ըրած երբէք հայելին նայիլ, չտեսնալու համար միակ տգեղ բանը, այնչափ գեղեցկութիւններումէջ, զորս ինք կ'ստեղծէր, կը կերտէր անդուլ, ինչպէս կը սիրէր ըսել ինք կատակելով ու խնդալու համար, երբ ուրիշներ, խաթրերնին սեպուած բարեկամներ անշուշտ, նրբօրէն դիտողութիւն կ'ընէին իրեն անխնամ վրադլուխին: Եւ սակայն, հսկառակ ասոր, տարիներէ ի վեր, ամէն օր, ամենէն բարձր տեղերէն աղջիկ տալու առաջարկներ կը հասնէին իրեն:

—Փարայ կը պռնէ հա՛, կ'ըսէին ու քիչ կը մնար որ խաչակնքէին, հասուկ աղջիկ ունեցող հայրերը :

—Անիկա առնողը զինքը եօլի կը բերէ, կը փախապին ետեւէն, զոքանչութեան թեկնածու խաթունները :

Այ կարելի է երեւակայել թէ ինչ տակնուվրայութիւն ու զարմանք առթեց, երբ Վարպետ խալֆան, իր անձնական վիլլան — ապարանքը աւելի — փոխադրուելէն ետքը, սկսաւ կերպարահասփոխուիլ, շիքնալ ու երիտասարդանալու աշխատիլ : Հագուստները Պօթերին շինել տալ սկսաւ, կոշիկները Հէրալին, շապիկները Իւնիւվէրսէլին, Գրավաթները Միրէն էին ու աղամանդներ կը փայլէին անոնց վրայ, ինչպէս մասներուն բոլորը : Գանկին շուրջը մնացած մաղերը ու մօրուքը սեւի սեւ ներկուած ու խնամով կտրուած էին հիմա միշտ, շատ քիչ անգամ շաղանակադոյնի չալելով ու արմատներուն մօտ պզտիկ գորշութիւններ երեւցնելով : Եւ իր եւափռներուն մէջ աշխատող հանած վարած գործաւորներ, ատաղձագործները մանաւանդ, որ անդերազանցելի են ժողովրդական սաչմաներու մէջ, իրար կը կանչէին Սալֆային ետեւէն :

—Շօ՛, վարպետը երբէն ի վեր Պօեաճի գեղ կը նստի կոր :

Եւ լիակոկորդ քրքիչներ կ'արձակէին, իրենց անհող ու անկուտի երիտասարդութեան բովանդակ եւանդովը, այդ շատ սովորական դարձած բառախաղին վրայ, որ նոր ու մասնաւոր նշանակութիւն մը կ'առնէր կարծես, զուգադիպութեամբ, Սալֆային էմիրկէն-Պօեաճիգեղին շատ մօտ տեղ մը փոխադրուած ըլլալովը :

Երբ նեղ լուսարին կոշիկները կըրճ կըրճ ձայներ կը հանէին մեծաղայական քալուածքի մը հա-

մաչափուելով, ծիկսուռաթները ասդիէն հաղիւ կրնային շրթունքնին խածնելով ինքզինքնին դրսւ պել ու ետեւէն կը պոռթկային :

— Զավալլըները, իրենց երեսուն տարուան ախպարներէն բաժնուած ըլլալնուն համար ճղիկ ճղիկ կուգան կոր : Աստուած պէթերէն պահէ : Խապահաթնի՞ն ինչ էր աճապա, հէմ նեղ տեղը թխմուեցան, հէմ ալ հավա առնելիք տեղերնին դոցուեցաւ :

Ուրիշ մը .

— Պահա կը դնեմ քի Խալֆան քօրսէ կը դնէ կոր, հիչ ասանկ տիք քալած չունէր :

Խալֆան, անտարբեր, մետաքսէ ֆանթէղի ժիլէին վրայ կախուած ոսկի ակնոցին շքեղ շղթային հետ կը խաղար մատներովը, հոս հոն կ'երթեւեկէր կօշիկները կճռտացնելէն, կը քննէր, հրամաններ կ'արձակէր և կ'առնէր կը քալէր կարելի եղածին չափ շուտով :

Աճապարելու ալ պատճառներ ունէր խեղճ մարդը : Խլավուղ կնիկներուն մէկը կը մտնէր միւսը կ'ելլէր վիլլայէն : Ամէն օր նոր մատուցումներ կը ներկայացուէին իրեն : Լուսանկարներ, կենսագրականներ, դովեասներ, վկայականներ կը թափէին իր առաջքը : Վիլլային կապոյտ սալօնը, կատարեալ ամուսնական գործակալութեան մը գրասենեակին երեւոյթն էր առած : Տօքիւմաններու, պատկերներու, dossierներու բարելոն մը : Քաղաքին բոլոր աղջիկները գրեթէ նօթ մը ունէին հոն իրենց մասին :

Սակայն, Վարդան խալֆան չափազանց դժուարահաճ էր : Խեղճ կիները օձիք կը թօթուէին : Եաման, եաման : Նախ հարուստի աղջիկ չէր ուղեր որ ըլլայ ան . ինչու որ կը վախնար որ շփացած ու յաւակնոտ կ'ըլլան անոնք և չէր ուզեր համակերպիլ իր քմահաճոյքներուն : Իբր քմահա-

ճոյք տարակոյցս չկայ որ բաւական անհեթեթ բաներ ունէր ան . բայց ամենէն անհանդուրժելին , ամենէն գէշը ծայրայեղ նախանձոտութիւնն էր , զոր շատ լաւ գիտէր ինք և կանխաւ կ'ապապրութի թելլալ կնիկներուն , որ ըսեն աղջիկներուն կամ թէ աղջկան տերերուն , որպէս զի վերջէն չիյոտէինք չըսեն : Ինչպէս ըսինք , առաջուց ունէր ինք այդ բնութիւնը , և քիչ մըն ալ ատոր համար չէր ուզած կարգուիլ : Բայց հիմա որ գէշ աղէկ որոշում տուած էր ամուսնանալու , կարծես այդ յուր բնազդն ա'լ աւելի սաստկացած էր իր մէջ , այնչափ աւելի որչափ տարիքը աւելի լեցուն էր և գիտէր թէ իր բոլոր խնամքները , շիքութիւնները , շպարները , կեզծ շնորհները իր տգեղութեան ու ծերութեան փայլուն կեղև մը միայն անցուցած էին և ոչ թէ դանոնք բոլորովին անհետացուցած :

Կ'ուզէր որ ուսեալ ալ ըլլար առնելիք աղջիկը , քիչ շատ կարենալ ըմբռնելու համար դիրար ու ճաշակները յարմարելու համար : Պարկեշտ պէտք էր ըլլար ան , ոչ մէկ բիծ մը , ոչ մէկ խօսք մը պէտք էր եղած ըլլար երբէք , ոչ անոր համբաւին վրայ , ոչ մօրը , ոչ հօրը , ուղղակի կամ առնթերակից սերնդադիծերուն մէջ , զիտը պորտ :

— Եթէ կաթը մաքուր չէ , լան մը փարա չընէր , կ'ըսէր :

Եւ վերջապէս աղջկան վրայ փնտռուած գըլխաւոր յատկութիւններէն մէկն ալ գեղեցկութիւնն էր : Անթերի աղուոր պէտք էր ըլլար ան : Ինք գեղեցկութիւն ստեղծող մը , նուրբ ճաշակի տէր գերընտիր արուեստագէտ մը , հաճելի ձեւերու ու շնորհալի գիծերու յարգարիչ մը , ինչպէս պիտի կրնար , տգեղ դէմքի մը յաւիլ , այլանդակ մարմինի մը յարիլ , սիրել :

— Քուկին երեսդ ո՞վ կը նայի , այնան նայէ

հելէ մէյ մը, պօեալը կատար, խափած շուն, կ'ըսէր միաքէն զիլի խլավուզ մը, որուն բերած այս չես գիտեր քանիերորդ խապարը ճըլխ կ'ըլլար:

Բայց ինք ուրիշ, ինք փարա ունէր: Ինք չէր որ աղջիկներուն ետեւէն ինկած էր, հապա անոնք էին որ լէվին լէվին լուր կ'ընէին իրեն և ինք ընտրութեան դժուարութիւնը ունէր նոյն խակ: Իրենց եալվար եղող չի կար:

Եւ կ'ըլլար որ ամէն լաւ տեղեկութիւն առնուելէն, ամբողջ գերդաստանին բարոյականը քրննուելէն, լուսանկարին հանուելէն ետքը, աղջիկտես կ'երթար, և հոն անպատճառ պակասութիւն մը կը գտնար, լուսանկարին հետ անյարմարութիւն մը, աչքերը քիչ մը կոկան, քիթը քիչ մը կակա, թուշը քիչ մը երկայն, և գործը ետ կը դարնէր: Եթէ հաւնէր, կրկին քննութիւն մը կ'ըլլար այս անգամ, — contre-expertise! ճարտարասկտական բառովը, — աւելի մանրամասն, աւելի խիստ, աւելի մօտէն և անպատճառ ծիլ մը դուրս կուգար:

— Մեղայ, խուսուրսուզ մարդ կ'ըլլայ, կ'ըսէին խլավուզ կիները իրարու, երբեմն ալ իրարու գործ աւրելով, ասիկա խուսուրսուզ կ'ուզէ կոր, ղէհէր էրկինքէն իջեցնելու է:

Եւ սակայն, միշտ շահէն առինքնուած, դուռնէ դուռ կը պտրտէին անվհատ:

Եւ եղաւ որ ամբողջ տարի մը, ամէն շաբթու գրեթէ աղջիկտես պտրտելէն ետքը, վերջապէս երկու աղջկան վրայ կանգ առաւ Վարդան խափային որոշումը: Չէր կրնար ընտրութիւն մը ընել: Սա նայէ, չգտնալ չգտնալէն վերջը, հիմա երկու հատին առջեւ անճրկած մնալ: Մէկ հատին նախապատուութիւն տալու վրայ էր ինք քիչ մը, քիչ մըն ալ խլավուզը դօրաւոր փրթաւ և վերջապէս երկրորդ անգամ մըն ալ աղջիկը տեսնալու

որոշում տրուեցաւ : Աղջկան մայրը ընդդիմացաւ քիչ մը :

— Պէլքի, կ'ըսէր միջնորդ կնիկը, ան տեղն ալ մատնին կուտայ կը լմնցնէ : Սամէթը ոտքը կհաւ հէ, թէփմիշ ընել չըլլար :

Բայց եկուր տես որ, աղջիկը որ իր հեռաւոր աղգականներէն աղուոր բայց քիչ ունեւոր երկտասարդ մը կը սիրէր դադտուկ և բռնի աղջիկտես ելած էր առջի անդամուն, մի միայն ծնողքին կամքը տեղը տանելու համար և ապահով ըլլալով կանխաւ որ խափած խաշփան, տէյմէ աղջկան չէր հաւնէր, յանկարծ պէթ բաներ ըրաւ, երկրորդ տեսութեան տուն, ընդհանուր ահ ու սարսափ պատճառելով իր պարագաներուն և եփուն ապուրջն մէջ պապ ջուր լեցնելով : Այն օրը խաշփան մատնին գրպանը կտ դարձաւ կատրած, և չկրնալով համբերել եղած անարգանքին ու կարծելով վրէժ լուծած ըլլալ, հեռուեալ օրն իսկ, մատնին տարաւ թիւ երկու բաշղաւոր թեկնածուհիին մատը անցաւ :

Անկէ ի վեր երեք տարի անցած է, և Վարպետ խաշփային աճումնութիւնը չէ դադրած գեռ խօսքի նիւթ մատակարարելէ : Սաշփային կինը տիկին Գոհարիկ իրաւցընէ գոհար մըն էր : Հաղիւքսանըչորս տարու, նրբամարմին, կանգնագեղ, խոշոր վճիտ աչքերով, խարտեաշ, առատ, ալեծածան վարսահիւսքերով, վարդագոյն մորթ մը, պղտիկ կարմիր բերան մը, թրթռուն անգունք մը, ճշմարիտ պարիկ մը, աղամանդներու, ճոխութիւններու, կանանչութիւններու մէջտեղը :

Բայց խաշփային նախանձոտութիւնը ալ առածի կարդ անցած է : Շաբաթը հաղիւ անգամ մը, իրենց անձնական, բայց միշտ գոց կառքով ըլլար ամառ ըլլար ձմեռ, պտոյտի կ'ելլային վիլլային կտիին, ամայի լեռներուն կողմը : Եւ նորէն

կառքին վարագոյրները մինչև վար իջուցուած կ'ըլլային, որպէս զի չըլլայ թէ անցորդ մը աեանէ զայն և կասկածելի նայուածք մը փոխանակեն: Պարտէզին պատերը մարդու հասակէն շատ վեր էին, և իրիկունները, էրկանը հետ միայն հոն ելնելու և պտրտելու արտօնութիւն ունէր ան: Յորեկները սենեակին խորը պէտք էր նստեր, վարագոյրները խատիւ փակ, չտեսնելու և չտեսնուելու համար, հեռուն դիմացի բարձունքին վրայ թառած ուրիշ վիլլայէ մը ուր երիտասարդ կտրիճներ կային: Մասնաւոր սպասուհի մը, միայն անոր վրայ հսկելու և իրիկուան տիկինին ըրածներուն մասին էրկանը համար տալու պաշտօնը ունէր:

Չաւակ ալ չէին ունեցած և ատիկա ալ աւելի դառնացուցած էր Սալֆային բնաւորութիւնը ու աւելի նեղսիրտ դարձուցած էր զայն, աւելի նախանձոտ: Ինք որ ընտանեկան երջանկութեան, զաւակներ ունենալու, ժառանգորդներ առաջ բերելու հրճուանքին համար էր ամուսնացեր աւելի: Եւ սրտնեղութենէն այլանդակ մտածութիւններ կ'ունենար և ինքզինքը այնքան կը կորսնցնէր որ անվայել ու վիրաւորիչ քարեր կը նետէր կնկանը:

— Կին մը էրիկը սիրելու ըլլայ նէ, անպատճառ զաւակ կ'ունենայ, կ'ըսէր երկու օրը անգամ մը, յանդիմանութեան մը պէս:

Այցելութիւններ ոչ կ'ընդունէին ոչ կուտային: Մինակ իր օրեղբօրը տղան որ բժիշկ էր ու ամուսնացած, կուգար երբեմն կնկանը հետ, կիրակի իրիկունները, գիշեր մը կը կենային ու հետեւեալ օրը կ'երթային: Այսչափ: Խեղճ կ'ինը մինչև իրիկուն կը ձաթէր: Սկիզբները, մեղկութեան, քնանալու, երազելու տուաւ ինքզինքը: Յետոյ շուտով ձանձրացաւ այդ կեանքէն: Արիւնը կ'եռար իր ներսիդին: Վերջէն կը պտրտէր ու կը պտրտէր սալօնին մէջ, քառդ-բօսթալի անվերջանալի

հաւաքածոներ կ'անցընէր աչքէ, կրկին կրկին անգամներ: Իր վրայ հսկող սպասուհին կը կանչէր ու մէմլէքէթի խօսքեր, «կէզ»ի պատմութիւններ ընել կուտար, միակ նիւթը որուն մէջ անսպառ էր ան: Էրկանը գրադարանը կը խուզարկէր ուր ճարտարապետական, փիլիսոփայական և աստուածարանական գիրքեր կային միայն: Օ՛հ, ինչեր չպիտի տար արդեօք roman passionnel մը ձեռք անցընելու համար: Քանի մը գիրքեր թըղթատեց և կամ չհասկցաւ կամ ձանձրացաւ:

Ուրբաթ և կիրակի վար չէր իջնար Վարպետ խալֆան: Մինչեւ իրիկուն ակնոցը քիթին դրած, լրագիր կամ գիրք կը կարդար, կամ յատակագիծ կը յօրինէր, երբ կինը անխօսուկ, դիմացի բաղմոցին վրայ նստած կ'սպասէր: Երբեմն երբեմն երեսը կը նայէր անոր, անուշ հեղուկ մը ըմբոշխնելու պէս, խօսք մը կ'ըսէր ու նորէն գործին կը նայէր: Կը ճաչէին: Իրիկուան կամ պարտէզ կամ պտոյտի՝ կառքով: Գիշերը վերստին, դէմ դիմաց, անխօս նստած, վայրկեանները կը համրէին, պատէն կախուած ժամացոյցին, որ յուսահատեցուցիչ միօրինակութիւնով մը իր թիք-թաքը կը գամէր անոնց գլուխին վերեւը:

Երբեմն կ'ըլլար որ կը կռուէին ալ: Սպասուհին տեղեկութիւններէն անհեթեթ հեռեւութիւններ կը հանէր խալֆան, և կ'այպանէր կնիկը իբր թէ մեծ յանցանք մը գործած ըլլար: Պատուհանին առջին նստիլը, վարագոյրը քիչ մը վեր առնելը, խնդալը, տխրիլը, ուտելը, չուտելը, խմելը բոլոր խնդիր կ'ըլլային և գէշ բաներու նշանակ ըլլալ կը թուէին: Սուաջները Գոհարիկ հանրմ կը պատկառէր ամուսինէն, անոր տարիքին ու հարստութեան պատճառով, բայց շուտով վարժուեցաւ անոնց և ալ սկսաւ անհանդուրժելի գտնել այդ կեանքը, որով ինքն ալ քիչ մը նեղսիրտ ու

Չղային կ'ակտեր ըլլալ ու չկլլել ամէն յանդիմա-
նութիւն և ճակատ առ ճակատ պատասխան տալ
ամուսինին, ինչ որ ա'լ աւելի մեծ բաղխումներու
տեղի կուտար: Նորէն ակնարկութիւն զաւակ չու-
նենալնուն վրայ:

— Կնիկ խամին մազը էրկան, խելքը կարծ
կ'ըլլայ: Մինակ զաւակ ունենայ նէ քիչ մը կը
թամնայ, ան ալ չիւնքի անորմով օղբաշմիչ կ'ըլլայ:
Հէմ կնիկ մը էրիկը սիրելու ըլլայ նէ անպատճառ
զաւակ կ'ունենայ:

— Ասոնք ամօթ խօսքեր են, կ'ըսէր տիկին
Գոհարիկ, մեղք որ Եւրոպա գացեր դպրոց տե-
ներ են:

Եւ խալֆան կը փրփրէր, կը քֆրէր: Խնդիրին
խակութիւնը ան էր որ Պոլիս վերադառնալէն վեր-
ջը, դորժաւորներու ընկերակցութեան ու վարնոց
մարդերու շփումին մէջ վերստացեր էր ան, կոշտ
ու անասչ մարդու իր բնազդները:

Երբոր աս պատմութիւնները շրջան կ'ընէին,
քաղաքին զանազան թաղերուն մէջ, աղջկան մայ-
րերը, փառք կուտային Աստուծոյ որ ան խամէթ
չէր եղած իրենց աղջկան որ անպատճառ անլըման
էրիկ մը առած կ'ըլլար:

— Վույ չիւքիւր, փետիս ոտքերը չեմ փոխել
Խալֆային կլոխին հետ:

Իսկ ամուրի մնացած աղջիկներ կը կրկնէին
ամէն անոնց որոնք մտիկ ընելու կը յօժարէին:

— Աղապ մնալը հաղար անգամ աղէկ է ա-
սանկ չորս պարի մէջ կնիկութիւն ընելէն:

Օր մը, Գոհարիկ, պտրտկելէն, սլքսալէն,
ընկողմանելէն, թապըլտրկելէն, սրտնեղութենէն
յուսահատ, նորէն գրադարանին առջեւ գնաց:
Գրեթէ բոլոր գիրքերն ալ անգամ մը կարդացած
էր առանց մեծ բան մը հասկնալու, մեքենաբար:
Նորէն թղթատեց անոնցմէ մէկ քանին, և վեր-

Չապէս Բրոֆէսէօր Կրասէի Hypnotisme et suggestion անունով մէկ գիրքը առաւ և ևկաւ քանարէի մը վրայ ընկողմանած կարդալու : Տեղ տեղ բաւական պարզ էր անոր լեզուն ու հասկնալի, տեղ տեղ ալ շատ գիտական ու մութ : Բայց ընդհանուր կերպով հոգեբանական վերլուծումներով ու գիտական լուսարանութիւններով լեցուն այդ հատորը կը շահագրգռէր զինքը և այս երկրորդ ընթերցումէն գիտնաս թէ քիչ մը հաճոյք կ'ըզար : Կիրակի իրիկուն խօսեցաւ այդ գիրքին մասին, և իրենց բժիշկ ազգականը խոստացաւ իր անձնական գրադարանէն բերել նամսօրինակ բաներ, քանի որ կը հետաքրքրուէր ու ախորժ կը զգար անոնցմէ : Սալֆան ալ, իր հօրեղբօրորդիին հետ առանձին խորհրդակցութիւն մը ունենալէ վերջ, չզլացաւ իր արտօնութիւնը :

Յաջորդ շաբթուն գիրքերը բերաւ : Գոհարիկ ամէնքն ալ լախեց լմնցուց, բայց անոնց մէջ կար հատ մը Autosuggestion անունով, չեմ գիտեր որ հեղինակէն, զոր, երկու անգամ, երեք անգամ կարդաց : Անոր մէջբերած պարագաները, նկարագրած անձնաւորութիւնները, սրամիտ բացատրութիւնները, մասնաւոր կերպով կաշկանդեցին, չզթայեցին իր միտքը : Ինքնաթելադրութիւնը հիմա շէնք շնորհք գիտական միջոց մըն էր կարգ մը ցաւերու, սրտնեղութիւններու, խոչընդոտներու, անկարելիութիւններու ատեն : Զարգացած երիտասարդ մը որ գեղեցիկ ալ էր, ամէն բան ունէր և դրամէ միայն զուրկ էր : Ան՝ գիշեր ցորեկ, կ'երեւակայէր զղեակներ, աղամանդներ, կառքեր, հոմանուհիներ ունենալ, միտքովը ճամբորդութիւններ կ'ընէր, իր կարդացած աշխարհագրութիւններուն ու ճամբորդական գիրքերուն օգնութիւնովը, և ալ այն աստիճան եղած էր որ, տեսակ մը միտքի գիտութեան պէս, ինքզինքը կը մոռնար և ու-

րիչ աշխարհի մը մէջ կ'ապրէր, այն ինչ աչքերը կը
 փակէր: Երեւակայութեան գինովութիւնն էր այդ:
 Երեւակայական գինովութիւն մը միւսնոյն ատեն,
 որ սակայն իրական հաճոյք մը կը պատճառէր և
 տղան երջանիկ էր: Ուրիշ մը, կին մը այս անգամ,
 որուն սիրական ու մէկ հասիկ զաւակը մեռած էր.
 ան կ'երեւակայէր որ ողջ էր իր տղան, անոր սեն-
 եակը կը մտնար, ուր ամէն առարկայ իր տեղը կը
 մնար անխախտ, կը խնամէր, կը մաքրէր, կը
 յարգարէր տղուն վերաբերող բոլոր բաները, կը
 նստէր հոն, աչքերը կը գոցէր, կը խօսէր ինքնի-
 րենք, խօսք ուղղելով տղուն և ինքնախարէու-
 թիւնը այնքան առաջ տարած էր որ անկէ պա-
 տասխան ընդունիլ կը կարծէր: Եւ ատով կը մխի-
 թարուէր, վիշտը կը մեղմանար, ապրելու ուժ կը
 գտնար: Ուրիշ մը որ երկարատեւ հիւանդութենէ
 մը ու սաստիկ ցաւերէ կը տառապէր, ամէն տե-
 սակ դեղ ու դարմանէ վերջը, յուսահատ, ինք-
 նաթելադրութեան էր դիմած և ողջ առողջ ըլլալ
 երեւակայելով, գիշեր ցորեկ, երթալ պտըտիլ, գրօս-
 նուլ, ցատկել, ձիավարել մտածելով, ցաւերը դադ-
 րած, հիւանդութիւնը անցած ըլլալ կարծեցնելով
 ինքզինքին, ստուգիւ պէտք է ընդունիլ որ նուազ
 կը տառապէր և աւելի համբերող կը դառնար:
 Ուրիշ դեռ շատ մը պատմութիւններ վերջապէս,
 որոնց հերոսները, այնչափ ուժով ու սրտագին կը
 բաղձային բանի մը, միակ բանի մը՝ որուն կարօ-
 տը ունէին; որ վերջ ի վերջոյ կը հասնէին ջղային
 անանկ գերագրգիռ վիճակներու, ուր փափաքած-
 նին իրականացած տեսնալու հրճուանքովը կ'ար-
 բենային ու կը յափրանային: Եւ նորօրինակ այդ
 պատմութիւնները կը դարմացնէին, կ'զբաղեցնէին,
 կը գրգռէին մանկամարդ կնկայ իր թարմ ու ան-
 փորձ միտքը:

Օր մը, սպասուհին վար իջած էր, հէմշերինն-

բու հետ տեսնուելու համար, և գիտենք թէ արդէն շատախօս կին մը ի՞նչ կ'ըլլայ, երբ «Երկիր» էն մարդ եկած է իրենց: Այդ պարագան միակն է որ կարենայ յաղթել ամէն խղճահարութեան և Տիկին Գոհարիկ գէթ ժամ մը ազատ էր այն հակողութենէն զոր ալ բողոքովին մոռցած ըլլալ կը թուէր այդ պահուն: Տիկին Գոհարիկ փութաց վարագոյրը վեր առնել քիչ մը և ծարաւած մէկու մը՝ ջուրը դիտելուն սէս, սկաւա դիտել ծովը, որ արեւին փշփշանքներուն տակ փարփաւ կը վառվռէր: Աչքերը շլացան և դէմի պարտէզները սկաւ խողարիկը հայուածքով, կանանչութիւններով հրճուեցնել ու լուալ աչքերը, դիմացի վիլլային վրայ դմայլիլ: Ինչպէս որ դրաւ աչքին և սթօրին աժուռ ժանեակներուն մէջէն հայեցաւ: Վիլլային երխտասարդ տէրերէն մէկը, իր սենեակին մէջ կը հագուէր, երբ սենեկապանունին կը դաննար անոր շուրջը: Քիչ վերջը, ձիաւորի սեղմ ու փառաւոր հագուստներ հագած, փայլուն մոյկեր անցուցած ոտքերուն, մտրակ մը ձեռքը, կուգար ձի հեծնել ու հեռանալ ծառերուն կտին:

Գոհարիկ մէկդի դրաւ դիտակը, վար քաշեց վարագոյրը, և ընկողմանեցաւ երկայնաթուին վրայ: Աչքերը, որոնք յոգնած էին դուրսի խիտ պայծառութենէն, ինքնին գոցուեցան: Միտքին առաջքէն տեսարաններ կը սահէին և իրեն անանկ կուգար որ աչքերը բաց էին միշտ: Կ'երեւակայէր ինքզինքը, սև երկար ամաղոն մը հագած, գլուխը ցած թաղեայ գլխարկ մը կը որ, երեսը քող մը պրկուած ուժով, ձեռքը պղտիկ ցլիկ մը և քոյնի վեր դրողկելու վրայ, դէմի վիլլային երխտասարդ տիրոջը հետ, հեռաւոր ծառաղիներու եզրէն, ամայութիւններու մէջէն, շնչհատ, կռանդ դուն, կարմրած, խնդապատար: Գոհարիկ իրական հաճոյք մը զգաց այդ տեսիլին առջև: Ան էր

ինքնաթեղադրանքը արդեօք : ժամ մը վերջը , երբ սպասուհին , այցելուները ճամբելէն ետքը կ'ուշաբերէր ու կը յիշէր հսկողութեան գործը երեսի վրայ ձգած ըլլալը , վեր վազելով , ձեռքը սիրտին վրայ կը ճնշէր հանդատացնելու համար զայն կարծեա , սեանելով իր տիրուհին որ հոն էր միշտ , գոյ վարող սյրներուն ետին , հանդարտ , համակերպող , երազուն , ախորժելի զգայութեան մը մեղմ ճառագայթումը ունենալով դէմքին վրայ , փոխանակ կակծալի այն մեղամաղձատութեան զոր կը կրէր ան իրր ցուցանիչ , քանի ասեմէ ի վեր իր լավանդակ էութեան վրայ :

Հետեւեալ օրը Գոհարիկ աւելի յանդուգն երևակայութիւններու կը հետամտէր : Ինք որ հարատութիւն ունէր , երխաատարութիւն , դեղնեկութիւն ունէր , ուսում ունէր , ինչ կը սրակսէր իրեն , եթէ ոչ քիչ մը սէր : Ինչո՞ւ ուրեմն ինքն ալ զայն չստեղծէր լոկ երևակայութեան ուժով , բան մը որ անկարելի չէր հարկաւ , ինչպէս այնչափ օրինակներով ապացուցուած տեսած էր : Միշտ ձիով կ'երթար այն սխրալի երխաատարին հետ , հեռու , հեռու , և կը կորսուէին մութ ու անմարդակոխ անտառներու մէջ : Յոգնած վար կ'իջնային ծառի մը տակ քիչ մը հանդչելու համար : Զուարթ ու անուշ խօսքեր կը փոխանակէին իրարու հետ , ձեռք ձեռքի բռնած այդպէս ժամերով կը մնային հոն , մաիկ ընելու թռչուններուն ճլվլիւնը ու սերեւներուն սօսափիւնը : Յետոյ անոր հզօր ափին վրայ կոխելով կը հետուէր թամբին վրայ , խելայեղ խուճապի մը մէջ , տուն վերադառնալու ու երկանք ժամանումէն առաջ հոն ըլլալու համար :

Եւ սպասուհին վեր դալով կը զարմանար զայն իսկապէս շնչատ , քրտնած , յոգնած գանկով : Ու ժամերով կը մնար միւռնոյն երկայնաթուղին վրայ ընդարմացած , Զախճախուած , ուժովտափ :

Ուրիշ օրեր նոյն ծառին տակը երդումներ կը
 փոխանակէին իբր թէ, սրտագին իրարու կը փարէին
 ու ժամերով անպատմելի բաներ կը փափսային ի-
 րարու ականջէ : Յանկարծ, տեղատարափ անձրեւ
 մը կ'սկսէր և երկուքը մէկ թեւանցիկ, ձիերը քաշ-
 քրչելէն մօտակայ հիւղակ մը կը մտնային, անբնակ
 հիւղակ մը բնականաբար : Եւ հոն, մինչև ուշ ա-
 տեն անձրեւին դադրելուն սպասելով սիրոյ մեղրը
 կը քամէին իրարու շրթունքէ : Ուրիշ անգամ մը
 չէր գիտեր ինչո՞ւ և ի՞նչպէս ինքզինքը անոր նրն-
 ջասնակակին մէջը կը գտնար : Սքանչելի սենեակ
 մը արդարև : Ոսկեփայլ անկողինը հոս, ծանրագին
 մետաքսէ ծաղկենկար սրահակներով, հոն՝ հայե-
 վապուտ հանդերձարանը ընդարձակ, առէին՝ քան-
 դակաղարդ փառաւոր գրասեղան մը գեղօրներու
 տակ կորսուած, անդին գրադարան մը՝ համակ
 սիրային վէպերով ու պատկերներով լեցուն : Գե-
 տինը թաւիչի պէս կակուղ ու թաւ գորգեր, որոնց
 վրայ, իրենք բոպիկ ոտքերով կը պտըտէին : Իրեն
 անանկ կուգար որ իր իսկ սենեակն էր ան, քանի
 որ շատ սարրական արդուզարդով մը կը տեսնար
 ինքզինքը դէմի հայելիին մէջը անդրադարձած,
 անկողինին եզերքը նստած, ոտքերը վար կախած,
 չապիկին փրփուրէ ժանեակները մարմարէ մերկ ու
 ողորկ թեւերուն վրայ թրթռուն, bel-amîn ա-
 նաջքը ծունկ չոքած, jarretièrները կը քակէր,
 գուլպաները սահեցնելու հանելու համար :

Ամէն օր նոր մանրամասնութիւններ կը գրտ-
 նար երեւակայելու և ա՛լ աւելի սրտագին անձնա-
 տուր կ'ըլլար հաճելի երազներու : Այլ շէնք շնորհք
 կը պուռնկանար իրեն գրացի այն տեսքոտ երկտա-
 սարդին հետ զոր հազիւ անգամ մը միայն ընդ-
 նըշմարած էր և զոր կը վայելէր այնքան ուժգին,
 այնքան եռանդուն եղանակով մը, որուն թերեւս
 պիտի չհաւասարէին անոր իսկական տարփուհինե-

բուն զգացած հեշտանքները: Քանարէին կամ երկայնաթուին վրայ կատարելապէս կը չարչարուէր ան սկիզբները, կը յուզուէր, կը թաւալէր, կը պրկուէր, կը Փշար, քրտինք կը թափէր, աչքերը կը քանար առանց տեսնալու, ռնդունքը դրդուած կ'ուռնեցնէր, շրթունքները կը շարժէր, թեւերը տաքերը կը գալարէր, բարձերը կը խածնէր և վերջապէս յանկարծ հոգեւին ընկճուած կ'իյնար մեղկ թմրութեան մը, անուշ հեշտանքի մը, անձառ վաշելքի մը մէջ և ժամերով կ'անշարժանար կը մնար այդպէս:

Առաջին անգամ երբ այդ բանը եկաւ գլխուն, առատիկ խոնջէնք մը ու պզտիկ խորշանք մը զգաց, ինքզինքէն ամչցաւ, եղաւ հայելին նայեցաւ. մազերը տակնուվրայ եղեր էին զգայական այդ ուրականին մէջ, աչքերը մարած երեւոյթ մը ունէին և եղերքները գունատ, այտերը կասկարմիր եղած էին և քրտինքի կայլակներ կը մարգարտանային ոսկեգոյն մազերու արմատին վրայ: Յետոյ կամաց կամաց վարժուեցաւ գաղափարին. աւելի յաճախադէպ կերպով անձնատուր եղաւ երեւակայութեան վայելքներուն և այնչափ մուցաւ ինքզինքը որ, ալ չիմացաւ իր ցաւերը, չտեսաւ իր ամուսինին տգեղութիւնը, խիստ վարմունքը, իր արդելափակ վիճակը, ազգականներէն հեռու մնալը, միս մինակ հոգին ելլալը: Ընդհակառակը աւելի փրալիր եղաւ ամուսինին հետ, ջանաց խոյս տալ վէճի փոցուն պատճառներէ, և վարուեցաւ այնպէս ինչպէս սիրուած ու երջանիկ կին մը կը վարուի ամէնուն հետ:

Խալֆան նախ զարմացած մնաց այս կերպարանափոփոխութեան վրայ, յետոյ կասկած զգաց քիչ մը, անակնկալ սրարագայէ մը վախնալով, վերջ ի վերջոյ գոհունակութիւն ու հպարտութիւն խմացաւ, ինքնիրենը համոզուելով որ վերջապէս յա-

Ջողած էր սէր ներշնչել կնկանը : Հիմա այս վերջի-
նը , նոյն իսկ էրկանը հետ եղած ատեն , դիմացի
աղուոր երխտասարդին և ուրիշ հաճելի բաներու
վրայ կը մտածէր :

Իրիկուն մը տիկին Գոհարիկ , շքեղ արդու-
զարդով մը , մազերը յարդարուած , աղամանդնե-
րը դրած , սովորութիւն մը ուրկէց բաւական ա-
տենէ ի վեր հրաժարած էր , ամուսինին սպասեց :
Վարդան աղա , մէկէն ի մէկ սարսափահար .

— Ի՞նչ կայ , ո՞ւր կ'երթանք կոր , գոչեց :

— Ոչինչ , տեղ դացած չունինք , քեզի կ'ըս-
տասէի կոր :

— Անանկ է նէ ինչո՞ւ ասանկ հագուեր ես ,
հարցուց :

— Հիչ անանկ , մէտէս ուղեց : Չե՞ս ուղեր որ
ունեցածս վայլեցնեմ , պատասխանեց մանկամարդ-
կինը , պչրոտ ու գութ շարժող միանգամայն նայ-
ուածք մը թարթելով :

Խալֆան չէր հաւտար տեսածին : Կօլօ կլլող
մարդ չէր ինք : Վար գնաց սպասուհին հարցափոր-
ձեց , բայց բան մը չկրցաւ հետեւեցնել , ոչ եկող
եղած էր ոչ դացող , քիչ մը հանդարտեցաւ , բայց
թեթեւ կասկած մը պահեց ներսիդին , թէ մի գու-
ցէ սպասուհին յարմարած ըլլար տիրուհին . ուրիշ
ծառաներ ալ հարցաքննեց և վերջապէս որոշում
տուաւ հետեւեալ օրուրնէ իսկ երկրորդ հսկող մը
յատկացնել , սպասուհին տեղեկութիւնը հակակըշ-
ուելու համար :

Հետեւեալ իրիկուն , նորէն այսպէս :

— Ի՞նչ է ան նորէն , էլմասէ պէպէք ես եղեր
կէնէ աս գիշեր , ըսաւ կէս մը կատակելով :

— Չըսի՞ , քեզի աւելի՛ աղուոր երեւնալու հա-
մար է :

Պէտք եղած հարցաքննութիւնները նախապէս
ըրած ըլլալով Խալֆան ու գոհացուցիչ պատաս-

խաններ ստացած ըլլալով տեղեկատուներէն, քիչ մը աւելի համոզուած թուեցաւ և հպարտացաւ կրկին, վերջապէս գործը պէճէրած ու սէր ներշնչած ըլլալուն համար ատանկ մանկամարդ ու գեղանի կնկան մը, իր այդ տարիքին մէջ, երբ անդին իրմէ շատ աւելի երիտասարդներ, անկուտի ու տխմար, անճրկած կը մնան:

Ներկուած ու իւղոտ պեխերը սկսաւ քաշել ու ոլորել գոռոզաբար:

Գիշերը, Գոհարիկ, մինչեւ վերջը կը թապըլտըկէր իր ինքնաթելադրութեան մէջ և կը թաթխուէր, կ'ընկղմէր, կը խղղուէր անսահման գրգռութեան, անասելի վայելքներու ու անհասանելի հեշտութիւններու մէջ, նոյն իսկ իր ամուսինին հետ եղած ատեն:

Ամիս մը վերջը, դեռատի կինը աւետեց իր ամուսինին թէ մայր ըլլալու յոյսեր ունէր:


Խալֆային քէֆը չափ սահման չունէր ալ: Աշխարհի երջանկագոյն արարածն էր ան: Հետեւեալ օրէն սկսեալ, հսկողութիւնը բաւական թուլցուց կնկանը վրայէն, ինչու որ հիմա ալ աւելի համոզուած էր որ կին մը երբ զաւակ կ'ունենայ, այդ կ'ապացուցանէ թէ կը սիրէ իր էրիկը և կին մը որ զաւակներ ունի դժուար առիթ կ'ունենայ անտեղի բաներով զբաղելու: Անտեղի բաներ ըսելով ուրիշը սիրել, ամուսնական անհաւատարմութիւն գործել կը հասկնար:

Այլ եւս ժառանգորդ ալ պիտի ունենար: Աս մը մէկ աղէկութեան համար փառք տար: Օղորմած հոգի մայրը ողջ ըլլար տէ, տեանար:

Այն օրը հինգշաբթի էր. Խարակէօմրիւկ գնաց և իր հասակին չափ մոմ մը վառեց ձեռքովը:

Իրիկուան, երեք հարիւր ոսկի արժողութիւնով pendentif մը բերաւ Տիկին Գոհարիկին, էլմասէ պէպէքին, որ հիմա աղամանդներու շողիւնէն աւելի, ներքին երանութենէն կը խայտար ու կը փայլէր:

ՊԱՐԿԵՅՑ ՍՈՒՐԲԵ



Գրեց ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ



նաև շատնց բացակայ կը գտնուի
Նաշատի ժամ որ, սիրով բունն, առնական,
Պատկանութեան բարձր օրերն իսկ ի վեր
Սիրն էր սրած իր գիւղին մէկ աղջկան :

Անուշ հոգի, հեզիկ աղջիկ մ'եր Աննա,
Եւ անխորով էին իր սերն եւ յոյսեր.

... «Երբն ո՞վ գիտէ, բայց ժամ պիտի ետ դառնայ,
«Աստուած բարի՛ է շատ» կ'ըսէր, կ'սպասէր :

Եւ իրար աչ, երեք տարի անկէ կողմ
Հիւսիս, հարաւ, աշտաց վրայ ուսնունն
Նաւերն մէջ կրէր էտ շատ մտիկ, հողմ,
Ժամ, ողջ առողջ, յանկարծ օր մը դարձաւ տուն :

Ծերունի մայրն իր գիրկին մէջ գայն առաւ,
Պագաւ, պագաւ՝ անկան, աչտերն եւ աչտեր,
Եւ շարով. «Ժամ, տղա՛ս, ա՛յ մայրդ է պառաւ,
«Չուզէր մտնիլ չկաւ հարսի, բոռան սեր» :

«Տեսնես, ըսաւ, ի՛նչ աղուտ, ի՛նչ գեղանի
«Պարկէշ ու ժիր աղջիկ մըն է մեր Աննան.
«Ա՛ն աչ, ինձ պէս, տեգ կ'սպասէր . . . ու պիտի
«Անունակաւ, բոյուններուն պէս, գարնան . . . » :

Ժամին իդն աչ ան էր արդէն:—Մայիսին
Երբոր դաշտերն ու ծառերը ծաղկեցան,
Սոխակներն ու սարեակներն, երբ միասին
Սկսան երգել ինք բոյներն ինչ դեղան,

Ժան յաղբախալ, Աննան շիկնոս, քեռ քեռի,
 Շեն քափորով մ'որ կազմեր եր գիւղացին,
 Փոքրիկ մասրան մեջ, փոխադարձ գորովի
 Ուխտն ընկելով օրհնեցին սուին երեցին :

Երբ տուն եկան այլ եւս եղած այր ու կին,
 Մայրն, անպատշաճ ցնծութիւնով դողողուն,
 Իրանն առջեւ առագաստի սեւեակին
 Գրկեց Աննան, պագար ձախտն իր մանչուն.

Եւ՝ «Զաւակնե՛րս, ըսաւ, գիրար սիրեցի՛ք
 «Խիկոյ ու ցաւի մեջ անբաժան, միշտ արի,
 «Որ կասարե՛ Աստուած ձեր մօր սարեց, հեգ,
 «Վերջին իդնն ու քոռնիկ մ'իկն՝ սայ գայ սարի...:»

* * *

Ժան ու Աննա, սրնակին մեջ նեղ ու ցած,
 Մեղրաշունի հեշտակն անուշ, սիրագրաւ
 Կ'ըմբռնչակին...:—Հագիւ ամիս մ'եր անցած,
 Երբ կաղ ցըրուիչն յանկարծ նամակ մը քերաւ...

Նաւասպէտ մը կը գրէր... «Ժա՛ն, առաջին
 «Ղեկավարի շաւ պաշտօն մը կայ քափոր
 «Իմ նաւիս մեջ որ պիտ' երթայ միւսեւ Չին,
 «Հանդիպելով Պակօօֆ, ձաւա, Սիւնկափոր...:»

«Անաքոռչակ կուսաւ երկու հարիւր ֆրանկ.
 «Կուգա՞ւ քե ոչ, պատասխան տուր փոքորեկն.
 «Շատ քեռ ունիկն արդե՛ն, պե՛տ է արտաւանկ
 «Որ նաւն անվրեպ ձաւքայ ելլի ո՛ւր օրե՛ն...:»

—«Մայրիկ, Աննա՛, ա՛իս ի՛նչ ընեմ, գոչեց ժան,
 «Ի՛նչպէս քողու՛մ այս սիրոյ քոյնն ընտանի,
 «Բա՞ղդ կ'սպասե իկն յաջող, քե մահ դաժան,
 «Ձախտագիրն արդե՛օֆ գիս ո՛ւր կը տանի...»

«Հասա, մա՛յր, մեր իղձն աչ անուշ, արդար չե՞ր
 «Որ մեկ սարի ապրեի գեթ հոս մեր ֆոյ . . .
 «Աննային գիրկն աղուոր մանկիկ մը ճըչեր,
 «Հոգիս խայսար հայրուքեան վե՛հ պարծանֆոյ . . .»

Աննան կուշար, կը հեծկըջար . . . — «Ժա՛ն, ջըղա՛ս,
 «Գընա՛, ըսաւ մայրն, հոս մեզի քո՛ղ միևակ,
 «Նաւունն դեկին գըլուխն անցի՛ր, չի դողա՛ս,
 «Քեզի համար մեկն կ'աղօթեմք շարունակ . . .»

«Կը պաշտպանե՛ Ասուած խոնարհ նաւասին,
 «Կը պահե ֆեզ վըսանգներե անվընաս,
 «Եւ ողջ առողջ, եկող սարի, վերըսին
 «Ծերունկ մօրդ ու Աննայիդ ֆոյ կը դառնաս . . .»

«Միայն, մեկնած օրդ ընեշիք բան մը կայ .
 «Եկեղեցին, սուրբ Անտիի պատկերին,
 — «Խնդրակասար, հըգօր սուրբ մ'ե անիկա,
 «Սուրբերունն աչ պարկեշտագոյնն ու բարին . . . —

«Առջին կ'երթաս մով կը վառես, եւ անոր
 «Գանձանակին մեջ նեկեղով շոկ հիկգ ֆրանք,
 «Կը հայցես որ գաւակ մ'ընե ֆեզ շընորհ . . .
 «Վստահ եղի՛ր, կը կասարուի ֆու խնդրանք . . .»

Երկու օր վերջն երբ ժան գիւղեկն կը մեկնե
 Նորեկն բախոր կազմեց իրեն գիւղացին.
 Բայց այս անգամ մօրն, Աննային աչունկներ
 Իր ետեւեկն անվերջ շացի՛ն ու շացին . . . :

Ժան, նաւ մըսած օրն յիշեց մօրն իր պատուեր,
 Սուրբ Անտիին առջեւ վառեց մով մ'երկար,
 Խառնեց գրպանն որ հիկգ ֆրանք սայ նըլեր,
 Եւ տեսնեղով որ հոն արծաթ դրամ չի կար,

...«Սուրբերը վարդն առնելիս ինր կը բողո՞ւն,
Մըսածեց, ըստ՝ն որ կասարուիս խնդրանքներս...»
Եւ հանեց սառ զրանկնոց ոսկի մը շողուն,
Սահեցուց զայն զանձանակիս նեղիս ներս...:

Զըստնն անցաւ...:—Գարնան օր մը, Մայիսիս,
Երբ որ դաշտերն ու ծառերը ծաղկեցան,
Սոխակներն ու սարեակներն երբ միասին
Սկսան երգել ինր բոցներու իմ դեղձան,


Բաղիսն եկող ձամբունն վրայ, շեննն վար,
Մարդ մ'երեւաց: Նաւագ ժանն եր անիկայ
Որ ցածուկ սակն առջեւ հասաւ սրբամար
Եւ ձայնեց. «Մա՛յր, Աննա՛, ո՞ւր ե՛ս, ես եկա՛յ ...»

Եւ անհամբեր, հրեղով սան դունն, ելաւ վեր.
Անկողնիս մեջ Աննան՝ ժայռուն, անոր իմ
Տեսաւ մայրն որ բարակ ձայն մը բող սրեր
Երկու օրուն կ'օրրեր մեկ հիսն օրրերգով ...

Ուրախութեան նի՛չ մը բըռաւ շրթներէն:

—Սուրբ Անճրէն, սուրբ իրա՛ւ պարկեշտ, պատուական,
Մեկի տեղ գոյգ զաւակ սրած եր իրեն,
Զի մընաշո՛ւ համար հիկզ զրանկ պարսական ...:







ՌՈՏՕԼՅԱՆ ՄԱՄԻԿԵԱՆ

(ՏՕՄԻՆՕ)



ՎԱԽՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Գրեց Տ Օ Մ Ի Ն Օ

Մխակին վրայ նայող շքեղ բնակարանի մը միջնայարկը, մասնաւոր սենեակի մը մէջ, չորս հոգի նստեր են և բօքէր կը խաղան : Կէս դիշերը շատնոյ անշամ է, բայց ո՛չ մէկը կը խորհի թողուլ թղթասեղանը, այնքան շահեկան ու մտերմական վիճակ մը ստացեր է անիկա, իր վրայ դրուած լուսամփոփաղարդ արծաթ աշտանակներովը, իր կանաչ ծածկոցին վրայ խաղի թուղթերուն հապճեպօրէն ցուցադրած այլակերպութիւններով ու անակնկալներովը և այն սղախի ոսկեգոյն մոխրամաններովը սրունց մէջ փոխն ի փոխ կը հանդէին տանախրոջմէ հրամցուած սիկառէթները, իրենց ծուխի ոլորապատոյս դարձմանակները տարածելով միջոցին մէջ :

Եւ ժամերէ ի վեր բոցավառող կրակին տաքութիւնը, առատադէն կախուած ջահին լոյսին հետ, կաղմած է տեսակ մը հեշտավայել և դինավցնող միջնայարկ որուն մշուշին մէջ կխառվին կ'անհետանան անկիւնները դրուած պատկերները, անշուշ և հեռու մնացած հանդիսատեսներու պէս, մինչդեռ դուրսը, կը փչէ Փեարվարի յատուկ հարաւի այն անախորժ և սառախի հովերէն մէկը որ ամէն ինչ իր տեղէն խլելու, տանելու սպառնալիք մը ունի իր մէջ :

— Անպիտան ծառան մտոցեր է պատուհանին

փեղկերը խճեցնել, ըստ տանտէրը տեսակ մը սրբա-
նեղութեամբ որուն մէջ հողածութիւն և յարգանք
կար հանդէպ իր հիւրերուն:

Բայց այս խօսքը անհետեւանք մնաց: Խաղը
կը շարունակուէր աւելի կատաղօրէն, փշօշները,
պրըշանները, պըրֆները իրարու կը յաջորդէին,
ոսկիներու դէզը ճոխայնելով հետզհետէ: Խաղա-
ցողներէն մին, հարուստ հրեայ սեղանաւոր մը, կը
թուէր վատկած ըլլալ սկիզբէն ի վեր, այնքան
հանդարտ էր իր շարժումներուն մէջ ու այնքան
ապահով իր յարձակումներու միջոցին: Երբեմն եր-
բեմն հեղնոտ և դառն ժպիտ մը կ'ատուերանար իր
դեղին առատ պիխերուն մէջ և առանց յուզումի,
առանց անսպարանքի, սիկառէթը շրթունքներուն
կը մօտեցնէր, մատներու արուեստակեալ փափուկ
շարժումով մը, արձակելիք ծուխի լայն ասպին մէջ
իրը թէ պարփակելու մտօք իր դէմքին ճառագայ-
թացումը:

— Ինչ դձ մարդ, մրմնջեց յանկարծ քովէս,
Պարմանեան որուն հետ կը դիտէինք ժամերէ ի վեր
խաղին ընթացքը:

Բայց հողիւ թէ մէկդի քաշած էր դիտ բարե-
կամս, բացարութիւն տալու համար իր արդա-
հատանքի բացադանչութեան վրայ, մէկէն դուրսի
հովին դօրաւոր ճնշման տակ պատուհանը վերէն
վար բացուեցաւ շառաչումով և երբ խաղի թուղ-
թերը կը թռչատէին արդէն օդին մէջ, դիւական
պար մը յօրինելով վայրկենապէս, հովի երկրորդ
հոսանք մը խուժեց ներս և իր խօշական արշաւին
մէջ խեղդեց մարեց բոլոր լոյսերը սրահին:

Երբ տանտէրը կը փութար պէտք եղածը կար-
դի դնելու, դգացի յանկարծապէս մութին մէջ
լայնչի և ոսկրուտ ձեռք մը որ արմուկէս բռնած
կը սեղմէր, կը ճնշէր ջղադրդւօրէն:

Այս ձեռքը հետզհետէ հանդամանքը կ'առնէր

կապարի ծանրութեամբ հուժկու ճանկի մը որ վայրկենական թափով մը թառած ըլլար թեւիս վրայ իր վայրագ ճիրաններուն ապաստան մը փրկարուելու մտօք :

Եւ հազիւ թէ դէպի ետ քայլ մ'առած էի խուսափելու համար անհարկի ու անախորժ այս փորձութենէն, լոյսը տիրեց դարձեալ սենեակին մէջ և այն ատեն տեսայ հրեան որ աչքերը խոշոր խոշոր բացած, սոսկումով կը նայէր ինձի, ինքն ալ յանկարծակիի եկած և ամօթահար ձեւով մը ետ քաշուելու տրամադրութեամբ : Արդարեւ, իր ձեռքը որ կը դողդղար հիմա, հեռացաւ մեղմիւ և իր շրթունքները, երբ աչքերը բարութեան ակնարկ մը կը նետէին վրաս, ներողամտութեան մէկ քանի բառեր թոթովեցին զորս չի լսեցի բարձրաձայն խօսակցութեան և եղած միջադէպին առթիւ փոխանակուած զարմացական ճիչերու և կատակներու ժխորին մէջ :

— Ի՞նչ եղաք, անհանգիստ էք, բանի մը պէտք ունիք, կ'ըսէի մօտենալով :

Չէ', բան մը չի կայ, կը ներէ՛ք, շնորհակալ եմ :

Հինգ վայրկեան չէր տեւած տեսարանը և արդէն սենեակին մէջ ամէն բան կարգի կը մտնէր : Պատուհանները լաւ մը քննուած, դոցուած էին վանդակները վար առնուելէ վերջ և խաղամոլները դարձեալ կը պատրաստուէին իրենց տեղերը գրաւել, նորէն վառուած սիկառէթները բերաննին և անցած դարձածին վրայ անտարբեր ու անհոգ :

Բայց հրեան ձեռնպահ մնաց այս անգամ : Միայն ես կրնայի նշմարել որ քիչ մ'առաջուան իր պայծառ դէմքը մթնցած էր և ջղագրգիռ վիճակ մը ստացած : Առանց այլայլելու և իր յուզումը յայտնելու, մերժեց խաղը շարունակել և ժամանակին ու ըլլալը պատրուակելով, ժողովեց սեղա-

նին վրայի գումարը զոր վաստկած էր և մեկնեցաւ :

— Խեղճ մարդ , կրկնեց դարձեալ Պարմանեան , այս անգամ աւելի բարձր ձայնով և դառն ժպիտ մը խառնելով իր բառերուն :

Եւ երբ իր աչքերուն մէջ կը նայէի շեշտակի , բարեկամա հասկցաւ միտքս և ոտքի ելլելով .

— Բը՛սթ . . . վաղն առտու ինձի եկուր , կը պատմեմ :

Հետեւեալ օրը , կանուխէն կը կենայի Թէփէ-Պաշիի այն տան առջեւ ուր կը բնակէր Պարմանեան , ամուրի հասառուի մը պէս :

Չիս տեսնելուն , սկսաւ խնդալ , այնքան շուտով մոռցեր էր նախորդ գիշերուան իր խոստումը , մինչդեռ ևս անոր վրայ այնքան մտածած ըլլալու սպառնոյցը կուտայի խմ ներկայութեամբս :

— Գիտեմ որ հետաքրքիր ևս , ըսաւ սիկառէթ մը երկնայնելով ինձի , կեանքը ուսումնասիրողի հաշմը ունիս , նստէ՛ նայինք :

Սուսած ատեն , իր արդուզարդին վերջին ձեռք մը կուտար . մէկ քանի վայրկեան փողկապովը խաղաց հայելիին առջեւ , պեխերը իւղոտեց , փայլեցուց , յետոյ քովս փութալով :

— Խահվէ մը կ'առնե՞ս . . .

— Չէ՛ . . .

— Աւելի աղէկ . . . հիմա մտի՛կ ըրէ , երէկ գիշերուան տեսած անձդ , բարեկամս , շատ դեղեցիկ և մանկամարդ կին մը ունէր զոր երկու տարի առաջ կորսնցուց հողերանական վայրկեանի մը մէջ . . . անկէ ի վեր մութէն կը վախնայ խեղճը . . .

— Կատակ չէ՞ ըրածդ . . .

— Մութ տեղերէն կը վախնայ , կը սոսկայ , առանց լոյսի չի պառկիր , խաւար փողոցներէն չանցնիր . . . Թիւնէլ անգամ չի նստիր , կարծեմ . . . հասկցա՞ր . . .

—Կարծես թէ կը հասկնամ կոր, այո՛, զարմանալի բան... ուրեմն վախէ՞ն էր որ երէկ գիշեր մութ սենեակին մէջ թեւէս բռնեց ոչորեց... դեռ ցաւը սրտիս կը զարնէ կոր... :

—Մխիթարուէ, իր նոյն պահուն զգացած յուզումը, ցաւը քուկինէդ աւելի զօրաւոր ըլլալու էր... :

—Շարունակէ ուրեմն, խնդրեմ, կը հետաքրքրուիմ կոր... :

Եւ Պարմանեանի ձեռքէն բռնած, ստիպեցի որ նստի դէմս :

—Աղէ՛կ, ձգէ որ պատմեմ եղելութիւնը, սկսաւ Պարմանեան, ինծի պէս թիկնաթուռի մը մէջ տեղաւորուելով :

Այս մարդը հարուստ և ծանօթ ընտանիքի մը կը վերաբերի և ինչպէս տեսար, երիտասարդ և առողջ կազմի տէր մարդ մըն է տակաւին. կարեւոր դիրք մըն ալ ունի այսօր հրապարակի վրայ, շատերուն նախանձը գրգռելու շափ, բայց հակառակ ասոնց, դժբաղդ և տխուր արարած մըն է, թէև ոչ ոքի հաշիւ տուած է մինչև այսօր իր վիճակին վրայ : Ասկէ հինգ տարի առաջ գրեթէ, ամառը, կղզին գտնուած միջոցիս, այս հրեան պանդոկ եկաւ իր նշանածին հետ որ նմանապէս հարուստ այրի հրեայի մը, Ժազ Տիամանտաի միակ աղջիկն էր, դրամէն և թարմ տարիքէն զատ ֆիզիքական կատարեալ գեղեցկութեամբ մը օժտուած : Ան տարին ամբողջ կղզիի մօնէին մէջ իրենք էին օրուան հերոսները և իրենցմով էր որ ամէն ոք կը զբաղէր : Իրարու ալ շատ վայլած զոյգ մըն էին շիտակը, սողան իր վայելչադէմ և հսկայ երիկ մարդու առաւելութիւնով և իր ստացած անթերի կրթութիւնովը, աղջիկը նոյնպէս իր նրբագէտ կենդանազամարութեամբ և մտաւորական զարգացումովը : Կղզի եկած միջոցնուն, աղջիկը դեռ սուգի

մէջ էր, մօրը մահուան պատճառաւ և կ'ըսէին թէ նոյն տարին սուգէն ելլելու մտադրութիւնով էր որ Պոլիս վերադարձած էր Եւրոպայէն ուր մօրը հետ գացած էին միսիթարուելու համար: Արդարև, մայրը զոր բնաւ չեմ ճանչցած, չեկաւ այն ամառ Պոլիս: Կը պատմէին որ հակառակ իր տարէց վիճակին և բաղդախնդիր, կնասէր մարդու համբաւին չէր կրցած շուտով մոռնալ իր կինը և դիւամամբ երկարած էր ճամբորդութիւնը, Պոլսոյ մէջ չյիշելու համար ներկային այնքան մօտ իր տխուր անցեալը. իսկ բամբասող լեզուները, որոնք կը վիստան ամէն ընկերութեանց մէջ, կ'առարկէին թէ ժագ Տիամանտաի կինը սրտի հիւանդութեան զոհ գացած էր, թէ՛ մարդը մեթրեա մը ունէր արդէն ի վաղուց և թէ՛ վերջապէս իր գեղանի աղջիկը գիտակցօրէն Եւրոպա տարած էր, զայն բժշկական ճարտար քննութենէ մը անցընել տալու և անոր ապագայ երջանկութիւնը չխորտակելով ինքն ալ իր կարգին նորանոր վիշտերու տակ բաւորովին չընկճուելու, չտուժելու համար: Մէկ խօսքով ամէն ոք բան մը գտած կամ գուշակած ըլլալ կը թուէր իրենց վրայ և ստիկա շատ տարօրինակ չերեւնայ քեզի քանի որ ըսի արդէն թէ որքան հետաքրքրութիւն շարժած էին երկու նշանածները իրենց շուրջը: Մնաց որ, այս պատճառ մը չէր որ մենք, մէկ քանի պանդոկի ամուրիներս, վարանէինք դարպաս ընելու այսքան գեղանի և հաճոյակատար կնոջ մը հետ որ առանց այլայլելու, իր ապագայ ամուսնին ներկայութեանը իսկ, ճշմարիտ սարանիացիի մը համարձակութեամբ մեզ կը վերադարձնէր մեր կեղծ գօնքշիւնները, իր հաւնածները ինքզինքին պահելով, ինչպէս ազատամիտ և յանդուգն կին մը պիտի պահէր իրեն տրուած վարդ մը, կուրծքին վրայ: Չմոռնամ սակայն աւելցնելու որ իբրև սալօնի կին կը

վարուէր պարզապէս մեզի հետ, առանց նշանածին միտքէն անցընել տալու որ և է կասկած մը, դայն վարկաբեկող գաղափար մը: Մեր մտերմութիւնը իրարու հետ այդ օրէն կը սկսի կրնամ ըսել և իրենց ամուսնութենէն վերջն ալ յաճախ հրաւիրուած և գացած եմ իրենց տունը: Նկարագրի, կրթութեան այնքան խորունկ զգացողութիւններ կային Օր. Տիամանտայի սրտին մէջ որ կը վանէր իրմէ ամէն կեղծ ու պատիր ու գռեհիկ քաղաքականութիւն. պարզ էր ամէնուն հետ, միմիայն իր նշանածը սիրելու համար: Իրենց կարգուելէն մէկ երկու ամիս վերջ սակայն, չար լեզուները վերսկրասն իրենց տարօրինակ ենթադրութիւնները տեղալ իրենց հասցէին: Այս ենթադրութիւններուն կը խառնուէին բոլորովին գաղտնի և ընտանեկան շքրջանակներու մէջ ըսուելու արժանի խօսքեր, զըրպարտութիւններ ալ, օրինակի համար թէ ամուսինը տկար էր կազմուածքով, թէ աղջկան հայրը ամուսնալուծում պահանջած էր սպառնական համակ մը գրելով փեսին, թէ երբէք չէր սիրած իր ամուսինը, թէ վերջապէս նոյն իսկ աղջիկը, ժառանգականօրէն ենթակայ եղած ըլլալ կը խոստահար մօրը մահաւիթ և վտանգաւոր հիւանդութեան, ի՞նչ դիտնամ ևս, տակաւին ասոնց պէս տարօրինակ և չարագուշակ ընտանեկան գաղտնիքներ որոնց լուծումը մենք ամուրիներս չէ որ պիտի տայինք անմիջապէս: Ինչ և է, չերկարեմ, քարեկամս, ցաւալին այն եղաւ որ, այս ենթադրութիւններէն կամ զբարտաբոլութիւններէն ճիշդ վերջին պարագան տեղի ունեցաւ դեռ տարին չբոլորած և խեղճ կինը յանկարծական մահուամբ հող մտաւ, այո՛, մեռաւ սրտի հիւանդութենէ, մօրը պէս . . . :

Այսչափ է ըսելիքդ, գոչեցի յուզումով, երբ

Պատմանեան խօսքը ընդհատելով ոտքի ելաւ և նոր սիկառէթ մը վառեց :

— Միամիտ աղայ... կը կարծե՞ս որ այսքանով լմննայ պատմութիւնս... հապա չե՞ս հարցնէր թէ ինչո՞ւ այս մարդը ենթարկուեցաւ մութէն վախնալու արտասովոր հիւանդութեան : Ճիշտ ասիկա ըսելու համար սկսայ և հիմա անկարող եմ ուզած կերպովս բացատրելու զայն : Խնդրոյն է՛ն կնճռոտ, է՛ն հոգեբանական կէտը հոս է և զայն քեզի կարենալ զգացնելու վարանու՛մը ունի՛մ : Ինչպէս որ մարմնական ցաւեր կան որ դիմացինը անտարբեր կը թողուն, այնպէս ալ շատեր չե՛ն կրնար զգալ, ըմբռնել ուրիշի մը հոգեկան տուայտանքը, ներքին մէկ բնախօսական երեւոյթը և զայն ծաղրանքի առարկայ կ'ընեն յաճախ : Երբ մէկ երկու անգամ միտիթարական այցելութեան գացի բարեկամիս, տեսայ որ բոլորովին յուսահատ և ինկած մարդու մը կերպարանքը ունէր, բայց իր վրայ ոչինչ կար դարձեալ բուն իսկ իր ներքին ցաւը, իր խորհրդաւոր հիւանդութիւնը յայտնորոշող : Ամէնուն համար գրեթէ գաղտնի մնացեր էր կնոջը մահուան պարագան : Ինքը ներքնապէս միայն իր դժբախտութեան վրայ լացող և ուրիշներու աչքին նոյն այդ դժբախտութիւնը իբր ճակատագրի մէկ տգեղ և անհաճոյ կատակը ներկայացնող սկեպտիկ մարդն էր : Գիտնալով որ շատ քիչեր կրնան ճշմարտապէս զգալ իր դժբախտութիւնը, զայն ամբողջութեամբ իրեն կը վերապահէր անոր մեծութեանը մէջ տեսակ մը միտիթարութիւն, սրտի գոհացում որոնելու համար հանդէպ իր մեծ նկարագրի և հոգիի տէր մարդու զգացումներուն ու զոհողութիւններուն : Օր մը, այս տխուր մահէն բաւական ատեն ետքը, կրկին իր սունը ճաշած էի և սուրճը, վերը, մատենասարահին մէջ պիտի առնէինք ըստ սովորութեան : Նախ սրկէ նրկէ խօսակցեցանք, տու-

նը լուռ էր և ոչ ոք պիտի գար մեզ խանգարել ,
 քայց վայրկեան մը եղաւ որ Վիքթօր — կարծեմ
 մինչեւ հիմա չէի՛ ըսած իր անունը — թիկնաթո-
 սին մէջ յուլօրէն ընկողմանած վիճակին մէջ և երբ
 սիկառէթի ծուխին և խօսակցութեան ջերմին մէջ
 ուղեղը սկսեր էր շարչրկել դարձեալ իր սիրտը ,
 յիշէ յանկարծ իր կինը և անոր յաւիտենական քա-
 ջակայութեան մտածումէն ընկճուի հողեկանապէս :
 Նոյն պահուն , Վիքթօր կը նմանէր բեմին վրայ
 վայրկենապէս գոյն փոխող դերասանին որ կը պատ-
 րաստուի յարձակիլ իր ախոյեանին վրայ :

Իր աժգոյն դէմքին վրայ , միայն աչքերը կը
 փայլատակէին և կարծես զանոնք՝ կը պատրաստէր ,
 կ'ամիտիէր , անոնց լոյսը սենեակին մէջ մասնա-
 ւոր աեզ մը արձակելու , յառելու համար : Իրաւ
 ալ , հազիւ թէ պահ մը լուռ կեցեր էի , Վիքթօր
 ցատկեց ոտքի ելաւ ընդոտ և ակնարկները ուղ-
 ղելով պատէն կախուած իւղաներկ մեծադիր պատ-
 կերի մը դոր սեւ շղարշ մը կիսովին կը գոցէր ,
 գոչեց հեծկլտալով :

— «Տե՛ս , բարեկամ , կնոջս դէմքը դիտէ ան-
 գամ մըն ալ , ըսէ՛ , ինչո՞ւ կորոնցուցի ես այսքան
 պաշտելի և գերազնիւ էակ մը . . . ի՛նչ սև ճակա-
 տագիր է եղեր իմա , ըսէ՛ , ախուր չէ՞ , անտանելի
 չէ՞ վիճակս . . . ո՞վ պիտի մխիթարէ զիս :

Եւ խոյանալով պատկերին վրայ , քաշեց ա-
 ռաւ ուժգնօրէն սեւ շղարշը , իբր թէ հրաւիրելու
 համար զիս որ սքանչանամ պարզուած գեղեցկու-
 թեան վրայ :

Արդարեւ , սենեակին կէս մթութեանը մէջ ,
 ճարտար վրձինի մը արդիւնքը եղող այս պատկերը
 մէկէն տիրապետեց կարծես մեր երկուքին վրայ
 հաւասարապէս : Անխօսուկ , շփոթած , այլայլած կը
 դիտէի այդ հրաշալի դէմքը որ ինձի անձանօթ մը
 ջըլլալով իսկ , նոր և տարբեր եղանակով մը կը

գրաւէր, կը հրատարակէր զիս, մինչդեռ իր դժբախտ ամուսինը, ոտքի վրայ արձանացած, դիմադժերու այլանդակ արտայայտութիւնով մը ուր վախ կար ու յուզում միանգամայն, խորհրդաւոր կէտ մը, գաղտնիք մը կը փնտռէր, կ'որոնէր պատկերին վրայ, արհաւիրքով լեցուն իր աչքերը պիշ պիշ յառած հիմա անոր. բայց այս տեսարանը երկար չտևեց, Վիքթոր այդ գիշեր կը թուէր ենթակայ եղած ըլլալ անբայտրելի թելադրութեան մը, յիշատակի մը անյաղթելի մէկ դիւթանքին ու մոլորանքին, որովհետեւ, իբր թէ խոյս տալու համար պատկերին ներկայութենէն, յանկարծական ոստում մը ըրաւ դէպ ի ետ և գազանի մը պէս որ հրացանի մը պայթիւնը լսած ու վախցած ըլլար, դուրս նետուեցաւ սենեակէն: Շուարեր մնացեր էի, բայց վախ չէր գար վրաս. կարծեցի որ դուրս ելած էր անձնաստղան ըլլալու, բայց վայրկեան մը չանցած, մատենասրահէն ներս խուժեց դարձեալ, այս անգամ աւելի խելայեղ ու ձեռքէս բռնելով, տղու մը պէս լալաղին.

— «Կը ներես, բարեկամ, պիտի խենդենամ կարծես, մինակ մի ձգեր զիս, եկո՛ւր, կը վախնամ կոր:

— Բայց ի՞նչ ունիս, ի՞նչ բանէ վախցար, կը հարցնէի թու-թակօրէն:

Տեսնելու արժանի էր իր գեղեցիկ մարդու դէմքը, ջղապիրկ և սոսկումով լեցուն վիճակ մը ատացած յանկարծօրէն: Երկու ձեռքերը պինդ բռնած իրարու հիմա, իբր թէ անձանօթ թշնամի մը դէմ դնելու երեւոյթով, Վիքթոր կը պատասխանէր ինձի, անորոշ և անկապ բառերով:

— «Մութէն վախցայ... կի՛նս... կը վախնամ կոր... ամէն բան յիշեցի նորէն... լոյս բերէ՛ք ներս, լոյս բերէ՛ք:

Եւ սակայն լամբարը կը վառէր, խոշոր լու-

սամփոփին տակ բոցափայլ : Վայրկեան մը ձևաքս
 երկնցուցի ծառան կանչող ելեքտրական կոճակին ,
 անհասկնալի և տաղտկալի վիճակի մը մէջ կը
 գտնուէի . բայց տեսայ որ անիկա ինքզինքին կու-
 գար կամաց կամաց , իր սովորական հանդարտ
 դէմքը կը վերատանար և թիկնաթուին կոթնցնե-
 լով իր դլուխը , կէս թողուած սիկառէթը շըր-
 թունքներուն կը տանէր դարձեալ , բարի ակնար-
 կով մը և լայն ժպիտով մը հասկցնելով ինծի թէ
 եղածը վաղանցիկ պարագայ մըն էր և թէ յաճախ
 կը պատահէր հիմա իրեն . . . :

Ահա ինչ որ իմացայ քիչ մը վերջ իր բերնէն :

— «Բոլոր այս հոգեկան տառապանքը , այս
 ցնորքը որուն ենթարկուած եմ և որուն ականա-
 տես եղար այս միջոցիս , բոլոր ասոնք հէգ կնոջս
 կը պարտիմ , բայց կը ներեմ իրեն : Այն խորունկ և
 անդիմադրելի սէրը զոր զգացեր եմ իրեն համար ,
 չէր կրնար վերջանալ արդէն առանց ցաւի , առանց
 վէրքի , առանց ծանր հետեւանքի մը վերջապէս .
 պատճառ մը չունիմ բնաւ ճակատագրէս դժգոհե-
 լու , քանի որ ես իսկ եմ մասամբ այս ճակատա-
 գրին հեղինակը , եթէ կ'ուզես : Ահ , հաւտալդ
 կուգա՞յ արդեօք եթէ խոստովանիմ քեզի հոս , իր
 պատկերին առջեւ , որ ամբողջ տարիներով իրեն
 համար ներսիդիս մնուցած , մեծցուցած սէրս վայր-
 կեան մը միայն ունեցաւ , վայելեց իր արդար փո-
 խարինութիւնը և այդ գիշերուընէ իսկ որք մնաց ,
 այրիացաւ յաւիտենական կերպով : »

Հոս մէկ քանի անգամ սիկառէթը միացուց
 իրարու ետեւէ , ծուխի թանձր ոլորտներ արձակե-
 լով դէպի վեր :

— «Այո՛ , այս բարի և հրաշալի կինը , միայն
 մէկ գիշեր մը սիրեց զիս և այդ գիշերն ալ հոգին
 տուաւ : Երանի թէ բնաւ չսիրեր զիս : Չէի՞ր լսած

երբէք որ աներս Պէռլէնի և Բարիզի նշանաւոր
բժիշկներուն քննութեան ենթարկած էր իր աղջի-
կը, կնոջը յանկարծական մահուընէն վերջը: Է՛հ
ուրեմն, այս լուրը անհիմն չէր, այլ ճշմարտու-
թիւն մը: Գիտութեան մարդիկը մէկ երկու քրն-
նութենէ ետքը կասկած յայտներ էին ժառանգա-
կան վարակման մը հաւանականութեան մասին և
նկատի առնելով Չաֆիրաի հեշտամուկ և միանգա-
մայն դիւրազգած, տարփատենց բնաւորութիւնը և
կազմուածքը, վճուեր էին թէ չի կրնար ամուսնա-
նալ առանց իր կեանքը անակնկալ մահուան մը
վտանգին ենթարկած ըլլալու: Յորչափ կիսա չու-
նենար սիրոյ դառնութիւնները, չզգար անոր յու-
զումները և քաղցրութիւնները, երբէք պիտի չպա-
տահէր որ այսպէս բաժնուի ինձմէ յաւիտենական
կերպով և երթայ բնակիլ սև հողին տակ:

«Ա՛հ, այն գիշերը, երբէք պիտի չմոռնամ...
առատ կերուխում մը ըրած էինք Հիւպատոսին
բնակարանը: Շանքանեա, թրիւֆ, սլար, նուազ,
ո՞ր մէկը ըսեմ, ամէն բան կար այդ գիշեր... ա՛հ,
որչափ գեղեցկացեր, ազնուացեր էր կիսա: Կառ-
քին մէջ որ տուն կը վերադարձնէր մեզ, կարօսս
չէի կրնար յագեցնել իր գողտրիկ և փափուկ ձեռ-
քերը համբուրելով ձեռնոցին տակէն: Իրեն հա-
մար զգացած սէրս նոր զարթնում մը, նոր թափ
մը ունեցած ըլլալ կը թուէր ինձի և կ'առաջնոր-
դէր զիս մինչև այդ պահուն անձանօթ մնացած
հեշտաւէտ պարտեզներու բաւիղին մէջ: Բոպէ մը
եղաւ որ ամէն ինչ շիտթուեցաւ գլխուս մէջ: Չա-
փաղանց ուրախ վայրկեաններու միջոցին անգի-
տակցարար դառնացող հիւանդ հոգիներու պէս,
իմ հոգիս ալ կը զգենուր տեսակ մը մեղամաղձո-
տութիւն որ տարօրինակ նախազուշակութիւններու
կը տանէր զիս, տխուր վերջաւորութիւններու վը-
րայ մտածել կուտար: Ետքէն, այս հոգեկան հրա-

տապ տանջանքը որ մահուան դողանջը զարկած ըլլար կարծես պահ մը սրտիս մէջ, փոխուեցաւ անսպառելի ոյժի մը, անբացատրելի կիրքի մը որ իբր սիրահար, ըսել պիտի տար ինձի, ինչպէս բեմին վրայ Մուսէ Սիւլլիի մը պէս եղերերգարար, բոլոր այն վսեմ ու գաղանախորհուրդ երգերը, մոլեգին և առասպելական այն խօսքերը բոլոր, որոնք ներսիդիս կը վերածնէին նոյն վայրկեանին, կը մոլորեցնէին զիս սիրոյ պարգեւած բոլոր հեշտութիւններուն ու տուայտանքներուն մէջ:

«Եւ չգիտեմ դեռ ինչպէս եղաւ որ տունը, մեր առանձնասենեկին մէջ որ ժպտագին կը հրաւիրէր մեզ իր ծոցին մէջ, ինչպէս ծաղկաւետ պարտէզի մը մէջ Չաֆիրան ալ ուղեց զգալ ինչ որ կը ջանայի, աղու մը պէս դողդոջուն լեզուով ու պաղատագին ակնարկներով հասկցնել և բացատրել իրեն: Չեմ յիշեր նաև սրտի ի՞նչ անդարմանելի ինքնալքումով, ի՞նչ քաղցր թօթափումով էր որ անիկա թոյլ տուաւ ինձի որ, մինակս, երբ բնութիւնը անգամ լուռ կը մնար դուրսը զմեզ չխանխարելու համար մեր առանձնութեան պահուն, մռայլ Սիկֆրիտին պէս, Վակնէրեան սարսուռով մը, իր արեւի պէս ողորկ ու փայլուն ճակատէն քաղեմ ոսկի ճառագայթներ, իր քաղցրաթոյր մազերուն մէջ որոնեմ զգացումներու սիրատենջ յագութը, իր անարատ ու մաքուր շունչովը գինովնամ, իր աչքերուն կապոյտին մէջ մոռնամ ինքզինքս և նետուիմ, խեղդուիմ իր խորունկ հոգիին ոսկեթել ցանցին մէջ...»

Երբ ինքզինքին եկաւ, Վիքթօր որ կուլար հաղիւ թէ լսելի ձայնով մը ամբողջացուց.

— «...Երբ այս մղձաւանջէն արթնցայ, բարեկամս, Չաֆիրա մեռած էր արդէն... բան մը չէի տեսած, չէի գուշակած եղելութենէն... ո՛չ

ալ մտածած էի այս տխուր վախճանին վրայ... Սենեակը մութ էր բոլորովին, իր ամրափակ թանձր վարագոյրներովը, խաւար դամբանի մը պէս արդէն... Ձեռքերս Չափիրաի սառ մարմինը շօշափեցին ակամայ... հազիւ կրցայ ցատկել տեղէս, այնքան սաստկօրէն մէջս մտած էր վայրկեանական կերպով այն տարօրինակ և աննկարագրելի վախը որ մինչև հիմա կ'ապրի դեռ վրաս: Հինգ վայրկեանի չափ դեգերեցայ խարխաբելով սենեակին մէջ, ամէն կողմ կարասիներուն զարնուելով վախուստի ճամբայ փնտուռ զսպուած կենդանիի մը պէս, պահ մը զգացի որ պիտի խելագարիմ, այնքան հզօր էր յուզումս, այնքան մեծ՝ ունեցած ցաւս: Ծիւաղային ձայներ կը թուէին գալ ականջէս վար փափապու տխրութեանս անհունութիւնը, իսկ անորոշ ստուրիներ կը վազվզէին մթութեան մէջ, անակնկալ և խորունկ սուգիս վրայ ծիծաղող չարագուշակ հուրիներու պէս: Երբ վերջապէս հասայ ուժասպառ, ճարահատ, կնոջս քով և արտօրանքով փնտուեցի խաւարին մէջ անոր դեղեցիկ աչքերը, տեսայ որ անոնք փակուած գոցուած էին արդէն անդառնալի կերպով, յուզումի, սիրոյ և վայելքի արբշուութեան գերագոյն վայրկեանին մէջ...

«Եւ այն ատեն պուացի, ամբողջ ուժովս օդնութեան կանչեցի ծառաները... ա՛լ անկէ անդին չեմ յիշեր...»

— Ահա այս էր պատմելիքս, բարեկամ, օ՛ն, երթաս բարով...

Պարմանեան, յուզումով, ուսիս կը զարնէր արդէն:

Բայց տխուր, ևս ժամերով խորհեցայ Չափիրաին վրայ, անոր տեսլական հոգին ի զուր փրնուելով նոյն պահուն, ամպի մը եզերքէն վար թափող արեւին ոսկի ճառագայթներուն մէջ...

1870

1871

1872

1873

1874

1875

1876

1877

1878

1879

1880

1881

1882

1883

1884

1885

1886

1887

1888

1889

1890

1891

1892

1893

1894

1895

1896

1897

1898

1899

1900

1901

1902

1903

1904

1905

1906

1907

1908

1909

1910

1911

1912

1913

1914

1915

1916

1917

1918

1919

1920

1921

1922

1923

1924

1925

1926

1927

1928

1929

1930

1931

1932

1933

1934

1935

1936

1937

1938

1939

1940

1941

1942

1943

1944

1945

1946

1947

1948

1949

1950

1951

1952

1953

1954

1955

1956

1957

1958

1959

1960

1961

1962

1963

1964

1965

1966

1967

1968

1969

1970

1971

1972

1973

1974

1975

1976

1977

1978

1979

1980

1981

1982

1983

1984

1985

1986

1987

1988

1989

1990

1991

1992

1993

1994

1995

1996

1997

1998

1999

2000

2001

2002

2003

2004

2005

2006

2007

2008

2009

2010

2011

2012

2013

2014

2015

2016

2017

2018

2019

2020

2021

2022

2023

2024

2025

2026

2027

2028

2029

2030

2031

2032

2033

2034

2035

2036

2037

2038

2039

2040

2041

2042

2043

2044

2045

2046

2047

2048

2049

2050

2051

2052

2053

2054

2055

2056

2057

2058

2059

2060

2061

2062

2063

2064

2065

2066

2067

2068

2069

2070

2071

2072

2073

2074

2075

2076

2077

2078

2079

2080

2081

2082

2083

2084

2085

2086

2087

2088

2089

2090

2091

2092

2093

2094

2095

2096

2097

2098

2099


2100



ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ



(ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ)



Գրեց ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



Կառագայ փորձերուն մէջ որ և է անկարելի ու անտանելի յաւակնութիւն չկայ :

Graphologieն՝ գուշակական կամ կախարդական արուեստ մը չէ : Պարզապէս՝ դիտողութեան վրայ հիմնուած բնախօսահոգեբանական խուղարկութեան միջոց մըն է , անպայման կատարելագործուելու ընդունակ , ինչպէս են բոլոր զննական դիտութիւնները : Փորձառական կարգին մէջ , աուեալ ծանօթ անհատականութեան մը հոգեբանական լատկացուցիչ տարրերուն վերլուծման նպատակով ամէնէն վատահելի միջոցը կրնայ նկատուիլ գրախօսութիւնը (graphologie) : Ներկայ փորձերն ալ , խնդրոյ առարկայ եղող ծանօթ գրագէտներուն հոգեկան հիւսուածքին կնճիռները քակելու , վերլուծելու , բացատրելու հետաքրքրութիւններ են , որոնց մէջ աշխատուած է օգտուիլ էապէս graphologique յայտնութիւններէ : Աւաջադրուած այս որոշ նպատակէն տարբեր բան չտեսնելու համար այս ձեռնարկին մէջ , ուր փափաքելի էր որ ո և է յաւակնութիւն չնշմարուէր , անհրաժեշտ համարուեցաւ սոյն ծանօթութիւնը :

ՏԿՆ. Զ. Զ. ԱՍԱՏՈՒՐ

(Ս Ի Պ Ի Լ)

Յոչքու տաղանդաւոր հեղինակունին՝ խմացաւ
կան ջինջ յատկութիւններու հազուագիւտ նմոյշ մըն
է, մեր կին գրողներու ցանկին մէջ (*écriture claire,*
nette, ordonnée): Յոյժ բարեկարգ և խիստ շնորհալի

*Միջոց զարգացման և
հարստացման համար
Միջոց անհրաժեշտ
և անհրաժեշտ զարգացման*

Չեռագիր ՏԿՆ. Զ. Զ. ԱՍԱՏՈՒՐԻ

երևակայութիւն մը (*écriture anguleuse, ordonnée,*
punctuation soignée) դէպ ի շնչին մանրամասնու
թիւնը՝ որ կը սարսափի անհոյժ և անուշադիր
նայուածքէն, դէպ ի աննշմար խիճն ու բիծը, որք
արուեստի գործին կոկիկ կատարելութեան կնիքն

ու նուիրագործունեն են, դժուարապահանջ կիրթ ու փափուկ ճաշակ մը (écriture fine, agréable à la vue) որ մեծագոյն ապահովութիւնն է ընդդէմ մաքի ու բարքի ռամիկ և միջակորեար հակունակներուն, գրականութեան մէջ Սիպիլին տուած են բոլորովին ինքնայատուկ և ազնուապետական դիրք մը՝ որուն կը տիրանայ մարդ՝ արժանանալով միայն :

Իր այս դիրքը պահպանելու համար՝ Աղջկան մը սիրտը-ին հեղինակուհին իրեն շինած է դժուարաճերձ ու սարամերժ հպարտութեան (majuscule dont la première jambage est plus haute) խրոխտ պատուանդան մը, որուն բարձունքէն կը սիրէ, շնորհալի և ամուր ինքնավստահութեամբ մը (écriture ferme, paraphe en soulignement) գլխալ իր շուրջի ռամկութիւններուն, աղքատութիւններուն վրայ :

Ատոր համար ապահովապէս իրաւունք ունի : Իմացական իրերու կարգին մէջ շփոթութիւն, անճրջտութիւն, մթութիւն, երեւակայութեան մէջ՝ անասնձ և անկարգ գործունէութիւն, զգացումներու մէջ՝ ծայրայեղ sentimentalisme, շատ անխնամ լեզու մը, շփոթ ու անտրամաբանական իրականութիւն մը. — ահա՛ այն հանգամանքները՝ որք մեր մէջ կը յատկանշեն այսօր ընդհանուր առմամբ կանաչի գրականութիւնը. մինչդեռ Սիպիլ՝ գրած է ժամանակիս ամէնէն յստակ աշխարհաբարը, ամէնէն կոկիկ լեզուն, ամէնէն տրամաբանական պարբերութիւնը :

Իր իմացական յատկութիւններն ուրեմն առաւելապէս առնական յատկութիւններ են (écriture nette, ferme, ordonnée, modérément mouvementée) որք արձագանք կուտան կանաչի զգացողութեան մը մէջ :

Սիպիլ՝ որոշ, անխոփոխ, յստակ նկարագիր մըն է : Այդ բանին համար՝ չեն պակսիր իրեն անկեղծութիւնը, տեսակ մը սրտի բացութիւն ու սուպաւորութեան տեւականութիւն (écriture ferme, égale,

lisible, nette) : Հակառակ արտաքին կամ հեռաւոր երեւոյթին, հիմնապէս, ներքնապէս՝ դիւրահաղորդ, համակրելի ու սիրալիր բնաւորութիւն մըն է (écriture spontanée, jolie), անձնուէր՝ իր բարեկամութիւններուն մէջ (majuscules liées aux lettres suivants) յոյժ գորովալից իր մտերմութեան մէջ (écriture inclinée, fine) : Արտաքնապէս այս արհամարհու հպարտութիւնը՝ ներքնապէս լինելով շատ զգայուն, նոյն իսկ դիւրագգած, իր կարգին պէտք ունի բարեկամական անձնուիրութեան ու սիրոյ (écriture inclinée) և հակառակ ամէն երեւոյթի, անտարբերութեամբ չի տեսներ իր վրայ հիացողները, իր տաղանդին պատուականութիւնը հասկցողներն ու դայն պանծացնողները, ու չի կրնար բողորովին այրօրէն անտեսել իր անմիտ և անուղղամիտ détenteur-ները որոնց անունը մոռնալ բողորովին՝ շատ դիւրին բան էր իրեն համար (paraphe rancunier) :

Աշխոյժ այլ վերապահուտ, առանց բլլալու բացարձակօրէն տարուած զգացումներու, կիրքերութափէն (finale arrêtée), փափկօրէն հեղինակուած (autoritaire), բայց ոչ խստօրէն վճիռ արձակող, բաւական դժուարապահանջ ու խիստ (écriture assez anguleuse) այլ փափկանկատ և եփուէն, անկեղծ ու համարձակախօս (écriture lisible, a et o ouvert en haut) չափաւորութեամբ, զգուշաւորութեամբ և շրջահայեցութեամբ, ինչպէս վայել է իր դիրքն տնկցող կնոջ մը, Յոշեբու հեղինակուհին համակրելի անձնաւորութիւն մըն է, ներդաշնակութիւն մը խմացական տոկուն յատկութիւններու և կենցաղագիտական հրապոյրներու (écriture jolie, sympathique) :

Իբրև խմացական հաստատուն նկարագիր, Սիպիլ դրական բարդ ու այլազան փառասիրութիւններու մէջ չի տաշուբերիր : Իր մտաւորական sensibilité-ն յարասիրտիս տպաւորութիւններու բաղ-

մատարր զանազանութեան մը ժամադրավայրը չէ (écriture modérément inégale) : Կ'ենթադրեմ թէ ունենալու է իր հաստատ համոզումները, իր սիրական ըմբռնումները, որոնցմէ ամէն վայրկեան շեղիլ չպիտի սիրէր : Իր դերագոյն հաւատքը՝ բանաստեղծութիւնն է անշուշտ, զոր կը դաւանի գերազանցը և բացարձակը մտքի հաճոյքներուն : Կը կարծեմ թէ այդ է պատճառը որ՝ գրական գործունէութեան սահմանին մէջ՝ բազմաթիւ գաղափարներ, բազմաթիւ նիւթեր, բազմաթիւ ծրագիրներ և փառասիրութիւններ չունեցաւ : Սիրեց մնալ մանաւանդ իր երազն իրականացնելու միակ հոգին նուիրուած բանաստեղծը, և գուցէ ատոր համար իսկ շատ հեռու կեցաւ միշտ՝ գրական կեանքը շինող ու որ և է գրագէտի մնափառութիւնը գգուող անօգուտ բանավէճներէն, հրապարակագրական ունայն հոգերէն, նոյն իսկ՝ գրական, խմատասիրական, գեղեցկագիտական հարցերու յարուցած հոսանքներէն : Եւ եթէ երբեմն գրեց այն քանի մը յօդուածները, ուր խմատուն ձեւի մը ներքեւ հասկցուած ֆէմինիզմ մը կը սլաշտպանուի, անոնք ալ մանաւանդ արձակ բանաստեղծութիւններ են, յօրինուած հազիւ թէ ընդհրջմարտող փափուկ և խուսափուկ մտածումներով, սճի, փոխաբերութիւններու նրբարուեստ դրասանդներով, քաղցրահնչիւն բառերու, ներգաշնակ պարբերութիւններու հեշտալուր երաժշտութեամբ մը :

Ու, իմ նորեկ graphologueի եւանդիս մէջ, կը վարանիմ թէև, բայց պիտի ըսեմ թէ՛ այս փառքով և համբաւով երջանիկ բանաստեղծուհին՝ իր հոգւոյն ամենածածուկ մէկ անկեանը մէջ, ունի վեհերոտութիւն, կասկածներու մելամաղձոտութեան խորք մը, ըստ Նարեկացւոյն թերեւս դիւսօֆ ժպսեալ եւ սօֆ խոցեալ, որուն պատճառը եթէ

կարելի չըլլա՛ր ալ բացատրել, բայց գոյութիւնը հաստատել՝ graphologieի անգաղտնապահ ձեռնհասութենէն էր սակայն (signature tombante) :

Իմ մասին ես կը խորհիմ թէ՛ կանացի հոգի մը ունենալ, բանաստեղծ ըլլալ, և հակառակ աշխարհիկ հաճոյքին ու զուարթութեան, սրտին խորն զգալ մեր ճակատագրին անստուգութեան կասկածն ու մեր կեանքին ունայնութեան անձկութիւնը՝ բաւական պատճառներ են, որպէս զի տրտմութեան և խորհրդապահ մելամաղձոտութեան օժուժով մը համակուած գտնէինք մեր ամէնէն մտերիմ իսկութիւնը :

Սիպիլ երբէք զուարթ բանաստեղծ մը չեղաւ արդէն ու իր հոգեբանական այս ուրուագիծը վերջացնելու պահուս, չեմ կրնար չյիշել որ իր գրչէն դուրս եկած են հետեւեալներուն նման ոչ սակաւ տողեր, անկեղծօրէն տրտում, քաղցրօրէն մելամաղձոտ .

Քեզի նման ես աչ ցաւեր ունիմ, շուսի՛ն,
Չեմ հըմայեր զիս աչ կեանքի փառքեր ոսիմ :

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Պոլսահայ ժամանակակից գրականութեան ամէնէն տարօրինակ ու նշանաւոր ներկայացուցիչներէն մին՝ Եղիա Տէմիրճիպաշեան՝ կանացի հոգի մըն է (écriture très légère, fine et inclinée) :

Իր նկարագրին հիմնական հանգամանքն ու համադրական տարազն է այդ :

Տէմիրճիպաշեան՝ գերազանցապէս զգացումներուն մարդն է ուրեմն, սրտի բաղխումներուն ու բարախումներուն համեմատ թրթռացող խիստ փափուկ, գերանուրբ փափկութեամբ զգացողութիւն մը, հիւանդագին դիւրադգացութեամբ քնար մը՝

որուն շարերը մշտայոյզ կը թրթռան: Հազիւ թէ լսելի հառաչանք մը, վարանոտ հծծիւն մը, թեթեւ խարշտի մը, հեռաւոր ձայներու տարտամ ելեւէջ մը, բաւական են զայն յուզելու, անոր մտերիմ դաշնակուլթիւնները զարթուցանելու համար:

Երբեք հարկ չկայ զայն
 զի սիրտը մտնէ զայն
 Ի սիրտը մտնէ զայն
 Ի սիրտը մտնէ զայն

Ձեռագիր եղիս Տեմիրճիպաշեանի

Սիրող սիրտն է ան, քաղցր ու գուրգուրալից (écriture inclinée), և այս սէրը կարծես թէ ոչինչ ունի սովորականօրէն մարդկային: Գաղափարային, պըղատոնական, մաքուր և աննիւթական սէրն է ան (écriture délicate, légère), բոմանթիք սէրը, միատիքական սէրը, եթէ կարելի էր ըսել: Ուրեմն ոչինչ կայ սարօրինակ որ՝ Տեմիրճիպաշեանի գիրը ուղղապար-

կան նմանութիւններ ունեցած ըլլայ գրին հետ
Ռաֆայելի հեղինակին որուն ամէնէն խանդավառ
պաշտողներէն մին հանդիսացաւ ինքը՝ Օտեան է-
ֆէնտիի հետ։ Ու ճշտիւ բովանդակութիւն ու sentimentalismի
տեսակ մը ծայրայեղութիւն էր՝ որ պատճառ եղաւ
որ Տէմիրճիպաշեան հնաձեւ գրագէտ մը նկատուէր
օր մը՝ նորերէն։

Այսօր, այլ ևս կրնանք պնդել, Օկլեսթ Բօն-
թի ու Լիթուէի այս նշանաւոր ջատագովողը, Զօ-
լայականութեան ու բնապաշտութեան այս եռան-
դուն ախոյեանը իր հոգւոյն ամէնէն անկեղծ խո-
յանքին, անոր ամէնէն ինքնաբուխ արտայայտու-
թեան մէջ, Լամաութիւնի սերունդէն գրագէտ մըն
է, բովանդակութիւն մը և հոգեպաշտ մը։ Եւ իր Պուա-
տայականութիւնն իսկ, նուազ ցուցասէր ու աւելի
բնական քան իր գրապաշտութիւնը կամ բնապաշ-
տութիւնը, կը նկատեմ մանաւանդ իր հոգւոյն
տեսական պապակներու մէկ orientationը, իբր վար-
դապետութիւն մը՝ որ՝ քրիստոնէութեան պէս՝ կը
ջատագովէ ոգեկան տարրին ազնուութիւնն ու
գերազանցութիւնը՝ նիւթականին վրայ։

Իր խմացականութիւնն ալ, հակառակ իր աշ-
խոյժին, մակերեւոյթներու վրայ մանաւանդ կը
սիրէ ծփալ։ Ոչ մէկ բանի կը կառչի ան, ոչ մէկ
բանի խորը կը թափանցէ ան, ոչ մէկ բանի մէջ
կը խորասուզուի ան (écriture lèzère)․ չէ՛, այդ յան-
դրգնութիւնները՝ իր կարողութենէն վեր էին․—
բայց նաև՝ ոչ մէկ բանէ կրնայ հրաժարիլ։ Ի՛րն են
բոլոր գաղափարները, իրն են բոլոր հորիզոնները,
իրը՝ բոլոր խմացական հաճոյքները, և ինք՝ սրա-
թուիչ ծիծառին նման, հազիւ թէ կը դաչի ու-
կ'անցնի, կը հպի ու կը հեռանայ, ամենուրեք
վնասելով նոր արբեցութիւն մը, մեղուի մը պէս
անձուիւր ծաղիկէ ծծելով իր ուրոյն խուսկն ու

մեղքը, երկար առնն կանգ չառնելով ո՛չ մէկ տեղ, ոչ մէկ բանի վրայ:

Արդարեւ ի՞նչ շաղիաղիուն *dilettantisme*, որ կը զգուշանայ կտրուկ կերպով վարդապետելէ գեղեցկին լայն պաշտամունքը, որ սարսափն ունի՝ անոր անչափելի սահմանները պարագնելու՝ միակողմանի տեսակէտի մը համեմատ, որ չի համակերպիր անյեղլի նկարագիր մը ճանչնալ ճշմարտութիւնը որուն չի վստահիր բնաւ, քանի որ անիկա բազմաթիւ երեւներ ունի այնքան որքան պատուհաններ ունի մարդկային հողին, բացուած՝ աշխարհի համայնապատկերին վրայ: Արդարեւ ի՞նչ աւելի արդարանալի քան մեր կասկածն ու անվստահութիւնը՝ իմացական կարգին վերաբերող իրերուն և երեւոյթներուն մասին: Հազար տեսակէտներ կան՝ ճշմարտութիւնը քննելու: Կարո՞ղ ենք, առանց սահմանափակ միակողմանիութեան, միակ պատուհանէ մը վճռել համայնապատկերին նկարագիրը: Անշուշտ «անբաժանելի կէտ մը կայ, որ լաւագոյնն է պատկերները դիտելու համար, միւս կէտերը՝ չափազանց մօտ, չափազանց հեռուն, չափազանց բարձր, չափազանց ցած են: Հեռանկարը, նկարչութեան արուեստին մէջ, կը սահմանէ այդ կէտը, բայց ո՞վ պիտի սահմանէ դայն՝ ճշմարտութեան արարոյականին մէջ (Բասթալ):»

Այս անգամ իմացականութիւնը անհրաժեշտ կորույն ու յատակութիւնը չունի (*écriture légère, grêle, écriture floue, sans netteté*) իր անվստահութիւնները հետախուզական, քննական ոգիի մը մէջ կաղզուրելու, իր սկեստութիւնը բանաձեւելու՝ ջղուտ ու կորովի անկեղծութեամբ: Տէմիրճիպաշեան վարանոտ է, իր մտածումը տարուբերում մըն է միայն, ու բոլոր կուռքերուն խունկ ծխած է ան, առանց բացարձակ պաշտամունքի մը խորհուրդին մէջ ըստ պառելու իր հոգւոյն միտքի քամոյ տենչերը:

Որով և, գաղափարներն ու մտածումներն ալ, որոշ, յատակ, խիստ և թանձր շրջագիծներ չունին իր մօտ: Արշալոյսի ու վերջալոյսի միջնադներուն մէջ ցոլացող փափուկ երանգներ են ասոնք, լուսաւոր՝ բայց տարտամ, անչափելի, անկշռելի, անչօղափելի, շրջմովիկ հուրի մը պէս խուսափուկ, երազի մը պէս հմայիչ ու անվստահելի ցնորքի մը չափ փորձիչ ու դիւթական: Իր բովանդակ դրականութիւնն արդէն այդ անորոշին կախարդիչ տրպաւորութիւնները չընէր միթէ: Տարտամ և հազիւ թէ բացատրուած դժացումներու, անդայտ, մշուշոտ, հազիւ թէ համարձակուած ու բնաւ չամբողջացուած մտածման ուրուագիծերու (finales manquées), հոգւոյն անկայուն, վարանոտ, շուարուն ելեւէջներու խաւնուրդ մը չէ՞ միթէ ան, ուր, վերջի վերջոյ, բանաստեղծին հոգին յոգնած այն ելեւէջներէն ու ձանձրայած անապահովութիւններէն, կը հիւանդանայ անժանօթին մտահոգութեան մէջ: Ահա թէ ի՞նչպէս կը բացատրուի Տէմիրճիպաշեան, իբր բանաստեղծ ու իբր խճաստափրօղ, և իբր իմացականութիւն:

Իր մօտ երեւակայութեան բաժինը սահմանելով, կ'ունենանք ճօխ ու բոցավառ երեւակայութիւն մը, որուն աննման շնորհն ու փափկութիւնն ի բաց կը վանէ սակայն ամէն խիստ շարժում, ամէն բուն արտայայտութիւն (écriture mouvementée, courbée, gracieuse, fine et délicate): Ամէնէն խօշ խայանքները, հոն, անուշ կապոյտի մը յատակին վրայ կը մեղմանան, կը քաղցրանան:

Տէմիրճիպաշեան մի միայն օժտեալ խառնուածք մը չէ: Ոչ ոք իրեն չափ մշակուած ու կահաւորուած գլուխ մը, ոչ ոք իրեն չափ կիրթ ու բազմակողմանի հասկացողութեամբ ճաշակ մը կրցաւ ունենալ (écriture fine, gracieuse, lettres typographiques, écriture jolie): Հաւանականորաւ շատ ճշմարիտ է այն տա-

րաձայնութիւնը թէ՛ Տէմիրճիպաշեան, Տէրոյենցին հետ, մեր ամէնէն շատ կարդացած գրագէտն է :

Իբրև մարդ, Տէմիրճիպաշեան, լիովին իր մտքի յանդգնութիւններուն, անհեթեթութիւններուն և արտուղութիւններուն մարդը չէ : Անիկա՛ պարզ, համեատ, անկեղծ ու անձնուէր է (écriture spontanée, sans fioritures), որպէս քիչ անգամ կ'ըլլան մարդիկ :

Իր բարոյական խմորին մէջ՝ ոչ մէկ դարձըւածք, ոչ մէկ կնճիռ դոյութիւն ունի : Եւ ասիկա թերևս լաւագոյն կերպով կը ծառայէ ասպացուցանելու որ եթէ հազար եղանակներ կան իմացականօրէն հայեցողական կարգին սրտականօղ խնդիրներու մէջ ապրելու համար, եթէ այնքան յարարերական է սկզբունքներու արժէքը՝ այդ սահմանին մէջ, բայց միակ և անսխալօրէն եղանակով մը մարդ պարկեշտ, աղնիւ ու բարոյապէս մաքուր կարող է հանդիսանալ, նոյն իսկ յեղյեղուկ մտքի մը և անսխալօրէն բարքի մը ընդդիմակութեան այս տարօրինակ՝ բայց հաշտ առնթերակցութեան մէջ :

Իրաւ շատ անգամ խնդիր յարուցուած է իր ետական մերժումներուն և դիւրազգացութիւններուն մասին : Էս ինքս երբեմն սխալ հասկնամ եմ այս պարտքան, բայց Տէմիրճիպաշեան՝ դիւրազգած է իր սկար մարդու փափկութեանը և ետատէր է միայն այն ձեւով ու չափով՝ որով իրաւունք ունի ըլլալու հիւանդ մը (écriture grêle, quelquefois patente, signature tombante) :





ԳԵՂԱՄ Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

(ԳԵՂԱՄ)



ՄԷԿ ՈՒ ՃԱՐ ՅՈՒԾԻԿԸ



(Ն Է Բ Ե Ա Յ)

Գրեց Գ Ե Ղ Ա Մ



Իօնք՝ Հացեաց-Պուլանըգի ամենահին գեղերէն մէկն է :

Ժուժ-ժամանակ Վը՝ հարիւրից աւել երթիքներէ՝ թոնրաաներու ծուխերը առատուանց շուր ի կէսօր՝ ամպ-հովանի կը կապէին գեղին ու գեղականին վրայ :

Ամէն բուխերիկ կը մխար, ամէն մատան կը թուխար, Աստուած՝ իր օրհնէնքը՝ բըռով ու բեռով թափեր էր ի հոնակ :

Հողապատ աները երկու մասի կը բաժնուէին : Ժամի թաղ ու վտակի թաղ գիրկ մը ջուր՝ պղտոր ու պրոր՝ շորօրիկ կը սահէր գեղի մէջէն, որ կը լիղէր, կ'ուռգէր լապորէզ եզերքները ձորակին ու դալարի քալմնոցները գեղին : Իր՝ դէմ-դիմաց ակերը՝ Զատկէն մինչ ի սրան հախերթող՝ չրմուկ էին մա՛մուռ ու մումուռ բոյսերով : Առուակու՛մը՝ ոչ միայն կը զովանային գոմէշներու ծովային շոքուուկ ձագուկներ, այլ սարիկները ճնճղուկներով, ձժերչ գառնուկներով լող ու լուացք կ'ընէին, կ'եռային, կը զեռային :

Տուն-անակ ամէնքն էլ՝ կոնաձեւ պօլոզիկ էին : Միայն թէ՛ մէջէմէջ զինչ ցուցանք՝ կը բարձրա-

հային ճամբաներու հազարաչէն օճախները : Ու ճամբաներ մէկ երկուս չէին , այլ քսան ու քսանասուն : Ի հոնակ անհերիք մալ-տաւար կար , հաց ու թան : Հացեաց արգասաւոր հողերը , որ կը բուսցնէին հողի ու ոսկի , մէկին քսան-երեսուն առասագոյն բերքերով ա մէն տարի կը լեցնէին մշակի տունն ու փեթակը , թոնիրն ու սեղանը , գոմերը գառնուկներով , ախոռները հորթերով ու ձագերով :

Փիօնք՝ հին ու նոր շատ սուրբեր ունէր , որոնք՝ հողեկան պահապաններն էին էնոր բոլոր բնակչութեան , արտին , ափին , տուն ու տեղին , հազար տարու տաճարը կա իար ու խորան՝ դարեւոր հողեւտունն էր աղօթասէր շինականին , որ էնոր ամ՝ մէկ քարին վրայ խաչանիշեր դրեր , օճեր էր իր հազարանց տելակներուն ի լրումն : Երկու տէրտէրներ կային , երկուսիկն էլ ալեւորուկ կարգաւորներ , որոնք ամէն օր սաղմոս-նարեկ կը քաղէին ծերուկ միջավար աղօթարարներու մրմունջներով ի միասին :

Ժամն ի սեղան կը ցնծար , գեղն իր ծոյր կը ծիծղար :

Թէպէտ հակառակ շատ կար ի Փիօնք , բայց էնոնց ամէնէն նահապետիկն էր Կրպէենց օճախը , որ ինքն մինակ գեղ մ՝ էր ստուարարնակ : Հազարաչէն երգիքի առիքին տակ՝ մէկ պապիկէ ու շոշիկէ՝ յիսունեվեց հողի ընծաներ էին : Հօտաղ-մշակներով էլ եօթանասունէ աւելի գդալներ կ'իջնէին հացի սեղաննին : Նախիր մ'էին ազապ տղաք ու աղջիկներ՝ օճախին վաղեմի : Գեղին ու գեղացւոց մէջ օրօրք էր թէ արծթուկ մօրուսով պահապան ողին՝ ամէն գիշեր կը լուսէր անշէջ ճրագը ու օրհնած ձեռքով կը փայփայէր էնոնց տուարները : Կրպէենց տան մէկ ձեռքն ի փէչն Սասժուն , մէկ էլ ի մաճ-բուռն

արօրին՝ դարնանէ աշուն քրտնաշագախ կը վաստա-
կէին ու ձմրան արդար, հաւասար կը վայելէին :

Մէկ էր իրենց սիպտակ-մօրուար, ու ամէնուն
խօսքն՝ ի մէկ աման :

Հինգ ջուխտ արօր ու ջուխտ մը գութան,
ձողով սլխար, նախիրով լծան գութան ունէին :

Նոյն օճախտան կցակ հակադրութիւն մը կը
կազմէր գզիր Մքօյի տուն-տրածիկը : Բնակչու-
թիւն վեց հոգի էր : Մքօն, կնիկն ու չորս ձօեր,
որոնց ամէնէն մեծն էր Յարօն : Երեք տարի է որ
Մքօյի դաշտը գզրի հացի կարօտ էր, ուր նոր
գզիրը ախով արեւ չէր խօսար իրեն : Ռէս Աւագը՝
Մքօյի բաղդին նստեր էր, գզրութեան ճականը
ձեռքէն հանելով՝ մէջքը կոտրեր էր մարդուն : Ու
Մքօն, կ'ասեն, քէն էր կապեր, ու կ'ճոշային թէ՛
Աւագի հովանիքն անգամ ծեծել կ'ուզէր, թէ օր
մը, նշմար տուեր էր Յարօյին ու պատու իրեր էր
զէնիկ սիրէ, որ ակն է ի ճակատ :

Չիւն ձմեռ իրենց փէշերը ժողվեր էին :

1852 Մարտի 5ն էր : Օրը կ'երթար, արևը
կը ճանդրատէր, աշմուշը կը նստէր ու գզիր Ազօն
դադար չունէր : Աշխարհի տարտերը իրեն տուեր
էին, սակայն Գզրին ինչ տա՛րտ, քանի որ ամէ-
նուն էլ տարտասանքն էր ինքը... ու գզիրներ
ընդհանրապէս ատելի են շինականին : Անոնք նը-
կատուած են փոր-բտող ճոշքրարներն ու փոր-
ձանքներ : Ահա շինական հայեցողութիւն դէպ ի
գզիրն : Ասու գզիրներէն մէկն էր Փիօնքցի
Ազօն, որ իր արևը գզրութեան մէջ կերած
էր : Շինականի յոգնավաստակ կեանքին անդադ-
կան ու անիծուկ հացն է գզրութիւնը : Գզիր-
ներ՝ Ռէսներու հոպիտներ ու ճորտիկներն են,
երբ Ռէսութիւնը համբաներ հերթով իրարմէ կը խը-
լէին, գզիրներու բաղդն էլ կը փոխուէր : Այսպէս

Սզօն էլ յաջորդեր է Մքօյին, որ հոնկուց վերջ՝ պարապ-սարապ, արեւով անօթի կը պառկէր: Էնոր սաստիկ չքաւորութիւնը անտես չէր մնացած ջուխթակ տէրտէրներէն, որոնք Ռէս Աւագի գութը հայցեր էին ու վերջինը խոստացեր էր գզրութեան ճականը վերադարձնել Մքօյին:

Սակայն գործը դեռ չեղած, սատանի տրեխը ծակեցաւ: Ռէսի ծանօթ խոստումը գզիր Սզօյի սկանջն էլ կաթեր էր: Էլ օր ու արեւ չկար Սզօյի, չուր գիշեր դադրում չունէր: Հաւնինջ մը առնէր թէ չէ, ահա դիւռ շապիկն ի վիզ կ'ելնէր կը նստէր: Կը մտմտար, կը մաղկտար ու դիր մ'էլ կը շնթրկէր:

Աղուէսին քառսուն առակներ կան, բոլորն էլ տանձին վրայ են: Գզիր Սզօյի մտմտութիւնն ու շիւտերն էլ Մքօյի նկատմամբ էին: — Ի՛նչ անեմ, ի՛նչ չանեմ, որ շուշեֆիկ Մքօն Ռէսի աչքից հանել տամ, ի՛նչ...: Ու շատ բանք-բաներ ըրեր էր սակայն չէր յաջողած հատը մաղէն հանել:

Ըսուած է որ «Ուլը կողովի տակ չի մնար, ոչ էլ սէրը՝ սրտանոցին մէջ»: Վերջապէս գզիր Սզօն հոտը աւեր էր ու ճոշքերէ լսեր էր — Յարօն ու Ծուշիկ հետ իրար ծռուկ (սիրահար) են: Էտի կը բաւէր իրեն: Ճրագով փնտռածը անձրագ դուռ: Նոյն գիշեր խկի ջննջաց: Աղօթարանը մաղ-եղելուն, դուրս ելաւ բունկալէն: Ու աչքն Ռէսենց փողան սրած, սկսեց պշալ:

Տախուկ գայլի նմանակ, երկար սպասեց: Միամիտ, նոսր երակ մը բրդաւ, անձրեւի դուլալ բղբուճներ շուլալ-շուլալ կը տճմճէին Էնոր Գզօի քրջերը ու չէր հեռանար:

Դէմ բարի լուսուն՝ Կրպէենց մեծ դարկեանը ճրարնչեց, ուրկէ դուրս եկաւ կուսանց հալաւներով 17-18 ամեայ հուրի-փարի մը, որ դէպ ի կըրպէենց գոմը կ'երթար:

Միջոցառաակ էր էնիկ, բարակ ու դալար պա-
ժով, որուն թիկունքն ի վար եօթ ճիւղ մազեր
հիւսակ-հիւսակ փռուեր էին ու շէկիկ-գոհար կու-
լակներ կ'ծփային վեր երեսին: Մէջքն ինչ գանձի
սրուր բոյն, դէմքն անխաղատ վարդենի, աչքե-
րը՝ կաքու նխած, աղաւնի մը գեղափայլ որուն
էնքան կ'վայլէին արծաթ վզնոցն՝ թուփ ու թուփ
ու ճղակ, ուլունկն՝ մառճան ու մատնին ծիածան՝
հետ հալաւներուն նախշուն նկարուն:

— Ակնթարթաիէ մը յետոյ՝ նոյն փողանէն,
չտապ ու հեւքաման երեւցաւ կարիճ խորդ մը,
պաժով-պաշխով, մէյտան ճակատով, եղուինի
աչքերով ու դուրեկան դէմքով: Կուրծքը գրկի
մը չափ, ոտք ու ձեռք՝ սրարթեւ-փէհլէվանի: Հա-
զիւ 22-23 տարեկան՝ մազ ու մօրունն նոր մրած
էին: Սաստիկ շտապելէն՝ քրտինքը շաղ շաղ կա-
թեր ու կ'պղպղձար երեսին:

Երկունս էլ՝ ետեւէ ետեւ մտան ի դոմ: Շու-
շիկն ու Յարօն էին:

Խղօյի ճոշքի ճամպրուկը լցուաւ, ուստի շու-
տով՝ ոտքի ելաւ: Նախ մտածեց մահանայով մը
գոմն երթալ, բայց շուտով փոշխման եղաւ: Խղօն
անխելք չէր որ մատը պիծկի բոյն կոխէր: «Իէմ
երթամ Ռէս Աւազի, միտ ասաց ինքնիրեն, էս
մուր-մումուռն խապարը տամ իր անուշ հողուն...»
ու դնաց:

Արեւը նոր ծաղկեր էր:

Կրպէնց սան սխալտակ-մօրուս Ռէս Աւազը
դեռ կը քնանար: Գղիւր Խղօն մուկ մը ի բակ
նստաւ արև-հոտելու... գարնան-բերան՝ արեւու շո-
ղերը քնքոյշ ու քաղցր են: Խղօյի սև ամպերը
փարատած ըլլալով՝ կրցաւ հաւնինջ մը քաշել, ու
երբ աչքը ծրպեց, Ռէսն արդէն ելեր էր: Խղօն
շուտմաշուտ՝ օտան վաղեց, սրսուրով դրուագ-
ուած խեչրանը լեցուց, վառեց, ու Ռէսին տուաւ:

Խզօյի ծոցը ուրախութենէն գուսանք կը ծեծէր :
 Վատան էր թէ՛ պատեն աւիթն եկած էր՝ կը արն-
 կէն չուր պոճոճակ զՄ քօն կծելու : Ողորդ ասիր են
 աւազակ գզրին աղօթարան չկայ : Խզօն ախրա չդի-
 մացաւ , ճոշքի ճամպրուկն Ռէս Աւագի առջեւ
 դարտիկց ու ճէռօքներով հասկցուց էնոր թէ՛ Յա-
 րօն ու Շուշիկ սիրահար ին հետ իրար . . . :

Գրգռեց , կատկեցուց ու կաշիէն հանեց զԱւագ :
 Շապկըհան շնծերը՝ հասեր էր մուրադին :

— Խզօն սուտ չէր ըսած . Յարօն ու Շուշիկը
 չորս տարիէ ի վեր է որ ծռուկ ու վառուկ էին հետ
 իրար : Ճժոնց՝ էնոնք մէկտեղ նստան , մէկտեղ
 կայնան : Ու երբ թփառչան , ի սիրոյ ծովն ծաղկե-
 ցան , ու սէրը անաչառ ու անխաղառ էր դեռ :

Շառղարդարի գիշերն հասաւ : Ու Պլէճնայ
 գլուխ դեռ ձիւնով քողքուկ էր , Ախինայ սարի
 դէպ ի արեւմուտք՝ էնոր կրտսեր եղբայրն է Պլէ-
 ճանը , սար քարքարուտ հողատրիկ , որ կ'բանձրնայ
 զինչ անջրմկեա ընդ մէջ Խլաթայ ու Պուլանըգի :

Նոր-նորիկ դարուեր՝ խառ ու մառ կ'շողշողէր
 էնոր փիլպատան ու պծռառն կողերը : Յեղըր-
 ջուկ ձիւնը լժուն մէյտաններ բացեր էր էն քարա-
 վէժ էջքերուն վրայ , ուր՝ շա՛տ հեղ՝ Գէլ-Գազան
 փառանին քոճով-քոչով կ'խմբուէր կամակ-մանա-
 նայ խնդրելու : Ու կ'աւանդուէր թէ՛ ձիւնածաղիկ ա-
 լեւոր մը՝ կանանչ շուքջառով , ճաճանչ երեսով՝
 դիր դիր յայց կ'եղնէր ու ձեռներովն մեռունակ
 մանանայ կ'մաղէր ծլատ փառանիին ու փարատու
 ուշապին :

Ի կողերն Պլէճնայ կ'ոստոստէր վերին այծն
 դիւածին , որ երբեմն կը ծնէր ուշապներ էլ , ու-
 շապ , որ վայրիկենէ վայրիկեան սարերու չափ կրնար
 մեծնալ , զոր սակայն հրեշտակներ՝ հրեղէն շղթա-
 ներով կապկալած՝ կը քաշէին , կ'քշէին դէպ ան-

դունդն, որ չեղնէր ու կուլ տար դաշխարն արա-
րած . . . :

Շողիկ առասպելը կը յաւելու նաև թէ երբեմն
տեանուեր են Պլէճնայ ուշասներ, որ օղին մէջ
գալար գալար կ'տարուէին էն հրեշտակներէն և թէ
կ'լսուէր նոյն իսկ շղթաներու շխրրտոյր :

Պլէճան, սար զարմանազան, բունը մէկ՝ կա-
տարն երեք, երբեակ, եռաթև : Երեք թեւերն էլ
վեղարաւոր-սրածայր, որոնց վրայ թեւաթռիկ ելե-
ւէջք են ըրեր հրեշտակք երկնքին, շահորակք՝ գե-
տինքին, ի հոնակ հինաւուր հաւատքի խունկն
մխացեր էր : Ու ժամանակաց ժամանակներ յա-
ւաճ՝ էնոր եղջերաւոր երկու թեւերը աջէն-ձախէն
բուխացեր են զուլայ զովական ջրերու վտակներ,
կազմելով ջուխթ մը լճակ պատուական, անմա-
նակ արծթի ալեակներով պճնուած, աւաջինն լճակդ
Նազուկի՝ Ախլաթի կանչուկ ստորտում, իսկ երկ-
րորդ լճակդ Խաղլուի՝ Պուլանըզի ծոցում : Մէկը
մէկից քնքուշիկ, խորտաիկ, ու պէսպիսակ հաւ-
քերով, ծաղկունկներով՝ լեցուն :

Եւածայր սարի ստորտում՝ ցանուցիր կ'երե-
ւին մեծ ու փոքր, հին ու նոր գիւղեր, ագարակներ,
անա Փիօնքը, Ապրի, Լիղ, Ոտնչոր, Խաղլը, Փի-
րոն ևլն :

Եթէ Պլէճանը դեռ սև ու սիւպտակ խաւումառ
էր, Պուլանըզի բեղմնաւոր դետինները շատոնց
բացուրուան, ցանկ ու ծաղիկ հաներ էին : Մշակն
իր լաճերով, տաւարն իր ձագերով հագեր էին
շապիկն արեւիկ : Կապտաուն կայներ էին Խա-
մուր ու Սիփան սարերու կէծակ քամիներ, էլ
շատ քիչ հեղ կ'լսուէր շվշվոցը հովերուն ու
հողմերուն՝ բուք ու պորանին Պլէճան լեռնաա-
տանին, որ իր քար-սրտէն՝ ձմեռն բոլորմանց
սառնա հանի պրորներ կը սառտէր դաւառին չորս
կողմը : Կատարները ամպ-դամպ ու մթնտուն,

որոնք գեղացնակ մտքերու օգերեւութարանական հինաւուրց դիտարանն էին, սկսած աշնանէ չուր ճեյրան դարուն, պարուրուած ու պլուլուած մեր նահապետիկ ժողովրդի ամենահին աւանդութիւններով ու դարգանդալից հէքեաթներով քաղունց դեւերաց . . . :

Ծառզարդանք, տօն հասարակաց էր շինակահին, ցանկալի նախատօնակը դասական կարմիր հակիթին : Բարի լուսուն՝ գեղ-գեղով ժամ կ'վազէին զզզուէն ասրջան հալաւներով : Եթէ գեղն համայնական միաժմիկ օրերէն կ'վազէին մասնաւորիլ ծառզարդարին, այլ, այլ ջուխտակ մը սրտեր էլ կային, որ տխրունիին կը արտիէին : Շուշիկի, Յարօյի բաժան ու սիլան սրտերն էին, որոնց վրայ իր մանտրաիկ ձեւներն դրեր էր Ռէս Աւագը, որովհետեւ, Գղիր-Պօյի դարկած բուկուր չուր ի խորքն իջեր էր սախաղկին . . . :

Ռէսը ի սպաս արգիլած էր հազարդակցութիւնն իր օձախի և Գղիր Մքօյի անակին միջեւ : Վաթաուն աչք պահապան կար էնոնց վրայ : Ռէս Աւագը է'լ ուրիշ կերպով չէր կրնար պատճել իր նուշիկ Շուշիկը, զոր՝ աչքի լուսու պէս կը սիրէր այլ միայն որոշեց նշանել զայն գեղացի համբաներէն Վրդօյի աղուն Գրօյի հետ, ու կ'յուսար, որ իր ձագուկը պիտի համակերպէր հօրկան որոշումին վրայ, երբոր Վարդավառէն յառաջ՝ պսակը օրհնուէր . . . :

Թէպէտ հարիւր մը ուղընկան կար Շուշիկին, սակայն Աւագը՝ յարմար դատած էր՝ գեղին մէջ իր աչքին ու սրտին առջեւ ունենալ իր անամանակ հոգեհով սարկեր :

Գեախնը ակնջով է : Շուշիկը ու Յարօն լսեր էին : Զաղացք վերման դիւանք օգնական ու էնոնց օգնական կը հասնէր կրօլէնց օձախէն քաժ մը

իրը խապրաբերիկ : Դա Ռէս Աւագի կինը՝ Թլւաս
 Խուտէն էր : Խուտէն , որ ջուր դրեր դանակ սրեր
 էր Շուշիկի համար : Որովհետեւ սաստիկ կ'ատէր էս
 անմեղ աղջիկը , քանի որ ազնիւ էր , խորոտիկ էր
 ու տան ծաղիկը : Տան ծաղիկն էր Խուտոյին էլ
 աչքի փուշն էր . տղեզները շատ նախանձոտ կ'ըլլան
 և վատ : Խուտէն ու իր աղջիկը , ոչ մարդանման ,
 ոչ մարդահաւան , մէկ մէկ ցուցանքներ էին : Եթէ
 կարելի ըլլար Շուշիկի հովանիքը կը ծեծէին հան-
 դրանելու համար : Ու Խուտէն հնար չմտայ որ չբա-
 նեցուց Շուշիկը շուտով հեռացնելու : Ահա էտոր
 համար էր որ դրսեւանց զինչ քահանայ , ներսե-
 ւանց զինչ սատանայ կը հարթէր փուշն ու տատաչը
 Շուշկայ ու Յարոյի սիրոյ ճամբըներուն : Բանի Ռէս
 Աւագը կը հեռացնէր զանոնք իրարմէ , Խուտէն կը
 մտնեցնէր : Նա սատանութիւն չթողուց ու ցանկալի
 տեսութեան մը արժանացուց երկու սրտերը : Էս
 տեսութեան մէջ , Յարոյի պահանջման վրայ ,
 Շուշիկը երդուրցուցեր էր .

— «Թո՛ղ մէկիկ Աստուածն ու սուրբերն
 Սիփնայ Պլէճնայ վկայ մնան , ապրիմ քունն եմ ,
 մնամ հողերուն . . . »

Երկու ամիսը բոլորաւ : Անցան Համբարձունի
 ու Հոգեդալուտար : Սէլն ասրուաւ հորդոցին : Ռէս
 Աւագի սրտում մորմոր ձիւն կը տեղար : Ինչ որ
 աչխարհի տարտասանքն ու խարխարանքն իրեն
 էին սուեր : Սե նախազգացումով սիրտը կը խշխը-
 շար : Կը կարծէր որ կը խլէին իր եղեւնիկն մատ-
 դաչ , որ կը թռէր , կը կորէր , կ'անհետանար : Փե-
 սացու Գրոյի մէր Մանուշակն աւելի մղախուկ էր ,
 որովհետեւ գիտէր թէ Յարօն ի սէրն Շուշկան կը
 վառի : Օր մը , թիզ չափող կին մը , ասեր էր Մա-
 նուշին . — Շուշկայ գիրն Յարոյի ճակատն է գրուկ — :
 Սե խապարը միամիտ կնոջը միան ու ոսկորն էր
 մտեր : «Ի՛նչ գրուկ է , էն կը կատարի . — ու կը մտա-

ծէր : Նա կը հաւատար ճակատի գրին , բայց կը հաւատար նաև որ թուղթն ու թամասուկն կրնային շրջել ճակատի գիրը , ուստի բոլոր վիճկրարները աշե աշ տուաւ : Վիճակ բանալ , եղունկ աչքել , թիզ չափել տուեր էր , ու սիրտը դարձեալ չէր նատէր . դնաց ինկաւ թղթատար տիրացու Մկրոյին . « Ես քու փեշ , դուն Աստուծու , ճարակ մ'ըրէ : » Տիրացուն սիրոյ երկու թուղթ գրեց աղուէսի կաշիի վրայ : « Երկնուց եօթը աստղերով , եօթ դաս հրեշտակներով , ժամի եօթ խորհրդով կապեմ զսէրն Ծուշիկին ընդդէմ Յարոյին , բանամ զսիրտ Ծուշիկին ի դէմ ծառային Աստուծոյ Գրոյին . . . որպէս քաղցրացաւ Ադամ ի վերայ Եւայի , քաղցրացի Ծուշիկն ի վերայ Գրոյին . . . » : Սիրոյ սոյն թղթերը ծրարուեր ու կախուեր էին Աւագի ձեռօք՝ Ծուշիկին , ու Մանուշակի ձեռօք՝ Գրոյի սրտերէն . . . : Ինչ որ ջուխթ մը սիւներ կատրած գերանին ներքև . . . երկու խնամանց սրտեր շինուեր ու հանդրտեր էին : Բայց երբ գողը տնէն ըլլայ եղը երթիքէն կ'ելլայ :

Մէկ ճար մնացեր էր Յարոյին : — Աւու փախը : — Ու Սուտէն խոստացեր էր զայն էլ տրտել : Ամիսէ մը աւելի էր որ Մքոյի աղան երերմանի կը դողար , որովհետև Սուտէն հասկցուցեր էր թէ՛ Ծուշիկը օրէց օր կը փոխուի ու կը պաղի . . . :

Առաւօտ մը , աղօթրանի հետ , քարի նշանց մը տուեր էր Սուտէն Յարոյին , որու վրայ վերջինը ժրաւ , ժրպնդաւ ու պատրաստ սպասեց . . . : Երկու օրիկ էլ անցաւ :

Սատանի մազն ի կրակ : Յունիս Նի իրիկուան ընթրիքի ժամ կրպէնց խանութման աստուին մէջ յանկարծ մեծ իրարանցում մ'եղաւ : Չորս դօրընդեղ պուզանքը մատկըհոտած ու կապկտուր կուի բռնուեր էին : Ամբողջ սեւատաւորը , քառասուն ջուխթ եղ ու գոմէշ վտանդի մէջ էին : Հաւանքը

բրդաւ, Կրպէենց բոլոր տնեցիներ, դրայիք ու գե-
ղացիք հոն թափեցան: Յարօն էլ դուրս վազեց
անցած դարձածը իմանալու: Արջը կ'երթայ, ուշքն
ի տանձն է: Յարօյի աչքեր պիպուեր էր Կրպէենց
բակդուռը երբ յանկարծ Խուտէն երեւցաւ: Ինչ
կեցե՞ր ես, տունը մնաց մեզի, բակն հաւերուն,
վազէ՛, խուփնուխաղ տան մէջ Շուշիկը մինակ է...
Յարօն ի տեղն խաղաց: Երբ գելհրուման մտաւ Կրպէ-
ենց տան, արդարեւ աղջիկը մենկուկ էր: Յարօն՝
ձիանք դրած ի տան դուռ, սպառնաց անմիջապէս.
— «Պօքիդ տէ՛րն ես...»: Շուշիկը, միամիտ, ինչ
որ զահլաքուշտ եղած, աղաղակեց. «Հա՛, հա՛,
դուրպան քէ՛, ապրի՛մ քումն եմ, մեռնի՛մ, հողե-
րո՛ւն...»:

Ու տողուկը բռնեց զինք: Յարօն է՛լ չթո-
ղուց որ հեւք առնէր, ուրուրի մը պէս վերցուց
դէնիկ ու դուրս եկան:

Ճրագընց՝ հան ժամն էր: Բացուան գեղէն ու
մէջ մթուն կորան...: Գոմէշներու կռիւը վերջացեր
էր, եղածն եղեր էր, եղեր ու Ֆրդեր էր: Երեք
գոմէշ շլինք կտտոր ու հինգ սեւասաւար փտոր-
փտոր ջնջխեր էին: Գեղացիք իրենց ցաւակցու-
թիւնները ու մաղթանքները կ'ուղղէին. «Սև տա-
ւար՝ սև աւուրն է, Աստուած անկուման փոր-
ձանքներէն պահէ, Ռէս Աւագի գլուխն անուշ
մնայ...»:

Կրպէենց տղեր շատ անվան ի տուն դար-
ձան, բայց մինչև աղն հասաւ, մասաղը գնաց:
Շուշիկը համբարձեր էր:

Վաթսուն հոգի մէկ բերան կանչեցին, վաթ-
սուն աչքեր հետրաց զագըրշտեցին ու Շուշիկ դրեր
եւ գտիր: Ռէս ուշքը գլխէն մաղեց: Կ'երէր, կը
մտղկոտէր, կը թափէր ու կը պոռար. — «Վիճկատարի
թղթող վազենք»:

Գեղ-գեղով որ ձիաւոր, որ հետաւոր փնտաւ-

լու ելան, որը ճամբով, որը ճամբկոտոր: Գիշերը
կէս եղեր էր: Մթնեց ու մթնաօց: Ամէնքն էլ
հեռացան ու խորունցան:

Ոչ հեւք, ոչ հաւա՛ր:

Լուծքը բանձրցեր էր չուր երկնակամարի պոր-
տը: Աստղնկարուան-կորուս ճիգ մ'ըրաւ ու կորաւ
ամպերու ետեւ: Ու ամպերը գելհրուման իրար կը
քամէին, երկինքը լցուաւ փելակով-կէծակով,
ամպ-որոտո՛ւմ, Աստուած հեռի պահէ: Աղամոր-
դու սրտունքը կը դողար: Գուռ երակէ մ'է բուռ-
բուռ կաթիլներ իրար հեծած կ'իջնէին ի գետին,
սառսուելով մամուռ քամիէ մը, որ մարդուս միան
ու ոսկորը կը մտնէր ու երակը անընդհատ կ'արձէր:

Ճիտը առջի բերան կռնչեց, ու երկու հոգի
Պէճնայ հասուէ հաս էին: Է'նքան թաշքուկ որ
ոտք-գոտք չէր անցնիր: Հող ու հինք չէր լսուեր:
Սուրտուխամ դադրուկ էին:

Մէկը Յարօն էր մէկն էլ Շուշիկը:

'Լերջինը՝ յանկարծ կանկ առաւ: — Ո՛ւր պըա՛
երթանք, Յարօ՛:

Հաց ու գինի, տէր կենդանի, կանչե՛նք զԱս-
տուած, ելանք ի Պէճան:

Պէճնայ անունը ոտից-գլուխ ցնցեց զՇուշիկ:

- Չէ՛, չէ՛, Յարօ, պաղատեց նա, արի դի-
մաւորենք ի Սքանչելագործ, հոն խաչ ու աւետա-
րան կայ, ուխտաւոր ու մեծաւոր կայ, Պէճանը
պեմուրաս է:

— Սքանչելագործը հեռի է, աչկունքս, ինչ
ընենք չենք կրնար համեւել, ահա՛ Պէճնայ պրուկը
մօտ է, երթանք դէմ ազնաւորն ու ճգնաւոր...
ու շարունակեցին իրենց քելքը:

Շուշկայ թե ու թիկունքը կախուեր էին: Ե-
թէ մարմինը ի ճամբական էր, հոգին տունն էր:
Մէկ կը քելէր ու մէկ կ'ելէր: Անձրեւը դրսեւանց,
արցունքը ներսեւանց տճամճեր ու թումեր էին էնոր

կազմն ու կորույն կուտական : Սիրտը աչիք կուտար
ու աչքը կը շուար . բայց յորի . . . :

Ի՛նչ եզաւ , ինչո՞ւ մաղկոտեցաւ Շուշկայ հո-
գին , Աստուած սիրէք ինչո՞ւ . . . :

Չորս տարի , ամմէկ տարին քրնց զսարն Սիւի-
նայ , տարուակ ու ծուակ էին իրար հետ , չէ՞ որ
ամէն օր կ'աղօթէին – Արև մ'եղնար , թող Շու-
շիկը ծաղկի , լուսնակ մ'եղնար , թող Յարօն թրի-
ւի : – Ան օձն էր անցեր իրենց միջով . . . ճրագընց-
ման ժու՛ժ ի սիրոյ ծովակն կը լողային , է՛ն ինչ
չուտով ցամքաւ , սրմքաւ հեղեղ սէրը : Ահա Շուշի-
կը մաղկոտեր ու մզպներ էր : Օղո՞րդ էր որ սե-
կրաղ էր տեսեր . . . այո՛ , չէր ուզեր ի Պլէճան եր-
թալ , թէ ուքը երթար , սիրտը չէր երթար , ու երբ
ի սիրոյն սիրտը կը թուլնար կ'աւրուէր , կը մնար :
Ուշքն վերացեր թուր էր ի դնտն ու քռէքն Պլէ-
ճան , ահա՛ շարան շարան աչաց դիմաց կուգա-
յին , կ'անյնէին արջեր , ալքեր , օձեր , ուշապներ ,
չվօտներ ու քաջանց դեւեր դահավէժ քարքա-
րուտներէն . . . կը դարհուրէր , կը դաւնար կը կան-
չէր սարերուն ու սրբերուն . . . ու սրտով բոլորմանց
կը մօրմբար ու կը մրմնջէր . «Եաման Մուրատա-
տուր Սբ . Կարապետ , դու որ ամէն նեղածին կը
համնիս , ընծի էլ հասիր , սիրտս կտորուկ է , թե-
ւերս թափուկ է . . . » :

Բայց ինչաւ Յարօն ուրիշ խիստով էր . . . էլ
երջանիկ էր և երջանկադոյն , աշխարհ-աշխարհով
իրեն կը կարծէր , սրովհետև զինչ մազն ի խմորէն
քաչած , բերած խրացուցած է զՇուշիկ : Մէկ
տարս մինակ ունէր մաղին վրայ . – ապահով պա-
տրասարան մը սրտին սիրածը թագուցանելու ու
վայելելու , իր մոլեգնած մտքէն չէր անցներ թէ ի
Պլէճնայ սե ջրիկ կը հոսէր . . . :

Ժամկոչները իրենց նղնղուն «Ողորմի Աստուա-
ծ»ը կանչեցին , բոլոր դեղերէն ու երկուսեկն հետի-

բայ «Հաւատամ խոստովանիմ» գոչեցին ու խա-
չակնքեցին :

Ծիրանի աղօթարանն բացեց իր անփնդկ դռ-
նիկն լուսեղէն, օրը ելաւ ծագեցաւ, ամպե-
րու գոգոնքն մծծծախ՝ քանի մը պլուլ ու թա-
պուլ առան Պէճնայ գլխուն ու անհնտացան,
Չուխթ ճամբորդներն էլ մօտեցան սարի սրտին ու
բրեշակ պրակին : Ապառաժ մը կար Իադրուկ քար
անունով, էսոր վրայ ինկան հեւքաւորած :

Արևն առեր էր, շնչաւոր ու անշունչ արև
հոտեր էին... Ի զո՛ւր շուշան շողն արեւու կը թը-
թըւէր Շուշկայ երեսն քրանեալ, անկուման սար-
աափով մը հանգչեր էր սէրն սրարիկ, ու ի զո՛ւր
Յարօն իր սիրան ու սէրը կը մատուցանէր ծալած
ու ծրարած շողովն խորդեմի, վարդը խորշակա-
հար թոշներ էր... ու Շուշկայ աչունքն ի յետուն էր :

Բայց լի ահուդողով, սարաափ ի սարէն, սար-
աափ ի վարէն, զի ի սարն ուշապն էր վերման,
հէրիկն երերման : Գիտեր որ Աւաղը խուժան
ու ժժան բազմութեամբ իր հաւարին ելեր էին,
տհա էնոնց գոռոցն ու դմնոց մամուռ հովի-
թեւերուն շուլուկ կուգար կը համնէր շուր ի կողն
Պէճնայ, շուր սրտիկն աղջկայ : — Եկան, եկան,
հատուէ հասնն, աղաղակեց Շուշիկն սարաափած
ու Յարօն հինգ գաղ տեղէն ի վեր դատկայ : Ար-
դարև տըլի մը ձիաւոր դէպ իրենք կը սուրային :
— Փախնենք, փախնենք մրմկրմաց Յարօն ու Շուշ-
կայ թեւերէն բռնելով սկսեց քաշքշուիլ : — Եաման
Յարօ, զիս մի տանիր ի պրուկն դիւարնակ, հոն օձ
կայ, գազան կայ, մի՛ տանիր... ու Յարօն, կո-
կոզամիտ. — մի՛ վախնար, ասաց, ձեռքն վեր դանկի
բռան, մի՛ վախնար, հոգիս հոգուդ փոխ կիտամ... »

Աւաւ ու տարաւ, գացին ու խորունցան մէջ
ծառ ու ճղիկն տերեւում : Չիաւորներ եկան, հե-

տաւորներ դացին բուլ-բլրակ աչքեցին : Աչ հետք ,
 աչ հոտ :

Օրն իրկուն եղաւ : Արեւը գնաց , խաւար ու
 սուրն եկան : Երկուսի հալ ու հալուկ տճմուճ , փուռ
 մը կրակ վառեցին դէմն նստան տաքնալու ու չոր-
 չրրան : Քնծող էին , յոգնութիւն ու վախն մէկտեղ
 խիստեր էին դիրենք : Զուխթակ քնանալ չէր ըլլար ,
 սար ու ծառ զարդնդալից էին : Ծուշիկն աղջիկ ար-
 մատ , Յարօն լեզուով դարտակ , ուստի որոշեցին
 հերթով քնանալ : Նախ հաւնինջ մը առաւ Յարօն
 ու ելաւ , յետոյ Ծուշիկն դրեց զգլուխ : Էլ կ'ըզար
 որ չորս բոլոր վտանգ մեծ կար : Հոգին կուտար
 նինջ մը առնելու համար . բայց քունը փախեր էր ,
 կէս քուն կէս արթուն ինկաւ ի դելք :

Էնոր հողեքակում տազնապը հակադդեց Յա-
 րօնն վրայ էլ : Մութը կը թանձրնար , Ծուշիկայ
 տարտը կը ծանարնար : Յարօն սկսեց սարսփալ :
 Իրակ ու բարակ հով մը կը ժժիտէր թուփն ու տե-
 րեւը ու տղուն կը թուար որ ամ'մէկ ճղէ ծառէ
 օձ ու կարիճ կ'իջնէին : Քանի հեղ փոխեց տեղը ,
 իսկ դողը երթալով կը զօրէր : Աիրտը սկսաւ զար-
 կել , կարծեա թէ լեզին կը պոսթկար ու կը սրասուէր :
 Աիրտը դհովու պաղպղուկ ջրերէն՝ երերմանի երեր-
 մանի կը դողար :

Սոսկումէն բունկցելի փայտերը՝ գիրկ գիրկ
 կեր կուտար կրակին , որուն բոցերը կը լայննային
 կը ծառանային ու կը լուսաւորէին սարն եռաթե ու
 պրակն բազմատերեւ . . . :

Վեր , շատ վեր , Պէճնայ քարքարուաներուն
 մէջ անսովոր տակնուվրայութիւն մը կար , քարէ
 կարկուտ էր անկեր . . . քար քարի չէր համներ ,
 ինս ու նինս չարարած կը փախէին իրենց բնէն-
 բունկալէն . . . : Սարի միջնեկ կատարի քարաժայ-
 ռերու ոլորապտոյտ պատրուտուածքէ մը յանկարծ
 հաստութեամբ , երկարութեամբ գերան-մարմին մը՝

քար-քաշան շրխըրտոցով դուրս նետուեցաւ, ու
օդին մէջ ծառայաւ: Գերան մը չէր անկենդան
այլ զարհուրելի ցուցանք մը տտան վրայ բանձ-
բացած . . . :

Սարսափ մը կը ծկրուտաց բոլոր կենդանիներու
մէջ, աշադտում մը, որ Աստուած հեռի ընէ Ա-
դամորդիէ:

Կանապեափկ օձն էր ուշափնի, որ շապիկն փո-
փեր ու թմայրուկն թոթուեր էր, ձմրան հրէշը թու-
նալից որջէն նշմարեր էր փուռ-կրակը ու ժածք ըն-
կեր էր մէջ էնոր գընգեղներն անագին: Սոված ու
դժոխք որովայնը որսի կը կարօտէր ու օձուկնի
նենգաժէտ խորամանկութիւնը անմիջապէս կուանց
թէ կրողը ունի նաև պատրաստի որսեր ինասունե
ադամորդիներէ . . . : Անդիմադրելի ձգողականու-
թեամբ կը կծկուէր, կը բացուէր ու կը մղուէր
դէպի պրակն ու կրակը: Նա սլորափ վրայ էր ար-
դէն երբ դիտեց, դատեց ու տեսաւ որսերն որոնց
հեռապատակերը բոցերու լուսեղէն լեզուներով եկեր
հասեր էին ու հաղորդակցեր ուշափ թովիչ բիբերուն:

Անօթութենէ հրէշը ինքզինքը կ'ուտէր: Իջաւ
պորափ վրայէն, գընգեղները գալարեց, սչինչ կ'ար-
գիլէր էնոր անասիւռն բաց ու կծիկ գնացքը, կա-
տաղարար արշաւեց: Ալուրդը գեամին տակը կը
խորուննար ու անձեղը օդն ի վեր կուտար սոսկու-
մով: Էնոր հովն ու հեւքը թոյն ու թով կը ժայթ-
քէին: Մառ ու ընծիւղ զինչ մարդիկներ կատր-
կատր կը թափէին: Արշաւանք չէր, այլ թռիչք ա-
հաւոր, ճրլակէ ի ճրլակ, ծառէ ի ծառ, յանկարծ
հաւորիք փառանիք վայնասունը բրցուցին ու Յա-
բօն հոգեթափ թռաւ կայնաւ:

Ո՛ւ ս՛հ, ճչաց լեղապատառ, ի՛նչ եղաւ, սա-
բն՝ ր փլան: Էնոր զարգնդած ճիչէն՝ Շուշիկը՝ զինչ
բիծ առած՝ դողահրուկ զարթաւ:

Ուղեղը կ'եռար, մարմինը փշաքաղ կ'ասղնա-

տար, շիւար ու շրշքուկ: Ի դուր կը ջանար ոտքի
 ելնել, չար սատանան, աչքը կուրնայ, պիպուեր ու
 բռներ էր զինքեկ... օձը թրաթափ կտրեց պրա-
 ձեւ երկէնքը, հաստ ծառի մը ճղակին ճղակո-
 տոր՝ պուլուաւ ու կուտուտաւ: Տասը քայլ միայն
 հեռի էր:

Նողկալի հրէշը իր թովիչ աշուին՝ ճնախկ բըւ-
 ծամի տակէն՝ նշանդիր սեւեռած դէպ ի Յարօն որ
 կեցեր էր դէմ կրակին ու իր հովածին ներքեւ,
 կը ծածկէր սապըլտըկուղ Շուշիկը:

Յանկակծի սոսկալի հուշո՛ց մ'եկաւ:

Յարօն՝ եօթ շեք էնդին թռաւ Շուշիկէն:

Օձը ուժկրուաւ ու թռաւ սարսափելի արագու-
 թեամբ, ինչ որ նետ մը աղեղի բերնէն:

Աներեւակայելի ծանրութեամբ՝ ահագնադղորդ
 շիրքտոցը, ու Շուշիկի ալէխարշ ճւոցը՝ հետրակ
 լսուեցան:

Յարօն՝ անմիջապէս իր բայ բաժինէն ելաւ:
 Հրէշը մէկէն ի մէկ՝ Շուշկայ ջուխթ ոտքը մինչեւ
 ծունկերը՝ հուփ սուտաւ:

Ու շարունակ կը դադարէր, կը կլլէր:

Ազջկայ ձէն մէկ երկինք, ու մէկն ի գետին
 էր... նա դարձաւ դէպ ի Յարօն ու պաղատեց. —
 Հողիդ հողուս փոխ կը տայիր, Յարօ՛, դե՛ն, խմտա՛տ
 հասիր... կրկնեց, երեքնեց աղաչանքը. վերջին
 անգամ ըլլալով դանակը խնդրեց՝ բայց անիծածն
 Յարօ՛ — չեմ իշխնար, բսելով գոթեղւորուկի նման
 անշարժ կեցաւ:

Օձը չուր դօտեկոյս էլ կլլեց իր մատղաշ որսը:

Ու Շուշիկ մատղուկ ու դեղնուկ սրտով անի-
 ծեց զաւխտադրուծ Յարօն.

Իսկի մուրադ չառնէ քու սիրտը, քան զկ-
 դամ մերկ, քան զօձն անօթի իյնես. քու անկողինն
 փուշ, քու բարձն սաստաշ եղնի, կայնիս քո միս
 թափի, նստիս քու ոսկոր նալի, իսկի կշտանալիք
 չունենաս:

Օձը գալարուաւ ու կրկին կծկուաւ : Որսը ծառի արմատին դէմ զարկաւ ուժգին , ճմլեց , շնչխեց ու կուլ տուաւ :

Շուշկայ հովանիքը կտրաւ , ու ձէնը կտրաւ . . . :

— Շուշկայ անէծքը զանգակ եղաւ ու մինչեւ ի մահ զրրընգաց Յարօյի ակնջին , ու հոգուն խորերը : Ծով ու ցածաք սրբուն չտուին իրեն : Սարէ սար , աշխրհէ աշխարհ ոլորտաւ , ու գիշեր թէ անահուն ցորեկ ախը փորէն չելաւ : Չինչ անօթի շուն կերաւ լախեց անդադար , սակայն ուտել կար , կշտում չկար : Եթէ Շուշիկ ուշափն փորն հալեցաւ , ուշափն էլ Յարօյին փորը որդնտաւ : Կնոր միսը մէկ կողմ , ոսկորն մէկ կողմ հլհլան ու թափան , հոգեդարձ տրորաւ ու դարձեալ ախն ի փորն ու վախն ի ոսկոր , ու երկար հոգեքակումէն վերջ հոն մեռաւ սեւաւոր Յարօյի սգաւոր հոգին :



Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ

Ա . Մ Ա Ս

Օրացոյց	5
Ե . ԹՕԼԱՅԵԱՆ . — Կաղանդը՝ մեր երգիծարան- ներուն ակնոցով	12
Թէ որո՞նք են կարգացուելու ամէնէն աւելի արժանի հարիւր գործերը	38
Նորէ՞ն Դազարոս	52
Ե . Թ . Բարոյալից մտածումներ անձրեւոտ առտուով մը	56
Արար իմաստութիւնը	58
Պարապ նօթեր որոնք կրնան շահեկան ըլլալ .	63
Քիմաձին բառարան	71
Խնդայի՞նք քիչ մը	72
Սէրը կենդանիներուն մէջ	80
Դազարո՞ս	97
Յակոբիկին հէքեաթը	105
Հին պատմութիւններ	110
Զուարճալիքներ	122
Ե . ԹՕԼԱՅԵԱՆ . — Իմաստասիրական բառարան	138
Ե . Թ . — Հրեշտակային սատանան (Թէրլօն)	158

Բ . Մ Ա Ս

ՄՈՒՇԵՂ ՎԱՐԳԱՊԵՏ . Պատկերները	1
Յ . Գ . ՄՐՄՐԵԱՆ . Տարօրինակ խոկումներ .	6
ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ . Իզմիրի Հայոց զար- գացումը սակէ կէս դար առաջ	9
Յ . ԱԼՓԻԱՐ . — Սիրոյ շուրջը	16
Ե . ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ . Ծովադամբանս ի Պոսֆոր (Բանաստ.)	21
Ե . ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ . Ստուերք (Բանաստ.)	22
Զ . ԵՍՍՅԵԱՆ . — Գուշակը	23

ԹԼԿԱՏԻՆՑԻՆ . — Ըսէ՛ ինձի, ի՞նչ կայ	31
Յ . ԳԱԶԱՆՃԵԱՆ . — Ինքնաթելադրութիւնը	40
Օ . ՉԻՖԹԻ-ՍԱՐԱՑ . — Ի՞նչպէս կը խարեն	51
Ա . ՓԱՆՈՍԵԱՆ . — Պարկեշտ սուրբը (Բանաս.)	73
ՏՕՄԻՆՕ . — Վախու պատմութիւն	77
ԱՐՏ . ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ . — Մեր ժամանակա- կիցները	91
ԳԵՂԱՄ . — Մէկ ու ճար Շուշիկը (Հէ+է+ա)	103

ԿԵՆՒԱՆԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՆԿ

Կենդանագիր	ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ
»	ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆԻ
»	Զ . ԵՍԱՅԵԱՆԻ
»	ԹԼԿԱՏԻՆՑԻԻ
»	Յ . ԳԱԶԱՆՃԵԱՆԻ
»	Օ . ՉԻՖԹԻ ՍԱՐԱՑԻ
»	ՏՕՄԻՆՕԻ
»	ԱՐՏ . ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
»	ԳԵՂԱՄԻ
»	Ե . ԹՕԼԱՅԵԱՆԻ



ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

Կ. Պոլիս, 72, Էսկի-Չապիէ Ճատտէսի, 72

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ ՄԵՏԵՆԱԳԻՐԱՆ

Իր կրկին նպատակներով, մեր գրականութեան մէջ մեծ պակաս մը լեցնելու կոչուած է **Նշան-Պապիկեան Մատենագարանը**: Այս է՝ 1. Հաւաքել մեր գրողներու հոս ու հոն ցրուած գործերը. 2. Գրգիռ ըլլալ որ անոնք երկար աշխատութիւններով տան իրենց մտածումին ամբողջական արտայայտութիւնը և 3. Օտար հրաշակերտները ծանօթացնել թարգմանութիւններով:

Այս շարքէն հրատարակուած են՝

Զ. Հ. ԱՍՍՏՈՒՐ
(Յիպիւ)

ՑՈՒՔԵՐ

(Քերթուածներ, 18 12 - 1902,
1902, էջ 92, Գիւն 5 դրշ.)

ՄՈՒՇԵՂ ՎՈՐԴԱՊԵՏ

ԴՐՈՒԱԳՆԵՐ

Ս. Գրոց Պատմութենէն
1904, էջ 214, Գիւն 10 դրշ.)

Մ. Ա. ՊԱՐՈՊԵՆԱՆ

ԱՆՐՁԱՆՔ

(Քերթուածներ)
1904, էջ 76, Գիւն 5 դրշ.)

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԵՐԿՈՒՆՔ

(Քերթուածներ)
1906, էջ 80, Գիւն 5 դրշ.)

Մամուլի տակ է և թիչ տանէն պիտի հրատարակուի

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ՇՆՈՐ ՀՔՈՎ ՄԱՐԴԻԿ

(Վեպ տեղական կեանքի)

Հեղինակին կենդանագրով ★ Յառաջադասնով Տօմիտի



ԵՐՈՒԱՆԻ ԹՕԼԱՑԵԱՆ

(ԿԱՎՈՐՇ)

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

Կ. Պոլիս, 72. Էսկի-Չապթիէ ճամառ, 72

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՍՇՆՔԱՅՔ

ԴԱՍԸՆԹԱՅՔ ՀԱՅ ԼԵՉՈՒԻ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

(Միջին Դասընթացք)

Պատկերազարդ

1904. էջ 220. Գին 5 դրուշ



Ձ. Եւ ՝ ԱՍՍՏՈՒՔ

ԹԱՆՉԱՐԱՆ

ՀԱՏԸՆՏԻՔ ՀԱՏՈՒԱՆՆԵՐՈՒ

(Բարձրագոյն Դասընթացք)

Պատկերազարդ

310 էջ. Գին 8 դրշ.



1907ի Շրջանին, Թանգարանին հետ աբ
մամուլի սակ է, պիտի հրատարակուին նաեւ

ՅՈՎ. Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ն Ո Ր

ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՔ ԼԵՉՈՒԻ

(Տարրական Դասընթացք)

Պատկերազարդ



ՅՈՎ. Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ն Ո Ր

ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՔ ԼԵՉՈՒԻ

(Միջին Դասընթացք)

Պատկերազարդ



ՅՈՎ. Հ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՆՈՐ ՔԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՔ ԼԵՉՈՒԻ

Բարձրագոյն Դասընթացք. Ա. Շրջան

Բ.

BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7513 02075274 6